

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ
ՄՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱԶՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ**



**ՊԱՐՏԱԴԻՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ
ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ**

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**ԹԵՄԱ՝ Հայկական կարպետի զարդանախշերի
իմաստն ու գաղափարական բովանդակությունը**

ԿԱՏԱՐՈՂ՝ ՔՐԻՍՏԻՆԱ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ

ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԻՆԵ ՊԱՊԻԿՅԱՆ

ՎԱՆԱԶՈՐ 2023

Ներածություն

Դարերի խորքից մեզ հասած հայ ժողովրդի ավանդական արվեստների մեջ իր հատուկ տեղն ունի կարպետագործությունը: Կարպետագործությունը հայ ժողովրդի հնագույն ու սիրված արհեստներից է: Ամեն մի ժողովուրդ իր կնիքը, իր զարդանկարներն ու իր սիրած գույներն է դնում գեղարվեստական արտադրանքի մեջ, որից և կազմավորվում է ժողովրդական արտադրանքի ոճը: Հայկական կարպետագործությունը կիրառական արվեստի ամենահարուստ ճյուղն է: Դարերի ընթացքում պահպանված ավանդները արտահայտում են հայ ժողովրդի ճաշակը, նրա գեղարվեստական ու ստեղծագործական ինքնատիպությունը:

Ուսումնասիրությունների ընթացքում պարզվել է, որ կարպետագործ իրերը միատեսակ չեն գործ-վում, այլ տարբեր` պարզ ու բարդ եղանակով, ըստ այդմ էլ ունեն տարբեր զարդանկարներ ու տարբեր տեսք: Ինչպես հայ արվեստի մյուս բնագավառներում, այնպես էլ կարպետագործության մեջ զարդանկարները չափազանց բազմազան են, ամեն մի նախշ ունի մի քանի տարատեսակ:

Թեման արդիական է, քանի որ մեր ազգային արհեստ-արվեստների պահպանումը միշտ էլ այժմեական է եղել, իսկ այսօր առավել ևս, քանի որ այն ազգային արժեք է և ազգը գոյատևում է նաև դրա շնորհիվ:

Աշխատանքի նպատակն է սովորողներին ծանոթացնել մեր հնագույն գորգագործական արհեստին, որը արվեստի մակարդակի է հասել և իր ուրույն տեղն է ունեցել մշակույթի համընդհանուր գանձարանում:

Կարպետանախշերի ծագումն ու գաղափարական բովանդակությունը

Ինչպես շատ ժողովուրդների, այնպես էլ հայ ժողովրդի կենցաղում կարպետները և կարպետային գործվածքները մեծ տեղ են գրավել: Կարպետի զարդանկարային ու գունային լուծումները պահպանվել են դարերի ընթացքում: Միասնական ոճի պահպանման հետ կարելի է հանդիպել նորանոր ստեղծագործությունների: Հիմնական զարդանկարները կրկնվում են ամեն տեղ՝ Վասպուրականից Լոռի, սակայն ամեն դարաշրջանում իրեն հատուկ տարբերակներով, զարդանկարային նորանոր կառուցվածքներով: Առանձին գյուղերում նույնիսկ գոյություն ունեին տեղական բնույթի սիրված կարպետանախշեր:

Կարպետի զարդանկարներն իրենց բովանդակությամբ առնչվում են հայկական կիրառական արվեստի այլ ճյուղերի հետ: Հին կարպետներ չեն պահպանվել, բայց նրանց բազմաթիվ զարդանկարները կարելի է նկատել քարե հուշարձանների, խաչքարերի վրա: Նրանք հաճախ, փոխանցվելով քարից, կենդանանում են, ճկուն ձև ու փայլ ստանում և նոր տեսքով զարդարում կարպետները: Քարի գեղարվեստական մշակման ու կարպետի նմանություններն ավելի ցայտուն են արտահայտվում խաչքարերի ու կարպետի եզրանախշերի, նրանց բազմաթիվ տարատեսակների մեջ: Դժվար է ասել, թե ով է ում վրա ազդել. կարպետագործը քարագործ վարպետի՞, թե՞ հակառակը:

Կարպետի զարդանկարները նմանություններ ունեն նաև փայտի փորագիր նախշերի հետ: Նույն զարդանախշերը կիրառական արվեստի տարբեր բնագավառներում հանդես են գալիս իրենց բնորոշ տարբերակներով, հարմարեցվում տվյալ իրի գործնական նպատակներից թելադրված կառուցվածքներին, կապված են կոնկրետ իրի գեղարվեստական կերպարի գեղագիտական սկզբունքներին, նյութի և տեխնիկական հնարավորություններին:

Կարպետի մեջ պահպանվել են ամենահին զարդաձևերը, որոնց զուգահեռ ստեղծվել են նորանոր նախշեր ու մերվել հների հետ: Ժամանակի ընթացքում մոռացվել են նրանց բովանդակությունը, իմաստը, նշանակությունը, անունները: Այժմ շատ մեծ դժվարություններով է հաջողվում ծեր կարպետագործուհիներից իմանալ որևէ նախշի անուն. ըստ որում, նույն զարդանկարն էլ տարբեր վայրերում տարբեր անուն է կրում:

Չարդանկարների առանձին գործերը կարպետագործին հնարավորություն է տալիս գեղեցիկ ձևավորել ոչ միայն ամեն մի նախշ, այլև ապահովել կարպետի մակերեսի զարդանկարային ողջ կառուցվածքը: Որքան փորձված է կարպետագործուհին, այնքան բարդ զարդանկարներ է անում: Կարպետի նախշերը ձևավորելու համար նույնպես օգտագործում են փայտիկներ-չիլիկներ, որոնց վրա զույգ-զույգ հավաքում են հենքի թելերը՝ ըստ նախշաձևի:

Ամեն մի կարպետ ունի կենտրոնի, մակերեսի զարդանկարներ ու նրանց շրջանակ-հաշյա. որևէ մոտիվ ռիթմիկ կերպով կրկնվում է շարքի մեջ: Հանդիպում են և առանց շրջանակ-հաշյայի կարպետներ, որոնք կազմվում են կամ հորիզոնական նախշազարդ շերտերից, կամ եռանկյուններից ու այլ մանր նաշխերի ուղիղ և թեք անցնող շերտերից:

Ամեն մի ժողովուրդ ունի կարպետի միայն իրեն հատուկ հորինվածքը, իր սիրած կարպետանախշերը: Հայկական կարպետի զարդանախշերը *երկրաչափական, կենդանական և բուսական* են:

Կարպետագործության տեխնիկային ավելի բնորոշ է երկրաչափական զարդանախշը: Ամենապարզ ու ամենատարածված զարդանախշը եռանկյունն է: Այն երբեմն առանձին զարդանախշ է, երբեմն էլ հորինվածքի հիմք: Շեղանկյան նիստերի վրա դասավորված եռանկյունները փոխում են շեղանկյան ձևը, իսկ շեղանկյան վրա գազաթով գործված եռանկյունը ստեղծում է երկրաչափական նոր մարմին: Տարածված զարդանախշերից է շեղանկյունը, որի ներսը երբեմն միագույն է լինում:

Յոթ փոքր շեղանկյուններից (մեկը՝ ներսում, իսկ վեցը՝ նրա շուրջը) կարպետագործը կարող է ստանալ տարբեր գեղագիտական պատկերներ առաջացնող զարդանախշ:

Շատ հաճախ կարպետի հիմնական կոմպոզիցյան ստեղծվում է վեցանկյուններից, որոնք, մի քանի շերտով դասավորվելով կարպետի դաշտի վրա, մեղրամոմի խոռոչներ են հիշեցնում: Կանթերը եռանկյան և քառակուսու համադրությունն է, տիկնիկը՝ միջին և փոքր եռանկյունիների միաձուլումը, մոմը՝ երկարավուն նեղ քառանկյունու վրա դրված փոքր քառակուսի և այլն:

Կարպետագործության զարդանախշերը պարզ գծերից մինչև բարդ ելուստավոր գրաֆիկական կերպարներ են ընդգրկում՝ եռանկյուններ, քառակուսիներ, բարդ հորինվածքներ ունեցող վարդակներ: Յուրաքանչյուր զարդանախշ իր ռիթմն ու բազմատեսակ տարբերակներն ունի:

Տարածված զարդանախշեր են աստղը՝ իբրև լույսի, օկտոգոնը՝ կոսմիկական միսնություն, ծրարը՝ կարոտի զգացողության, պանդխտության խորհրդանիշ և այլն:

Կարպետի զարդանկարների մեջ աչքի է ընկնում խաչը (նկ.1,2) կապված հեթանոսական պատկերացումների, հասկացություն, առաջին հերթին արևի, բնության ուժերի գաղափարների հետ, որը հետագայում դառնում է քրիստոնեության խորհրդանշան: Խաչերկաթը, երդիկի, պատուհանի խաչվանդակը, <<խաչ>> կաթսաները և այլ իրեր ապացույց են այդ հավատալիքների: Յնագույն խաչանախշը մեզ է հասել և՛ առանձին պատկերով

(հավասարաթև խաչ), և՛ շրջանակի մեջ, որը, հավանաբար, հենց երկրագնդի պատկերն է հանդիսանում: Վաղքրիստոնեական շրջանում, ըստ երևույթին, Քրիստոսի խաչելության հիման վրա, խաչը մեծ տարածում գտավ և, իբրև սրբազան նշան, դարձավ նոր հավատի գաղափարների խորհրդանիշը: Հայ գեղջկուհին հաց թխելիս, նախքան թոնրի կողքին խփելը, խմորի վրա մատներով ցրի կաթիլների օգնությամբ խաչ է նշում:

1,2 ԽԱՅ:





Կեռախաչը խաչի գրաֆիկական արտահայտությունն է՝ թևերի ծայրերն ուղիղ անկյան տակ թեքած (երբեմն էլ աջ կամ ձախ ծոված): Այս զարդանախշը հիմնականում զուգորդվում է կենսաց ծառի պատկերման հետ, քանի որ այն ևս խորհրդանշում է կյանքը, արևը, կայծակը, կրակը, հավերժությունը, պտղաբերությունը և ծննդաբերությունը:

Հետագայում կեռախաչը գործածվեց որպես Ֆաշիստական Գերմանիայի դրոշի հորինվածքի կենտրոնական տարր, դարձավ բարբարոսության ու բռնության խորհրդանիշ:

Չարդանախշերի մյուս խումբը կազմում են բուսական զարդանախշերը: Անշուշտ կարպետագործության մեջ բուսական զարդանախշերը չունեն գորգերի այնքան շքեղ բուսականա զարդանախշերի կառուցվածքի նրբագեղությունը, անցումների փափկությունն ու ազատությունը: Կարպետի բուսական զարդանախշերի եզրերն անկյունային հատումներ ունեն, որոնք թելադրված են կարպետի գործվածքի առանձնահատկություններով:

Խաչի հետ տարածված է աստղածաղիկը՝(նկ.3)հինգ, ութ ծայրերով:Հատկապես ռոմբաձև ութ թերթիկով աստղածաղիկը մեծ տեղ ունի հայկական կիրառական արվեստի բոլոր բնագավառներում, առավել ևս կարպետագործության, գորգագործության մեջ: Աստղածաղիկի պսակաթերթիկները ուղիղ կամ սանդուղքաձև եզրեր ունեն. նրանք լինում են մեծ ու փոքր չափերի և տեղադրվում են կարպետի մակերեսին ու շրջանակներում:

3 Աստղածաղիկ:



Երզնկայից պահպանված մի կարպետի ողջ մակերեսը զբաղեցնում է խոշոր չափերի աստղածաղիկներ: Հանդիպում է նաև կրկնակի քառակուսուց ստացված ութ սուր ծայրերով նախշը, կամ հատված ութանկյունի ձևը, մեջը՝ ռոմբեր, կեռեր և ամենից առաջ՝ հավասարաթև խաչ:

Վեցանկյունիները կարպետի մակերեսին դասավորվում են մեղրամոմի բջիջների նման: Վեցանկյան մեջ լինում են ռոմբաձևեր, կենսաց ծառեր, բզեզներ և այլն: Կան կարպետներ, ուր վեցանկյունին ամբողջապես չի գրավում մեկ երեսը, այլ անցնում է շարքերով, ըստ

որում, ամեն մի վեցանկյունի ունի կոթ(ծառերի շարք): Այրվող մոմերի պես փայլում են շարքերը՝ կարմիր ու կապույտ դաշտի վրա:

Կարպետն ավելի գունազեղ դարձնելու համար աստղաձաղկի թերթիկները գործել են տարբեր գույներով: Շարքերով դասավորված աստղաձաղիկների արանքում Լ. Ամիրխանյանը տեղադրել է եռանկյունիներից կազմված ռոմբաձևեր՝ ատամնավոր եզրաշերտերով:

Աստղաձախիկն նման են խաչվարդերը ,(նկ.4)որոնք իրար հետևող և խաչ ստեղծող գծերն են: Այս խաչի յուրաքանչյուր թևի տակ տեղադրվում է եռանկյունաձև նեղ երիզ: Կարևոր են բուսական ճյուղերը, որոնք ուղղահայաց առանց ունեն, երկու կողմից՝ զույգ երկարավուն տերևներ:

Նուռ անունն է կրում մի քանի սրանկյունեռանկյուններից կազմված այն հորինվածքը, որն ունի սուրանկյան ճառագայթանման ծայրերը հավաքող կենտրոն և նիստավոր եզրեր: Այն համարվում է սիրո, պտղաբերության և անմահության խորհրդանիշ:




4 խաչվարդ:

Սիրված կարպետանախշ են նաև շուշանը՝ իբրև մաքրության, մեխակը՝ իմաստության խորհրդանիշ և այլն:

Բուսական մոտիվների ամենագլխավոր արտահայտությունը կենաց ծառն է:Կենաց ծառը խորհրդանիշն է այն բանի, ինչ մարդը կարողացել է քաղել հողից, հրաշք <<գերծառը>>, որին ձգտում է հողագործը:


Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում կենդանական զարդանախշերը: Հատկապես տարածված են քառանկյան, շեղանկյան շուրջը դասավորված կեռերից ստացվող հորինվածքները, որոնք խեցգետնի են նմանեցվում (նկ 5):



5 Խոյնդջուր:

Կեռերի Մի փոքր բլլ դասավորությունը զարդանախշը նմանեցվում է խոյի գրաֆիկական պատկերմանը: Կարպետների դաշտի ազատ տարածքներում գործում են ընտանի թռչունների, կենդանիների ու մարդկանց պատկերներ: Հաճախ է հանդիպում լատինական S տառը հիշեցնող օձանման կեռիկը, որն ավելի շատ գորգագործության մեջ է տարածված (նկ 6):

Ինչպես հայկական գորգարվեստում, որտեղ առանձին խումբ են կազմում նշանավոր վիշապագորգերը, այնպես էլ կարպետագործության մեջ իր ինքնատիպ արտացոլումն է ստացել վիշապի պատկերումը: Գոյություն ունեն բազմաթիվ վիշապակարպետներ, որոնք շատ ավելի հայտնի են օձակարպետ անվամբ: Դրանք գործվում են թեթ-օղանիտ-փաթաթովի տեխնիկայով:



Կարպետի դաշտում օձերը դասավորված են լինում երկուսից չորս շարքով: Դրանք ավելի շատ վիշապի տեսք ունեն, միայն պայմանականորեն են օձեր անվանում:

Յուրաքանչյուր օձը S գրաֆիկական տեսք ունի՝ ուղիղ եզրագծերով, որոնք ձևավորված են նեղ գծերի և փոքր քառակուսիների հավասարաչափ ելուստներով: Օձերի հիմնական գծանկարի

Ներսում տեղադրված են նրբագեղ մանր <<օձիկներ>>, երբեմն լայն շերտով՝ երկու կամ երեք շարքով: Յուրաքանչյուր օձ երկու կամ երեք ելուստ ունի, պոչանման, իսկ ներքևի մասում նույն կարգի ելուստները ոտքերի տպավորություն են թողնում: Օձի մարմնի ազատ տարածքում գործում էին բազմազան նախշերից կազմված բարդ հորինվածքներ, որոնցում պարտադիր էր խաչը: Օձակարպետների հայրենիքը Չիլեն է: Չիլեում է սկիզբ առել և զարգացել օձակարպետ գործելու կուլտուրան, որը հետագայում տարածվել է Փոքր Ասիայում, Կովկասում և հատկապես Արցախում: Օձակարպետները, որպես կանոն, ունեցել են կարմիր ֆոն, որի վրա հաջորդաբար տեղադրվել են կապույտ և սպիտակ օձանախշերը: Այդ երկու հնչեղ գույների համադրությունները, նրանց հետ նաև այլ գույների թելերի մանր շեշտադրումները, հիրավի, գեղանկարչական տարածք են ստեղծում:

Կարպետագործության, գորգագործողության մեջ հետաքրքրական խումբ են կազմում թռչունի և օձի կռիվը պատկերող զարդանկարները: Կան կարպետներ, ուր օձը, վիշապը պատկերված են մենակ, առանց պայթարի, և այստեղ կարծես նրանք արդեն թշնամի չեն, այլ բարյացակամ պաշտպաններ:

Օձ-վիշապի մասին բոլոր ժողովուրդների առասպելության մեջ հարուստ նյութ է կուտակված: Ինչպես հարևան ժողովուրդների, այնպես էլ հայկական հեթանոսական հավատալիքների մեջ օձ-վիշապը և՛ բարի, և՛ չար հզոր էակ է:

Կարպետագործության մեջ կենդանական զարդանախշերն ունեն նաև հելադիկ արտահայտություններ: Դրանցից են արծիվը, թռչունները, շունը, կատուն և այլն: Այդ զարդանախշերի նախատիպերը կարելի է տեսնել ժողովրդական հավատալիքներում կամ կիրառական արվեստի մյուս ճյուղերում:

Կենդանական ու երկրաչափական զարդանկարներն ամենահինն են, դարերի ընթացքում նրանք մշակվել են, հղկվել, ընդունել կատարյալ ձևեր: Ամեն մի գիծ, գծերի խումբը կազմված են մաթեմատիկական ճշտությամբ. յուրաքանչյուր գիծ իր որոշակի տեղն ունի:

երկերեսանի կարպետի նախշերը ավելի խոշոր են, քան այլ գործվածքներում: Մեծ տոնական հացի, թխվածքի անունը՝ մեդալիոնները կրում են հայկական <<գաթա>>, <<բաղարջ>>,<<կրկենի>>: Այս անունները կապ ունեն այն փայտյա, կամ քարից փորագրված գեղեցկանախշ դրոշմների հետ, որոնցով սեղմում, զարդարում են խմորի երեսը՝ նախքան թխելը (նկ.1): Դրանք կրում են տարբեր անուններ՝ <<գաթանախշ>>, <<բաղարջանախշ>>, <<խատունճ- կոխիչք>> և այլն: Կրկենին ավելի մեծ է, քան գաթան: Նրա վրա էլ գդալով, ակիշով կամ ձեռքով նախշեր են դրոշմվել: Գաթանախշերի մեջ պահպանվել են ամենահին զարդանկարները՝ խաչը, արևի նշանը, աստղածաղիկը, որոնք գործվածքներում ավելի հարստացել, գունագեղ են դարձել: Կարպետային բոլոր գործվածքների մեջ զարդանկարներով ամենահարուստը՝ երկերեսանի կարպետն է:

Կարպետի մակերեսի խոշոր մեդալիոնները թվարկելիս ասում են՝ <<այս կարպետը երկու գաթանոց է, կամ երկու կրկենի է>>: Գաթաների, մեդալիոնների թիվը կարևոր է կարպետագործուհու համար: Նա է կազմում կարպետի ամբողջ մակերեսի զարդանկարային կառուցվածքը, Տեղադրումը, ձևավորումը, շրջանակ- հաշյայի տեսակը, ձևը և այլն:



1, Գաթանախշ փայտից:

Չարդանկարներիկոմպոզիցիայից բացի, կարևոր նշանակություն ունի և գունային լուծումը՝ թե նախշերի, թե դաշտի, թե շրջանակի առումով:

Ռոմբաձև << գաթան>>-կենտրոնում խաչ, գծերով բաժանվում է եռանկյունիների: Այս հիմնական զարդանկարը եզերված է տարբեր տեսակի, քանակի ու տարբեր չափերի կեռերով, որոնց զույգը՝ խոյակները կոչվում են <<խոչպոզ>>, <<խոյեղջյուր>>: Երբեմն

ռոմբի, գաթայի շուրփը լինում են բրգաձևեր, սանդուղքներ, թռչունի գլուխ՝ կտուցով, գդալանման, ակիշանման մոտիվներ:

Կարպետները գործվել են և՛ շրջագոտիներով, և՛ առանց շրջագոտիների: Վերջիններս ավելի փոքր խումբ են կազմում: Կարպետների շրջագոտիները լինում են 1,2 կամ 3 երիզանոց: Մեջտեղի երիզն ավելի լայն է, իսկ կողքի երիզները նեղ են և տարբեր տեսակի մանր զարդանախշեր ունեն: Եթե կարպետը շրջագոտի չունի, ապա դաշտը շրջափակվում է մուգ գույնի եռանկյուններով:

Կարպետների տեսակները

Կարպետները և կարպետագործ իրերը գործվում են տարբեր տեխնիկայով: Ըստ այդ հատկանիշի՝ նրանք պայմանականորեն բաժանվում են յոթ խմբի, մեզար, ջեջիմ, երկուերեսանի կարպետ, շուլալա կարպետ, ուղիղ օղանիտ փաթաթովի կարպետ, թեք օղանիտ փաթաթովի կարպետ և ծոպավոր կարպետ:

Մեզարը ամենապարզ գործվածքն է, ուստայնանկությունից անցում կարպետագործության: Այն գործվում է կտավի պես, գործող թելը մեկընդմեջ անցնում է հենքի թելերի միջով. ստացվում է երկու երեսից հարթ, նույնանման գործվածք, ուր երևում են և՛ գործող, և՛ հենքի թելերը: Այս տեխնիկայով հնարավոր է ստանալ նեղ ու լայն շերտերով հյուսվածքներ: Մեզարը հինում են գունավոր թելերով, միմյանց հաջորդող նեղ ու լայն շերտերով՝ վերից վար, որոշակի հաջորդականությամբ: Շերտերի արանքներում տեղադրվում են տարբեր գույների բաժանարար գծեր: Մի շարք մեզարներ հյուսված են երեք գույնի՝ կարիր, հողագույն և շագանակագույն թելերից ու բաժանարար մուգ գիծ-շերտերից: Այդ երեք գույնի հենքի թելերը հաջորդաբար, 10սմ լայնության շերտերով կրկնվում են մեզարի ամբողջ լայնությամբ: Գործող կարմիր թելը հենքի կարմիր թելի հետ ձևավորում է կարմիր քառակուսին, իսկ հաջորդների հետ խառը գույների: Հողագույն գործող թելը հողագույնի հետ առաջացնում է հողագույն քառակուսի, մյուսների հետ՝ խառը և այլն: Հետո անցնում են բաժանարար մուգ գույնի մի քանի թելեր, որոնք հենքի նման թելերի հետ առաջացնում են վանդակ-շրջանակ այդ քառակուսիների համար:

Երբեմն կարմիր, կանաչ, կապույտ թելերով հյուսում էին եզրերը, իսկ դաշտը մեծ մասամբ միագույն էր լինում:

Օժիտի գունագեղ մեզարները երկու ծայրերից ունենում էին օգտագործված թելերի երկար հյուսքեր, փափուկ փնջեր:

Ջեջիմի ամենաբնորոշ առանձնահատկությունը նրա գունավոր-շերտավոր լինելն է: Դրանք գործում են և՛ լայնությամբ, և՛ երկարությամբ: Սա նույնպես երկերես գործվածք է: Բոլոր գործվածքների մեջ թերևս ջեջիմն է պահպանել գործելու նախնադարյան ձևը: Այն գործում են ջուլիակագործության հնագույն, ամենապարզ եղանակով՝ գետնին խփված ցցերի միջև արված հենքի վրա: Գործող թելն անցկացնում են հենքով՝ ձախից աջ և աջից ձախ, ապա փայտե թրով նստեցնում: Ջեջիմի շերտերն գեղեցիկ են և առանց նախշերի, սակայն ավելի գեղեցիկ ու արտահայտիչ են այն ջեջիմները, որոնց շերտերի վրա կան նախշեր: Նախշերը ոճավորված են երկրաչափական և մշակված նեղ շերտի վրա տեղադրելու համար: Չարդերի շարքում հանդիպում են խաչերի, եղանի, S տառաձևերի, բառակուսիների, հասարակ գործիքների, գազանների մարդկային պատկերների: Ջեջիմը գործում են նաև խաչաձև, սանրաձև և այլ նախշերով: Ջեջիմի համար սիրված գույներ են եղել տորոնի մուգ կարմիրը, մուգ կապույտը, մուգ կանաչը, բաց դեղինը, սպիտակը, շագանակագույնը: Սևանի ավազանում այսպիսի ասացվածք կար՝ «Մենք յոթ գույնի ջեջիմ կը գործեինք»:

Երկուերեսանի (մատնաքաշ) կարպետն ամենակարևոր գործվածքն է, որից և այդ բնագավառն ստացել է իր անվանումը: Կարպետի հենքն արվում էր խավավոր գորգի նման, հիմնականում ուղղահայաց տորքի վրա: Սկզբնական շրջանում հենքը բրոյա թելով էր արվում, ավելի ուշ՝ բամբակյա: Հենքի թելերի միջով անցնում են հիմնական գործող թելերը, որոնք ամրացնում են կտուտիչով: Կարպետ գործում են երկու եղանակով: Առաջինն այն է, երբ գործվածքը սկսում են մի ծայրից և ավարտում կարպետի վերջում: Երկրորդ եղանակով նախշերը գործում են կարպետի համապատասխան մասերում, որից հետո ազատ տարածությունը՝ տափը, լցնում են միագույն թելերով: Երկու դեպքում էլ թելերն ամրացնում են եզրերին, իսկ հետ գալիս ամրացնում են տվյալ կետի հենքի թելի վրա: Դրա շնորհիվ առաջանում են փոքրիկ անցքեր, որոնք նույնպես ներգրավվում են կարպետի ընդհանուր հարդարանքի մեջ:

Շուլալ կարպետի նախշերը գորգի նման արվում են փափուկ թելերով: Անվանումը գալիս է գործելու տեխնիկայից: Գործող նախշը ձևավորվում է հորիզոնական գծերով, հենքի միջով անցնում է շուլալ կարի պես, ծածկում հենքի մի քանի թելը, ապա անցնում

կարպետի տակի կողմը, որոշ տարածությունից հետո նորից դուրս է գալիս կարպետի երեսը, դարձյալ վերցնում են մի քանի թել և անցնում տակի կողմը: Կարպետի տակի կողմից երևում է նախշի նեգատիվ ձևը: Նախշ ձևավորելիս գործող թելի ծայրերը կարպետի հետևի կողմում թողնում են կախված: Ավարտելուց հետո տակից կապում են կարի հանգույցով: Շուկալ կարպետի և՛ նախշերը, և՛ տափը միասին են գործվում, շարք շարքի հետևից: Գործողը պետք է ունենա հաշվելու, նախշը դուրս բերելու հմտություն, նաև փորձ, աչքաչափ, ճաշակ: Անդրկովկասյան և հայկական շուկալ կարպետներում կա տարածված մի զարդանկար, որը կոչվում է <<հարսը իրեն խեղդեց>>: Ըստ ավանդության՝ հարսը չի կարողացել խուրջինի նախշը ճիշտ ստանալ. գործել է, քանդել, նորից փորձել, վերջիվերջո խճճվել է, ոչինչ չի ստացվել և հուսահատված իրեն կախել է: Շուկալ կարպետն ավելի դժվար է գործել, քան երկուերեսանին, որովհետև ավելի հաստ է, դիմացկուն, ուսի այդ տեխնիկայով գործվում են շատ գործածելի իրերը՝ խուրջինը, անկողնապարկը, աղաքսակը:

Ուղիղ օղանիտ փաթաթովի կարպետում գործող գունավոր թելը փաթաթվում է հենքի մեկ կամ երկու թելի շուրջը, օղան <<ճիշտ է անում>>, փաթաթվում, անցնում առաջ, ապա պտտվում հենքի հաջորդ մեկ կամ երկու թելերի շուրջը և այսպես մինչև շարքի վերջը: Շարքն ավարտելուց հետո անցնում է միջնաթելը և ամուր կտուտվում-ամրացվում: Հենքի թելը և միջնաթելերը չեն երևում, թաքնվում են գործվածքի մեջ: Այս տեխնիկայով գործվածքի դեպքում գործող թելն ուղիղ գծով է տեղադրվում, իսկ երբ հաջորդ շարքում վրայից նույն գույնի թել է անցնում, ստացվում են մանր քառակուսիներ: Դիտողին թվում է, թե ուղիղ համրովի հարթակար ասեղնագործություն է: Գործվածքի հետևում գործող թելը թեթ-թեթ է նստում:

Օղանիտ փաթաթովի կարպետները միերեսանի են, հաստ, խիտ են գործված և բարձր են գնահատվում:

Ուղիղ օղանիտ գործվածքը բարդության պատճառով շատ քիչ է ընդօրինակվել:

Թեթ օղանիտ փաթաթովի կարպետն ուղիղ օղանիտ կարպետի պես բարդ գործվածք է: Այս տեսակում ևս գործող գունավոր թելը պատ է տալիս, ճիտ անում հենքի մեկ կամ երկու թելին, միայն թե ուղիղ օղանիտից տարբերվում է օղակների տարբեր դասավորությամբ. այստեղ գործող թելը թեթ-թեթ է դասավորվում: Եթե զուգահեռ անցկացնենք ասեղնակարերի հետ, կտեսնենք, որ թեթ օղանիտը նման է շյուղակարի, ցողունակարի, և ավելի շատ համրովի թեթ հարթակարի: Այստեղ ևս դաշտ-տափն ու զարդանկարներն միասին են գործվում, շարք շարքի հետևից: Ուղիղ օղանիտում

կարպետի երեսի ուղիղ կարերը տակի կողմից թեք-թեք էին ընկնում, իսկ թեք օղանհատում` երեսի կողմից օղակները թեք-թեք են, տակի կողմից` ուղիղ:

Բարակ, ոլորած, ամուր միջնաթելը ամրացնում է շարքերը, և ինքը չի երևում: Թեք օղանհատ փաթաթովի կարպետները միերեսանի են: Այս տեխնիկայով են գործվում հայկական հոչակավոր օձակարպետները:

Ծոպավոր կարպետը հյուսման տեխնիկայով մոտենում է գորգին: Նրա մակերեսին տեղ-տեղ շերտերով գորգի հանգույցներ են կապում և երեսի կողմում ծայրերը կտրած թողնում: Գոյանում են գորգի նման խավով նախշեր:

Հայկական կարպետների, գորգերի և ասեղնագործության մասնագետ Ս. Դավթյանը գրում է.

<< Մեզ թվում է, որ ինչպես մեզարը, գուցե և ջեջիմը, անցնում են ոստայնանկությունից դեպի կարպետագործությունը, այդպես էլ ծոպավոր կարպետը անցնում է կարպետից դեպի գորգագործությունը>>:

Եզրակացություն

Ուշագրավ է, որ բրոնզեդարյան նախշերի հետ հարազատորեն մերվել, միացել են բոլոր ժամանակաշրջանների նորանոր նախշերը, որոնք իրենց գրավիչ ներդաշնակությամբ կազմում են ժողովրդական ստեղծագործության գանձարանը: Կարպետը ինչպես առաջ, այժմ էլ կարող է զարդարել մեր բնակարանները, եթե պատշաճ վերաբերմունք հատկացվի նրան:

Այսպիսով, մենք ծանոթացանք յոթ խմբի և մի քանի ենթախմբերի պատկերող կարպետների ու կարպետային գործվածքների: Այդ փաստերը ցույց են տալիս, որ կարպետագործությունը գողտրիկ զարդաձևերով հարուստ մի բնագավառ է, որի մշակողներն ու պահպանողները եղել են

Չայկական կարպետները, իրենց զարդանկարների առանձնահատուկ ձևերով, գույների դասավորությամբ, թելերի, գործվածքի կատարյալ որակով, ճիշտ չափերով, խոսում են իրենց ստեղծագործողների մեծ շնորհքի ու անսպառ կարողությունների մասին:

Ամեն մի ժողովուրդ ունի իր ստեղծագործությունը, արվեստի իր ճյուղերը: Մեր թված հայկական կարպետագործության յոթ ճյուղերն էլ՝ իրենց ենթաճյուղերով կերտել ու պահպանել են մի յուրահատուկ դեկորատիվ արվեստ՝ ազգային միասնական ոճով ու զարդարվեստային հարուստ ավանդույթներով:

Չայկական կարպետն իր առանձնահատկություններով հատուկ տեղ է գրավում մշակույթի համընդհանուր գանձարանում:

Գրականություն

1. Պապիկյան Կ., Հայկան կարպետներ և գորգեր, Երևան, Ձանգակ-97, 2009թ.:
2. Դավթյան Ս., Հայկական կարպետ, Երևան, ԳԱ, 1975թ.:

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ
ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱԶՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ**



**ՊԱՐՏԱԴԻՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ
ԵՆԹԱԿԱ**

ՈՒՍՈՒՅԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**ԹԵՄԱ՝ <ՏԵԽՆՈԼՈԳԻԱ> ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ
ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑՈՒՄ**

ԿԱՏԱՐՈՂ՝ Աիդա Հարությունյան

ՂԵԿԱՎԱՐ՝ Կարինե Պապիկյան

ՎԱՆԱԶՈՐ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳԼՈՒԽ 1. <Տեխնոլոգիա> առարկայի ուսուցումը 5-6-րդ դասարաններում

1.1. <Տեխնոլոգիա> առարկայի ուսուցման նպատակը միջին դպրոցում

1.2. Առարկայի ընդհանուր բնութագիրը

ԳԼՈՒԽ 2. <Տեխնոլոգիա> առարկան և մարդու պահանջմունքները

2.1. Մարդու պահանջմունքները

2.2. Մարդու ֆիզիոլոգիական կարիքները

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ԳԼՈՒԽ 1. <Տեխնոլոգիա> առարկայի ուսուցումը 5-6-րդ դասարաններում

1.1 <Տեխնոլոգիա> առարկայի ուսուցման նպատակը միջին դպրոցում

«Տեխնոլոգիա» ուսումնական առարկայի նպատակը ստեղծարար, նորարար, նախաձեռնող, ձեռնարկատիրական մտածողություն, ազգային նկարագիր ունեցող անձի ձևավորումն է, որն արհեստին ու արվեստին հաղորդակցվելու, աշխատանքի ձևերին և նորագույն տեխնոլոգիաներին տիրապետելու, ռեսուրսներն արդյունավետ տնօրինելու միջոցով ստեղծում է մարդկային կարիքներին համապատասխանող ապրանքներ, ծառայություններ և համակարգեր: Այս առարկան տեխնոլոգիական միջավայրի և արտադրական գործընթացների նկարագրությանը, գաղափարները գործողության վերածելու հմտությունների ձևավորմանը միտված շարունակական գործընթաց է, որի նպատակը մարդու բարեկեցությունն է:

«Տեխնոլոգիա» առարկան շուկայական տնտեսության պայմաններում նպաստում է սովորողների մասնագիտական կողմնորոշմանը, ձևավորում է բազմակողմանի և ներդաշնակ զարգացած անձ, նախապատրաստում է նրան ինքնուրույն կյանքի:

Առարկայի ուսուցումը նպատակաուղղված է «Հանրակրթության պետական չափորոշիչ» փաստաթղթով սահմանված հետևյալ վերջնարդյունքների ձևավորմանը: Հիմնական (միջին) դպրոցում սովորողը պետք է՝

- 1) իրականացնի չափումներ, կատարի մոտավոր ու ճշգրիտ հաշվարկներ և գնահատի արդյունքները՝ ընտրելով և օգտագործելով համապատասխան հասկացություններ, սկզբունքներ, նյութեր և սարքավորումներ.
- 2) կիրառի երկրաչափական պատկերների և մարմինների մասին գիտելիքներն ամենօրյա կյանքում և հարակից ուսումնական առարկաներն ուսումնասիրելիս.

- 3) վերլուծի, գնահատի և առաջարկի դասակարգման, տարբերակման կամ խմբավորման չափանիշներ՝ ելնելով խնդրի պահանջից.
- 4) ներկայացնի գիտության նվաճումների՝ տեխնիկայի և տեխնոլոգիաների կիրառության հավանական ազդեցությունը բնության, մարդու և հասարակության վրա.
- 5) տարբերի ձեռնարկատիրական գործունեության տեսակները և իրականացման ձևերը, նկարագրի կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը և սկզբունքների կիրառման անհրաժեշտությունը բիզնես գործունեության մեջ.
- 6) ցուցաբերի իր գործունեությունը պլանավորելու և ժամանակը արդյունավետ տնօրինելու կարողություններ.
- 7) դրսևորի հետազոտելու, փորձարկելու, տարբեր գործիքակազմեր համադրելու կարողություն, ուրիշների հետ համատեղ կամ ինքնուրույն մշակի և իրականացնի նախագծեր.
- 8) ստանա, վերլուծի, գնահատի և ներկայացնի անհրաժեշտ տվյալներ, առաջարկի վարկածներ.
- 9) գտնի և օգտագործի տեղեկույթ տարբեր աղբյուրներից, որոշի և բնութագրի աղբյուրի արժանահավատությունը և այն օգտագործելիս հղումներ անի.
- 10) արտահայտի, հիմնավորի և պաշտպանի սեփական տեսակետը և դիրքորոշումը.
- 11) արդյունավետ կազմակերպի իր ուսումնական գործընթացը և ավարտի աշխատանքները՝ առանց անմիջական վերահսկողության, կիրառի ինքնակրթության որոշ մեթոդներ.
- 12) ճանաչի և արժևորի իր ազգային մշակույթը, նյութական և ոչ նյութական ժառանգությունը, դրա առանձնահատկությունները և ներդրումը համաշխարհային մշակույթի մեջ.
- 13) դրսևորի աշխատանքային հմտություններ, կարողանա հմուտ և անվտանգ օգտագործել տարբեր սարքեր, գործիքներ և նյութեր.

14) կարողանա բացահայտել և զարգացնել իր հետաքրքրություններն ու նախասիրությունները և կատարել նախնական ինքնորոշում՝ հիմնվելով մասնագիտական կրթության հնարավորությունների վրա:

1.2 «Տեխնոլոգիա» առարկայի ուսուցումը միջին դպրոցում ենթադրում է սովորողների ընդհանուր տեխնոլոգիական իրազեկություն՝ տեխնոլոգիական մտածողության ձևավորման նպատակով, տեխնոլոգիական գիտելիքների և կենցաղային հմտությունների ձեռքբերում: Դասավանդումը նպատակաուղղված է տարրական աշխատանքային հմտությունների ձևավորմանը, գիտության նվաճումների, բնության, մարդու և հասարակության վրա տեխնիկայի ու տեխնոլոգիաների կիրառության հավանական ազդեցության և ձեռնարկատիրության մասին սովորողի գիտելիքների ընդլայնմանը, իր գործունեությունը պլանավորելու և ժամանակն արդյունավետ տնօրինելու կարողությունների ձևավորմանը: «Տեխնոլոգիա» առարկայի ուսուցումը նաև նպաստում է սովորողների մասնագիտական կողմնորոշմանը՝ արհեստներին ծանոթանալու միջոցով:

1.2 Տեխնոլոգիա առարկայի ընդհանուր բնութագիրը

«Տեխնոլոգիա» առարկայի ուսուցումը միջին դպրոցում ենթադրում է սովորողների ընդհանուր տեխնոլոգիական իրազեկություն՝ տեխնոլոգիական մտածողության ձևավորման նպատակով, տեխնոլոգիական գիտելիքների և կենցաղային հմտությունների ձեռքբերում: Դասավանդումը նպատակաուղղված է տարրական աշխատանքային հմտությունների ձևավորմանը, գիտության նվաճումների, բնության, մարդու և հասարակության վրա տեխնիկայի ու տեխնոլոգիաների կիրառության հավանական ազդեցության և ձեռնարկատիրության մասին սովորողի գիտելիքների ընդլայնմանը, իր գործունեությունը պլանավորելու և

Ժամանակն արդյունավետ տնօրինելու կարողությունների ձևավորմանը:

«Տեխնոլոգիա» առարկայի ուսուցումը նաև նպաստում է սովորողների

մասնագիտական կողմնորոշմանը՝ արհեստներին ծանոթանալու միջոցով:

Տեխնոլոգիան գործընթաց է՝ մարդու կողմից օգտակար ծառայությունների և ապրանքների ստեղծման համար:

Տեխնոլոգիայի ուսումնասիրումը զարգացնում է ոչ միայն պոլիտեխնիկական մտահորիզոնը, ծանոթացնում տեխնիկայի նորություններին, նյութերի մշակման ժամանակակից տեխնոլոգիաներին, օգնում է կողմնորոշվել մասնագիտության ընտրության հարցում, այլև ինքնուրույն ստեղծագործական աշխատանք կատարելու հնարավորություն է ընձեռում: Տեխնոլոգիայի դասաժամերին դուք կսովորեք մտածել, վերլուծել, առաջադրել նոր մտահղացումներ, ստեղծագործաբար մոտենալ բոլոր առաջադրանքների կատարմանը, գնահատել գեղեցիկը:

«Տեխնոլոգիա» առարկայի ուսուցումը հիմնվում է բնության մեջ, սոցիալական միջավայրում նյութի, էներգիայի, տեղեկատվության, առարկաների փոխակերպման և դրանք մարդուն ծառայեցնելու որոշակի գործընթացների տիրապետման վրա:

Ուսուցման բովանդակությունը պայմանավորված է սովորողների կրթական կարիքներով, հետաքրքրություններով, բայց ոչ նրանց սեռով:

«Տեխնոլոգիա» առարկայի ուսումնական ծրագիրը կառուցվում է 5 հիմնական գաղափարների վրա՝

1. **Գրաֆիկա (Գ),**
2. **Նյութեր և կառուցվածքներ (ՆԿ),**
3. **Գործընթացներ և արտադրություն (ԳԱ),**
4. **Ձեռնարկատիրություն (Ձ),**
5. **Տեխնոլոգիա և կյանք (ՏԿ):**

Նշված հիմնական գաղափարները առավել հստակեցվում և կոնկրետացվում են հաջորդ երկու մակարդակներում:

ՀԻՄՆԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐ			
I մակարդակ	II մակարդակ	III մակարդակ	
Գրաֆիկա (Գ)	Գծագրության հիմունքները (Գ1)	Գծագրական գործիքներ, նյութեր և պիտույքներ	
		Ստանդարտ, մասշտաբ, ձևաչափեր	
		Կետի և գծի պրոյեկտում	
		Երկրաչափական կառուցումներ	
		Առարկաների եռաչափ պատկերում և փոփոխություններ	
	Տեխնիկական գծագրություն (Գ2)	Գծագրերում մեխանիզմների մասերի պատկերում	
		Զափադրման հիմնական սկզբունքներ	
		Տեխնիկական նկար, էսքիզ	
		Պարզ հավաքական գծագիր	
	Շինարարական գծագրություն (Գ3)	Շինարարական գծագրերի առանձնահատկությունները (տեսք, հատույթ, հատակագիծ)	
		Շինարարական գծագրերում սիմվոլիկ պատկերումներ, մասշտաբ	
	Նյութեր և կառուցվածք ներ	Նյութեր և ռեսուրսներ (ՆԿ 1)	Նյութերի տեսակներն ու դասակարգումը
			Նյութերի հատկությունները և կիրառությունը
Դեկորատիվ կիրառական աշխատանքներում համապատասխան նյութերի և ռեսուրսների ընտրություն			
Նյութերի և ռեսուրսների խնայողական, անթափոն օգտագործում			
Նյութերի մշակում (ՆԿ 2)		Նյութերի մշակման եղանակներ՝ կտրում, միացում, հավաքում	

(ՆԿ)		Նյութերի մշակման ճիշտ եղանակի ընտրություն
	Կառուցվածքներ և մեխանիզմներ (ՆԿ 3)	Պարզագույն մեխանիզմներ
		Տարբեր նպատակների ծառայող մեխանիզմների կառուցվածքներ
		Շարժման փոխանցման և ղեկավարման համար նախատեսված մեխանիզմներ
Գործընթացներ և արտադրություն (ԳԱ)	Գործիքներ և սարքավորումներ (ԳԱ 1)	Նյութերի մշակման համար նախատեսված գործիքների և սարքավորումների անվտանգ շահագործում
		Նախագծային աշխատանքների համար անհրաժեշտ գործիքների և սարքավորումների ճիշտ ընտրություն
	Արտադրական գործընթաց (ԳԱ 2)	Տարբեր ոլորտների արտադրական գործընթացներ (ծանր և թեթև արդյունաբերություն, գյուղատնտեսություն և այլն)
		Արտադրական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ մասնագիտական հմտություններ
	Նախագծի կազմակերպում (ԳԱ 3)	Նախագծային աշխատանքների պլանավորում (քայլաշարի մշակում), կազմակերպում, վերահսկում և բարելավում
		Նախագծային փաստաթղթերի մշակում
	Ավտոմատացման տարրեր (ԳԱ 4)	Մեխանիկական, էլեկտրական, պնևմատիկ, էլեկտրոնային վերահսկիչ համակարգեր
		Ավտոմատացման վերահսկում
Ձեռնարկա-	Ձեռնարկատիրա	Ձեռնարկատեր և ձեռնարկատիրություն

տիրություն (2)	կան գործունեություն (2 1)	Ապրանքներ և ծառայություններ
		Նորարարություն և ստեղծարարություն
		Բիզնես գաղափար
		Բիզնես պլան
		Ձեռնարկատիրական գործունեության հիմնական տեսակները
		Ավանդական և սոցիալական ձեռնարկատիրություն
	Ռեսուրսների կառավարում (2 2)	Ռեսուրսների արդյունավետ օգտագործում
		Արտադրության գործոններ
	Շուկայավարում (2 3)	Շուկայի հետազոտություն
		Գովազդ
Տեխնոլոգիա և կյանք	Մանրի պատրաստում (ՏԿ 1)	Խոհանոցի կահավորանք և խնամք, տեխնիկայի անվտանգ շահագործում, սպասքաղրում
		Առողջ սննդի հիմնական սկզբունքներ: Մանրային սովորություններ
		Մանրի անվտանգություն և հիգիենա Մանրային մականշում և գովազդ
		Մանրի պատրաստման, պահպանման, վերամշակման սկզբունքներ, դրանց կապը սննդարարության հետ
	Հագուստի նախագծում և մոդելավորում (ՏԿ	Հագուստին ներկայացվող պահանջներ
		Տարազ՝ ազգային հագուստ-զարդարանք
		Գործվածքի ընտրություն

(ՏԿ)	2)	Հագուստի մոդելավորում
		Նորաձևության միտումներ
	Կենցաղ և ընտանիք (ՏԿ 3)	Անձնական հիգիենայի, վարվեցողության պարզ կանոններ
		Կենցաղային իրերի խնամք
		Ընտանեկան բյուջե
	Դիզայն և կիրառական արհեստներ (ՏԿ 4)	Հագուստի, ինտերիերի, կենցաղային առարկաների ձևավորում
		Հայկական ժողովրդական արհեստներ և դեկորատիվ կիրառական արվեստ
		Նյութերի գեղարվեստական մշակում
		Դիզայն
		Մասնագիտական կողմնորոշում

Աշխարհի ճանաչողության միասնական մեթոդաբանական հիմքերի ապահովման նպատակով առարկայի բովանդակությունը կառուցվում է նաև մի շարք ընդհանրական խաչվող հասկացությունների հենքի վրա: Դրանք առանցքային հասկացություններ են, որոնք օգնելու են սովորողներին միավորելու, փոխկապակցելու տարբեր առարկաներից ձեռք բերած գիտելիքները աշխարհի մասին ամբողջական պատկերացում ձևավորելու նպատակով:

Այդ հասկացությունների լուսաբանմանը պետք է մեծ ուշադրություն դարձվի հանրակրթական դպրոցի բոլոր աստիճաններում, այդ թվում նաև «Տեխնոլոգիա» առարկայի բովանդակությունը ձևավորելիս:

Առանձնացվում են տասներկու խաչվող հասկացություններ., որոնցից են՝ օրինաչափություններ, պատճառ և հետևանք, մեխանիզմ և կանխատեսում, մասշտաբ, համամասնություն և քանակ և այլն:

«Տեխնոլոգիայի» ուսուցման գործընթացում հաշվի են առնվում յուրաքանչյուր սովորողին, այդ թվում՝ ԿԱՊԿՈՒ երեխաներին ներկայացվող պահանջները՝ անհատական մոտեցում ցուցաբերելով նրանց առանձնահատկություններին, կարողություններին, հմտություններին և կարիքներին, ստեղծելով համապատասխան պայմաններ:


ԳԼՈՒԽ 2. <Տեխնոլոգիա> առարկան և մարդու պահանջմունքները

2.1. Մարդու պահանջմունքները

Ցանկացած մարդ իր ծննդյան պահից զգում է տարբեր կարիքներ կամ պահանջմունքներ: Պահանջմունքը՝ դա մարդու կարիքն է ինչ-որ բանի համար: Քանի որ մարդիկ կարող են միավորվել տարբեր հասարակություններում, հասարակությունն ընդհանուր առմամբ կարող է նաև կարիքներ զգալ: Արդյունքում ի հայտ են գալիս սոցիալական կարիքներ: Մարդիկ, ձգտելով բավարարել իրենց կարիքները, իրենց առջև դնում են տարբեր խնդիրներ և, լուծելով դրանք, առաջ են գնում իրենց զարգացման մեջ: Այսպիսով, կարելի է ասել, որ կարիքները մարդկային հասարակության զարգացման շարժիչ ուժն են:

Կարիքները փոխկապակցված են և կազմում են պահանջմունքների հիերարխիա (հիերարխիան նշանակում է ամբողջի մասերի կամ տարրերի դասավորություն՝ ըստ ամենացածրի և բարձրագույնի), որը ցույց է տրված

Նկար 1-ում:



Նկար 1. Մարդու պահանջմունքների հիերարխիան

2.2. Մարդու ֆիզիոլոգիական կարիքները

Ներքևում պատկերված նկարի հիմքում ֆիզիոլոգիական կարիքներն են (նկ. 2):

Սրանք սննդի, ջրի, քնի, շնչառության, բնակարանի, հանգստի, արտաքին միջավայրի (ցուրտ, ջերմություն, քամի) ազդեցությունից պաշտպանվելու կարիքներն են:

Ֆիզիոլոգիական կարիքները պետք է լինեն ողջամիտ, սահմանափակ, հակառակ դեպքում մարդը ոչնչով չի տարբերվի կենդանուց:

Դրանից վերև (տե՛ս նկար 1-ը) տեղադրված են անվտանգության կարիքները, որոնք արտահայտվում են մարդու՝ իր կյանքը, հարազատների և ընկերների կյանքը,

հայրենիքը բնական աղետներից, հանցագործներից, թշնամիներից,

անհանգստությունից պահպանելու և պաշտպանելու ցանկությամբ: Մարդիկ ձգտում

են ունենան կայուն աշխատանք, արտակարգ իրավիճակների դեպքում՝

ապահովագրություն (նկ. 3):



նկ. 2. Մարդու ֆիզիոլոգիական կարիքները



Նկար 3. Անվտանգության պահանջմունքները

Սոցիալական կարիքները (սոցիալական, այսինքն՝ հասարակության մեջ մարդկանց կյանքի հետ կապված) ցույց են տալիս, որ մարդը հավաքական էակ է և չի կարող ապրել խմբից դուրս: Նա փնտրում է շփում, բարեկամություն, սեր, օգնություն սիրելիներից: Նա կարիք ունի հոգ տանել այլ մարդկանց մասին, մասնակցել տարբեր ընդհանուր գործերի, պատկանել ցանկացած խմբի, համայնքի: Սա համագործակցության և փոխօգնության, ապրելու և որոշակի թիմում աշխատելու անհրաժեշտություն է (նկ. 4):



նկ. 4. Մարդու սոցիալական պահանջմունքները

Կարգավիճակի պահանջմունքները (կարգավիճակը՝ դա հասարակության մեջ մարդու դիրքն է) արտահայտվում են տարբերվելու, առավելություններ ունենալու, մյուսներից առաջ անցնելու, իր վրա հատուկ ուշադրություն դարձնելու ցանկության մեջ: Դրանք ստիպում են մարդուն զբաղվել կարիերայով, արժանի լինել ճանաչման և գործունեության բարձր գնահատականի: Կարևոր է նաև ինքնագնահատականի պահանջմունքը (նկ. 5):

Ամենակարևորը այն պահանջմունքներն են, որոնք տեղակայված են հիերարխիայի գագաթին: Մրանք, այսպես կոչված, հոգևոր պահանջմունքներն են: Դրանք ներառում են ինքնագարգացման պահանջմունքներ (նկ. 6), էթիկական (բարոյական), գեղագիտական (գեղեցկության պահանջմունքներ), ինտելեկտուալ (կրթության, հոգևոր զարգացման կարիքներ), ստեղծագործական պահանջմունքներ: Յուրաքանչյուր մարդ պետք է գիտակցաբար ձևավորի իր պահանջմունքները՝ անցնելով ամենացածրից դեպի ամենաբարձրը: Սա կոչվում է պահանջմունքների

բարձրացում: Բացի այդ, պահանջումները պետք է ընդլայնվեն, այսինքն՝ ավելի ու ավելի բազմազան դառնան:



Նկար 5. Մարդու կարգավիճակային պահանջումները



Նկար 6. Մարդու ինքնազարգացման պահանջումները

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Տեխնոլոգիա առարկան կարևոր դեր ունի սովորողների բազմակողմանի զարգացման գործում, այն ոչ միայն ձեռքի վարժանք է, այլև ստեղծագործական մտածողության զարգացման միջոց:

«Տեխնոլոգիայի» ուսուցման գործընթացում հաշվի են առնվում յուրաքանչյուր սովորողին, այդ թվում՝ ԿԱՊԿՈՒ երեխաներին ներկայացվող պահանջները՝ անհատական մոտեցում ցուցաբերելով նրանց առանձնահատկություններին, կարողություններին, հմտություններին և կարիքներին, ստեղծելով համապատասխան պայմաններ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հանրակրթության պետական չափորոշիչ՝
2. <https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788>, 29.03.2023
3. <https://hy.warbletoncouncil.org/aprendizaje-activo-9594>, 29.03.2023
4. <https://www.youtube.com/watch?v=wezThjim9As>, 27. 03. 2023
5. <https://www.youtube.com/watch?v=t0kMZbncP7c&t=533s>, 27. 03. 2023

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ
ՄՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱԶՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ**



**ՊԱՐՏԱԴԻՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՄՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ**

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Կարպետագործություն, գորգագործություն

ԿԱՏԱՐՈՂ՝ Ալիսա Աղաբեկյան

ՂԵԿԱՎԱՐ՝ Կարինե Պապիկյան դոցենտ, մ.գ.թ.

Բովանդակություն

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1.1. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1.2 Նպատակը

2. Պատմական ակնարկ
3. Կարպետի զարդանախշեր
4. Կարպետի տեսակներ
5. Կարպետ գործելու քայլաշար
6. Ներկանյութեր
7. Գործիքներ և սարքավորումներ
8. Եզրակազմություններ
9. Գրականություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթության գործընթացում աշակերտների մոտ ձևավորվում են տարբեր արժեքներ, այդ թվում նաև՝ մշակութային: Դպրոցականների մեջ իր ազգին բնորոշ բարոյական դաստիարակությունը, արժեքների ձևավորումը ժամանակակից դպրոցի կարևորագույն առաքելություններից է: Երեխան պետք է հստակ գիտակցի, թե որն է կյանքում ամենաարժեքավորը, ինչին կարելի է ձգտել և ինչպես հասնել նպատակին: Դպրոցի խնդիրն է պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից: Ազգային արժեքները տվյալ ազգի պատմությունն է՝ անցած ճանապարհը, որը ներառում է կրոնը, մշակույթը, հասարակական ու քաղաքական կյանքը: Մեր ավանդույթները պարզապես կարիք ունեն պահպանման. դրանք քարոզում են մարդասիրություն, հյուրընկալություն, ավանդապաշտություն և նման համամարդկային այլ բարձր գաղափարներ: Յուրաքանչյուրս փորձենք դառնալ դրանց կրողը՝ դա դարձնելով մեզ համար կենսակերպ: Մշակութային ժառանգության ուսուցման միջոցով պահպանվում է ժառանգությունը, մեծանում է իրազեկվածությունը, հարգանքն ու արժևորումը սեփական մշակույթի նկատմամբ: Հայկական զարդերն ու զարդանախշերը այնպիսի արժեքներ են, որոնցով բացահայտում ենք մեր նախնիների մտածելակերպը և աշխարհայացքը: Յուրաքանչյուր զարդանախշ ունի իր իմաստը, հայկական գորգերում կարելի է կարդալ մի ամբողջ պատմություն գորգ գործողի մասին, գորգի ստեղծման ժամանակաշրջանի մասին»: Մեր ժողովրդական արվեստում արտացոլվում են հայի ոգին, երազանքները, ապագայի սպասումները, սերն անցյալի ու նախնիների հանդեպ: Արվեստի որ ոլորտն էլ վերցնենք՝ ասեղնագործություն, գորգագործություն, թե կավագործություն և այլն, մեր պատմությունն է, մեր անցյալը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Դաստիարակության և կրթական գործընթացի ճիշտ կազմակերպման համար շատ կարևոր են ոչ միայն համամարդկային, այլև հայրենի մշակույթի բարձրարժեք ստեղծագործությունների ուսումնասիրումն ու ուսուցումը: Այդ ստեղծագործություններում արտահայտված են մեր ժողովրդի հոգեկերտվածքը, աշխարհընկալումը, մարդասիրական գաղափարներն ու գալիքի երազանքները: Հայ ժողովրդի մշակույթում է, որ վառ կերպով արտացոլված են մեր ազգի ազգային հավաքական բնույթը, անդրդվելի կամքը, ներքին զորությունն ու հնարավորությունները, ապրելու, վերածնվելու և հարատևելու ունակությունը, ազգերի պատմության մեջ իր արժանի տեղն ունենալու ձգտումը: Այդպես նոր սերունդը պիտի հասնի այն գիտակցության, որ հասարակական կյանքի առաջընթացը պայմանավորված է համախմբվածությամբ, գիտելիքների բարձր մակարդակով ու մշակութային արժեքների ոչ միայն ստեղծմամբ, այլև պահպանմամբ: Սերունդ, որը կկարողանա շարունակել ազգային լավագույն ավանդույթները, աշխարհին ու մարդկությանը ցույց տալիք մշակութային հարստությունն ու բարոյահոգեբանական արժանիքները:

Նպատակը

Սերմանել աշակերտների մեջ սեր դեպի իր մշակույթը, իր ազգայինը: Կարողանան ճանաչել և արժևորել նյութական և ոչ նյութական ժառանգությունը, դրա առանձնահատկությունները և ներդրումը համաշխարհային մշակույթի մեջ:

Պատմական ակնարկ

Կարպետագործությունը հայ ժողովրդի հնագույն ու սիրված արհեստներից է: Այն իր ուրույն տեղն է գրավել մշակույթի համընդհանուր գանձարանում, մշակվել, պահպանվել ու կատարելության է հասել հայուհիների շնորհիքի ու կարողությունների շնորհիվ:

Գյուղերում աղջիկները դեռ վաղ հասակից նստել են տորքի առջև, յուրաքանչյուրն իր օժիտի համար հյուսել է կարպետահյուս խուրջիններ, անկողնապարկ, տաշտի մեզար, գդալաման, վարագույր



Հյուսելիս իրենց հոգսերն են կիսել ճախարակի, իլիկի հետև և վարժ ձեռքերի արագ շարժումներով ստեղծել նրբահյուս կարպետներ:

Կարպետը զարդարել է բնակարաններն ու եկեղեցիները, ցրտից պաշտպանել է մարդկանց և գործածվել որպես հանդերձանք:

Կարպետները ծառայել են տարբեր նպատակների և ունեցել են տարբեր անուններ: Մեզարներն օգտագործում էին հաց թխելիս, ջեջիմը ծառայում էր որպես փռոց: Խուրջինը եղել է տարբեր չափերի: Ամենամեծն

իշխուրջինն է, որի մի աչքում տեղավորում էին խնոցին, մյուսում՝ կաթսան կամ այլ իրեր:



Անկողնապարկն օգտագործվել է հագուստ, անկողին, գորգ, կարպետ փոխադրելու համար: Աղաքսակներում պահել ու սար են տեղափոխել երկանքով աղացած աղը:

Կարպետ գործում են հիմնականում բրդե, շատ դեպքերում՝ բամբակե, երբեմն՝ մետաքսե, վուշե, ոսկե թելերով կամ դրանց խառնուրդներով: Ցրտից պաշտպանվելու և դեկորատիվ նպատակներով փռում են հատակին, թախտին, աստիճաններին ու միջանցքներում, կախում պատից, գործածում իբրև վարագույր, վրանի, ձիու թամբի ծածկոց:

Գորգագործությամբ զբաղվել են բոլոր այն ժողովուրդները, ովքեր ապրել են խիստ ցուրտ ձմռան և շատ շոգ ամռան պայմաններում: Դրանք հիմնականում Առաջավոր, Միջին և Կենտրոնական Ասիայում, ապրող ժողովուրդներն են, այդ թվում նաև հայերը: Գորգը բազմազան կարդանախշերով, խավածածկ կամ առանց խավի քառանկյուն

գեղարվեստական գործվածք է: Ծառայել է որպես վարագույր բնակարանը տաքացնելու, զարդարելու, ինչպես նաև ձայնակլանման համար: Գորգերը հիմնականում հյուսում են թելերից:



Առանց խավի գորգերը հայերի մոտ կարպետ են կոչվել: Վաճառականներից այդ անունը անցել է Եվրոպա, և եվրոպացիները բոլոր տեսակի գորգերին կարպետ են ասում: Գորգին երբեմն խավի կամ քալի (կալի) էլ են ասում: Արաբ պատմիչները դա բացատրում են նրանով, որ Էրզրումը (Կարինը) գորգագործական խոշոր կենտրոն է եղել, որտեղի արտադրանքը արաբ վաճառականները գնել ու վաճառել են այլ երկրներում: Եվ, քանի որ արաբները Կարինին Քալին կամ Խալին են կոչել, դրանից էլ առաջացել է խավի անվանումը:

Կապերտագործության զարգացման համար Հայաստանում կային բոլոր նպաստավոր պայմաններն ու նյութերը (բուրդ, այծի մազ, բամբակ, մետաքս, բուսական, կենդանական, հանքային ներկեր և այլն):




Միաժամանակ Հայաստանով էին անցնում Արևելքը Արևմուտքի հետ կապող միջազգային առևտրի խոշոր ճանապարհները, որը և նպաստում էր կարպետներ գործելուն և արտահանելուն:

Հայաստանում ամենահին գործվածքները գտնվել են Արթիկի հնագույն դանբարանից---մ.թ.ա. XIV-IX դ.դ.:



Թեյշեբաինի (Կարմիր բլուր, մ.թ.ա. VII) ամրոցում հայտնաբերվել են թելերի փաթույթներ, իլիկներ, բրոյա թելերի կծիկներ, գործվածքներ, խավով գործվածքի՝ գորգի պատառիկներ:



Հունահռոմեական, պարսկական, արաբական, բյուզանդական աղբյուրներում բազմաթիվ վկայություններ կան հին և միջնադարյան հայկական գորգերի մասին:

Հայկական գորգերի մասին նշել է Քսենոֆոնը, ,արաբ մատենագիրները վկայում են, որ VII դ- ում Հայաստանից գանձվող բնատուրքի մեջ եղել է 20 հատ գորգ:

Հին կարպետներ չեն պահպանվել, բայց նրանց բազմաթիվ զարդանկարները կարելի է նկատել քարե հուշարձանների, խաչքարերի վրա:

Հայաստանի ողջ տարածքը 13-18-րդ դարերի ընթացքում եղել է թուրքմենական տարբեր ցեղերի, ապա թուրք-պարսկական անընդմեջ պատերազմների թատերաբեմ: Դրանք ուղեկցվել են համատարած ավարառությամբ, որի արդյունքում էլ հայոց մշակութային արժեքները, այդ թվում նաև գորգերը, դարձել են նվաճողների և նրանց մզկիթների սեփականությունը:



Արաբական խալիֆաթի դեսպանության անդամ Իբն Ֆաթլանը 10-րդ դարի 20-ական թթ-ին Կամայի բուլղարական թագավորի արքունիքում իր անցկացրած կյանքի նկարագրության մեջ գրում է, որ թագավորի հսկայական վրանը, որտեղ նա ապրում էր ամառվա ամիսներին, շուրջ 1000 մարդ էր տեղավորվում: Վրանում փռված էին հայկական (արմանի) գորգեր:

Մեզ հասած ամենահին գորգը

Գորգարվեստին վերաբերող մեզ հայտնի ամենահայտնի նմուշը Պազիրիկ կոչվող գորգն է: Ք.ա. 5-րդ դարով թվագրվող այս արվեստի գործը հայտնաբերվել է 1949 թ.՝ Լեռնային Ալթայի Պազիրիկ կուրգանի դամբարաններից մեկում: Այն շուրջ 25 դար մնացել է սառած դամբարանում եւ զերծ մնալով արտաքին որևէ ազդեցությունից, հասել մինչև մեր ժամանակները: Գերմանացի ուսումնասիրող Ուլբրիխտ Շուրմանն

արվեստի այս գլուխգործոցը վերագրում է հայկական մշակույթին: Այս տեսակետը հիմնավորվում է հատկապես գորգի՝ կրկնակի հանգույցով գործված լինելու եւ որդան կարմիրի առկայության փաստով, որը բացահայտել են Սանկտ Պետերբուրգի Էրմիտաժի մասնագետները: Նրանք էլ խնամքով պահպանում են աշխարհի ամենահին գորգը:

<<Եռախորան>> գորգը հայերեն հիշատակագրությամբ ամենահին գորգն է, ըստ որի գորգը գործված է հայոց 651թ-ին- մեր թվականության 1202թ-ին հավանաբար Գանձակի (այժմյան Կիրավաբադ)Բանանց հայկական գյուղում: Գորգի կենտրոնը ներկայացնում է եռակամար խորանի տեսարան , որի 2 սյուների պատվանդանները (խարիսխները) պատկերում են խիստ ոճավորված արմավենյակներ , վրան՝ <<կենաց ծառի >> սխեմայով: Սյուների խոյակների ճակատների վրա կան քառախաչեր, իսկ խոյակների վերևում աղավնակերպ մոտիվ: Որպես հայկական գորգի բնորոշ հատկանիշ, դրա տակ շրջագարդված է 3 գոտիներով: Արտաքին շրջագոտին , որը մյուս երկուսից լայն է , զարդանախշված է քառաթև վարդյակներով , որոնք իրար կապված են ծաղկազարդ շյուղերի հյուսվածքով: Երկրորդի ամբողջ մակերեսը գրավում են շուշանի ոճավորված մոտիվները, , իսկ երրորդ կիսագոտին, որն ամենանեղն է, ունի հայերեն հիշատակությունն <<Արկանելիս>>:

Այս խմբին պատկանող գորգերը առնչվում են եկեղեցու և ընդհանրապես կրոնական ծիսակարգի հետ ու հիմնականում էլ գործածվել են որպես աղոթքիգորգեր:

Ըստ էության, հենց դրանով էլ պայմանավորված է այս գորգերի գեղազարդման համակարգում եկեղեցական առարկաների՝ ջահի կամ կանթեղի պատկերների, ինչպես նաև բուսածաղկային նախշերի ու հորինվածքների առկայությունը:

«*Եռախորանը*» պահվում է Վիեննայի արվեստի և արդյունաբերության պատմության թանգարանում և առաջին անգամ հրատարակվել է 1895թ:



Մյուսը վիշապի ու արծվի կովի տեսարանով գորգը, որը գտնվում է Բեռլինի թանգարանում, որը, ըստ մասնագետների գործված է Լոռի- Ղազախում 13-րդ դարի 30-ական թթ-ին: Այս գորգի ձախ կողմի ներքևի անկյունում, գլխավոր շրջագոտու միացման կետում, գտնում ենք մի քառաթև սպիտակ խաչ, ագուցված զարդագրով, որը հավանաբար գործողի անվան հայերեն երկու սկզբնատառերն են: Գ.Հ.Զամրակճյանը կարծում է, որ վիշապի և արծվի կովի տեսարանով հայ վարպետը հավանաբար ցանկացել է պատկերել հայերի և հարևան պարթևների կռիվը, որտեղ արծիվը հաղթվում է վիշապից:

Ուշագրավ է նաև «Անահիտ» գորգը, որը հավանաբար գործված է Կիլիկիայում 14-րդ դարի առաջին կեսին: Գորգի կոմպոզիցիան ներկայացնում է ծաղկած այգի, որի ամեն մի խորշում կան վիշապներ ու գազաններ: Գորգն ունի գործողի մակագրությունը: «Անահիտ գորգն արտացոլումն է աշխարհիկ կյանքի» «Եդեմական այգու» պատկերմամբ: Այս կոմպոզիցիայով արտահայտվել է ժողովրդի ճաշակը, հավանաբար նրա երջանիկ ապրելու ձգտումը: Մեծ մեղալիոնի շրջանակի ծաղկեպսակների վերին 2 ծայրերում պատկերված է ձեռքի խիստ սխեմատիկ մոտիվը, որը պարզված է «Եդեմական ծաղիկը» պոկելու դիրքով: Այն տեղադրված է այնպիսի մի տեղում, որին կարծես 2 կողմից «հսկում» են վիշապը և առյուծանման գազանը: Հատկանշական է այն, որ երջանկությանը տիրանալու ձևը գորգանկարում պատկերված է մարդկային ձեռքով այդ ծաղիկը պոկելու, այսինքն՝ երջանկությանը աշխատանքով հասնելու տեսարանով:



- Լոնդոնի «Վիկտորիա Էնդ ալբերտ» թանգարանում է գտնվում «Գոհար» անվամբ գորգը, գործված 1680թ-ին: Այս գորգը արցախյան գորգերի գլուխգործոցներից մեկն է՝ «Գուհար» կամ «Գոհար» վիշապագորգը: Գործվել է 1699 թ. Արցախում, Գոհար անունով աղջկա կողմից, որի համար էլ վիշապագորգերի այս տեսակն այնուհետև կոչվել է Գուհար վիշապագորգ:

Գորգի վրա տեսնում ենք գորգագործի թողած գրությունը՝ «Ես՝ Գուհարս, մեղօք լի, հոգովս տկար,ես նորհաս ձեռամբ իմով գործեցի, ով կարդայ մէկ բերան ողորմի ասի:

Մեծ վիշտ ուներ Գոհար իշխանուհին: Ու քանդում էր այդ ցավը նրա հոգին տեղատարափ ջրերի նման:

Կառուցեց բարձրաշեն եկեղեցի, Ցավը գրեց քարի վրա, դրեց հիմքի մեջ, որ սուրբ ծանրության տակ ճգմվի, սպանվի իրեն կեղեքող երակը: Իսկ երբ հնչեց օծման պատարագը, Գոհար իշխանուհին, կանգնած եկեղեցու խորանի մոտ, զգաց, որ Ցավն իր հետ է: Անբաժան: Միահյուսված անցյալին ու ապագային:

Եվ այդ օրը նա ոտաբոբիկ մտավ ամրոց: Քարերի սառնությամբ ուզեց մարել այրող կրակը և նրանց սուր ծայրերով ուզեց ծվատել Ցավը: Քայլեց, անցավ գրապահոցի, հանդերձոց սրահի, գանձարանի, տաճարի փակ ու խորհրդավոր դռների կողքով: Մոտեցավ կոպիտ, փայտյա մի դռան, հակվեց, գլուխը հենեց նրան: Ներսից երգի ձայն լսեց, զգաց այնքան ծանոթ որդան ներկի բույրը: Մտավ ներս: Հսկա մի տորք էր դրված սրահում, անկյունում կուտակված էին բրդյա գույնզգույն թելեր, հաստ պարանների վրա կախված էին պատրաստի գորգեր: Բայց այստեղ ոչ ոք չկար: Եվ որտեղի՞ց երգի ձայնը: Նստեց տորքի դիմաց: Թելերը կախված, պատրաստ սպասում էին կենարար ձեռքերին, բայց դեռ ոչ մի հանգույց արված չէր: Սկսեց գործել: Նախ հոգին խոսեց ու նա գորգի վերևում գրեց <ԵՄ՝ ԳՈՒՀԱՐՍ, ՄԵՂՕՔ ԼԻ ՀՈԳՈՎՍ ՏԿԱՐ ՁԵՌԱՄԲ ԻՄՈՅ ԳՈՐԾԵՑԻ ՈՎ ԿԱՐԴԱՅ ՄԵԿ ԲԵՐԱՆ ՈՂՈՐՄԻ ԱՄԻ>...,

<ԳՈՂԱՐ> գորգը չի պատկանում կոնկրետ տեսակի և խորապես անհատական ստեղծագործություն է: Այն գործվել է հայ իշխանուհու

ձեռքերով:

Իր ստեղծման հիմքում առեղծավածային վիշտ կրող այս գորգը պիտի հիմքը դնէր հայկական գորգերի նոր տեսակին, որոնք պիտի կոչվէին <Գուհար> գորգեր:

Հայկական կարպետի զարդանախշերը լինում են

1. երկրաչափական,

2. կենդանական և

3. բուսական

Եթէ կենդանական զարդանախշերի փոխադարձ կապերի հիմքում ընկած են նրանց պայքարի հետ առնչվող գաղափարները, ապա բուսական նախշերն են, որ ուժեղացնում են պտղաբերության, աճի գաղափարը:



Յուրաքանչյուր զարդանախշ իր ուրիշմն ու բազմատեսակ տարբերակներն ունի: Հայի համար զենքի նման հզոր պահպանիչ միջոցներ են եղել նաև հավատի խորհրդանիշները:

Ամենատարածված զարդանախշը **խաչն** էր, որը խորհրդանիշն էր աշխարհի նյութականությունը կազմող չորս տարրերի՝ *օղի, ջրի, հողի և հրի (արև)*, չարխափան է համարվել: Դրանով <<պայքարել>> են բնության չար ուժերի դեմ, <<կանխել են>> արհավիրքները երաշտը, կարկուտը, պատերազմները և այլն: Հնագույն խաչանախշը մեզ է հասել և՛ առանձին պատկերով հավասարաթև խաչ, և՛ շրջանակի մեջ, որը, հավանաբար, հենց երկրագնդի պատկերն է հանդիսանում:





Նկ. 7. Խաչորգ

Շատ հաճախ կարպետի հիմնական կոմպոզիցիան ստեղծվում է վեցանկյուններից, որոնք, մի քանի շերտով դասավորվելով կարպետի դաշտի վրա, մեղրամոմի խոռոչներ են հիշեցնում: Կանթերը եռանկյան ու քառակուսու համադրությունն է, տիկնիկը՝ միջին և փոքր եռանկյունների միաձուլումը, մոմը՝ երկարավուն նեղ քառանկյունու վրա դրված փոքր քառակուսի և այլն:



Լայն տարածում ունեն կենդանական զարդանախշերը՝ հաճախ է հանդիպում լատինական S տառը հիշեցնող օձանման կեռիկը, որն ավելի շատ գորգագործության մեջ է տարածված: Իր ինքնատիպ արտացոլումն է ստացել վիշապի պատկերումը: Վիշապ օձը համարվում էր ջրի խորհրդանշան:



Մեր զարդանախշերի մեջ մենք կարող ենք տեսնել **երկրաչափական** զարդանախշեր, **թռչնաձև կամ վիշապաձև** զարդանախշեր, բայց դրանք բոլորը ունեն երկրաչափական կառուցվածք: Այսինքն՝ երբ մենք ասում ենք վիշապաձև զարդանախշ, պետք չի այնտեղ վիշապ փնտրել: Վիշապը ստանում են հստակ երկրաչափական սինվոլիկա կիրառելով, որը կրում է կոնկրետ խորհրդանիշ և ունի կոնկրետ կոդ :Նրանցում արտացոլվում էին աշխարհի արարումը, տղամարդ-կին հարաբերությունները և այլ կենցաղային թեմաներ:


1.Ջրից են ծնվել <<Սասունցի Դավիթ>> էպոսի տոհմաճյուղն սկզբնավորող հերոսները՝ Սանասարն ու Բաղդասարը: Վիշապ օձերը ջուրն արգելակող չար ուժեր են, խավարի ուժերը: Թունավոր կենդանիների պաշտամունքը մարդկանց պատկերացմամբ ազատում էր այդ իսկ կենդանիների վնասակար ազդեցությունից:

2.Վիշապագորգերում տիրապետում են 4 գույներ՝ կարմիր, կապույտ, շագանակագույն, փղոսկրագույն: Հիմնական գույնը վառ կարմիրն է ստացված որդան կարմրից, որի արտադրության հիմնական վայրը եղել է Արարատյան դաշտը:


3.Կենդանական զարդանախշերն ունեն նաև զինանշանային արտահայտություններ: Դրանցից են արծիվը, թռչունները, շունը, կատուն և այլն:



Նկ. 9. Վիշապագորգ, Արցախ,





Նկ. 5. Կենդանական զարդանախշեր



Նկ. 22. Արմիստոս

Բուսական զարդանախշերից ամենատարածվածը **աստղածաղիկն** է: Աստղածաղիկի նման են **խաչվարդերը**, որոնք իրար հետևող և խաչ ստեղծող գծերն են: Այս խաչի յուրաքանչյուր թևի տակ տեղադրվում է եռանկյունաձև նեղ երիզ: Կարևոր են բուսական ճյուղերը, որոնք ուղղահայաց առանցք ունեն, երկու կողմից՝ զույգ երկարավուն տերևներ:

Խնձորը խորհրդանշում է՝ պտղաբերություն, սեր, ուրախություն, իմացություն, իմաստնություն, աստվածացում, շքեղություն, ինչպես նաև խաբկանք ու մահ: Խնձորն իր կլորությամբ ներկայացնում է ամբողջականությունը և միասնությունը՝ խորհրդանշելով նաև անմահությունը: Կենաց ծառի պտուղն է, կյանքի և նախնական մեղքի խորհրդանշանը:



Նուռը խորհրդանշում է՝ պտղաբերություն, առատություն, մեծահոգություն, սիրային փորձություն: Նվիրաբերում էին սիրո, ինչպես նաև մայրության ու երկրագործության աստվածուհիներին: Նուռն մուգ կարմիր կաշի հիշեցնող պատյանի մեջ ամփոփված հատիկները մեկնաբանվել են որպես միասնական տիեզերք, Աստծո շնորհների բազմազանություն, իր հոտին հովանավորող եկեղեցի

Նուռ անունն է կրում մի քանի սուրանկյուն եռանկյուններից կազմված այն հորինվածքը, որն ունի սուրանկյան ճառագայթանման ծայրերը հավաքող կենտրոն և նիստավոր եզրեր: Այն համարվում է սիրո, պտղաբերության և անմահության խորհրդանիշ:

Հեթանոսական շրջանի շատ ու շատ զարդաձևեր քրիստոնեության շրջանում վերափոխատավորվել են հավատի նոր խորհրդանիշների, օր՝ երեքնուկը՝ սուրբ երրորդության, աղավնին՝ սուրբ հոգու գալստյան և այլն:

Մարդկային և կենդանական պատկերները տրված են շարժման մեջ, հար և նման միջնադարյան մանրանկարչության մոտիվներին; Մարդը պատկերված է ձեռքերը վեր պարզած պարելիս, աքաղաղը՝ խրոխտ կանգնած, եղջերուն, շունը, այծյամը՝ վազքի պահին, աղյուծը, գայլը, հովազը, արծիվը՝ հոշոտելիս և այլն:

Բուսական մոտիվների ամենագլխավոր արտահայտությունը **կենաց ծառն** է: Կենաց ծառը խորհրդանիշ է այն բանի, ինչ մարդը կարողացել է քամել հողից, տոհմի հավերժության խորհրդանիշ:

Կենաց ծառը դիցաբանական, աստվածաշնչյան և հոգևոր համակարգերում շեշտում է կյանքի վերընթաց գիծը՝ ծննդից մինչև ծաղկունք ու պտղաբերում: Նրա բարձրագույն նպատակը անմահությունն է: Կենաց ծառ, կյանքի ծառ, ըստ Աստվածաշնչի՝ հավերժական կյանքն իր մեջ մարմնավորող դրախտային ծառ, որը տալիս է անմահական պտուղներ: Կյանքի ծառն արտացոլում է կյանքը կրող էակների (բույսեր, կենդանիներ, մարդիկ) աստիճանական աճը և տարածումը:



Նկ. 7. Խորջին, կնակ ծառի
գարդանկարով

Կարպետի և գորգի միջև եղած էական տարբերությունն այն է, որ գորգի գարդանախշերն ստեղծվում են հանգույցների շնորհիվ: Գորգի զուտ արտաքին տարբերակիչ հատկանիշը խավն է: Հայկական գորգերի խավի երկարությունը 4-9մմ է:

- Գորգագործական արվեստում հատուկ տեղ են գրավում եզրանախշերը: Եզրաշերտերը չորս կողմից պատելով, իրենց մեջ են պահում գորգի մակերեսը, ամբողջացնում գորգը: Գորգի եզրաշերտերում մեկ կամ մի քանի մանր մոտիվներ շարժվում են , կրկնվում ժողովրդական կլոր պարի պես, ուր սկիզբն ու վերջը միաձուլվում են իրար:
- Կարպետներն ու կարպետագործ իրերը գործվում են տարբեր տեխնիկայով: Ըստ այդ հատկանիշի նրանք պայմանականորեն բաժանվում են 7 խմբի:
 - 1. Մեզար
 - 2. Ջեջիմ
 - 3. Երկկողմանի մատնաքաշ
 - 4. Շուլալ
 - 5. Ուղիղ օղաճիտ փաթաթովի կարպետ
 - 6. Թեք օղաճիտ փաթաթովի կարպետ
 - 7. Ծոպավոր կարպետ



Մեզար-----Այն գործվում է կտավի պես, գործող թելը մեկընդմեջ անցնում է հենքի թելերի միջով , ստացվում է երկու երեսից հարթ, նույնանման գործվածք, ուր երևում են և՛ գործող, և՛ հենքի թելերը: Մեզարները (նուրբ, բարակ, ոչ խիտ գործվածք), որոնք կիրառվել են լավաշի խմորի գնդերը ծածկելու համար և գործվել են ինչպես կտավը: Մեզարները նաև յուրահատուկ են նրանով, որ դրանց հիմնաթելերը լինում են գունավոր

Ջեջիմը--- գործում են գետնին խփված ցցերի միջև արված հենքի վրա և՛ երկարությամբ, և՛ լայնությամբ: Ջեջիմը (ճիմ-ճիմ) (բազմագույն, նախշավոր, խիտ գործվածք է) ծառայում էր որպես փռոց, դրանով կարում էին նաև ներքնակի երես: Ջեջիմները մեզարների նման ունեն գործելու գրեթե նույն տեխնիկան: Նախշերը ստեղծում էին առանձին թելով՝ փայտիկների միջոցով: Փայտիկներն օգնում էին գործվող նախշի հաշիվը պահելու համար: Ջեջիմի նախշերը հիմնականում լինում են ուռուցիկ: Նախշավոր ջեջիմները գործվել են օժիտի համար:




Երկու երեսանի կարպետ կամ մատնաքաշ---Կարպետի հենքն արվում է խավավոր գորգի նման, հիմնականում ուղղահայաց տորքի վրա:

Երկկողմանի («մատնաքաշ») կարպետները ամենաշատն էին կիրառում կեցադում: Այս տեսակի կարպետների հիմնաթելը միագույն է, գործվածքը՝ խիտ և բազմանախշ, երբեմն՝ շերտավոր կամ կրկնվող նախշերով: Կարպետի երկու կողմում նույն զարդանկարն է, նախշերը խոշոր են, գույնզգույն և հստակ: Ի տարբերություն մեզարների և ջեջիմների սրանք հիմնականում ունեն եզրագոտիներ և կենտրոնական հատված:



Դրանց մեջ առավել աչքի են ընկնում խոշոր մեդալիոնները, խաչաձև զարդանախշերը, թռչնային, կենդանական նաև բուսական զանազան զարդաձևեր: Երկկողմանի կարպետներում կիրառում էին բամբակյա և մետաքսյա թելեր:

Կարպետները կիրառվել են՝ որպես ննջեցյալի տապան, եղել են նաև աղոթքի կարպետներ:




Ամեն մի կարպետ ունի կենտրոնի զարդանկարներ: Այս տեսակի նախշերն ավելի խոշոր են, քան այլ գործվածքներում: Մեծ մեդալիոնները կրում են հայկական տոնական հացի անուններ՝ «գաթա», «բաղարջ» որոնց վրա սովորաբար նկարված են խաչեր, աստղաձևեր և այլն:



Նկ. 10. Կարպետ, կրկնակի շուլալ


Շուլալ՝ կարպետի նախշերը գորգի նման արվում են փափուկ թելերով: Անվանումը գալիս է գործելու տեխնիկայից: Գործող նախշը ձևավորվում է հորիզոնական գծերով, հենքի միջով անցնում է շուլալ կարի պես ծածկում է հենքի մի քանի թելը, ապա անցնում կարպետի տակի կողմը, որոշ տարածությունից հետո նորից դուրս է գալիս կարպետի երեսը, դարձյալ վերցնում են մի քանի թել և անցնում տակի կողմը: Նախշ ձևավորելիս գործող թելի ծայրերը կարպետի հետևի կողմում թողնում են կախված: Ավարտելուց հետո տակից կապում են կարի հանգույցով: Շուլալ կարպետի և՛ նախշերը, և՛ տափը (դաշտը) միասին են գործվում, շարք շարքի հետևից: Գործողը պետք է ունենա հաշվելու, նախշը դուրս բերելու հմտություն, նաև փորձ, աչքաչափ



Նկ. 11. Խուրջին, ուղիղ
օղաճիտ փաթաթովի գարդանկար

Ուղիղ օղաճիտ փաթաթովի կարպետ

Ուղիղ օղաճիտ փաթաթովի կարպետում՝ գործող գունավոր թելը փաթաթվում է հենքի մեկ կամ երկու թելի շուրջը, օղակաձև «ճիտ է անում», փաթաթվում, անցնում աջ, ապա պտտվում հենքի հաջորդ մեկ կամ երկու թելերի շուրջը և այսպես մինչև շարքի վերջը: Շարքն ավարտելուց հետո անցնում է միջնաթելը և ամուր կտուտվում-ամրացվում: Հենքի թելը և միջնաթելերը չեն երևում, թաքնվում են գործվածքի մեջ այս տեխնիկայով գործվածքի դեպքում գործող թելն ուղիղ գծով է տեղադրվում, իսկ երբ հաջորդ շարքում վրայից նույն գույնի թել է անցնում, ստացվում են մանր քառակուսիներ: Դիտողին թվում է, թե ուղիղ համրովի հարթակար ասեղնագործություն է: Գործվածքի հետևում գործող թելը թեք-թեք է նստում: Օղաճիտ փաթաթովի կարպետները մի երեսանի են, հաստ, խիտ են գործված և բարձր են գնահատվում: Ուղիղ օղաճիտ գործվածքը բարդության պատճառով շատ քիչ է ընդօրինակվել: «Վերջին գործերը վերաբերվում են XX-րդ դարի առաջին քառորդին, այժմ ոչոք չի կարող գործել»:



Թեք օղաճիտ փաթաթովի կարպետ

Թեք օղաճիտ փաթաթովի կարպետն ուղիղ օղաճիտ կարպետի պես բարդ գործվածք է: Այս տեսակում ևս գործող գունավոր թելը պատ է տալիս, ճիտ անում հենքի մեկ կամ երկու թելին, միայն թե ուղիղ օղաճիտից տարբերվում է օղակների տարբեր դասավորությամբ, այստեղ գործող թելը թեք-թեք է դասավորվում: Եթե գուգահեռ անցկացնենք ասեղնակարերի հետ, կտեսնենք, որ թեք օղաճիտը նման է շյուղակարի, ցողունակարի, ավելի շատ համրովի թեք հարթակարի: Այստեղ ևս դաշտ-տափն ու զարդանկարը միասին են գործվում, շարք շարքի հետևից: Ուղիղ օղաճիտում կարպետի երեսի ուղիղ կարերը տակի կողմից թեք-թեք էին ընկնում, իսկ թեք օղաճիտում` ուղիղ: Բարակ, ոլորած, ամուր միջնաթելը (ինչպես գորգերում) ամրացնում է շարքերը, և ինքը չի երևում: Թեք օղաճիտ փաթաթովի կարպետները միերեսանի են: Այս տեխնիկայով են գործվում հայկական հռչակավոր օձակարպետները:

Ծոպավոր` (ծոպերես) կարպետը հյուսման տեխնիկայով մոտենում է գորգին: Նրա մակերեսին տեղ-տեղ շերտերով գորգի հանգույցներ են կապում և երեսի կողմում ծայրերը կտրած թողնում: Գոյանում են գորգի նման խավով նախշեր:

Կարպետ գործելու քայլաշարը

- ▶ Կարպետ հինելը:
- ▶ Հենքաթելի ամրացումը շրջանակի վրա
- ▶ Հավասարեցնող շղթայի հյուսումը
- ▶ Հենքաթելերի բաժանումը
- ▶ Միջնաթելերի անցկացումը
- ▶ Զարդանախշի և թելերի ընտրություն
- ▶ Կարպետի հյուսումն ըստ էսքիզի
- ▶ Կարպետի վերջնական մշակում



հումք

- ▶ Կարպետագործության համար հումք են հանդիսանում ուղտի, ոչխարի բուրդը, այծի փափուկ մազը (դֆտիկ), բամբակը, մետաքսը:
- ▶ Ներկերը պատրաստվում էին օգտագործելով բուսական, կենդանական և հանքային ծագում ունեցող նյութեր, որոնցից ամենանշանակալիցն էր Ռոդան կարմիրն էր: Այն ստացվում էր Արարատյան դաշտի բույսերի արմատապրոդ կարմիր գույնի մեծածախ



- Հայկական գորգերի հիմնական հատկանիշը նրանց գունային լուծումներն ու ներկման առանձնահատկություններն են, որի համար կիրառվել են միայն բնական ներկեր՝ որդան կարմիր, տորոնը, լաջվարդը: Այս ներկերը մեղմ գույներով գունավորելուց բացի, մազախավին հաղորդել են մետաքսի փայլ, փափկություն և ջերմություն

- ❖ Հայաստանում լայնորեն օգտագործվել են հանքային ներկանյութերը, որոնց մեջ գերակշռում էին ներկատու հողերի տեսակները (օխրաները):
- ❖ Նույնիսկ բուսական նյութերով ներկելիս ներկի գույնն ամրացնելու համար գործածվում էին հանքային նյութեր՝ աղ, շիբ, կիր:
- ❖ Հանքային ներկանյութերից լայն կիրառություն ունեւ նաև կապույտ գույն ներկող լաջվարդ անունով հայտնի հանքաքարը:
- ❖ Մետաղներն ու դրանց փոշին (մասնավորապես երկաթը, երբեմն՝ արջասպը) լայնորեն օգտագործվում էին որպես բրդի ներկման տեխնոլոգիական ցիկլի լրացուցիչ բաղադրիչ:
- ❖ Մակայն բնակչության մեջ ամենագործածականը բուսական ներկանյութերն էին, որոնք խիստ մեծաթիվ էին և բազմազան: Նայած տարվա եղանակին՝ օգտագործվում էին բույսի արմատը, ցողունը, կեղևը, տերևները, ծաղիկը և պտուղները: Ամենաարժեքավոր բույսը, որը ոչ միայն տեղում է օգտագործվել, այլև արտահանվել է, տորոնն է, որը տարածված է ողջ Անդրկովկասում:
- ❖ Կարմիր գույնը, որը ստացվում էր տորոնից, ամենասիրված ու տարածված գույնն էր, այդ էր պատճառը, որ այս ներկաբույսը մեծ պահանջարկ էր վայելում՝ արտահանվելով Կովկասից բազմաթիվ երկրներ:
- ❖ Գորգագործության մեջ սիրված մյուս գույնը կապույտն էր, որը, բացի վերը հիշատակված լաջվարդից, ստացվում էր նաև լեղակաբույսից:
- ❖ Կարմիր ու կապույտ գույնով թելերը ներկելու համար հաճախ դիմում էին մասնագետ արհեստավորներին՝ ներկարարներին: Արդեն միջնադարում ներկարարությունը դարձել էր առանձին արհեստ, մասնագիտանալով տարբեր տեսակի գործվածքների ու թելերի ներկման մեջ:

- ❖ Կանաչ գույնը ստացվում էր դեղին թելը կապույտ ներկելով: Դեղին գույն տվող ներկաբույսերից ամենատարածվածն ու հայտնին դեղնածաղիկն էր,: Բաց դեղին կամ կաթնագույն ստանում էին հարդի կամ թթենու տերևի միջոցով:
- ❖ Սրճագույնի համար մինչ օրս օգտագործվում է հասուն ընկույզի պտղի կանաչ կեղևը:
- ❖ Դարչնագույնը ստանում էին ավելուկի արմատներով կամ սոխի կճեպներով:
- ❖ Սև գույն ստանալու համար գործածում էին ստիպ կոչված բազմամյա խոտաբույսը, եթե դրա եփած ջրի մեջ զցում էին շիբ; Տարածված եղանակ էր նաև ընկույզի արմատները, կեղևը, տերևները եփելն ու ջրին երկաթ կամ արջասպ խառնելը:

Գործիքներ եւ սարքավորումներ

Տորք – դազգահ (Ոստան, հանա) գորգ գործելու մեծ սարք:

Կտուտիչ – (Թելատու, կոթիչ, քարկիթ, հովա) շարքերը նստրացնելու բազմատամ

գործիք, որի կոթից բռնելով՝ գործողը խփում, նստոցնում է գործվածքի շարքերը:

Մկրատ - խավը խուզելու և հավասարեցնելու, գույգ միասայր շեղբերով և բռնակներով գործիք:

Մանր – խավը սանրելու և մաքրելու գործիք

Դանակ – գործվող թելը հանգուցելու և կտրելու գործիք :

Իսկ հումքի վերամշակման համար՝

Թակ – Բուրդը ծեծելու և լվանալու հարմարանք:

Մանդերք – գգել-սանրելու գործիք :

Իլիկ – թել մանելու և ոլորելու գործիք

Ճախարակ - թելահումքը մանելու և ոլորելու կատարելագործված հարմարանք



Եզրակացություն

1. Ուսումնասիրելով ՀՀ-ում, ինչպես նաև հայկական գողթօջախների թանգարանում հանգրվանած հայկական գորգերը, եկանք այն եզրակացության, որ գորգարվեստը մեր ինքնատիպ արհեստն է, որը հայուհիները հասցրել են արվեստի մակարդակի, և դա հայերի մեծ ներդրումն է մշակույթի համընդհանուր զանձարանում: Ուստի այն պետք է պահպանել և փոխանցել սերունդներին:
2. Տեխնոլոգիայի դասերին սովորողներին պետք է ծանոթացնել գորգ հյուսելու տեխնիկային, ձևավորել պարզագույն կարպետներ, գորգեր հյուսելու կարողություններ: Դրանով մենք ազգային այդ գեղեցիկ արհեստը կփրկենք մոռացումից:

Գրականություն

Կ. Պապիկյան Հայկական կարպետներ և գորգեր Եր. 2002թ
Վ. Թեմուրճյան, Գորգագործությունը Հայաստանում Եր, 1955, էջ 9:
artsakh carpet.com
Հայաստանի պատմության թանգարան Վիքիպեդիա

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱԶՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ**



**ՊԱՐՏԱԴԻՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ**

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**ԹԵՄԱ՝ ՓԱՅՏԱՆՅՈՒԹԻ ՇԱՂԱՓՈՒՄ:
ՓԱՅՏԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ՇԻՆՎԱԾՔՆԵՐԻ ԳԵՂԵՐԵՍՈՒՄ,
ՎԵՐՋՆԱՄՇԱԿՈՒՄ**

ԿԱՏԱՐՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՀԱԿՈՒՅԱՆ

ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԻՆԵ ՊԱՊԻԿՅԱՆ

ՎԱՆԱԶՈՐ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.

ԳԼՈՒԽ 1. ՓԱՅՏԱՆՅՈՒԹԻ ՇԱՂԱՓՈՒՄ

1.1 Փայտի շաղափման տեսակները

1.2 Փայտի շաղափման համար անհրաժեշտ գործիքներ

ԳԼՈՒԽ 2. **ՓԱՅՏԻՑ ԴԱՏՐԱՍՏՎԱԾ ՇԻՆՎԱԾՔՆԵՐԻ ՎԵՐՉՆԱՄՇԱԿՈՒՄ**

ՓԱՅՏԱՐՎԵՍ

2.1 Փայտի գեղերեսում

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Փայտանյութի շաղափում և շինվածքի վերջնամշակում մշակում թեմայի դասավանդման նպատակն է աշակերտներին սովորեցնել շաղափման ճիշտ գործողություններ կատարել, վերջնամշակումը կատարել շինվածքի գործառնությանը համապատասխան:

Խնդիրները

1. Ծանոթանալ թեմային վերաբերվող գրականությանը
2. Սովորողներին ծանոթացնել փայտի շաղափման համար անհրաժեշտ գործիքներին:

Ընտրված թաման արդիական է, քանի որ թե առօրյա կյանքում, թե արտադրության մեջ հաճախ փայտի շաղափման անհրաժեշտություն կա:

Աշխատանքի սկզբում պետք է ընտրել դետալը և ըստ



ածուտի հոտուարել չափանշում: Դետալը դազգահին ամրակապում են հետևի սեղմիչ տուփի մեջ և լով: Աջ ձեռքով բռնում են ռանդայի հետևի բռնակից, ձախով՝ առջևի: Դեմքով կանգնում ահը և հաստատուն դիրք ընդունելով սկսում աշխատանքը: Սկզբում ռանդում են տախտակի լայն մակերևույթ

հետո՝ եզրայինները:

Ռանդված մակերևույթի ստուգումը կատարում են ստուգիչ

քանոնի և անկյունակի միջոցով: Մշակված մակերևույթի որակը համարվում է ճիշտ, եթե քանոնի եզրը առանցքացակի հավում է մշակված մակերևույթին:

ԳԼՈՒԽ 1. ՓԱՅՏԱՆՅՈՒԹԻ ՇԱՂԱՓՈՒՄ

1.1 Փայտի շղափման տեսակները

Փայտանյութի վրա կլոր (գլանաձև) անցքեր մշակելիս օգտվում են հատուկ կտրող գործիքներից՝ շղափներից: Կտրումն իրականացվում է շղափի պտտական և ուղղագիծ շարժումների զուգակցումով: Մշակվող անցքերը կրող են լինել միջանցիկ կամ խուլ:

Տարբերում են շղափման հետևյալ ձևերը. երկայնական (դետալի ճակատամասից), լայնական (մանրաթելերին ուղղահայաց) և մանրաթելերի նկատմամբ որոշակի անկյան տակ:

Ըստ կառուցվածքի և աշխատամասի ձևի շղափները բաժանվում են երեք խմբի՝ գդալաձև, կենտրոնահան և պարուրաձև: Շղափը կազմված է աշխատամասից և պոչամասից:

Գդալաձև շղափի աշխատամասն ունի սրված ծայրով կիսախողովակի տեսք:

Կիսախողովակի մի եզրը երկարությամբ սրված է և հանդիսանում է որպես կտրիչ, մյուս եզրը կատարում է ուղղորդ դեր: Գդալաձև շղափներն ունեն մինչև 170 մմ երկարություն, 3-16 մմ տրամագիծ: Օգտագործվում են հիմնականում երկայնական շղափման ժամանակ: Հաճախ օգտագործվում է փետրաձև տեսակը:



Կենտրոնահան շաղափներն օգտագործվում են լայնական շաղափման ժամանակ:

Արտադրվում են 12-50մմ տրամագծով, 120-150 մմ երկարությամբ, նախատեսված են ոչ խոր և միջանցիկ անցքերի շաղափման համար: Սուր ծայրը կատարում է կենտրոնադիր դեր, ակոսակտրիչը շրջրնաձև կտրում է փայտանյութի մանրաթելը, իսկ դանակը հեռացնում է ժապավենաձև տաշեղը:

Պարուրաձև շաղափները նախատեսված են փայտանյութի երկայնական (կոնաձև սրվածքով, տրամագիծը՝ 5-10 մմ) և լայնական (կենտրոնով և ակոսակտրիչով, տրամագիծը՝ 4-32 մմ) շաղափման համար:

Պտուտակաձև շաղափները հիմնականում օգտագործում են փայտանյութի մանրաթելերի լայնական ուղղությամբ խոր անցքեր շաղափելիս:

Ունեն 10-50 մմ տրամագիծ և 400-1100 մմ երկարություն:

Աշխատամասի ծայրը կոնաձև պտուտակ է, որը հեշտացնում է կենտրոնադրումը և մատուցումը:

Փայտանյութի վրա խոր անցքեր մշակելիս երբեմն օգտվում են գչիրից, իսկ ոչ խոր անցքերի դեպքում՝ գչրակից:




Պրոցեսիայի փուլեր



Փայտանյութի վրա կլոր (գլանաձև) անցքեր մշակելիս օգտվում են հատուկ կտրող գործիքներից՝ շաղափներից: Կտրումն իրականացվում է շաղափի պտտական և ուղղագիծ շարժումների գուգակցումով: Մշակվող անցքերը կրող են լինել միջանցիկ կամ խուլ:



Անցքերի շաղափումը կարելի է կատարել նախապատրաստվածքը հորիզոնական կամ ուղղաձիգ դիրքով ամրակապելով: Նախքան շաղափելը կատարվում է չափանշում, որից հետո բիզով նշվում է ապագա ացքի կենտրոնը: Շաղափը ճիշտ և հուսալի ամրակապելով կապիչում, կատարվում է անցքի մշակումը:



1.2 Փայտի շաղափման համար անհրաժեշտ գործիքներ, միջոցներ

Վերջնամշակման գործիքներ՝ տովրիչ, խարտոցներ, նրբախարտոցներ, հղկաթուղթ:

Ատաղձագործկան շինվածքներ պատրաստելիս դետալների վերջնամշակման անհրաժեշտություն է առաջանում: Վերջնամշակումը դետալի մակերևույթների մաքրումն ու հղկումն է: Փայտանյութի մաքրման համար օգտագործվող հիմնական գործիքն են՝ տովրիչը, խարտոցը, նրբախարտոցը և հղկաթուղթը:

Տովրիչը կետային ծրատվածքով խարտոց է որով կատարում են ելուստների, կոր մակերևույթների նախնական մշակումը:

Խարտոցներն օգտագործում են կարծր փայտատեսակների և շինվածքների մաքրատաշ մշակման ժամանակ:



Նրբախարտոցներն օգտագործում են շինվածքների դժվար հասանելի տեղամասերի մշակման ժամանակ: Հղկաթուղթն օգտագործվում է մակերևույթների վերջնական մաքրման և հղկման համար:

Շինվածքի դետալները ձեռքի գործիքներով մշակելուց

հետո սկսվում է հավաքման գործողությունը: Դետալը շինվածքի մի մասն է, որն ունի անվարտուն տեսք և ճշգրիտ չափեր: Կախված ձևից և կառուցվածքից՝ շինվածքները հավաքում են մեկ

կամ մի քանի փուլերով: Հավաքման գործընթացն իրականացնելիս օգտվում են հավաքման գծագրերից: Շինվածքի հավաքման համար անհրաժեշտ տեղեկություններ պարունակող գծագիրն անվանում են հավաքման գծագիր: Հավաքման աշխատանքներ կատարելիս դետալներն իրար միացնում են մեխերի, պտուտակների կամ սոսնձիմիջոցով:

Մեխեր, պտուտակներ, սոսինձներ



Մեխերը սովորաբար պատրաստում են պողպատե մետաղալարից: Օգտագործում են ինչպես ընդհանուր նշանակության, այնպես էլ հատուկ նշանակության մեխեր:

Արտադրվում են 0,8-8 մմ տրամագծով և 6-250 մմ երկարությամբ մեխեր: Մեխերն ունեն հարթ (տափակ), կոնաձև, կիսակլոր և ձևավոր գլխիկներ:

Միացման ամրությունը կախված է մի գործոններից՝ փայտանյութի տեսակից ու խոնավությունից, մեխերի փոխ դասավորվածությունից, երկարությունից, տրամագծից և լայնական հատույթի ձևից: Դետալները մեխերով միացնելիս անհրաժեշտ է պահպանել հետևյալ կանոնները.. շախմատաձև դասավորվածության դեպքում դետալի ճակատից մեխի առանցքի հեռավորությունը պետք է լինի ոչ պակաս 15d (d-ն մեխի

տրամագիծն է), մեխերի առանցքների հեռավորությունը մանրաթելերի ուղղությամբ՝ ոչ պակաս 5d, մեխերի առանցքների հեռավորությունը մանրաթելերին ուղղահայաց ուղղությամբ՝ ոչ պակաս 4d: Մեխի երկարությունը պետք է լինի միացվող դետալի հաստության երեք չափսից ոչ պակաս, տրամագիծը՝ ոչ ավելի հաստության 1-10 չափսից:

Մեխերը խփելու համար օգտագործում են քառակուսի զարկանով փականագործական կամ աստաղձագործական մուրճեր: Աշխատանքի սկզբում մեխը բռնում են ձախ ձեռքի ցուցամատով և բուխ մատով, աջ ձեռքով բռնած մուրճով, թույլ հարվածներով հարվածում մեխի գլխիկին մինչև ամրանալը, հեռացնում ձախ ձեռքը, ուղիղ և ուժեղ հարվածներով խփում մինչև վերջ: Դետալի ճակատամասից մեխերը խփում են որոշակի անկյան

տակ, որպեսզի ապահովվի անհրաժեշտ ամրություն: Միացման ամրությունը մեծացնելու համար հաճախ մեխերը հակառակ կողմից ծռում են: Ծռված կամ ոչ ճիշտ խփված մեխերը դուրս են հանում աքցանի կամ աստաղձագործական մուրճի օգնությամբ: Փայտանյութի վրա կլոր (գլանաձև) անցքեր մշակելիս օգտվում են հատուկ կտրող գործիքներից՝ շաղափներից: Կտրումն իրականացվում է շաղափի պտտական և ուղղագիծ շարժումների գուգակցումով: Մշակվող անցքերը կրող են լինել միջանցիկ կամ խուլ: Պտուտակներն օգտագործում են փայտե դետալների միացման, ինչպես նաև ծխնիների, բռնակների, փականների և այլ դետալների ամրացման

համար: Արտադրվում են 6-120 մմ երկարության և 11,5-110 մմ տրամագծով պտուտակներ: Պտուտակների գլխիկները կարող են

լինել թաքնագլխիկով, կիսաթաքնագլխիկով, կիսակլոր: Պտուտակներով դետալների միացման հուսալիությունը կախված է մի քանի գործոններից. փայտանյութի խտությունից ու խոնավությունից, պտուտակի երկարությունից, տրամագծից, պարուրածն մասի երկարությունից և այլն:

Դետալները պտուտակներով միացնելիս օգտվում են համապատասխան գլխիկով ձեռքի կամ էլեկտրական պտուտակիչներից: Խստիվ արգելվում է պտուտակներին հարվածել մուրճով: Փափուկ փայտատեսակների մեջ փոքր տրամագծի պտուտակները ձգում են նախապես բիզով անցք բացելուց հետո: Մեծ տրամագծի պտուտակները ձգելուց առաջ (հատկապես կարծր փայտատեսակներ) անհրաժեշտ է շաղափել պտուտակի տրամագծի 0,7 չափսին հավասար անցք: Անցքի խորությունը պետք է լինի մոտավորապես պտուտակի պարուրածնմասի չափսին հավասար: Պտուտակների դասավորվածությունը նույնն է, ինչպես մեխերի դեպքում: Մոսինձներ են անվանում այն բնական կամ արհեստական ծագում ունեցող նյութերը, որոնք օժտված են տարբեր դետալներն իրար միացնելու (սոսնձելու) հատկությամբ:

Մոսինձները մածուցիկ նյութեր են, որոնք որոշակի պայմաններում ունեն չորանալու հատկություն: Մոսինձները հիմնականում բաղկացած են սոսնձող տարրերից, լուծիչներից, լցանյութերից, պնդարարներից և հականեխիչներից: Մոսինձները լինում են կենդանական, բուսական ծագումով և արհեստական: Մոսինձների չորացումը կատարվում է տաքացման, սառեցման, քիմիական ռեակցիայի կամ լուծիչի գոլորշիացման շնորհիվ:

Լայն կիրառություն են գտել արհեստական ծագումով սոսինձները, քանի որ դրանցից օգտվելը բավականին հեշտ է, ջրակայուն են և շատ արագ են չորանում:

Սոսնձման գործընթացը կազմված է հետևյալ փուլերից.

սոսնձվող մակերևույթների մաքրումից,


աշխատատեղին ախապատրաստում (սոսինձ, վրձին, լաթիկտորներ),

մակերևույթների սոսնձապատում,

սոսնձվող դետալների սեղմում դազգահի սեղմիչ տուփի կամ ձեռնամամլակի մեխոցով,

լաթով ավելորդ սոսնձի հեռացում,

պահում մինչև սոսնձի չորանալը:



Սոսնձման աշխատանքներ կատարելիս անհրաժեշտ է պահպանել անվտանգության կանոնները:

ԳԼՈՒԽ 2. **ՓԱՅՏԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ՇԻՆՎԱԾՔՆԵՐԻ ՎԵՐՋՆԱՄՇԱԿՈՒՄ**

ՓԱՅՏԱՐՎԵՍ

2.1 Փայտի գեղերեսում

Փայտանյութից պատրաստված շինվածքների անպաշտպան մակերևույթները լույսի, խոնավության և արտաքին միջավայրի այլ ազդեցություններից վնասվում են՝ կորցնելով տեսքը, փայլը, բնական գույնը: Շինվածքների մակերևույթները պաշտպանելու և արտաքին գեղեցիկ տեսք տալու համար կատարում են գեղերեսում: Գեղերեսումը շինվածքի մակերևույթների երեսապատումն է լաքաներկային և այլ դեկորատիվ նյութերով: Բոլոր վնասված և անորակ մակերևույթները պետք էմի քանի շերտով մածկապատել:



Ելնելով շինվածքին ներկայացվող պահանջներից, նշանակությունից, փայտանյութի տեսակից և շահագործման պայմաններից՝ տարբերում են գեղերեսման հետևյալ ձևերը՝ թափանցիկ և ոչ թափանցիկ:

Թափանցիկ գեղերեսումը կատարվում է անգույն կամ գունավոր թափանցիկ լաքերով: Այն օգտագործվում է թանկարժեք փայտատեսակներից պատրաստված շինվածքների գեղերեսման ժամանակ՝ պահպանելովարտաքին տեսքը:

Ոչ թափանցիկ գեղերեսումը փայտանյութից պատրաստված շինվածքների արտաքին մակերևույթներին ներկապատումն է:

Մինչև գեղերեսման աշխատանքներն սկսելը անհրաժեշտ է նախապատրաստել շինվածքի մակերևույթները: Դրանք պետք է լինեն մաքուր, հարթ և ողորկ:

Շինվածքների լաքապատումը կարելի է կատարել մի քանի եղանակով՝ վրձինով, լաթագնով, լաքի մեջ սուզելով և փոշեցրի միջոցով: Ներկապատման աշխատանքները հիմնականում կատարում են վրձիններով, որոշ դեպքերում՝ սպունգով:



Գրականություն

1. Հովսեփյան և ուրիշներ, Տեխնոլոգիայի 5-7-րդ դաս. Դասագրքեր, Երևան, Տիգրան Մեծ հրատ.
2. Հովսեփյան և ուրիշներ, Տեխնոլոգիայի 5-7-րդ դաս. Ուսուցչի ձեռնարկ, Երևան, Տիգրան Մեծ հրատ.

Էլեկտրոնային աղբյուրներ

1. Հանրակրթության պետական չափորոշիչ

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱԶՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ**



**ՊԱՐՏԱԴԻՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՅԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ**

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**ԹԵՄԱ՝ ՓԱՅՏԱՐՎԵՍՏ: ՓԱՅՏԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ
ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ**

ԿԱՏԱՐՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՊՈՂՈՍՅԱՆ

ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԻՆԵ ՊԱՊԻԿՅԱՆ

ՎԱՆԱԶՈՐ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.

ԳԼՈՒԽ 1. ՓԱՅՏԱՆՅՈՒԹ

1.1 Փայտանյութը և նրա նշանակությունը

1.2 Փայտի տեսակները

ԳԼՈՒԽ 2. ՓԱՅՏԱՐՎԵՍ

2.1 Փայտը հայկական մշակույթում

2.2 Փայտի փորագրության մշակույթը Հայաստանում

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի **արդիականությունը** կասկած չի հարուցում, քանոր որ փայտանյութի շաղափման գործողություններին ծանոթացումը կարևոր տեղ է զբաղեցնում փայտամշակման թեման անցնելիս: Բացի այդ, շինվածքի վերջնամշակումը կոնստրուկտավորման գործընթացի եզրափակիչ կարևոր փուլն է, երբ շինվածքի պատրաստման գործընթացն ավարտին է հասցվում:

Փայտանյութի շաղափում և շինվածքի վերջնամշակում մշակում թեմայի դասավանդման **նպատակն է** աշակերտներին սովորեցնել շաղափման ճիշտ գործողություններ կատարել, վերջնամշակումը կատարել շինվածքի գործառնությանը համապատասխան:

Քանի որ «Տեխնոլոգիա» առարկայի ուսուցումը միջին դպրոցում ենթադրում է սովորողների ընդհանուր տեխնոլոգիական իրազեկություն՝ տեխնոլոգիական մտածողության ձևավորման նպատակով, տեխնոլոգիական գիտելիքների և կենցաղային հմտությունների ձեռքբերում: Դասավանդումը նպատակաուղղված է տարրական աշխատանքային հմտությունների ձևավորմանը, գիտության նվաճումների, բնության, մարդու և հասարակության վրա տեխնիկայի ու տեխնոլոգիաների կիրառության հավանական ազդեցության և ձեռնարկատիրության մասին սովորողի գիտելիքների ընդլայնմանը, իր գործունեությունը պլանավորելու և ժամանակն արդյունավետ տնօրինելու կարողությունների ձևավորմանը:

«Տեխնոլոգիա» առարկայի ուսուցումը նաև նպաստում է սովորողների մասնագիտական կողմնորոշմանը՝ արհեստներին ծանոթանալու միջոցով:

Տեխնոլոգիան գիտություն է նյութի, էներգիայի, տեղեկատվության, փոխակերպման և դրանք մարդուն ծառայեցնելու մասին: Այն կոչված է մարդու կյանքն ավելի բարեկեցիկ դարձնել:

Տեխնոլոգիա առարկան նաև օգնում է աշակերտներին, որ նրանք իմանան և կարողանան օգտագործել ձեռքի գործիքներն ու հարմարանքները նյութերի մշակման համար:

Տեխնոլոգիա առարկայի խնդիրն է դաստիարակել կիրթ, գրագետ երեխաներ, ովքեր պատասխանատվության զգացում կունենան տեխնոլոգիական պրոցեսների որակյալ կատարման համար:

Տեխնոլոգիա առարկայի խնդիրն է աշակերտներին հաղորդել գիտելիքներ, ձևավորել կարողություններ, հմտություններ, արժեքներ և այլն:

ԳԼՈՒԽ 1. Փայտանյութ:

1.1 Փայտանյութի նշանակությունը

Փայտը հնագույն ժամանակներից ի վեր համարվել է գերազանց հումք և օգտագործվել է տների, կահույքի, տրանսպորտի, խաղալիքների և այլ գործիքների կառուցման համար, որոնք բարելավում են մարդկանց կյանքի որակը: Այն գեղեցիկ նյութ է, և այսօր օգտագործվում է որպես շինանյութ, թղթի արդյունաբերության հումք, վառելանյութ և այլ նպատակներով: Արվեստում կիրառվում է հնագույն

ժամանակներից՝ ճարտարապետության, քանդակագործության մեջ, դեկորատիվ- կիրառական, հատկապես ժողովրդական, արվեստում (կահ-կարասու քանդակագարդում, երանգավորում, զարդանախշում, ընդելուզում և այլն, շենքերի ճակատների և ինտերիերի փայտե մասերի քանդակագարդում, հղկված, նախշավոր տախտակներով պատերի երեսապատում և այլն), ինչպես և փայտագրության մեջ, դաջարվեստում՝ տպակաղապարներ պատրաստելիս:

Փայտի գունեղանգների հարստությունը, մակատեսքի բազմազանությունը հնարավորություն են ընձեռում կերտվածքներն օժտելու դեկորատիվ էֆեկտներով, իսկ մշակման համեմատաբար դյուրինությունը նպաստում է արվեստագետի մտահղացումների անմիջական մարմնավորմանը:

Մարդիկ հազարամյակներ շարունակ փայտը օգտագործել են և որպես վառելիք, որպես շինանյութ, ինչպես նաև թղթի ստեղծման ժամանակ:

Փայտի օգտագործումը ներկայումս ընդլայնվել է բոլոր ոլորտներում:

Մարդը բնափայտն օգտագործում է հազարամյակներ շարունակ՝ տարբեր նպատակներով, առաջին հերթին որպես վառելիք, ինչպես նաև որպես շինանյութ: Օգտագործվել է գործիքների, զենքերի, կահույքի, թառի, թղթի և կացարանների պատրաստման համար:

Ծառերի շատ տեսակների աճման ընթացքում՝ ջերմաստիճանի և խոնավության սեզոնային տատանումների պատճառով առաջանում են տարեկան օղակներ: Դենդրոքրոնոլոգիայի մեթոդներով ծառերի կտրվածքի ուսումնասիրությունը թույլ է տալիս ճշգրիտ որոշել ծառի աճման ճշգրիտ վայրը, այն ծառը, որից ստացել են այս կամ այն կահույքը կամ կառույցը: Տարեկան օղակների միջև եղած հեռավորության տարեկան փոփոխությունների ուսումնասիրությունը և նրանցում տարբեր տարրերի իզոտոպերի առկայությունը թույլ է տալիս պատկերացում կազմել հնագույն ժամանակներում կլիմայի և մթնոլորտի վիճակի մասին:

1.2 ՓԱՅՏԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ



Քանի որ ամբողջ աշխարհում ծառերի շատ տեսակներ կան, կան նաև փայտի բազմաթիվ տեսակներ, որոնք կարող են օգտագործվել շինարարության և կահույքի համար: Փայտը օգտագործում է մարդու կողմից օգտագործված ամենահին, ազնվագույն և ամենագեղեցիկ նյութերից մեկը: Կախված ծառից, որը մենք օգտագործում ենք փայտը արդյունահանելու համար, կան փայտի բազմաթիվ տեսակներ: Բացի այդ, դա կախված է բուժման տեսակից, որը նրանք ստանում են ստացված գործընթացներից, մենք նաև տարբեր սորտեր ենք գտնում:

Ե՛վ այսօր, և՛ անցյալում, փայտը լայնորեն օգտագործվում է տարբեր նպատակների համար: Դա շատ բաներ անելու համար պատրաստված նյութ է: Այն ունի տեխնիկական հատկություններ,

որոնք այն դարձնում են շատ հետաքրքիր տարր: Փայտն ունի բարձր դիմադրություն, ժամանակի հետ երկարակեցություն, ճկունություն և ամրություն, այն կարելի է ձևավորվել ինչպես ուզում ենք, այնպես էլ ժամանակի ընթացքում բավականին դիմացկուն է:

Այս բոլոր պատճառներից ելնելով՝ փայտեր օգտագործվել են տների և կահույքի կառուցման համար, նաև՝ բազմաթիվ այլ իրեր պատրաստելու համար: Ինչպես գիտենք, կախված ստացման եղանակներից ու փայտանյութի տեսակից՝ կան տարբեր տեսակի փայտեր: Դրանք օգտագործվում են հատակներ, պատեր և առաստաղներ ստեղծելու համար, փայտի որոշ տեսակներ կարող են օգտագործվել ցանկացած տեսակի կահույքի կառուցման մեջ: Այսօր փայտից պատրաստում են դռներ, մահճակալներ, սեղաններ, խոհանոցի շրջանակներ, կահույք ևն: Դրանք կարող ենք գտնել նաև դեկորատիվ տարրերի մեջ, որոնք ունեն իրենց հիմնական բնութագիրը այն տեղերի մանրամասները բարելավելու համար, որտեղ մենք այն տեղադրում ենք:



Այժմ ներկայացնենք, թե որոնք են տարբեր տեսակի փայտերը և դրանց ամենատարածված հատկությունները: Մենք հիշում ենք, որ կան փայտի միլիոնավոր տեսակներ, բայց ոչ բոլորն են

օգտագործվում այն հատկությունների շնորհիվ, որոնք մենք վերը նշեցինք: Կան որոշ անտառներ, որոնք չունեն բոլոր պահանջները՝ շինարարության մեջ օգտագործելու համար:

Փայտի տարբեր տեսակները ճանաչելու և դասակարգելու համար անհրաժեշտ է դրանք բաժանել որոշ կատեգորիաների: Առաջին բանը նրանց բաժանումն է՝

Ա/ փափուկ ծառեր և

Բ/ կարծր փայտանյութեր:

Փափուկ անտառների խմբին մեջ են այն անտառները, որտեղ կա մայրի, եղևնի և սոճի:

Կարծր փայտանյութեր ստանում են բալից, հաճարենուց, կաղնուց և ընկույզից:

Կոշտ և փափուկ փայտի տարբերակումից բացի, կան նաև այլ բնութագրեր և նրբություններ, որոնք վերաբերում են յուրաքանչյուր տեսակի փայտին:

Այս բոլոր պատճառներից ելնելով՝ մենք պետք է իմանանք, թե որ փայտն ընտրենք տրված յուրաքանչյուր գործառույթի համար: Այս նրբությունների շարքում են՝ փայտի գույնը, հանգույցներն ու երակները: Մենք պետք է հաշվի առնենք նաև մեր սեփական կարիքները, սեփական նախասիրությունները և կահույքի կամ տարածքի տեսակը, որը մենք ցանկանում ենք ստեղծել: Հաշվի առնելով այս բոլոր գործոնները, մենք ստիպված կլինենք ասել փայտի այս կամ այն տեսակը:

Այժմ մենք վերլուծելու ենք, թե որոնք են փայտի հիմնական ամենատարածված տեսակներն ու դրանց հիմնական բնութագրերը.

- **ԵՂԵՎՆԻ**

Եղևնին կենտրոնական և Արևելյան Եվրոպայում հայտնաբերված փայտի ամենատա-

րածված տեսակներից մեկն է: Մենք դա հեշտությամբ ենք գտնում Իսպանիայում: Հիմնական

բնութագրերից մեկը, որի համար եղևնի փայտը առանձնանում է՝ աշխատանքի հեշտությունն է:

Դրա շնորհիվ կահույք, երաժշտական գործիքներ, դռներ և պատուհաններ կարող են արտադրվել, և այն լայնորեն օգտագործվում է շինարարության ոլորտում: Այն ունի մեծ դիմադրություն խոնավության նկատմամբ:

- **ՍՈՃԻ**

Սոճու փայտը շատ հեշտ է մշակվում, նրա գրեթե բոլոր սորտերը համեմատաբար փափուկ են: Այս տեսակի փայտի առանձնացման առանձնահատկություններից մեկն այն է, որ այն

շատ էժան է: Այն լայնորեն օգտագործվում է շինարարության մեջ: Դրա կառուցվածքը բավականին միատարր է և հեշտ է մշակվում, ինչը նրան դարձնում է փայտի ամենաշատ օգտագործվող տեսակներից մեկը աստղձագործության, կահույքի արտադրության մեջ:

- **ՄԱՅՐԻ**

Մայրու ամենատարածված բազմագանությունը արևմտյան կարմիրն է: Դրա գույնը կարմրավուն է և համեմատաբար փափուկ փայտ է: Այն ունի մի փոքր անուշաբույր հոտ

և հիմնականում օգտագործվում է բացօթյա կահույք պատրաստելու համար: Դա պայմանավորված է նրանով, որ դրա բնութագրերը թույլ են տալիս լավ դիմակայել

խոնավ միջավայրին՝ առանց քայքայվելու: Այն ամուր է և այգու կահույքի համար փայտի գերազանց տեսակ է:

- **ԽՆՁՈՐ**

Խնձորենին աշխարհի ամենատարածված ծառերից է: Այն ունի շատ բաց գույն և

միջին կարծրություն: Չնայած այն շատ երկար չի տևում, բայց օգտագործվում է ինչպես շինարարության, այնպես էլ անշարժ երաժշտական գործիքներ պատրաստելու համար:

- **ԸՆԿՈՒՅՁ**

Ընկուզենին ամենագեղեցիկ համարվող փայտի տեսակներից մեկն է: Դրա գույնը մուգ

է և առհասարակ մանուշակագույն է: Այն հաճախ օգտագործվում է կահույք, հատակներ և

պատեր պատրաստելու համար: Ինչ վերաբերում է գնին, այն ամենաթանկ ծառերից է, բայց ունի որոշ առանձնահատկություններ, որոնք այն շատ հետաքրքիր են դարձնում:

Դա նրա կարծրությունն ու դիմացկունությունն է: Այն ի վիճակի է դիմակայել ճաքերին և ցնցումներին: Բացի այդ, դա բավականին կոմպակտ փայտ է, ուստի այն

կարող է օգտագործվել գրեթե ցանկացած վայրում: Այսօր այն օգտագործվում է պահարանների, կահույքի, զարդարանքների և շրջադարձված տարրերի շքեղ ծածկույթների համար:

- **ԿԱՂՆԻ**

Կաղնու փայտի երկու հիմնական տեսակ կա՝ կարմիր և սպիտակ: Դա Իսպանիայի ամենատարածված անտառներից մեկն է և շատ է սիրվել այն բանի համար, որ այն ամենակայուններից մեկն է, որը մենք կարող ենք գտնել: Նրա հետ դժվար է

աշխատել, քանի որ այն մեծ կարծրություն ունի: Կաղնին թանկ փայտ է, այն շատ գեղեցիկ

է և ունի մեծ գեղագիտական ազդեցություն: Այն օգտագործվում է հատակների և պատերի ծածկերի արտադրության համար: Նաև շքեղ կահույքի արտադրության մեջ:

- **ԹԻՍԿԻ**

Թիսկենու փայտը պատկանում է կարծր փայտանյութի կատեգորիային: Այն փայտ է, որը կարելի է ձեռք բերել մոլորակի տարբեր մասերում, նրա գույնը բավականին բաց է, իսկ տոնը կարող է տատանվել սպիտակից մինչև դեղին և վարդագույն երանգներ: Թեև այն պատկանում է կարծր փայտանյութի կատեգորիային, դրա փայտը միջին կարծրության է և երկար չի տևում, այնուամենայնիվ, այն օգտագործվում է շինարարության, ինչպես նաև կահույքի և երաժշտական գործիքների պատրաստման համար: Դրա փայտը փայտի շուկայում արժեքավոր չի համարվում:

- **ՀԱՃԱՐԵՆԻ**

Հաճարենին շատ կոշտ փայտ ունի: Այս ծառը տարածված է ողջ Եվրոպայում և բավականին հեշտ է գտնել Իսպանիայում: Նրա փայտի գույնը կարմրավուն է և տարիքի հետ դառնում է ավելի մուգ: Չնայած շատ կոշտ փայտ լինելուն, այն

բավականին հնագանդ է, օգտագործվում է երաժշտական գործիքներ պատրաստելու և բոլոր տեսակի կահույքի համար: Բավական ամուր փայտ է:

- **ԹԹԵՆԻ**

Թթի փայտն ամբողջությամբ այրվում է, ընդհանուր առմամբ համարվում է ամենակարևոր վառելափայտը: Այն ավելի լավ է այրվում, քան մյուս ծառերը, ինչպիսիք են ակացիա.

Քանի որ այն այրվում է դանդաղ և կայուն, այն հիանալի է երկարաժամկետ ջերմություն և ածուխ արտադրելու համար՝ երկար ժամանակ ապահովելով ջերմություն:

Թթի փայտը հայտնի է նաև իր լավ բնական փայլով և համարվում է ամենադիմացկուն փայտը, որն օժտված է միջատներին դիմադրությամբ և եղանակային դիմադրության հատկություններով:

- **MDF**

. Մանրաթելային փայտ՝ պատրաստված սեղմված փայտի մանրաթելից, որն օգտագործվում է ժամանակակից կահույքի և առևտրային ապրանքների արտադրության մեջ:



ԳԼՈՒԽ 2. ՓԱՅՏԱՐՎԵՍ:

2.1 Փայտը հայկական մշակույթում

Փայտարվեստը սերտորեն շաղկապված է հայ ժողովրդի կենցաղին, նրա ապրելակերպին:

Հնում հայերը փայտից էին ստեղծվում ափսեն, գդալն ու գդալամանը, մահճակալն ու երեխայի օրորոցը, եկեղեցու դուռը, գահն ու գավազանը, մոմակալը, գրակալը, դաջի/դրոշմի կաղապարն ու պաշտպանիչ հմայիլ-դադդղանը, կուժն ու սկահակը, թռչնակերպ աղամանն ու գաթանախշիչը, պատշգամբի ձևավորված հատվածը: Հղկված փայտե տախտակը հատուկ մշակվում էր նկարի կամ սրբապատկերի համար, նաև դառնում էր ձեռագրի կազմ: Փայտը, միննույն ժամանակ, գործիք էր, գործիքի անհրաժեշտ մաս, որով մշակվում, հղկվում, գեղարվեստական ձևավորում էր ստանում մեկ այլ փայտի հատված:

Հայաստանի փայտանյութի հարուստ տեսականին՝ կաղնուց, հաճարենուց, լորենուց, ծիրանենուց, դեղձենուց, ընկուզենուց, թեղուց ստացվող հումքը անգնահատելի նյութ է դարձել ժողովրդական վարպետների համար:

Հայաստանի փայտը դուրս էր գալիս միջազգային շուկա, դրանից կահույք էին պատրաստում:







Հայկական փայտե նմուշների հարստությունից բեկորներ են պահպանվել: Դա պայմանավորված է ոչ միայն նյութի շուտ կոտրվելու, օդի և միջատների ազդեցությամբ ոչնչանալու հատկությամբ, այլև հասարակական-քաղաքական պայմաններով:

2.2. ՓԱՅՏԻ ՓՈՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանի տարածքում փայտի գեղարվեստական փորագրության մշակույթը եղել է դեռևս Վանի թագավորության (Ուրարտու) ժամանակ: Հայաստանի հեթանոսական տաճարներում գոյություն են ունեցել փայտե քանդակներ: Միջնադարից պահպանվել են փայտի գեղարվեստական փորագրության հայկական բացառիկ օրինակներ՝ հիմնականում եկեղեցիների դռներ, սյուների խոյակներ, գրակալներ: Իսկ կենցաղային իրերը պահպանվել են 18-րդ դարից:

Հայաստանում փայտի գեղարվեստական մշակման մեջ իր ուրույն տեղն է գրավում դաջերի պատրաստումը: Դաջը (դրոշմ, կաղապար) պատրաստվում էր փայտի ամուր տեսակներից՝ սամշիտ, ընկուզենի, ծիրանենի, տանձենի և այլն: Դաջի փորագրությունից էր կախված դաջագարության որակը. որքան մաքուր էին փորագրված նախշերը, ամեն մի գիծը, կետը, այնքան լավ էին գործվածքի վրա ստացվում պատկերները:

Փայտի գեղարվեստական մշակմամբ ստեղծված հայկական շատ նմուշներ ժառանգաբար անցել են սերնդից սերունդ, օրինակ՝ քանդակագարդ գդալները, գործիքամանները, հավանգները /համեմունք տրորելու աման/ ու գուլպայի կաղապարները /նախատեսված էին լվացված գուլպաները կոկիկ, առանց ձևախախտման չորացնելու համար/:

Դրանց թվում են դադդղաները:



Հայկական ժողովրդական մշակույթում առանձնահատուկ տեղ ունեն փայտե «դադդղանները», որոնք թալիսմանի նշանակություն ունեն, այսինքն պետք է պաշտպանեն չար ոգիներից, չար աչքից: Դրանք շատ լայն կիրառություն են ունեցել հայ ժողովրդի կյանքում: Դադդղան պատրաստելու ժամանակ ժողովրդական վարպետի միտքը պետք է անպայման անաղարտ լիներ, առանց բացասական հույզերի, անհրաժեշտ էր ամբողջությամբ կենտրոնանալ դադդղանի ստեղծման ընթացքի վրա: Տան համար կիրառվող մեծ դադդղանները հիմնականում

կախում էին մուտքի մոտ կամ ներսում՝ կենտրոնական սյան վրա: Դադողաններ պատրաստում էին նաև մարդկանց համար, կախում էին նորածինների օրորոցներից ու դաստակից, ամրացնում նրա գլխաշորին կամ բարձին: Տարածված էր գյուղացու տնտեսության մեջ կարևոր տեղ գրավող խոշոր եղջերավոր անասունների վզից կամ պոզից դադողան կախելը: Դադողանը կիրառվել է նաև կահույքի, կուժերի ու կճուճների վրա: Դադողան պատրաստելիս սովորաբար սրբազան համարվող ծառերի փայտանյութ էին օգտագործում՝ ընկուզենու, կաղնու, բայց նաև՝ հաճարենու, պտղատու տարբեր ծառերի: Ըստ ձևի դադողանները լինում են հիմնականում լուսնաձև, խոյակերպ, ինչպես նաև եռանկյունաձև, երկարավուն (կախվում էին ուլունքաշարով և օգտագործվում այն դեպքում, երբ երեխա չէին ունենում), իսկ նորածինների համար նախատեսված դադողանները փոքր են՝ գլանաձև, խորանարդաձև կամ տափակ քառակուսի: Դադողանների վրա փորագրված նախշերը հիմնականում արևի, հավերժության, ջրի խորհրդանշաններ են: Տարածված են հավերժության նախշը, վեցից մինչև ութ թևանի վարդյակները, կեռիսաչը, տերևներն ու եռանկյունները, երբեմն նաև խաչերը:

Փայտի գեղարվեստական փորագրության ամենակարևոր առանձնահատկություններից է ժողովրդական հենքը, իրի կիրառական նշանակությամբ պայմանավորված գեղարվեստական ձևավորումը: Կարևոր է այդ իրերի մշակման, նրանց ձևերի, զարդանախշերի ավանդական ընկալումը, ինչը հաջորդաբար անցնում էր սերնդից սերունդ, վարպետից վարպետ, իրից իր:

Երբ մարդու երևակայությունն ու հմտություններն ամփոփվեցին այդ նյութի մեջ, բնության բարիքը դարձավ անփոխարինելի բազմաթիվ ասպարեզներում: Ամենաօգտագործվող նյութերից մեկը՝ փայտը, սկսեց զարդարել մարդկանց կենցաղը, մշակույթը, կիրառվեց ճարտարապետության, քանդակագործության մեջ, դեկորատիվ-կիրառական արվեստում, անցնելով դարեր, գեղարվեստական մշակման ու փորագրման արդյունքում, ժողովրդական արհեստների վարպետների հմուտ ձեռքերում վերածվեց արվեստի: Ստեղծվեց մի ինքնատիպ, լայնորեն տարածված ու սիրված մասնագիտություն՝ փայտի գեղարվեստական փորագրող:

Փայտի փորագրության տեսակները նույնպես բազմաթիվ են: Ու թեև փորագրման մեքենաներն այսօր տալիս են մեծ հնարավորություններ, բայց փայտանյութի գեղարվեստական մշակման մեջ բոլոր ժամանակներում առանձնահատուկ տեղ է հատկացվել ձեռքով փորագրությանը: Փայտի կառուցվածքն ու առանձնահատկությունները շատ կարևոր են. ամեն մի փայտատեսակ եզակի է իր երանգով, պատկերով, կոշտությամբ, ճկունությամբ, բույրով և այլ որակներով:

Աշխատանքային հատուկ գործիքներ, հմտություններ, տեխնիկական աշխատատար գործընթաց և անսահմանափակ երևակայությամբ արարելու հնարավորություն, որի արդյունքում ստեղծված փայտարվեստի յուրաքանչյուր նմուշ դառնում է ինքնատիպ, նրբագեղ՝ հաղորդելով յուրահատուկ ջերմություն:

Հմուտ փայտագործը պետք է տիրապետի փայտագործության նրբություններին և գաղտնիքներին, փայտի մշակման, զանազան

գործիքների հետ աշխատելու առանձնահատկություններին, ունենա
մեծ համբերություն, տարածական և ստեղծագործական
երևակայություն, տիրապետի ճշգրիտ գիտությունների
հիմունքներին, կարողանա տարբերակել փայտի տեսակները,
իմանա յուրաքանչյուրին բնորոշ հատկությունները և երբեք
չմոռանա, որ մասնագետ դառնալու լավագույն նախապայմանը,
իհարկե, սերն ու աշխատասիրությունն է:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Փայտը ամենակարևոր նյութերից է, որը մարդիկ օգտագործել են:

Ներկայումս այն օգտագործվում է տարբեր գործընթացների համար, ինչպիսիք են
շինանյութը, ծածկույթը, կահույքը, կոշկեղենը, ատաղձագործությունը,

և որպես վառելիք: Կան տարբեր բնութագրերով փայտի տարբեր տեսակներ:

Փայտի յուրաքանչյուր տեսակ վերագրվում է հատուկ օգտագործման ՝ իր
հատկությունների համար և իր գործառնությանը համապատասխան:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Տեխնոլոգիա: Հանրակրթական դպրոցի 5-րդ դասարանի դասագիրք/
Ա.

Հովսեփյան, Ա. Հարությունյան, Մ. Աղաջանյան, Լ. Վերդյան.- Եր.:
Տիգրան Մեծ, 2014.- էջ 16-34:

2. Տեխնոլոգիա: Հանրակրթական դպրոցի 6-րդ դասարանի դասագիրք/ Ա.

Հովսեփյան, Ա. Հարությունյան, Մ. Աղաջանյան, Լ. Վերդյան.- Եր.:
Տիգրան Մեծ, 2015

3. Տեխնոլոգիա: 5-7 դասարաններ: ՈՒսուցչի ձեռնարկ/ Ա.

Հովսեփյան, Ա. Հարությունյան, Մ. Աղաջանյան, Լ. Վերդյան.- Եր.: Տիգրան Մեծ, 2014.-
էջ 26-40:

Էլեկտրոնային ռեսուրսներ

4. <https://www.renovablesverdes.com/hy/tipos-de-madera/>

5. <https://hy.wikipedia.org/wiki/%D5%93%D5%A1%D5%B5%D5%BF>

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱԶՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ**



**ՊԱՐՏԱԴԻՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՅԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ**

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**ԹԵՄԱ՝ <ՓԱՅՏԱՆՅՈՒԹԻ ՄՇՍԿՈՒՄ> ԹԵՄԱՅԻ
ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՋԵՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ԴԱՍԵՐԻՆ**

ԿԱՏԱՐՈՂ՝ ԱՐՄԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԻՆԵ ՊԱՊԻԿՅԱՆ

ՎԱՆԱԶՈՐ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳԼՈՒԽ 1. Փայտամշակման արհեստանոցում փայտի մշակման աշխատանքների կազմակերպում

1.1. Փայտանյութն իբրև բնական նյութ4

1.2. Փայտանյութն իբրև սղոցանյութ: Շինվածքների պատրաստում.....8

ԳԼՈՒԽ 2. Փայտանյութից շինվածքների պատրաստում տեխնոլոգիայի դասերին

2.1. Փայտանյութի մշակման գործիքներ և հարմարանքներ.....10

2.2. Փայտանյութի մշակում. սղոցում, շաղափում.....12

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....18

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Փայտանյութի մշակում թեմայի դասավանդման նպատակն է հիմնական դպրոցում սովորողներին ծանոթացնել և մասնակից դարձնել փայտի մշակման գործողություններին:

Թեման այժմեական է, քանի որ փայտը բնական կոնստրուկցիոն նյութ է և մեր կյանքում անընդհատ հանդիպող նյութ է, ուստի անհրաժեշտ է տիրապետել այն բոլոր գործողություններին, որոնք կապված են այդ նյութի հետ:

Թեմայի խնդիրներն են՝

1. Ուսումնասիրել և վերլուծել փայտամշակման թեմային վերաբերվող գրականություն (չափորոշիչներ, ծրագրեր, դասագրքեր, մեթոդական ձեռնարկներ և այլն):

2. Ծանոթանալ փայտի մշակման եղանակներին:

Տեխնոլոգիան գիտություն է նյութի, էներգիայի, տեղեկատվության, փոխակերպման և դրանք մարդուն ծառայեցնելու մասին: Այն կոչված է մարդու կյանքն ավելի բարեկեցիկ դարձնել:

Տեխնոլոգիա առարկան օգնում է աշակերտներին, որ նրանք իմանան և կարողանան օգտագործել ձեռքի գործիքներն ու հարմարանքները նյութի մշակման համար:

Տեխնոլոգիա առարկայի խնդիրն է դաստիարակել պատասխանատվության զգացում տեխնոլոգիական պրոցեսի որակյալ կատարման համար:

Տեխնոլոգիա առարկայի խնդիրն է աշակերտներին հաղորդել գիտելիքներ, ձևավորել կարողություններ, հմտություններ, արժեքներ և այլն:


ԳԼՈՒԽ 1. Փայտամշակման արհեստանոցում փայտի մշակման աշխատանքների կազմակերպում

1.1 Փայտանյութն իբրև բնական նյութ


Փայտանյութն այսօր անհրաժեշտ է և կիրառվում է բազմաթիվ ոլորտներում: Այն օժտված է զարմանալի հատկություններով: Ժողովրդական տնտեսության մեջ փայտանյութը ունի իր ուրույն տեղը: Փայտանյութը անփոխարինելի է կահույքի արտադրությունում, շինարարական աշխատանքներ կատարելիս և այլն: Այդ կենդանի և գեղեցիկ նյութից պատրաստված շինվածքները զարդարում են մեր կենցաղը: Փայտանյութի այդքան լայն օգտագործումը պայմանավորված է տեխնիկական բարձր հատկություններով: Մետաղի և քարի համեմատությամբ փայտանյութը հեշտ է մշակվում: Լինելով թեթև՝ ունի համեմատաբար մեծ ամրություն, ունի ցածր ջերմահաղորդականություն, լավ է սոսնձվում, հաճախ ունենում է գեղեցիկ արտաքին տեսք, լավ է գեղերեսվում և այլն: Փայտանյութը խոնավանալիս ուռչում է, իսկ չորանալիս՝ ծովում ու ճաքճքում: Փայտանյութը հեշտությամբ այրվում է և փտում է: Այն հեշտ է օգտագործել:

Գոյություն ունեն ծառերի շատ տեսակներ և բոլորն էլ օգտագործվում են տարբեր նպատակների համար: Այն ծառերը, որոնց պսակը ծածկված է տերևներով կոչվում են սաղարթավոր (կաղնի, կեչի, լոբենի, հացենի, հաճարենի և այլն), իսկ փշերով ծածկվածները՝ փշատերև (սոճի, եղևնի, մայրի, կվենիկայլն):

Նկ. 1



Աճող ծառը բաղկացած է արմատներից, բնից և պսակից: Արդյունաբերական նպատակների համար կարևոր նշանակություն ունի ծառի բունը: Փայտանյութի մասին պատկերացում կազմելու համար պետք է ուսումնասիրել բնի երեք հիմնական Հատույթներտ՝ լայնական /1/, շառավղային (2) և տանգենցիալ (3):



Նկ. 2 Հիմնական


հատույթները՝

1-լայնական,

2- շառավղային,

3- տանգենցիալ

Ծառի բունն արտաքինից պատված է կեղևով: Կեղևն ունի երկու շերտ. արտաքին, որը ծառին պաշտպանում է ցրտից, շոգից, այլևայլ վնասակար ազդեցություններից, և ներքին նրբակեղևային շերտ, որով տեղաշարժվում են օգտակար սննդանյութերը: Կեղևի և բնափայտի միջև գտնվում է կամբիումի բարակ շերտը, որի կենդանի բջիջների բաժանման շնորհիվ ծառը հաստանում է:



Նկ. 3


Ծառի բնի կառուցվածքը

- 1- միջուկ,
- 2- 2-ենթակեղևա շերտ,
- 3-3-կամբիում,
- 4-4-նրբակեղևային շերտ,
- 5-5- խցանային շերտ,
- 6-6-ծուծ
- 7-7-ծուծային ճառագայթներ

Բնի հիմնական մասը կազմում են տարեկան շերտերը (օղակներ): Դրանցից յուրաքանչյուրն աճում է ծառի կենսագործունեության մեկ տարվա ընթացքում: Տարեկան շերտերի մեջ տարբերում են վաղ և ուշ մասերը: Շերտի վաղ մասը գտնվում է միջուկին մոտ, իսկ ուշ մասը՝ կեղևին մոտ: Վաղ մասը ծակոտկեն է ու փխրուն, ունի բաց գույն, աճում է զարնանը և ամառվա սկզբին: Ուշ մասն ավելի խիտ է, ամուր և կարծր, ունի մուգ գույն, աճում է ամառվա վերջին և աշնանը: Բնի ճակատային կտրվածքում երևում են փայլուն գծեր, որոնք ուղղված են ծուծից դեպի կեղևը: Դրանք ծուծային ճառագայթներն են:

Շինվածքներ պատրաստելու համար նախապատրաստվածքներ ընտրելիս անհրաժեշտ է հաշվի առնել փայտանյութի ֆիզիկական, մեխանիկական և տեխնոլոգիական

հատկությունները: Դրանցից կարևորագույններն են արտաքին տեսքը, ամրությունը, խտությունը, խոնավություն և այլն:




Նկ. 4

Բնակլիմայական և կենսաբանական ազդեցություններից փայտանյութի պահպանության լավագույն միջոցներից է չորացումը:

Փայտանյութը չորացնում են երկու եղանակով՝ բնական և արհեստական: Բնական չորացումը (նկ. 4 ա) կատարվում է բաց պահեստներում կամ ծածկի տակ: Փայտանյութը չորանում է երկար ժամանակ: Արհեստական չորացումը (նկ.4 բ) կատարվում է խցիկային եղանակով: Խցիկներում փայտանյութը չորանում է արագ և ևհավասարաչափ ավտոմատ սարքերի օգնությամբ:

1.2 Փայտանյութն իբրև սղոցանյութ

Փայտամշակման ժամանակ օգտագործվող անտառանյութերն ստանում են փայտասղոցման ձեռնարկություններում՝ հատուկ հաստոցներով գերանը երկայնական ուղղությամբ սղոցելով: Դրանց անվանում են սղոցանյութեր (նկ. 5): Սղոցանյութերն ունեն հետևյալ տարրերը. եզրաշերտ (1)՝ երկայնական լայն մակերևույթն է, իսկ քառակուսի հատույթի դեպքում՝ ցանկացած երկայնական մակերևույթը, եզր (2)՝ երկայնական նեղմակերևույթն է, կող (3)՝ երկու կից մակերևույթի հատման գիծն է, ճակատ (4)՝ առաջանում է սղոցանյութի լայնական կտրումից, բնեզր (5)՝ գերանի արտաքին մակերևույթի չկտրված մասն է:



Նկ.5

Շինվածքների պատրաստում

Փայտանյութից պատրաստված ցանկացած շինվածք կարող է կազմված լինել մեկ կամ մի քանի դետալներից: Դետալն այն շինվածքն է, որը պատրաստված է մեկ ամբողջական միատարր նյութից:

Շինվածքները կարող են լինել միադետալ՝ պատրաստված մեկ դետալից (ցուցափայտ, քանոն), կամ բազմադետալ՝ պատրաստված մի քանի դետալներից (աթոռ, նկարի շրջանակ): Դետալի վրա կարող են լինել տեխնոլոգիական տարրեր՝ անցքեր, ակոսներ, ելուստներ և այլն:

Շինվածքի պատրաստման համար կատարվող գործողությունների ամբողջությունն անվանում են տեխնոլոգիական գործընթաց:

Շինվածքի պատրաստման համար անհրաժեշտ է.

- կազմել աշխատանքային պլան,
- ուսումնասիրել էսքիզը կամ գծագիրը,
- Կատարել նյութի ընտրություն, նախապատրաստվածքի ընտրություն,
- կատարել գործիքների և հարմարանքների ընտրություն,
- կատարել չափանշում,
- կտրող գործիքներով մշակել նախապատրաստվածքը,
- կատարել վերջնամշակում:

Շինվածքի պատրաստման տեխնոլոգիական գործընթացն իրականացնելիս օգտվում են տեխնոլոգիական փաստաթղթերից: Տեխնոլոգիական քարտը փաստաթուղթ է, որտեղ նշվում են գործողությունների կատարման հաջորդականությունը, գրաֆիկական պատկերները և այն գործիքներն ու հարմարանքները, որոնցով իրականացվում է գործընթացը:

ԳԼՈՒԽ 2. Փայտանյութից շինվածքների պատրաստում տեխնոլոգիայի դասերին

2.1. Փայտանյութի մշակման գործիքներ և հարմարանքներ

Չափանշում, չափանշման գործիքներ

Դետալի չափանշումը կարևոր և պատասխանատու գործընթաց է, որի ճշգրիտ կատարումից է կախված շինվածքի որակը, նյութերի և ժամանակի խնայողաբար օգտագործումը: Չափանշում են կոչվում դետալի վրա այն կետերի և եզրագծերի անցկացումը, որոնք ցույց են տալիս մշակման տեղամասերն ու սահմանները: Չափանշում կատարելիս օգտատրծում են քանոն, անկյունակ, խազքաշ: Ոչ մեծ ճշտություն պահանջող երկայնական չափումները կատարվում են չափերիզով:



Անկյունակը նախատեսված է դետալների և շինվածքների տարրերի ուղղանկյունությունն ստուգելու, ինչպես նաև ուղիղ անկյունների չափանշման համար:

Խազքաշն օգտագործվում է դետալի վրա չափանշման զուգահեռ գծեր քաշելու համար: Դետալի վրա աղեղներ, շրջանագծեր գծելու համար օգտվում են կարկինից: Չափանշումը սկսում են դետալի ուղիղ լայն եզրից: Այդ մակերևույթն անվանում են

բազալին մակերևույթ:Բազալին մակերևույթի մշակումից հետոկատարում են նեղ եզրերից լավագույնի չափանշումը: Այն անվանում են բազալին եզր: Բազալին եզրի մշակումից հետո կատարվում է մյուս լայն և նեղ շերտերի չափանշումը և մշակումը:

Մեծ քանակությամբ միատեսակ դետալներ չափանշելիս նպատակահարմար է օգտվել ձևանմուշներից:




2.2. Փայտանյութի մշակում. Սղոցում, շաղափում.

ՓԱՅՏԱՆՅՈՒԹԻ ՄՇԱԿՈՒՄԸ ԿՏՐՄԱՄԲ

Կտրումը փայտանյութի մշակման ամենատարածված եղանակն է: Փայտանյութի կտրումն իրականացվում է զանազան կտրող գործիքներով:

Փայտանյութի կտրմամբ մշակման կարևոր և պատասխանատու գործողություններից է սղոցումը: Սղոցումը գործընթաց է, որի ժամանակ փայտանյութը բաժանվում է մասերի: Փայտանյութի սղոցումը կատարվում է ձեռնասղոցներով (նկ. 6)

կամ ձեռքի էլեկտրական սղոցով (նկ. 7):




նկ. 7

Նկ. 7 Ձեռքի էլեկտրական սղոց

Մոդցման գործընթացի արդյունավետությունը կախված է սղոցի վիճակից: Մոդցածապավենը պետք է լինի ուղիղ, առանց վնասվածքների: Մոդցի բոլոր ատամները պետք է լինեն միանման և լավ սրված: Մոդցելիս սղոցածապավենը շփվում է կտրման տեղամասի պատերին, տաքանում է և ընդարձակվում, որի հետևանքով դժվարությամբ է շարժվում սղոցատեղում: Այդ երևույթից խուսափելու համար սղոցի ատամները ենթարկում են չափրաստման: Չափրաստումը սղոցի ատամների թեքումն է հերթականությամբ տարբեր կողմեր: Չափրաստումը կատարվում է հատուկ չափրաստիչներով:



Նկ.8 Մոդցների ատամների ձևերը




Լայնական սղոցման ամենապարզ եղանակը՝ նախապատրաստվածքը հենակին սեղմած կտրելն է: Իհարկե, ավելի ապահով է, երբ նախապատրաստվածքն ամրակապվում է դազգահի սեղսեղմիչ տուփում:

Փայտանյութի երկայնական սղոցման ժամանակ նախապատրաստվածքը դազգահի սեղմիչ տուփում ամրացնում են ուղղաձիգ կամ հորիզոնական դիրքով, կտրման գիծն աշխատախատակի եզրից 20-30 մմ դուրս:

Աշխատանքն ավելի հաճախ կատարվում է աղեղնասղոցով:

Երբեմն աշխատաքի սկզբում դժվար է սղոցել ճիշտ չափանշման գծով: Նման դեպքերում սղոցով մի քանի հետ շարժումներ են կատարում չափանշման գծի վրայով, որից հետո շարունակում սղոցել: Ձեռքը չվնասեու համար նպատակահարմար է օգտվել ուղղորդ չորսվակից: Փայտանյութը ձեռնասղոցներով սղոցելիս դժվար է ապահովել բարձր որակ և մեծ ճշտություն: Հարմար է օգտվել անկյունասղոցման արկղից, որի օգնությամբ սղոցանյութերը կարելի է կտրել 90° և 45° անկյուններով:




Աշխատատեղ

Ուսումնական արհեստանոցը, որտեղ պետք է անցկացվեն տեխնոլոգիայի դասա-
ժամերը, պետք է կահավորված լինի գործիքներով ու հարմարանքներով:

Ուսումնական արհեստանոցում յուրաքանչյուր աշակերտ պետք է ունենա իր
աշխատատեղը, այն պետք է կահավորված լինի համապատասխան սարքավորումներով,
գործիքներով ու նյութերով:

Աշխատատեղի հիմնական սարքավորումը ատաղձագործական դազգահն է: Դազգահի
աշխատատախտակը պատրաստվում է 60-70 մմ հաստությամբ ամուր փայտատեսակից:



Նկ. 9. Ատաղձագործական դազգահ

Մշակվող փայտը ամրակապելու համար դազգահն ունի առջևի և հետևի սեղմիչ տուփեր,
որոնք տեղադրվում են պտուտակային մեխանիզմի օգնությամբ:

Դազգահի բարձրությունը պետք է համապատասխանի աշակերտի հասակին: Բարձրությունը
համարվում է նորմալ, եթե աշխատողը, դազգահի մոտ ուղիղ կանգնած դիրքում, ձեռքերը ներքև,
մարմնին սեղմած վիճակում կարող է ավերը հենել աշխատատախտակին (նկ 2): Գործիքները

պետք է ճիշտ դասավորել դազգահի վրա: Հաճախակի օգտագործվող գործիքները դասավորել ավելի մոտ, աջ ձեռքով օգտագործվող գործիքները դնել աջ կողմում, իսկ ձախը՝ ձախ կողմում:

Աշխատանքը ավարտելուց հետո ներպտուտակել առջևի հետևի սեղմիչ տուփերի պտուտակները թողնելով 5-10 մմ բացվածք:

Դազգահի աշխատատախտակը մաքրել խոզանակի օգնությամբ:

Փայտանյութի ռանդում


Սղոցումից հետո դետալի մակերևույթը ունենում է անհարթություններ: Ռանդելու ժամանակ դետալին տալիս են համապատասխան ձև, անհրաժեշտ մաքրություն: Տարբերվում են հարթ և անկյունային ռանդում: Հարթ ռանդումով մշակում են այնպիսի դետալներ որոնք ունեն ուղղանկյուն, եռանկյուն հատույթների ձևեր: Անկյունական ռանդումով մշակում են դետալի ուռուցիկ, գոգավոր մակերևույթը: Փայտանյութը ռանդում են ձեռքի կամ էլեկտրական ռանդիչ գործիքներով:

Ռանդան կազմված է կոճղակից, դանակից, սեպից: Կոճղակի ներքևի մասը կոչվում է ներքան, առջևինը՝ քիթ, հետևինը՝ կրունկ: Կոճղակի բնիկում ամրացվում է դանակը, բնիկի միջոցով հեռացվում է տաշեղը: Ռանդան օգտագործում են նախնական մշակման համար: Դանակի կտրող եզրը ուղիղ է, ունի 40 մմ լայնություն, թռիչքը՝ 1 մմ է:

Զուլաղը նախատեսված է կոպտատաշ մշակման համար: Դանակի կտրող եզր կիսակոր է, թռիչքը՝ 3 մմ է: Մշակված մակերևույթը ստացվում է անհարթ՝ ակոսների տեսքով:

Ֆուգանով ռանդում են երկար ու լայն մակերևույթներ (երկ. 700մմ, լայն. 70մմ) :
Ֆուգանն ունի 65 մմ լայնությամբ կրկնակի լեզվակով դանակներ: Օգտագործում են նաև
50 մմ լայնություն ունեցող կիսաֆուգաններ:

ռանդա



զղաղ



ֆուգան



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով կատարած տեսական և գործնական ուսումնասիրությունների ընթացքում հանգում ենք հետևյալ եզրակացության.

. Փայտանշուրին ծանոթացումը, այն մշակելու գործիքներին և հարմարանքներին ծանոթացումը կարևոր նշանակություն ունեն սովորողների համար: Տղաները սիրով են աշխատում ուսումնական արհեստանոցում, եթե այն կահավորված է և առկա են աշխատանքային գործիքներ:

are
ent

Գրականության ցանկ

- Տեխնոլոգիա: 5-7 դասարաններ: ՈՒՏՈՒԵՃԻ ձեռնարկ/ Ա. Հովսեփյան, Ա. Հարությունյան, Մ. Աղաջանյան, Լ. Վերոյան.- Եր.: Տիգրան Մեծ, 2014.- էջ 26-40:

Էլեկտրոնային աղբյուրներ

1. Հանրակրթական պետական չափորոշիչ՝

2. <https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788>, 29.03.2023

- file:///C:/Users/Siruns/Downloads/TEKNOLOGIA_CHAP_CRAGIR.pdf
- Հանրակրթական հիմնական դպրոցի «Տեխնոլոգիա» առարկայի չափորոշիչ (1-7-րդ դասարանների), 2012. – էջ 2-6:
- https://online.fliphtml5.com/fumf/lupy/?fbclid=IwAR32Ghmmcv4f1CGjUhvuk4JaYz_OKhSfTmLI8IbGkNqBwHVN-ZxPSgh8XZG8#p=27
- Տեխնոլոգիա: Հանրակրթական դպրոցի 5-րդ դասարանի դասագիրք/ Ա. Հովսեփյան, Ա. Հարությունյան, Մ. Աղաջանյան, Լ. Վերոյան.- Եր.: Տիգրան Մեծ, 2014.- էջ 16-34:

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱԶՈՐԻ Հ, ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐՄԱՆ



ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ **Տեխնոլոգիա առարկայի կիրառական նշանակությունը հանրակրթական դպրոցներում**

Կատարող՝ **Արմինե Սոսյան**
Ղեկավար՝ **Կարինե Պապիկյան**

ՎԱՆԱԶՈՐ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	3
Գլուխ 1 Տեխնոլոգիա առարկայի ուսուցման կարևորությունը հանրակրթական դպրոցում.....	5
Գլուխ 2 Տեխնոլոգիա առարկայի ինտեգրումն հանրակրթական մյուս առարկաների հետ.....	8
Փորձարարական մաս.....	13
Եզրակացություն	20
Գրականության ցանկ	21

Ներածություն

Թեմայի արդիականությունը

Հանրակրթական դպրոցի Տեխնոլոգիա առարկայի կարևորությունն այն է, որ թույլ է տալիս ոչ միայն ցուցադրել գիտելիքներ, այլև զարգացնել ստեղծագործական կարողություններ: Տեխնոլոգիայի դասը օգնում է զարգացնել մի շարք գործնական հմտություններ, որոնք օգտակար և կիրառելի կլինեն ապագայում:

Նախորդ ուսումնական տարիներին ուսուցանվում էր «աշխատանքի ուսուցում» առարկան, որի դասավանդման ժամանակ աշակերտները բաժանվում էին երկու խմբի՝ տղաների և աղջիկների: Աղջիկները զբաղվում էին կարուձևով, խոհարարությամբ, իսկ տղաները փայտից մասեր էին սղոցում, առարկաներ պատրաստում և այլն: Դպրոցների մի մասը չունեին համապատասխան անհրաժեշտ սարքավորումներ, ուստի դասերի ընթացքում սովորողները ավելի շատ ստանում էին տեսական գիտելիքներ: Օրինակ՝ աղջիկները գրի էին առնում բաղադրատոմսերը, եփում էին տանը՝ ծնողների հսկողության ներքո, իսկ ստացված ուտեստը բերում դպրոց:

Գիտատեխնիկական առաջընթացը կրթության բնագավառում խորը որակական փոփոխություններ առաջացրեց: Անցում կատարվեց ուսուցման նոր բովանդակության, պարապմունքների անցկացման առաջավոր ձևերի ու մեթոդների: Տղաների համար չկա առանձին տեխնոլոգիա, իսկ աղջիկների համար՝ առանձին. ինչպես որ չկա հատուկ ֆիզիկա, քիմիա, հանրահաշիվ միայն տղաների կամ միայն աղջիկների համար:

Յետագոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել Տեխնոլոգիա առարկայի ուսուցման տեսական և մեթոդական գրականությունը, ցույց տալ առարկայի կարևորությունը հանրակրթական դպրոցում:

Այս նպատակից բխում են մի շարք խնդիրներ`

1. նկարագրել տեխնոլոգիա առարկայի ուսուցման կարևորությունը հանրակրթական դպրոցում:
2. բացահայտել տեխնոլոգիա առարկայի ինտեգրումը հանրակրթական մյուս առարկաների հետ:
3. իրականացնել փորձարարական աշխատանքներ` միտված ուսուցիչների` այլ առարկաների հետ ինտեգրման կազմակերպման ձևերի բարելավմանը
4. ուսուցման կազմակերպումը սահուն իրականացնելու համար գտնել ժամանակակից լուծումներ` կիրառելով ավանդական և ժամանակակից մեթոդներ:

Ինտեգրված ուսուցումը տարբեր առարկաներից գիտելիքների, ուսումնական նյութերի և տեխնոլոգիաների մասնակցման ճանապարհով, ապահովում է դասավանդման նոր որակ և արդյունավետություն: Այն երեխաների մտավոր ներուժի բացահայտման և զարգացման լուրջ հնարավորություններ է ընձեռում:

Սովորողների մոտ ստեղծագործական և գեղագիտական հմտությունների ձևավորումը հաջողությամբ իրականացնելու համար անհրաժեշտ է

- ✓ ստեղծել առարկայական զարգացնող միջավայր,
- ✓ ստեղծել պայմաններ նրանց ինքնուրույն մտածողության զարգացման համար,
- ✓ ավելի խորացնել առարկայական իմացությունը

Յետագոտական աշխատանքը ներառում է ներածություն, երկու գլուխներ, փորձարարական մաս, եզրակացություն և գրականության ցանկ:

Գլուխ 1 Տեխնոլոգիա առարկայի ուսուցման կարևորությունը հանրակրթական դպրոցում

Տեխնոլոգիան համարվում է ճանաչողական գիտություն, այն ուղղված է մարդու գործունեության բարեփոխմանը, գիտելիքների համակարգմանը, գործունեության օպտիմալացմանը, արդյունքների զարգացմանը:

«Տեխնոլոգիա» տերմինը հունարենից թարգմանաբար նշանակում է արվեստ, ունակություն, վարպետություն: Ստեղծագործական դասերը զարգացնում են նորարարական մտածողությունը, երևակայությունը և խթանում սովորելու նկատմամբ ընդհանուր հետաքրքրությունը: Դասերի ժամանակ երեխան օգտագործում է բոլոր զգայարանները, սա զարգացնում է նյարդային համակարգը: Երբ երեխան զբաղվում է ստեղծագործությամբ, գործընթացն է դառնում կարևոր, ոչ թե արդյունքը, քանի որ նույնիսկ պարզ որոշումները (գույն, չափ կամ նյութ ընտրելը) անկախության զգացում են առաջացնում: Գեղագիտական դաստիարակությունը մի ամբողջ արժեհամակարգ է, որը ներառում է վերաբերմունք կյանքի, բնության, շրջակա միջավայրի և առօրյայի նկատմամբ: Եսթետիկ ընկալումը ձևավորվում է վաղ մանկությունից: Այդ նպատակով տեխնոլոգիա առարկայի ուսուցումն իրականացվում է առաջին դասարանից:

Տեխնոլոգիայի դասերին երեխաները ծանոթանում են տարբեր մասնագիտությունների, ձեռք են բերում գիտելիքներ արդյունաբերության, գյուղատնտեսության, էներգետիկայի, տրանսպորտի և մարդկային գործունեության այլ ոլորտներում: «Տեխնոլոգիա» առարկայի ուսումնասիրությունն ուղղված է ընդհանուր աշխատանքային և ընտանեկան, կենցաղային, մասնագիտական և աշխատանքային հմտությունների

ձեռքբերմանը, մտավոր, բարոյական և գեղագիտական զարգացման ապահովմանը[5]:

Տեխնոլոգիա առարկայի դերն է զարգացնել երեխայի մեջ հոգեբանական, ինքնուրույն, կոնստրուկտիվ մտածելակերպը, ստեղծագործական ունակությունները: Առարկայի նպատակն է ստեղծարար, նորարար, նախաձեռնող, ձեռնարկատիրական մտածողություն, ազգային նկարագիր ունեցող անձի ձևավորումը, ով արվեստին ու արհեստին հաղորդակցվելու, աշխատանքի պրակտիկ ձևերին և նորագույն տեխնոլոգիաներին տիրապետելու, ռեսուրսներն արդյունավետ տնօրինելու միջոցով ստեղծում է մարդկային կարիքներին ու ցանկություններին համապատասխանող ապրանքներ, ծառայություններ և համակարգեր [2]:

Շատերն են Տեխնոլոգիա առարկան սմանեցնում նախկինում ուսուցանվող աշխատանքի ուսուցում առարկային: Սակայն հարկ ենք համարում նշել, որ չնայած կան նմանություններ, սակայն տարբերություններն էլ էական են: Տեխնոլոգիա առարկայի կարևորությունը կայանում է նրանում, որ առարկայի շրջանակներում սովորողները զինվում են անհրաժեշտ տեխնիկատեխնոլոգիական գիտելիքներով և ունակություններով:

Տարրական դպրոցում տեխնոլոգիայի դասերի նպատակը ոչ թե պլաստիլինից, թղթից կամ սովարաթղթից պատկերներ պատրաստելն է, այլ սովորողներին ընդհանուր սկզբունքներ սովորեցնելը: Նրանք կհասկանան, որ ցանկացած իր՝ անկախ նրանից՝ պատրաստված է թղթից, գործվածքից, կոներից, ծառի ճյուղերից, թե պլաստիկ շշից, պատրաստված է ըստ պլանի, հերթականությամբ: Կիմանա, որ աշխատանքը սկսելուց առաջ անհրաժեշտ է սեղանին դնել նյութերն ու գործիքները, որպեսզի հեշտությամբ գտնեն այն, ինչ հարկավոր է իրենց:

Տեխնոլոգիա առարարկան հնարավորությունն է տալիս ընդլայնելու սովորողների գիտելիքները տարբեր կյուլթերի հատկությունների, անվտանգ կիրառման և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև աշխատանքային գործիքների ճիշտ կիրառման, աշխատանքի դերի, կարևորության, տարբեր մասնագիտությունների մասին պատկերացումներ կազմելուն: Սովորողները հնարավորություն են ունենում սովորածը գործնականում կիրառելու, ինչը բարձրացնում է դասի արդյունավետությունը:

Օրինակ, առաջին դասարանում Տեխնոլոգիա առարկայի ուսուցումը սկսում են գունավոր թղթերից առարկաների (սունկ, եղևնի, արև և այլն) պատրաստումով: Մինչ առարկաների պատրաստելուն անցնելը, կատարում ենք փոքրիկ ճամփորդություն՝ ցուցադրելով տեսանյութ: Երեխաների հետ միասին ճամփորդում ենք արտադրամասերով՝ պլաստիլինի, թղթի և այլն: Առաջինը կանգ ենք առնում թղթի պատրաստման արտադրամասում: Այդ արտադրամասում ուսումնասիրում ենք թղթի հատկությունները, պարզում, թե ինչից է պատրասվում թուղթը, որն է համարվում թղթի պատրաստման հումք, ինչ կարելի է անել դրա հետ: Այդպես հերթականությամբ անցնում ենք բոլոր արտադրամասերով: Տեսությունը օգնում է գործնական գործունեությանը, երբ երեխաները գիտեն, թե ինչ են պլաստիլինը, սովարաթուղթը, թուղթը, բնական և սինթետիկ գործվածքները, ինչ հատկություններ ունեն դրանք և ինչպես կարելի է օգտագործել այդ հատկությունները աշխատանքում և այլն: Պրակտիկան օգնում է տիրապետել տեսականին. նախքան գործվածքների, թղթի, սովարաթղթի կամ բնական կյուլթերի հատկությունների մասին եզրակացություն անելը, երեխաները ծանոթանում են օրինակ Ի՞նչ կլինի թղթի և գործվածքի հետ, եթե դրանք ճմռթեք և այլն: Երբ երեխաներն իրենք են փորձում անել, նրանք տեսական կյուլթը սովորում են ավելի հեշտ և արագ:

Այսպես, տարրական դասարաններում ուսումնասիրության առանցքը նյութերն են, դրանց հատկությունների ուսումնասիրությունը, մշակման եղանակների տիրապետումը՝ պարզից բարդ սկզբունքով: Առաջին և երկրորդ դասարաններում ուսումնասիրությունների հիմքը թուղթն է, բնական և արհեստական նյութերը: Մանածագործական նյութերով աշխատանքը սկսվում է երրորդ դասարանից, երբ երեխաներն արդեն նյութերի հետ աշխատելու բավականաչափ փորձ կունենան և կկարողանան անվտանգ աշխատել տարբեր տեսակի ասեղներով, մկրատներով: Աշխատանքի տեսակների ընտրությունն էլ նույն սկզբունքով է կատարվում՝ ապլիկացիա, խճանկար, օրիգամի (հարթ, ապա տարածական), մոդուլային օրիգամի, թելանկար, կոմպոզիցիա և այլն: Չորրորդ դասարանից սկսվում է ծանոթացումը գծագրական պարզ գործիքներին, հայկական գեղարվեստական արհեստներին, դեկորատիվ-կիրառական արվեստին, հայկական զարդանախշերի իմաստային ու գաղափարական բովանդակությանը, գեղարվեստական շինվածքներ նախագծելու պարզագույն տեխնիկաներին[2]:

Այսպիսով, տարրական դասարաններում սովորողները ծանոթանում են տեխնոլոգիայի տարրերին, ձևավորվում և զարգանում են նախնական աշխատանքային հմտությունները, տարբեր աշխատանքային իրերից անվտանգ օգտվելու հմտություններ:

«Տեխնոլոգիա» առարկայի ուսուցումը միջին դպրոցում ենթադրում է սովորողների ընդհանուր տեխնոլոգիական իրազեկվածություն՝ տեխնոլոգիական մտածողության ձևավորման նպատակով, կիրառական տեխնոլոգիական գիտելիքների և կենցաղային հմտությունների ձևավորում: Այն նպատակաուղղված է ընդլայնելու աշակերտների գիտելիքները գիտության նվաճումների, բնության, մարդու և հասարակության վրա տեխնիկայի և տեխնոլոգիաների կիրառության

հավանական ազդեցության մասին, ձևավորելու ձեռնարկատիրական նախնական գիտելիքներ, իր գործունեությունը պլանավորելու և ժամանակն արդյունավետ տնօրինելու կարողություններ: Այն նաև նպաստում է սովորողների մասնագիտական կողմնորոշմանը՝ տարբեր արհեստներին ծանոթացնելու միջոցով[4]:

Տեխնոլոգիա առարկայի ուսուցանումը դպրոցում ունի հետևյալ դրական կողմերը.

1. **Թիմային աշխատանք.** Համատեղ աշխատանքը օգնում է ամրապնդել դպրոցականների հարաբերությունները, պարզեցնում է սոցիալականացումը և սովորեցնում միասին լուծել խնդիրները:
2. **Աշխատանքային հմտություններ.** Տեխնոլոգիայի դասից ինչ-որ բան սովորած տղան կօգնի դպրոցում կահույք վերանորոգել, ինչպես նաև տանը ինչ-որ իր վերանորոգել և դա կանի հետաքրքրությամբ:
3. **Աշխատել ձեռքերով.** այն զարգացնում է մոտորիկական
4. **Աշխարհճանաչողության զարգացում.** Դասարաններում երեխաները ծանոթանում են նյութերի հատկություններին, քիմիական և ֆիզիկական երևույթներին:

Գլուխ 2 Տեխնոլոգիա առարկայի ինտեգրումը հանրակրթական մյուս առարկաների հետ

Ուսումնական առարկաների միջև գոյություն ունեցող փոխադարձ կապերի վերհանումն ու օգտագործումը հրատապ խնդիր է: Հատկապես այդ ճանապարհով կարելի է սովորողների գիտակցության մեջ ձևավորել աշխարհի ամբողջական պատկերը: Հասկանալի է՝ առանց այդպիսի կապերի ապահովման սովորողների գիտելիքները կլինեն անբավարար, իսկ դասավանդման հարցերն առանձնապես ոչինչ չեն ավելացնի ուսուցման արդյունավետությանը: Մարդկային գիտելիքներն օրգանապես լրացնում և հարստացնում են միմյանց և անհրաժեշտ պայմաններ ձևավորում իրականության առավել խոր, համակողմանի ընկալման և իմաստավորման համար: Միջառարկայական կապերը գոյություն ունեն գրեթե բոլոր դասընթացներում: Չէ՞ որ օբյեկտիվորեն գոյություն ունեցող երևույթներն ու փաստերը կարող են ընկալվել և ուսումնասիրվել այլ երևույթների հետ փոխադարձ կապի և փոխգործողությունների համապատկերում: Միջառարկայական կապերը լավ պատկերացնելու համար անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր թեմա ուսումնասիրվի համակողմանիորեն, տարբեր կապերի բացահայտման տեսանկյունով: Այսպես կարող է իրականանալ ուսուցման ինտեգրումը:

Այդ առիթով Կոմենսկիին գրել է. «Այն ամենը, ինչը փոխադարձաբար կապված է, այդպիսի կապի մեջ էլ պիտի դասավանդվի»: [1]

Դեռևս X/X դարում գերմանացի մանկավարժ Ֆ. Ֆրեբելն օրիգամիի միջոցով մաթեմատիկայի ինտեգրված դասընթացի հիմքը դրեց և պնդեց, որ «այդ հիմքի վրա կարելի է օգտագործել և ամրապնդել երեխաների երկրաչափական գիտելիքներն ու կարողությունները»: [1]

Ինտեգրումը գիտակցված փորձ է, որը կապում է ուսումնական ծրագրի նախկինում չկապակցված ոլորտները և խթանում աշխարհի ամբողջական պատկերացման, բնության և մարդու միասնության գաղափարի ձևավորումը:

Որո՞նք են ինտեգրված դասի առավելությունները, և պե՞տք է այսօր սովորողին դասաժամի այդ ձևը: «Ինտեգրում բառը նկատի ունենք տարբեր առարկաների, ուսումնական նյութերի մեջ մի ամբողջություն՝ փոխադարձ իրար լրացնող՝ և՛ իմաստով, և՛ ձևով: Այն չափազանց գրավիչ ձև է սովորողների համար, սովորողին տալիս է լիարժեք պատկերացում նյութի վերաբերյալ: Դա երկու նյութի խաչմերուկ է, որին հետևում է վերելքը, ապա՝ զագաթը՝ նպատակային դասը: Այս երկու դաշնակից սուբյեկտների ներկայացումը տարբեր փուլերում հաջողությամբ է ավարտվում:

Ինտեգրված դասի կառուցվածքը սովորական դասից տարբերվում է հետևյալ առանձնահատկություններով՝

- հստակությամբ, ուսումնական նյութի սեղմությամբ
- տրամաբանական փոխապայմանավորվածությամբ դասի յուրաքանչյուր փուլում ինտեգրված առարկաների նյութի փոխկապակցվածությամբ
- ուսումնական նյութի տեղեկատվական մեծ տարողությամբ

Նման դասերի պլանավորման և կազմակերպման համար ուսուցիչը պետք է հաշվի առնի հետևյալ պայմանները՝

- ✓ ինտեգրված դասին միավորվում են տարբեր առարկաների գիտելիքներ, դրա համար էլ խիստ կարևոր է որոշել ինտեգրված դասի նպատակը
- ✓ եթե ընդհանուր նպատակը որոշված է, ապա առարկաների բովանդակությունից ընտրում են միայն այն տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են դրանց իրականացման համար

Փորձը ցույց է տվել, որ տեխնոլոգիայի համադրումը բնագիտության, մայրենիի, երաժշտության, կերպարվեստի հետ՝ ինտեգրված դասերն անցկացնելու

հրաշալի հնարավորություն է ընձեռում: Պլանավորման ժամանակ պետք է հստակ ընտրել դասի կառուցվածքն ու տեսակը, ուսուցման մեթոդները:

Կորոտովը գրել է «Եթե ամեն մի գիտություն, ուսումնասիրելով նյութերի որոշակի շրջան մեզ տալիս է նյութական աշխարհի մի կողմի արտացոլումը, ապա բոլոր գիտելիքները միասին տալիս են համեմատաբար լրիվ և համակողմանի արտացոլում»: [6]

Կենսապես անհրաժեշտ հմտությունների և կարողությունների ձևավորումը, աշխատանքային կուլտուրան, թիմով աշխատելու ունակությունը, ինքնաճանաչման և ինքնահաստատման լավագույն ուղին է, որը փորձի ավելացմամբ միմիայն լավագույն որակների երաշխիք է հանդիսանում:

Տեխնոլոգիայի դասերի ժամանակակից, ինտեգրված մոտեցումը բաղկացած է դպրոցականների ակտիվ (այսինքն՝ անկախ) ճանաչողական գործունեության կազմակերպումից: Սովորողների ստեղծագործական գործունեության փորձի տիրապետումը ներառում է կրթական խնդիրների ստեղծագործական լուծումների որոնում և իրականության ստեղծագործական վերափոխում ստեղծագործական առաջադրանքների համակարգի միջոցով, որն ուղղված է մտածողության զարգացմանը, ներառյալ տեխնիկական և աշխատանքային հմտությունների յուրացմանը:

Տեխնոլոգիան դպրոցում ինտեգրացնող կրթական ոլորտ է, որը համադրում է գիտելիքներ մաթեմատիկայից, ֆիզիկայից, քիմիայից, կենսաբանությունից և այլ հանրակրթական առարկաներից, ցույց է տալիս դրանց օգտագործումը արդյունաբերության, էներգետիկայի, կապի, գյուղատնտեսության, տրանսպորտի և մարդու այլ գործունեություններում:

Հանրահաշիվը և երկրաչափությունը օգնում են նրանց հաշվարկների և գրաֆիկական ձևավորման հարցում: Տեխնոլոգիայի դասերին սովորողներն աշխատում են տրաֆարետներով, գծագրերով և օգտագործում մաթեմատիկական բանաձևեր (օրինակ՝ փայտի խոնավության և խտության հաշվարկ, մեքենա պատրաստելիս փոխանցման գործակիցը հաշվարկելը);

Քիմիա. կառուցվածքային կյուբերի հատկությունների իմացությունը օգտակար կլինի «տեղեկություններ կյութագիտության մասին» դասերին, որտեղ երեխաները ծանոթանում են կյուբերի քիմիական հատկություններին.

Տիզիկա. այս առարկայի հետ ինտեգրումն ունի համակարգված մոտեցում, քանի որ սովորողներն օգտագործում են ծրագրային գիտելիքները էլեկտրական սարքի մոդել ստեղծելու համար, սովորում են կարդալ պարզ էլեկտրական սխեմաներ, հավաքել էլեկտրական շղթա՝ շինարարական հավաքածուի մասերից գալվանական հոսանքի աղբյուրով, վերլուծել էլեկտրական սխեմայի խնդիրները, ուսումնասիրել շղթայի աշխատանքը, դրա հավաքման տարբեր տարբերակներ:

Կենսաբանություն. սովորողները կիրառում են հողի և բույսերի հատկությունների մասին ձեռք բերված գիտելիքները բույսերի աճեցման գործնական առաջադրանքների համար, ուսումնասիրում են մշակաբույսերի տեխնոլոգիաները:

Կերպարվեստ. դպրոցականները ծանոթանում են արվեստի պատմությանը, ժողովրդական արհեստներին, ձեռք են բերում նախնական գիտելիքներ աշխատանքի համար անհրաժեշտ իրերի ծագման մասին, նկարում են իրենց արտադրանքի էսքիզները՝ օգտագործելով գիտելիքները:

Նկարչություն. Կիրառում են գիտելիքներ գծագրեր, գծապատկերներ, էսքիզներ, տեխնիկական գծագրեր, գրաֆիկներ և արտադրանքի դիագրամներ

ստեղծելու համար: «Տեխնոլոգիայի» դասերին սովորողները ձեռք են բերում տեխնոլոգիական քարտեզներ կազմելու և դիզայնի ուսումնասիրություն հմտություններ:

Կյանքի անվտանգություն. Յուրաքանչյուր դաս սկսվում է անվտանգության կանոնների վերաբերյալ հրահանգներով, որոնց իմացությունը օգտակար կլինի կյանքի անվտանգության դասերին: Տեխնոլոգիայի յուրաքանչյուր դասաժամին ստեղծվում են անվտանգ աշխատանքային պայմաններ, քանի որ կան սովորողների առողջության համար վտանգավոր մի շարք գործոններ՝ աշխատող էլեկտրական սարքեր, կտրող գործիքներ, հաստոցներ: Հետևաբար, որպեսզի երեխայի առողջությունը ապահով լինի, անհրաժեշտ է կյանքի անվտանգության դասերի ընթացքում ձեռք բերված անվտանգության կանոնների իմացության կիրառում:

Եվ այս ամբողջ գիտելիքներն ավելի լավ են յուրացվում հենց այն պատճառով, որ սովորողները դրանք կիրառում են գործնականում:

Փորձարարական մաս

Ինտեգրված դասի պլան «Տեխնոլոգիա» առարկայից

Առարկա – Տեխնոլոգիա

Դասարան – VI

Դասի թեմա – «Բնական և քիմիական մանրաթելեր»

Դասի տիպը – խառը տիպի դաս

Դասի տևողությունը – 90 րոպե

Դասի նպատակը –

Ուսումնական – Կտարբերակի բնական և քիմիական մանրաթելերը, ծանոթ կլինի գործվածքների տեսականուն, դրանց ստեղծման պատմությանը: Կարևորի բնական ռեսուրսների դերը մեր կյանքում և խնայողաբար վերաբերվի դրանց:

Դաստիարակչական – Դաստիարակել համբերատարություն, սկսած գործը մինչև վերջ հասցնելու կարողություն, աշխատասիրություն:

Վերջնարդյունքները – Դասի վերջում կիմանա՝ ինչ է մանրաթելը, ինչպես է ստացվում:

Ծանոթ կլինի բնական և քիմիական մանրաթելեր ստանալու գաղտնիքներին և կտարբերակի գործվածքները

Խնդիրները – Իմանա՝ ինչ է մանրաթելը և ինչից են ստանում, պատմական տեղեկություններ մանրաթելերի ստացման մասին:

Բնական ծագում ունեցող մանրաթելերի դասակարգումը բուսականի և կենդանականի:

Բնագիտությունից ծանոթ լինի թելատու բույսերի տեսակներին, կազմությանը, աճեցման նպաստավոր պայմաններին և նրանց նշանակությանը տեքստիլ արդյունաբերության մեջ:


Ինտեգրված առարկաներ – բնագիտություն, պատմություն, հայոց լեզու և գրականություն

Մեթոդները – Մտագրոհ, Չրույց, հարց ու պատասխան, ԳՈԻՍ, Դ-աձև աղյուսակ, ՎեՆի դիագրամ, դերային խաղ

Կահավորումը – Գործվածքների սմուշներ, թելերի սմուշներ, բուրդ, բամբակ, տարբեր նկարներ, որտեղ պատկերված են թելատու բույսերը, կենդանիների՝ ոչխարի, անգորական ճագարի, ուղտի, լամայի ֆոտոնկարներ:

Դասի ընթացքը –

1. Կազմակերպչական մաս (3 թույն)
2. Անդրադարձ սահորդ կյուբին





Աշակերտը պատասխանում է՝

Ի՞նչ են կարում գործվածքներից


Տղամարդու, կանացի, մանկական հագուստներ, մեքենայի ծածկոցներ, վարագույրներ, մահճակալի ծածկոցներ, խոհանոցի և անկողնու սպիտակեղեն:

Աշակերտը գրատախտակին գրում է առանցքային բառեր.





Բնագիտության ուսուցիչը գրատախտակին գրում է առանցքային բառը.



Այնուհետև գրույցի մեթոդով ներկայացնում ենք, թե ինչու են այդ մանրաթելերը կոչվում քիմիական: Դրանք ստանում են քիմիական լաբորատորիայում՝ փայտանյութից, լոբազգիներից, քարի փշրանքներից, քարածխից և բնական գազից:

Տևտեսության մեջ գործվածքների նկատմամբ աճող պահանջարկի արդյունքում ծնվեց թափոններից լրացուցիչ հումք ստեղծելու գաղափար տեքստիլ արդյունաբերության համար:

Աշակերտները դերային խաղով ցույց են տալիս, թե ինչպես 5000 տարի առաջ չինացիները հայտնաբերեցին շերամի թրթուրների պատրաստած բոժոժներից մետաքսաթել ստանալու գաղտնիքը:

Ներկայացում

Չինացի կայսրուհին նստած է թռնուլ տակ: Սպասուհին թեյ է մատուցում նրան: Հանկարծ թռնուլց մի բոժոժ է պոկվում և ընկնում թեյի մեջ: Կայսրուհին զզվանքով թեյի բաժակը տալիս է սպասուհուն և պահանջում հանել այդ զզվելի որդին բաժակից և թեյը թափել: Երբ սպասուհին գդալով հանում է բոժոժիկը, մի երկար փայլուն թելանման նյութ է առաձգական ձգվում գդալի հետ: Չայրացած կայսրուհին ասում է սպասուհուն պատժելու մասին.

– Տա՛ր և այդ թելով ժանյակ գործիր թաշկինակիս եզրերին:

Հաջորդ օրը սպասուհին կայսրուհուն է ներկայացնում մի նրբահյուս ժանյակով թաշկինակ: Այսպես է, ըստ ավանդության, մետաքսաթելի ստացման գաղտնիքը՝ բոժոժները տաք ջրով մշակելու արդյունքում դառնում են ճկուն և առաձգական և օդում առչելով դառնում փայլուն, գեղեցիկ, մետաքսաթել:

Պատմության ուսուցիչը գրույցի միջոցով ներկայացնում է, թե ինչպես երկար տարիներ այդ գյուղը չինացիները գաղտնի էին պահում ամբողջ աշխարհից, նրանք իրենց պետության շուրջը 5-8մ բարձրության և 8800 կմ երկարության կրաքարով պարիսպ են կառուցել: Այդ պարիսպների վրայով կողք-կողքի կարող են անցնել 2 սայլ: Դրա վրայով է անցել Մեծ Մետաքսի ճանապարհը:

Այն ունեցել է նաև պաշտպանական նշանակություն: Գործել է Բ. Ա. 2-րդ դարից մ.թ. 16-րդ դար: Մետաքսի ճանապարհով չինացի վաճառականները մետաքսն արտահանում էին տարբեր երկրներ: Մետաքսի ճանապարհի երկարությունը 7 հազար քմ էր: Այդ ճանապարհի մեկ հատվածը դրանք հյուսիսային շրջաններով հասնում էր Արաքսի հովիտ՝ Ջուղայի գետանցքով դեպի Նախիջևան և Արտաշատ, հետո և ծովի նավահանգիստները: Մետաքսի մեծ ճանապարհը նպաստում էր Ասիայի և Եվրոպայի ժողովուրդների տնտեսական և մշակութային կապերի զարգացմանը: Այդ ճանապարհն անցնում էր 63 երկրներով:

Այժմ Մեծի տան Կիլիկիոյ կաթողիկոսարանի նախաձեռնությամբ խիստ հեռանկարային նախագիծ է դիտարկվում վերաբացելու Մետաքսի ճանապարհը, որտեղ Հայաստանը Իրանից Ռուսաստանի ծայրագույն կամուրջի դեր է խաղալու, ինչը մեր երկիրը կապաշրջափակի:

19-րդ դարում ռուս նշանավոր գիտնական Բուտլերով փորձով ապացուցեց, որ նյութերի հատկությունները կախված են ոչ միայն ատոմների տեսակից ու քանակից, այլև դասավորվածությունը փոխելով ստանում ենք նոր որակի նյութ. քիմիկոսներին հաջողվեց 1890թ-ին ստանալ ցեյլոլոզային ծագում ունեցող արհեստական նիտրոմետաքսը, իսկ 1898թ-ին վիսկոզային մետաքսը: Առաջին

սինթետիկ մանրաթելը տացել են 1934թ- ին Գերմանիայում, իսկ Նեյլոն մանրաթելի գյուտը 1938թ-ին պատկանում է ԱՄՆ-ին:

Սինթետիկ մանրաթելերն ստանում են ածուխից, բնական գազից, նավթի, կրի փոքր մոլեկուլների սինթեզման միջոցով: Դրանք քանի որ դյուրավառ նյութերից են՝ մթության մեջ ռազուտները հանելիս՝ կայծ են արձակում:

Տեխնոլոգիայի ուսուցիչը կշռադատման փուլում նշում է, որ մանկական ներքին հագուստների և անկողնու պիտակեղենի համար անհրաժեշտ է, որ դրանք կարված ինեն բամբակե գործվածքներից և հարց է ուղղում դասարանին.

- Պատճառաբանեք, ինչո՞ւ:

Աշակերտներն այս հարցում ունեն իրենց դիրքորոշումը.

- Բամբակե գործվածքները փափուկ են, ավերգիկ չեն, օդաթափանց են, չեն գրգռում մաշկը, խոնավացած են:

Պրոբլեմային խնդրահարույց հարց.

-Ինչո՞ւ Հայաստանի Գյուրի և Մարալիկ քաղաքներում գտնվող տեքստիլ արքիկաները բամբակի հումքը բերում դրսից:

-Որովհետև Հայաստանում բամբակենին չի աճում:

Բնագիտության ուսուցիչը լրացնում է.

- Հայաստանում 1950-1960-ական թվականներին Արարատյան դաշտավայրում մշակել են բամբակ, սակայն ցածր բերքատվության պատճառով դադարել են մշակել, քանի որ այս բույսը շատ քմահաճ է, նա իր բաժին ջուրը սիրում է ստանալ խիստ կանոնավոր՝ նույն ժամին և նույն չափով: Շատ ջերմասեր բույս է և սիրում է շատ լույս՝ արև: Հայաստանը այդ տարիներին չունեի բավարար տեխնիկա՝ բամբակը հավաքել և մշակելու:

Այսպիսով. ժամանակակից ուսուցիչը մշտական որոնման մեջ է նոր մեթոդների, տեխնիկայի և աշխատանքի ձևերի, որոնք կհամապատասխանեն ուսումնական գործընթացի նոր չափանիշների պահանջներին և կապահովեն սովորողի ստեղծագործական անհատականության ձևավորման անհրաժեշտ մակարդակ:

Աշխատանքի կազմակերպման ամենաարդյունավետ ձևերը աշխատանքի խմբակային ձևերն են, և հետագայում թիմային մեթոդը: Դա խմբային, թիմային աշխատանքն է, որը թույլ է տալիս սովորողներին ձեռք բերել փորձ սոցիալականացման և միմյանց հետ փոխգործակցության զարգացման մեջ, յուրաքանչյուր սովորողի գործունեության մեջ ներդրում է մրցակցության մթնոլորտ, ստեղծագործականություն և ինքնադրսևորում:

Դասերի խաղային ձևը նույնպես կիրառելի է: Դասերի խաղային ձևը ստեղծվում է դասերի ընթացքում խաղային տեխնիկայի և իրավիճակների օգնությամբ, որոնք գործում են որպես ուսումնական գործունեության դրդման և խթանման միջոց:

Եզրակացություն

Տեխնոլոգիայի դասը հատուկ գիտություն է, որը կօգնի երեխաների մոտ ձևավորել և զարգացնել ընտանիքում և հասարակության մեջ կյանքի համար անհրաժեշտ հմտություններն ու կարողությունները: Տեխնոլոգիայի դասերն օգնում են սովորողներին հարմարվել արագ փոփոխվող աշխարհին, իրազեկվում են ժամանակակից տեխնոլոգիաների ու մասնագիտությունների մասին, ցույց են տալիս, թե ինչպես գործնականում կիրառել գիտելիքները հանրակրթական այլ առարկաներից: Եվ ի վերջո օգնում են ձեռք բերել այն գիտելիքներն ու հմտությունները, որոնք անհրաժեշտ կլինեն ապագա մասնագետին իր կարիերայում:

Տեխնոլոգիա առարկան աշակերտների մտավոր, ֆիզիկական, ստեղծագործական և գեղագիտական զարգացման կարևոր միջոց է: Այն համալիր գիտություն է, որն իր մեջ ամփոփում է միջառարկայական կապեր՝ խթանելով դրանց ուսուցմանն ու արդյունավետության բարձրացմանը: Տարբեր առարկաներից ձեռք բերված գիտելիքները սովորողներին մղում են սորովի գնահատել իրենց շրջապատող աշխարհը և ազատորեն ստեղծագործել: Նրանք ձգտելու են այդ գիտելիքները կիրառել կյանքում և հասնել հաջողությունների:

Կիրառելով տարբեր մեթոդներ և աշխատանքի ձևեր, ուսուցիչը պետք է զարգացնի սովորողների աշխարհայացքը, ստեղծագործական, գեղագիտական մտածողությունը:

Ինտեգրված դասը ժամանակակից մեթոդիկայի սորույթներից մեկն է: Ինտեգրված դասի միջոցով արտահայտվում են միջառարկայական կապերը: Այն կարելի է անցկացնել տարբեր առարկաներից: Ինտեգրված դասերը միավորում են տարբեր առարկաների մասնագետների ուժերը և ստեղծում միջառարկայական կապերով հարուստ դասերի օրինակներ: Իհարկե, ինտեգրված դասերը

բազմակողմանի գիտելիքներ են ապահովում, հետաքրքիր ու բովանդակակալից են դարձնում ուսումնական գործընթացը: Ինտեգրացված դասերը հանրային կրթության ձևերից մեկն է: Այն իրականացնելու համար պահանջվում են նախապատրաստական լուրջ ջանքեր, սակայն փորձը ցույց է տվել, որ այդ դասերի արդյունավետությունը բավականին բարձր է:

Գրականության ցանկ

1. Պապիկյան Կ., Միջառարկայական կապերն իբրև գիտելիքների ինտագրման մանկավարժական պայման, Ընտանիք և դպրոց, գիտամեթոդական ամագիր, 2012/3,
2. Հանրակրթական հիմնական դպրոցի <<Տեխնոլոգիա>> առարկայի չափորոշիչ և ծրագիր (1-7-րդ դասարաններ) 2012թ.,
3. Ս. Հովսեփյան, Ա. Հարությունյան, Մ. Աղաջանյան, Լ. Վերոյան, Տեխնոլոգիա (ուսուցչի ձեռնարկ) 1-4 դասարաններ /- Եր. Տիգրան Մեծ. 2008թ.
4. Ս. Հովսեփյան, Ա. Հարությունյան, Մ. Աղաջանյան, Լ. Վերոյան, Տեխնոլոգիա (ուսուցչի ձեռնարկ) 5 - 7 դասարաններ /- Եր. Տիգրան Մեծ. 2014թ.
5. <<Տեխնոլոգիա>> առարկայի չափորոշիչ և ծրագիր, Երևան, 2012թ
6. Коротов В. М. и др. " Межпредметные цвязи в учебно-воспитательном процессе средней общеобразовательной школы", Москва, 1977г., 18с.

**ՀՀ ԿՐԹՈՒ ԹՅԱՆ ԳԻՏՈՒ ԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒ ՅԹԻ ԵՎ
ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒ ԹՅՈՒՆ
«ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒ ՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼ ՍԱՐԱՆ» Հ Ի Մ Ն Ա Դ Ր Ա Մ**



**ՊԱՐՏԱԴԻՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒ ՍՈՒ ՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒ Մ**

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝

Միջառարկայական կապերի ապահովումը որպես գիտելիքի ինտեգրման
մանկավարժական պայման

ԿԱՏԱՐՈՂ՝

Ելենա Աշուղյան

ՂԵԿԱՎԱՐ՝

Կարինե Պապիկյան

ՎԱՆԱԶՈՐ 2023

Բովանդակություն

Ներածություն.....	2
Գլուխ 1. Միջառարկայական կապերի դերն ու գործառույթները.....	4
Գլուխ 2. Ինտեգրված դասեր.....	7
Գլուխ 3. Միջառարկայական կապերը տեխնոլոգիայի դասերին.....	10
Գլուխ 4. Տեխնոլոգիայի կապը այլ առարկաների հետ.....	13
Եզրակացություն	22
Օգտագործված գրականության ցանկ	24

«Գիտություններից մեծ հարստություններ ձեռք բերելու լավագույն միջոցը միջառարկայական կապերն են: Այն ամենը, ինչը փոխադարձաբար կապված է, նույնպիսի կապի մեջ էլ պիտի դասավանդվի»:

Յան Ամոս Կոմենսկի

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության արդիականությունը

Դեռևս վաղ տարիքից են երեխաների մեջ ձևավորվում իրենց հատուկ պատկերացումներն աշխարհի մասին: Սակայն դպրոց ընդունվելով, փոխվում է այդ ամբողջական ընկալումը, և դրվում են սահմաններ՝ առարկաների տեսքով: Դպրոցում ձեռք բերած գիտելիքը շարունակում է մնալ որպես կտրտված տեղեկույթ՝ տարբեր ուսումնական առարկաների տեսքով, և սովորողը այդպես էլ չի կարողանում կրթական մյուս աստիճաններում դրանցից հավաքել ամբողջը: Փոխարենն ավելանում է գիտելիքի քանակական կողմը, որը հանգեցնում է մտային ավելորդ ծանրաբեռնվածության: Իսկ չէ՞ որ կրթության նպատակն է պատրաստել լայն մտահորիզոնով քաղաքացու, որն օժտված լինի յուրացված գիտելիքները համակարգելու և, ըստ անհրաժեշտության, դրանք կիրառելու կարողությամբ:

Արդի ժամանակաշրջանում հասարակության կայուն զարգացման համար արժևորվում են մարդկային այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են՝ նախաձեռնողականությունը, համակարգված մտածողությունը, օպտիմալ որոշում կայացնելու ընդունակությունը, կոմպետենտությունը, նույն երևույթը տարբեր տեսանկյուններից դիտելու կարողությունը և այլն: Բնականաբար կոմպետենտ անձի ձևավորումը սկսվում է հենց հանրակրթական դպրոցից, և յուրաքանչյուր մանկավարժ իր առջև նպատակ է դնում ստեղծել այնպիսի ուսումնական միջավայր, որը տանի սովորողին դեպի համակողմանի, համակարգված գիտելիքների, գործնական հմտությունների ձեռքբերմանը, բազմակողմանի զարգացած անձի ձևավորմանը, որը հնարավոր է դառնում միջառարկայական կապերի ստեղծման հիմքի վրա: Այդ է պատճառը, որ հանրակրթական պետական նոր չափորոշիչը խիստ կարևորում է

միջառարկայական կապերի ձևավորումը և ձևակերպում է ուսումնական առարկաների խաչվող հասկացությունները: [6]

Դպրոցում երեխան պետք է ունենա համակարգված և ամբողջական ընկալում բնության և դրա երևույթների վերաբերյալ: Անհրաժեշտ է, որ նա առարկան և երևույթը քննի տարբեր կողմերից՝ զգայական, գեղարվեստական, գիտական և այլն: Շարունակ փոխում է գործունեության ոլորտը, որն էլ հետաքրքիր է դարձնում աշխատանքը: Առարկաների միջև կապերն ավելի ու ավելի են սերտանում, լրացնում միմյանց ու նպաստում երևույթի բազմակողմանի (տարբեր առարկաների տեսքով) դիտարկմանը և ընկալմանը:

Հետազոտության նպատակը

Աշխատանքի նպատակն է որոշել միջառարկայական կապերի դերը սովորողների համակարգային և ստեղծագործական մտածողության զարգացման մեջ, ինչպես նաև ուսումնասիրել միջառարկայական կապերի կարևորությունը հատկապես «Տեխնոլոգիա» առարկան դասավանդելիս :

Հետազոտության խնդիրը

Հետազոտության խնդիրներն են՝

- ցույց տալ միջառարկայական կապերի կիրառման կարևորությունը
- ներկայացնել ինտեգրված դասերի նշանակությունը աշակերտների աշխարհահայացքի և իմացական կարողությունների ձևավորման գործում
- ապացուցել, որ կարևոր է ոչ միայն գիտելիքների ձեռքբերումը, այլ նաև գործնականում այդ գիտելիքների կիրառումը

Հետազոտության մեթոդները

Հետազոտական աշխատանքի իրականացման ընթացքում օգտագործվել են մանկավարժական գիտահետազոտական մեթոդներ՝ գիտամանկավարժական գրականության ուսումնասիրություն, դիտում, զրույց, համադրում, ընդհանրացում, համակարգում:

Գլուխ 1. Միջառարկայական կապերի դերն ու գործառույթները

Կրթությունն ուղղված է անձի համակողմանի և ներդաշնակ դաստիարակմանն ու զարգացմանը: Դրա իրականացման գործում առկա են բազմաթիվ մեթոդներ և միջոցներ, որոնցում էական են միջառարկայական կապերի ստեղծումը: Մեր ժամանակներում բոլոր ուսուցիչների ուշադրության կենտրոնում է գտնվում դպրոցական դասընթացում աշակերտների կրթական և դաստիարակչական մակարդակը բարձրացնելու համար անհրաժեշտ արդյունավետ ուղիների ընտրությունը: Մանկավարժական գրականության մեջ գոյություն ունեն միջառարկայական կապի ավելի քան 30 ձևավորված սահմանումներ: Ըստ Ի.Դ. Ջվերևի Վ.Ն.Մակսիմովի «Կրթության ժամանակակից գործընթացների զարգացման և ճանաչողական գործունեության իրականացման գործում ամենակարևոր գործոնը միջառարկայական կապն է: Այն ցուցաբերում է բազմակողմանի ազդեցություն կրթական գործընթացի վրա»:

Ջ.Լոկը կարծում է, ուսումնական գործընթացում մի առարկան պետք է հարստացվի մյուս առարկաների տարրերով: Յ.Ա. Կոմենսկին, Կ.Դ. Ուիշինսկի, Ն. Կ. Կրուպսկայան ընդգծում էին ուսումնական առարկաների միջև միջառարկայական կապերի անհրաժեշտությունը՝ բնության մասին գիտական և ամբողջական պատկերի, իրական գիտելիքի և ճիշտ աշխարհընկալման ձևավորման գործում: Միջառարկայական կապերը համարվում են ուսումնական գործընթացի դիդակտիկական պայման և միջոց, հետապնդում են որոշակի նպատակներ և խնդիրներ, պարունակում են մեթոդներ, միջոցներ և ձևեր՝ գիտության խորը և բազմակողմանի ուսումնասիրման, գիտելիքների խորացման, ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ իրականացման, գիտական աշխարհայացքի ձևավորման, տրամաբանական մտածողության զարգացման համար: Ուսումնական գործընթացում միջառարկայական կապերի իրականացումը կարելի է ապահովել հետևյալ միջոցներով.

- 1) հարցերի շարադրում
- 2) առանձին առաջադրանքների հանձնարարում
- 3) պրոբլեմային իրավիճակների ստեղծում
- 4) ճանաչողական առաջադրանքների կատարում

5) փորձարարական և հետազոտական բնույթի վերլուծություններ:

Միջառարկայական կապերը դասակարգվում են.

1. Ըստ բարդության
2. Ըստ ուղղվածության
3. Ըստ գործառույթների

Միջառարկայական կապերը հնարավորություն են տալիս արտացոլելու բնության ճանաչողության գործընթացում մտքերի և մեթոդների ինտեգրումը, սրանց միջոցով կարելի է ձևավորել այնպիսի որակական հատկություններ, ինչպիսիք են համակարգվածությունը, ըմբռնումը գիտելիքների ընկալման խորությունը: Միջառարկայական կապերի մասին Յ.Ա.Կոմենսկին իր «Մեծ դիդակտիկա» աշխատությունում նշում է, որ ուսումնական առարկաների փոխկապակցված ուսուցումը երեխաներին սովորեցնում է բացահայտել ուսումնասիրվող առարկաների և երևույթների միջև եղած կապերը.»Ամեն ինչ ամրապնդել բանականության հիմունքներով, նշանակում է ամեն ինչ սովորել՝ մատնացույց անելով պատճառները, այսինքն՝ ոչ միայն ցույց տալ, թե ինչպես է այս կամ այն բանը տեղի ունենում, այլ նաև ցույց տալ, թե ինչու՞ դա այլ կերպ չի կարող»: [1]

Ուսուցման տարրական օղակում դրվում են բոլոր գիտելիքների հիմքերը, ձևավորվում են բոլոր կարևոր ու մարդու համար կենսականորեն անհրաժեշտ կարողությունները: Գիտելիքների ձեռքբերումը և կարողությունների ձևավորումը սերտորեն կապված են միմյանց հետ և մեկի մյուսի համար հիմք է հանդիսանում: Հետևաբար, երեխաներին շրջապատող աշխարհի մասին հնարավորին չափ բազմակողմանի ու ընդարձակ տեղեկություններ տալը, արդեն ունեցած կամ մինչ այդ տարբեր ճանապարհներով ձեռք բերված գիտելիքների վերհիշումը, ուրիշ գիտելիքների հետ կապի մեջ դնելը, դրանք շրջանառության մեջ պահելը կարևոր ու վճռորոշ նշանակություն ունեն երեխաների աշխարհաճանաչողության սահմանների ընդարձակման, դրանց հիման վրա կարողությունների ձևավորման համար:

Առանձնապես ցանկանում եմ նշել միջառարկայական կապերի օգտագործման դերը աշակերտների աշխարհայացքի, դիալեկտիկական մտածողության և ընդհանրապես մատերիալիստական աշխարհընկալման ձևավորման գործում: Տարբեր

առարկաներից ստացած գիտելիքների ու տեղեկությունների միջև տրամաբանական կապերի ստեղծումով նպաստում ենք երեխաների դիալեկտիկական մտածողության ձևավորմանը,ինչպես նաև ձևավորվում է մտածող ու խորհող անձնավորություն: Միջառարկայական կապերի օգտագործումը այդ տեսակետից մեծ հնարավորություններ է ընձեռում, և ուսուցիչը պետք է կարողանա ուսուցողական այդ հնարավորությունները տեղին ու ճիշտ օգտագործել:

Միջառարկայական կապերի օգտագործման մյուս կարևոր եղանակը, որը նույնպես լայն գործադրություն պետք է ստանա տեխնոլոգիայի դասերին, ձեռքբերված գիտելիքների ու կարողությունների փոխանցումը պետք է լինի ուսուցման պրոցեսում: Սա նույնպես աշակերտի ունեցածի, նրա ձեռք բերածի և կուտակածի ճիշտ, նպատակահարմար ու արդյունավետ օգտագործման պահանջն է՝ գիտելիքների ու կարողությունների բնագավառում: Երրորդ ձևը այլ գիտությունների տվյալների կիրառությունն է,որը նույնպես լայնորեն կարող է գործադրվել ուսուցման պրոցեսում:

Երեխաներին պետք է սովորեցնել տեսնել ու գնահատել գեղեցիկը,լավն ու բարին և գնալ այդ ճանապարհով, նվիրվել աշխարհի ու մեր կյանքի գեղեցկացմանը: Իսկ դրա համար տարրական դասարանների տեխնոլոգիայի դասերը լայն հնարավորություններ են ստեղծում, որովհետև այդ դասերն իրենց մեջ ամփոփում են արվեստի տարբեր ձևերի, գիտությունների, տեխնիկայի ու տարաբնույթ այլ հարցերի վերաբերյալ եղած տարրական տեղեկությունները: Այս առումով տեխնոլոգիայի դասերը կարելի է դարձնել հարուստ, բազմակողմանի ու բազմաբնույթ,աշակերտներին գաղափար տալ արվեստի և արհեստի տարբեր ձևերի, տարբեր գիտությունների, մարդկանց ու պատմողական իրադարձությունների մասին:

Գլուխ 2. Ինտեգրված դասեր

Ինտեգրման գործընթացը միջառարկայական կապերի բարձրագույն ձև է:

Ինտեգրման խնդիրն արդիական է ինչպես տեսական, այնպես էլ գործնական առումներով:

- Ինտեգրված դասերը նպաստում են աշխարհի ամբողջական պատկերի ձևավորմանը, բնության, հասարակության մեջ տեղի ունեցող երևույթների միջև կապերի բացահայտմանն ու ընկալմանը:
- Ինտեգրումը հենց գիտական կապերի մերձեցման գործընթաց է, որն ուղեկցվում է տարբերակված ուսուցմամբ:
- Ինտեգրված դասերն իրենց հերթին հնարավորություն են տալիս ուսուցչին կրճատելու որոշ թեմաների ուսուցման ժամկետները, բացառել տարբեր առարկաներից կրկնվող նյութերը, կոնկրետ նպատակից էլնելով, մեծ ուշադրություն դարձնել այն թեմաներին, որոնք անհրաժեշտ է համարում ուսուցիչը:
- Ինտեգրված դասերը թուլացնում են աշակերտների լարվածությունը, հանում են ձանձրույթը, մեծանում է հետաքրքրությունը, քանի որ նրանք մի գործունեության ձևից անցնում են մեկ այլ գործունեության:
- Ինտեգրումը հնարավորություն է տալիս իրականության տարբեր երևույթների տեղայնացված, մեկուսի դիտարկումից անցնել փոխկապակցված, համակարգված ուսումնասիրության: Վերջին հաշվով, ինտեգրված դասերը խթանում են աշխարհի ամբողջական պատկերացման, բնության և մարդու միասնության ձևավորման գործընթացները:
- Ինտեգրումը հնարավորություն է տալիս աշակերտին ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ, առաջացնում է հետաքրքրություն ուսման նկատմամբ, բարձրացնում է նրա իմացական կարողությունների մակարդակը: Տարրական դասարաններում ինտեգրման գործընթացն ունի իր առանձնահատկությունները և հիմնականում կրում է կոլեկտիվ բնույթ՝ «ամեն ինչից քիչ-քիչ»:

• Ինտեգրման հիմնական և պարտադիր պայմաններից է աշակերտների ինքնագործունեության դերի բարձրացումը: Ուսուցչից պահանջվում է լրացուցիչ պատրաստվածություն, բարձր ինտելեկտ, մանկավարժական վարպետություն:

Երեխաները ուսուցման վաղ շրջանում ծանոթանում են շատ հասկացությունների, երևույթների, առարկաների, սակայն դրանց մասին ունենում են տարրական պատկերացումներ: Ուսումնառության ընթացքում այդ պատկերացումների շրջանակն ընդարձակվում է, նրանք ստանում են նորանոր գիտելիքներ՝ լրացնելով իրենց իմացածը: Այստեղ է, որ առաջ է գալիս ինտեգրված դասերի հիմնական դժվարությունը, քանի որ հարկավոր է պահպանել յուրաքանչյուր թեմայի դինամիկ զարգացումը՝ սկսած մատուցումից մինչև ամրապնդում:

Ինտեգրված դասեր կազմակերպելիս հարկավոր է հաշվի առնել, որ ինտեգրված դասի առանձնահատկությունն այն է, որ այդ դասերը կառուցվում են մեկ առարկայի հիմքի վրա, որն էլ գլխավորն է համարվում: Մյուսները դրան ինտեգրվում են՝ օգնելով ավելի խորը ուսումնասիրելու գլխավոր առարկայի կապերը, ավելի լավ հասկանալու ուսումնասիրվող առարկայի էությունը, կապը առօրյա կյանքի հետ և հնարավորություն ունենալու ստացած գիտելիքները գործնականում կիրառելու: [6]

Գլուխ 3. Միջառարկայական կապերը տեխնոլոգիայի դասերին

Հանրակրթական դպրոցում բոլոր առարկաների դասավանդման ժամանակ միջառարկայական կապերը պետք է դիտել որպես անժխտելի դիդակտիկական պայման, որը նպաստում է ուսուցման գիտականության և մյուս սկզբունքների պահպանմանը:

Եթե ուսուցիչը ցանկանում է իր դասավանդած դասը լիարժեք ու նպատակային լինի, կամա թե ակամա պետք է դիմի տարբեր գիտությունների տվյալների ու փաստերի օգտագործմանը, որպեսզի դասը հետաքրքրական, ուսանելի ու դաստիարակչական դառնա:

«Տեխնոլոգիան» ինտեգրված և բազմաբնույթ առարկա է, որն ընդգրկում է գրաֆիկա /գծագրություն/, նյութերի մշակման տեխնոլոգիաներ, մեքենագիտության տարրեր, էլեկտրատեխնիկա, ռադիոտեխնիկա, տնտեսագիտության հիմունքներ, հագուստի մոդելավորում և պատրաստում, խոհարարություն, շինարարական վերանորոգման և հարդարման աշխատանքներ, գյուղատնտեսական աշխատանքներ և այլն: «Տեխնոլոգիա» դասընթացում իր կարևոր դերն ունի գրաֆիկան: Միջառարկայական կապեր գոյություն ունի հատկապես տեխնոլոգիա, մաթեմատիկա, երկրաչափություն, կերպարվեստ, ֆիզիկա առարկաների միջև: «Տեխնոլոգիա» առարկայի դասաժամերին «Գրաֆիկա» բաժնի ուսուցումը պետք է կազմակերպել այնպես, որ կատարելագործվեն սովորողների աշխատանքային ունակությունները, զարգանան տեխնիկական մտածողությունը, կոնստրուկտորական ունակությունները, տարածական պատկերացումները, ստեղծագործական մտածողությունը: «Գրաֆիկա» բաժնի դասաժամերի մեծ մասը պետք է կազմակերպել «Տեխնոլոգիա»-յի մյուս բաժինների հետ օրգանական կապի մեջ, որը հնարավորություն կտա զարգացնելու սովորողների այնպիսի որակներ, ինչպիսիք են գծագրերի դերի և նշանակության ըմբռնումը, դրանց կիրառումը, գծագիրն ընթերցելու ունակությունները: Առհասարակ տեխնոլոգիան դպրոցում ինտեգրացնող կրթական ոլորտ է, որը ներառում է գիտելիքներ մաթեմատիկայից, ֆիզիկայից, քիմիայից, կենսաբանությունից, աշխարհագրությունից, բնագիտությունից: Ցույց է տալիս դրանց կիրառումը արդյունաբերության, էներգետիկայի, կապի, գյուղատնտեսության մեջ, տրանսպորտում: Տեխնոլոգիայի մեկ թեմայի ուսուցման ընթացքում հնարավոր է ինտեգրել չորս, հինգ առարկաներ: Այդ

առարկաներից յուրաքանչյուրի ուսուցման ընթացքում ձեռք բերված գիտելիքները, ունակությունները և հմտությունները լայնորեն կիրառվում են մյուս առարկաների ուսուցման գործընթացում:

Օրինակ՝ «Նյութերի գեղարվեստական մշակում» բաժինն ուսումնասիրելիս, երբ ծանոթանում ենք որևէ նյութի (թուղթ, փայտանյութ, մետաղ, պլաստմասսա, մանրաթելեր, սննդանյութեր) հետ՝ պատմական ակնարկ նյութի մասին, *պատմություն*՝ ստացման վայրը, աշխարհագրություն՝ տեսակը կապված բնակլիմայական պայմաններից և ստացման վայրից(բնական, արհեստական, քիմիական), բնագիտություն, քիմիա՝ նյութի կազմությունը, քիմիա՝ նյութի ֆիզիկամեխանիկական հատկությունները (առաձգական, ջերմակայուն, խոնավություն կլանող), ֆիզիկա՝ փայտանյութի փորագրություն, կերպարվեստ՝ մանրանկարչություն:

Այս ամենի հետ մեկտեղ տեխնոլոգիա առարկայի բազմաբովանդակ էջերում իրենց կարևոր տեղն են զբաղեցնում, «առողջ ապրելակերպ», «առաջին բուժօգնություն», «էթիկայի կանոններ» թեմաները: Արդյունքում աշակերտների մոտ ձևավորվում են պոլիտեխնիկական գիտելիքներ նշված առարկաներից, որոնք կնպաստեն հետագայում տվյալ առարկաների հեշտ ընկալմանը: Միջառարկայական կապի ճիշտ և հստակ պլանավորումը լայն հնարավորություններ է ստեղծում ուսուցումն ավելի արդյունավետ և նպատակայի կազմակերպելու համար: Աշակերտներին զինում է անհրաժեշտ տեխնիկատեխնոլոգիական գիտելիքներով, հասկացություններով և ունակություններով, առանց որոնց անհնար է երկրի լիարժեք սոցիալ - տնտեսական առաջընթացը, անձի ձևավորումը, ազգային լավագույն ավանդույթների պահպանումը: Հնարավորություն է ընձեռնում աշխարհը ճանաչելու, գնահատելու շրջակա միջավայրը, արժևորելու բնության բարիքները, գնահատելու և արժևորելու բնության դերն ու նշանակությունը մարդու կյանքում:

Ինչպես արդեն նշվել է, տեխնոլոգիան համալիր գիտություն է , որն իր մեջ ամփոփում է մի շարք առարկայական կետեր: «Տեխնոլոգիա» ուսումնական առարկան սերտ կապված է մաթեմատիկայի եւ երկրաչափության հետ:

Առաջին դասարանից սկսած այն ամուր հիմք է նախապատրաստում այդ առարկաների համար: Աշակերտները ուսումնասիրում են երկրաչափական

պատկերները, երկրաչափական մարմինները , սովորում դրանց կառուցման եւ պատկերման ձեւերն ու մեթոդները, ինչպէս նաև օգտագործում են դրանք դեկորատիվ աշխատանքներ կատարելիս: Եթէ ուշադիր նայենք մեզ շրջապատող աշխարհին , մենք կարող ենք պարզել , որ բնության կամ մարդու ձեռքով ստեղծած ցանկացած բան հիմնված է տարրական երկրաչափական պատկերների և մարմինների վրա, երբեմն մեր աչքերին անհրաժեշտ է միայն ակնարկ, կետ, ուրվագիծ՝ դրանցում ծանոթ առարկաները ճանաչելու համար: Յուրաքանչյուր առարկա կամ կենդանի ներկայացնել երկրաչափական պատկերների տեսքով, որի օգնությամբ աշակերտները ավելի լավ կտեսնեն եւ կսովորեն երկրաչափական պատկերները: Օրինակ՝ կարող ենք պատկերացնել , որ կատվի գլուխը նման է շրջանագծի, իսկ մարմինը՝ եռանկյան, կամ երեք , չափսերով իրարից տարբեր եռանկյուններով կարելի է ստանալ եղենի, եռանկյան եւ ուղղանկյան օգնությամբ կստանանք սունկ եւ այլն:

Գլուխ 4. Տեխնոլոգիայի կապը այլ առարկաների հետ

Օրգամին եւ խոսքի զարգացումը

«Որքան մեծ է մանկական ձեռքի հմտությունը, այդքան խելացի է երեխան»:

Վ.Սուխոմլինսկի

Օրիգամիի պատրաստման հիմնական նպատակներից է ցույց տալ այն ճանապարհներից մեկը, որով կարելի է զարգացնել երեխայի մտածողությունը, նաեւ այն, թե ինչպես կարելի է մատերի բազմապիսի, բազմաբնույթ մանր շարժումների օգնությամբ երեխայի ձեռքը դարձնել ավելի հմուտ ու ճկուն: Մասնագետները պնդում են, որ մեր մատները օրգանապես կապված են ուղեղային կենտրոնների եւ ներքին օրգանների հետ, այդ պատճառով էլ մատների վարժանքը խթանում է օրգանիզմի ինքնակառավարումը, ակտիվացնում է ուղեղի եւ մյուս օրգանների ֆունկցիոնալ գործունեությունը: Ձեռքի աշխատանքը նպաստում է երեխաների բազմակողմանի ներդաշնակ զարգացմանը, կայուն ուշադրություն է պահանջում եւ ստիպում է երեխային մտածել: Պարզվել է մի հետաքրքիր օրինաչափություն. երեխաների մատների մանր շարժումներն ուղղակիորեն նպաստում են նրա խոսքի զարգացմանը, եթե մատների մանր շարժումները համապատասխանում են երեխայի տարիքին, ապա խոսքի զարգացումն էլ է նորմայի սահմաններում, իսկ եթե մատների շարժումները հետ է մնում, ապա դանդաղում է նաեւ խոսքի զարգացումը՝ չնայած ընդհանուր շարժունակությունը կարող է նորմայի սահմաններում լինի, նույնիսկ ավելին: Ուղեղի խոսքային կենտրոնների զարգացումը կատարվում է ձեռքի մատներից եկող ազդակներից: Մատների վարժությունները խթանում են գլխուղեղի խոսքի կենտրոնների աշխատանքը եւ կտրուկ ակտիվացնում խոսքային գոտիների համաձայնեցված գործունեությունը, ինչը, ի վերջո, խթանում է խոսքի զարգացումը: Հետեւաբար, մասնագետները խորհուրդ են տալիս նոր խոսել սովորող փոքրիկներին որքան հնարավոր է հաճախակի տալ այնպիսի առաջադրանքներ, որոնք կապված են մատների աշխատանքի հետ՝ մանրակերտել, կարել, նվազել երաժշտական գործիքներով, կտրատել: Օրիգամիի զարգացնող հնարավորություններն անսահման են, օրիգամին ակտիվացնում է ոչ միայն մտածական գործընթացները, այլեւ մեծ նշանակություն ունի երեխաների կառուցողական մտածողության զարգացման, նրանց

ստեղծագործական երեւակայության, գեղարվեստական ճաշակի զարգացման գործում: Նրա միջոցով երեխաները ծանոթանում են երկրաչափական հիմնական հասկացություններին, զարգանում է նրա աչքաչափը, բառապաշարը հարստանում է մասնագիտական եզրույթներով: Անկասկած, այն օգնում է ուշադրության կենտրոնացմանը: Երեխաների ստեղծագործական միտքը զարգացնելու անփոխարինելի նյութը դա թուղթն է, այն ամենքին հասանելի, առավել մատչելի եւ հեշտ մշակվող նյութերից է: Թղթից կարելի է պատրաստել ամենատարբեր շինվածքներ կիրառական բազմատեսակ նշանակությամբ: Թուղթը մեծ նշանակություն ունի կրտսեր դպրոցականների գեղարվեստական գործունեության բնագավառում, գեղարվեստական աշխատանքներում այն անփոխարինելի նյութ է: Թղթե շինվածքներից ավելի մասսայական գործածություն ունեն ծալումով պատրաստվող նմուշները՝ օրիգամինները: Դրանց պարզությունն ու ինքնատիպությունը միշտ էլ գրավել է երեխաներին: [3]

Տարածված են նաեւ ապլիկացիաները: Անսահմանափակ քանակի շինվածքներ կարելի է պատրաստել թղթից՝ հուշանվերներ, ծաղիկներ եւ այլն: Թղթից պատրաստված նմուշները երեխաներին շատ են հրապուրում, իսկ դրանց պատրաստումը նպաստում է դիտողականության, գեղագիտական ճաշակի, կառուցողականության եւ ստեղծագործական մտածողության զարգացմանը: Սակայն որեւէ նմուշի, շինվածքի պատրաստումը չպետք է դառնա ինքնանպատակ, այլ պետք է ծառայի աշակերտների ստեղծագործական ունակությունների զարգացմանը: Թղթից շինվածքների պատրաստման ընթացքում կրտսեր դպրոցականները ծանոթանում են գծագրության գեղագիտական տարրերի հետ, սովորում են խնամքով չափումներ եւ նշագծումներ կատարել, ինչից եւ կախված է աշխատանքի որակը:

Այսօր անհնար է պատկերացնել մեր կյանքն առանց թղթի: Հազարամյակներ շարունակ մարդիկ գրելու նյութ էին որոնում: Մեր նախնիներն այդ նպատակի համար օգտագործել են կավ, քար: Ասորեստանցիները ձողիկներով գրում էին կավե սալիկների վրա: Հին եգիպտացիներն իրենց հիերոգլիֆները պատկերում էին պապիրուսների՝ ճահճաբույսի մամլած միջուկներից պատրաստված բարակ թերթերի վրա (մ.թ.ա. 3-րդ հազարամյակի սկզբից մինչեւ վաղ միջնադար): Մ.թ.ա. 2-րդ դարում փոքրասիական Պերգամոն քաղաքում կաշվից պատրաստել են գրանյութ՝ մագաղաթ (ասորերեն՝ գալարված մատյան), որը քաղաքի անունով կոչվել է նաեւ պերգամենտ: Այն

պապիրուսի համեմատ թանկ էր, սակայն դիմացկուն, գրվում էր երկու երեսին եւ իրար վրա դրվելով ստացվում էր ներկայիս գրքի ձևը: Հայերը մագաղաթ են օգտագործել մ.թ.ա. 2-րդ դարից մինչև 8-ից 9-րդ դարը: Մագաղաթի համար օգտագործել են մանր եւ խոշոր եղջերավոր մատղաշ անասունների կաշին: Հին Ռուսիայում նամակները գրում էին կեչու կեղեւի վրա (կեչակեղեւագիր):


Թղթի ստացման եղանակը հայտնաբերել են չինացիները մ.թ.ա. 2-րդ դարում, սակայն թղթի ստացման գյուտը թվագրվում է մ.թ.ա. 105թ., երբ չինովնիկ Ցայ Լուներ պաշտոնապես զեկուցեց կայսրին թղթի ստացման տեխնոլոգիայի գոյության մասին: Երկար ժամանակ չինացիներն այն գաղտնի էին պահում, թաքցնում էին հարեւան ժողովուրդներից: Միայն 610 թվականին բուդդայական քարոզիչների օգնությամբ թղթի արտադրության տեխնոլոգիան հայտնի դարձավ ճապոնացիներին, եւ մեկ դար անց ճապոնացիների պատրաստած թուղթն ավելի լավորակ էր, քան չինականը: 6-ից 7-րդ դարերում ճապոնացիները, հավանաբար առաջինը մարդկության պատմության մեջ, արդեն օգտագործում էին թղթադրամներ («Տեյ-Տյան»՝ թոչոդ դրամներ): Ճապոնիայում արգելվում էր թղթի ստացման գյուտը հանել երկրից: Այժմ հայտնի է թղթի մոտ 600 տեսակ: Ըստ ընդունված դասակարգման՝ թուղթը բաժանվում է 11 կարգի՝ տպագրական, գրելու, գծագրական- նկարչական, էլեկտրամեկուսիչ, գլանակային, ներծծող, սարքերի համար (հեռագրային եւ այլն) լուսազգայուն, փաթեթավորման, պատճենահանման, արդյունաբերական, տեխնիկական: Տեխնոլոգիայի դասաժամերին շինվածքներ պատրաստելիս կարելի է օգտագործել թղթի եւ ստվարաթղթի համարյա բոլոր տեսակները:[4]

Տեխնոլոգիա- Ես և շրջակա աշխարհը

«Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված պետական պարտադիր առարկա է տարրական դասարանների համար: «Ես և շրջակա աշխարհը» ուսումնական դասընթացը կոչված է օգնելու աշակերտին՝ ճանաչել իրեն ոչ միայն որպես անհատ, այլև որպես հասարակության և բնության անբաժան մասնիկ: Այս առարկան ինչպես և տեխնոլոգիան, հուսալի հիմք է միջին և ավագ դասարանների համար, օգնում է նաև ուսումնասիրել տարբեր մասնագիտություններ և կատարել մասնագիտական նախնական կողմնորոշում: «Ես և շրջակա աշխարհը» և «Տեխնոլոգիա» ուսումնական առարկաների շրջանակներում երեխաները ճանաչում, ուսումնասիրում և

հետազոտում են շրջակա աշխարհը, բնության տարրերն ու երևույթները, ճանաչում են իրենք իրենց, խոսում իրենց սիրելի զբաղմունքների և խաղերի մասին, իմանում, որ նա բնության կարևոր մասն է: Տեխնոլոգիայի դասաժամերին երեխաները ուսումնասիրում և հետազոտում են շրջական, առարկաները, իմանում, թե ովքեր են պատրաստել այդ առարկաները ու ինչ նյութերից, փորձում բնական և արհեստական նյութերից կատարել տարբեր դեկորատիվ աշխատանքներ, որոնց միջոցով գեղեցկացնում են իրենց կենցաղը: Սովորում են, որ նյութերը լինում են բնական և արհեստական: Բնական են կոչվում այն նյութերը, որոնք ստանում են բնությունից՝ ճյուղ, կոն, տերևներ, քարեր, սերմեր և այլն, իսկ արհեստական կոչվում են այն նյութերը, որոնք ստանում է մարդը՝ պենոպլաստ, կիրառում ենք ուսուցման «Վենի դիագրամա» մեթոդը, որը կառուցվում է երկու շրջանագծերով, որոնք կենտրոնում ունեն հատման մակերես: Կենտրոնում՝ հատման մակերեսում գրվում է ընդհանրությունները, իսկ շրջանագծերում՝ առանձնահատկությունները:

Առաջադրանք 1-



Տեխնոլոգիա-Դեկորատիվ կիրառական արվեստ, պատմություն և աշխարհագրություն

Իտալացի հայտի ճանապարհորդ Մարկո Պոլոն հայերի մասին ասել է՝ «...որոնք հյուսում են աշխարհի ամենագեղեցիկ գորգերը»:

«Արվեստի նպատակն է մեր հոգուց մաքրել առօրյա կյանքի փոշին»:

Պաբլո Պիկասո

«Արվեստի նպատակն է ներկայացնել ոչ թե իրերի արտաքին տեսքը, այլ դրանց ներքին կարևորությունը»:

Արիստոտել

«Որքան բարձր է մշակույթը, այնքան ավելի բարձր է գնահատվում աշխատանքը»:

Ուիլիելմ Ռոշեր

Մշակույթը ազգապահպան նշանակություն ունի: Մշակույթը դառնում է մեր ինքնության վկայականը, և ճիշտ պատկերացում տալիս ժամանակաշրջանի մասին: Մշակույթը և գիտությունը դարեր շարունակ սերտ կապի մեջ են եղել, իզուր չի ասվում, որ Հայաստանը թագարան է բաց երկնքի տակ: Այդ «թանգարանային նմուշները» այսօր պահպանության խիստ կարիք ունեն, քանի որ դրանք են մեր հին լինելու ապացույցը:

Հայկական կերպարվեստի հետաքրքրական բնագավառներից է «Դեկորատիվ-կիրառական արվեստը»: Դեկորատիվ-կիրառական արվեստը դեկորատիվ արվեստի և ժողովրդական ստեղծագործության նյութական ու հոգևոր արժեքներ ստեղծող ոլորտներից է, այն սկզբնավորվել է հասարակության զարգացման վաղ շրջանում: Դարերի ընթացքում այն կրել է տարբեր ոճերի և ուղղությունների ազդեցությունը: Մ. թ. ա. II հազարամյակում Չինաստանում ստեղծվել են բրոնզե գեղարվեստական կերտվածքներ, ոսկրե և նեֆրիտե քանդակազարդ առարկաներ, մ. թ. ա. V-III դարերում՝ բարձրորակ մետաքսե գործվածքներ, խեցեղեն, մ. թ. VIII-X դարերում՝ ծաղկման է հասել ձենապակու, իսկ XIV-XVIII դարերում՝ խեցեգործական արտադրությունը: Միջնադարյան Եգիպտոսի դեկորատիվ-կիրառական արվեստում տարածված էին նկարազարդ խեցեգործությունը, դաջածո գործվածքները, կահույքի

պատրաստումը, փայտի փորագրությունը և այլն: Դեկորատիվ արվեստի գանձարանում իրենց ծանրակշիռ ավանդն ունեն նաև հայ վարպետները: Կարի, ոսկերչության, խեցեգործության և արհեստների այլ տեսակներ Հայաստանում հայտնի էին մ.թ.ա. III հազարամյակից: Հայկական ոսկերչությունն ու ակնագործությունը զարգացել են ոչ միայն Դվինում, Անիում, Արծնում, Վասպուրականում, Արցախում, Ախալցխայում, այլև Կոստանդնուպոլսում, Լվովում, Թիֆլիսում, Նոր Ջուղայում, Նուխիում, Շամախիում և այլուր: Մինչև XIX դարը պատրաստվել են թանկարժեք մետաղներով, քարերով զարդարված, դրվագված, գրքերի նրբագեղ կազմեր ու մասնատուփեր: Միջազգային շուկայում մեծ պահանջարկ ունեին փորագրված ոսկրե իրերը, կարմիր կաշվե առարկաները, փայտե քանդակագարդ կերտվածքները, IX–XIII դարերում Հայաստանում զարգացման բարձր մակարդակի են հասել կարը, կտորեղենի ձևավորումը, արտահանվել են բրդե, մետաքսե ինքնատիպ գործվածքներ:

Տեխնոլոգիա-ասեղնագործություն

«Գեղեցիկը պետք է պահպանել, վերցնել որպես նմուշ,
ելակետ ընդունել այն, եթե նույնիսկ «հին» է....»

Հայ ժողովրդի ասեղնագործ արվեստն անցել է երկարատև պատմական ուղի, ենթարկվել ժամանակի դատին, հաստատվել որպես ժողովրդի հոգեբանության, ինտելեկտի ու ճաշակի զարգացումն իր մեջ կրող գեղարվեստական գործունեության ոլորտ, և իր երանգն է հաղորդել ազգային գեղարվեստական մտածելակերպին: Գեղարվեստական մտածելակերպի ձևավորման վրա մեծապես ազդում են այն բնաշխարհն ու կենցաղը, որում ապրում է ժողովուրդը: Կապը բնաշխարհի հետ տեսանելի է նաև հայկական ասեղնագործ արվեստում: Հայկական ասեղնագործությունը ինքնատիպ է, այն տարբերվում է զարդանկարերով, զարդանախշերով, կատարման տեխնիկայով, գույներով և ոճով:[2]

Անցնելով դարերի միջով, հայկական ասեղնագործ արվեստը պահպանել է ինքնուրույնությունը, միասնական ժողովրդական ոճի հիմնական գծերը և, միշտ ապրելով ժամանակի հետ, հարստացել է նորանոր հորինվածքներով: Լինելով որոշակի շրջանի մշակութային ավանդույթների արգասիք, ամեն մի ասեղնագործ նմուշ, նաև խորապես անհատականացված է, արտացոլելով ասեղնագործողի ճաշակը, տաղանդը, գույներ և զարդանախշեր ընտրելու, հորինվածքին տարբեր պլաստիկ և

ռիթմիկ լուծումներ հաղորդելու նրա ունակությունները: Հայկական բոլոր շրջաններում ասեղնագործությունը տարածված է եղել, պահպանելով ազգային միասնական ոճը՝ ամեն մի դպրոց զարգացրել է ասեղնագործության իր ձևն ու տեսակները:

Պատմական տարբեր դարաշրջաններում զանազան երկրներին, ժողովուրդներին, էթնիկական և տարածքային խմբերին, բնակչության որոշակի շերտերին բնորոշ հագուստը տարազն է՝ ձևվածքի, գույնի, նյութի տեսակի, արտաքին հարդարանքի (զարդեր, սանրվածք, բեղեր, մորուք, դաջվածք, ներկվածք և այլն) առանձնահատկություններով: Յուրաքանչյուր ժողովրդի տարազը պայմանավորված է բնակլիմայական պայմաններով, ազգային բնույթով, կենցաղով, տվյալ երկրի բնական արտադրանքով: Հայ ժողովուրդը, չնայած հազարամյակներ ի վեր տեղի ունեցած պատերազմներին, արտագաղթերին, օտար տիրապետություններին, ավանդական տարազի մեջ կարողացավ պահպանել խոր հնությունից եկող տարազաձևերի, զարդանախշերի և գույների խորհրդանշական պատկերացումներն ու իմաստները: Այդ են վկայում միջնադարյան պատկերաքանդակների, մանրանկարների, խեցեղեն նմուշների հետ նրանց ունեցած ընդհանրությունները: Տարազային համալիրների բաղկացուցիչ մաս կազմող գլխի հարդարանքը, կրծքազարդը, ապարանջանը, գոտին, գոգնոցը կրում էին վաղնջական ժամանակներից նրանց վերագրվող պաշտամունքային, ծիսա-հմայական խորհուրդը: Հայկական տարազի մեջ իր բոլոր տարբերակներով հանդերձ, գերակշռում էին չորս տարերքի գույները, որոնք 14-րդ դարի հայ մեծ փիլիսոփա, նկարիչ Գրիգոր Տաթևացու վկայությամբ արտահայտում են «երկրի սևությունը, ջրի սպիտակությունը, օդի կարմիրը և հրո դեղինը»՝ խորհրդանշելով միաժամանակ բարոյական հատկանիշները. ծիրանի- խոհեմություն ու ողջախոհություն, կարմիր- արիություն և մարտիրոսություն, կապույտ- երկնավոր արդարություն, սպիտակ- մաքրություն: [5]

Հայկական մշակութային համակարգի կարևոր ու ավանդական բնագավառների մեջ առանձնակի տեղ է զբաղեցնում գորգագործական մշակույթը: Իբրև արհեստ, Հայաստանում գորգագործությունը զարգացած է եղել դեռևս վաղնջական ժամանակներից: Այս մասին են վկայում Արենի 1 քարայրում գտնված գործվածքները, մ.թ.ա. 5-րդ դարի թվագրվող պազիրիկ գորգը, ինչպես նաև հայկական գորգարվեստի մասին մի շարք պատմաբանների կողմից պահպանված հիշատակություններ: Պատմական աղբյուրներում տեղեկություններ են պահպանվում այն մասին, որ

ուրարտացիներն ու հայերը Ասորեստանին, Աքեմենյան Պարսկաստանին և այլ երկրներին մատուցել են գորգեր՝ որպես տուրք: Պատմական Հայաստանում գորգերն ու կարպետները համարվում էին առաջին անհրաժեշտության իրեր, դրանք փռում էին հատակին, կախում պատերից և գործածում որպես ծածկոց: Գրեթե բոլոր բնակավայրերում գործում էին կարպետների՝ քիլիմներ, ծածկոցներ, վարագույրներ, թամբեր, խուրջիներ, վերմակներ, աղի տոպրակներ, ձիու ծածկոցներ և գորգեր: Այս արհեստն այնքան սերտ էր կապված առօրյա կյանքի հետ, որ այն իմանալը պարտադիր էր, գորգը նաև հայ աղջիկների օժիտի անբաժանելի մասն էր, ուստի վաղ հասակից նրանք սովորում էին այս արհեստն ու գործում իրենց օժիտի գորգերը:

Տեխնոլոգիան - Հայ գրականությունը

Գրականությունը հասարակության հոգևոր կյանքի կարևոր բնագավառ է: Լայն առումով գրականությունն է կոչվում առհասարակ գրավոր խոսքը, նրա միջոցով շարադրված հասարակական քաղաքական, գիտական, փիլիսոփայական, հրապարակախոսական, մանկավարժական կամ գործնական բնույթ ունեցող երկերը, նեղ առումով՝ արվեստի հիմնական տեսակներից մեկը՝ գեղարվեստական գրականություն: Բոլոր ժամանաշրջաններում հայ գրողները իրենց ստեղծագործություններում անդրադարձել են հայ մշակույթի անկրկնելի գոհարներին՝ դարձնելով ավելի ազգային, ցուցադրելով և ընդգծելով մեր կենցաղում օգտագործվող կիրառան արվեստի ամենատարբեր տեսակները, ներկայացնելով հայի աշխատասեր, ստեղծագործ տեսակը, հայուհու գեներով եկող շնորհն ու տաղանդը: Ամենավառ օրինակներից է՝

1. Ղազարոս Աղայանի «Անահիտ» հեքիաթը:

Հասված

Խոսակցության նյութը ամենից առաջ դարձավ նոր գորգը, որ իր գեղեցիկ նախշերով, գույների պայծառությունով և գործվածքի նրբությունով գրավեց հյուրերի ուշադրությունը:

— Այս ի՛նչ հրաշալի գորգ է, — ասաց Վաղինակը, — տանտիկինդ կլինի գործած, անշուշտ:

— Ո՛չ, ես կին չունիմ, ահա հինգ տարի է, որ կինս վախճանվել է: Այդ գորգը մեր Անահիտի գործածն է: Բայց ինքը չի հավանում, ասում է՝ իմ ուզածիս պես դուրս չեկավ:

Մեկ նորը հինել է, ահա՛ այն ծածկված ոստայնն է, հույս ունի, որ այն պիտի իր ուզածի պես դուրս բերե:

— Մեր թագավորի պալատումն էլ չկա մի այսպիսի գարդ, — ասաց իշխաններից մինը, հետո դառնալով Առանին՝ ավելացրեց, — շատ ուրախ ենք, որ քո աղջիկն այսքան շնորհալի է:

— Այո՛, և այս ամենը, ինչ որ բերել եք, ետ կտանեք և կասեք, որ ես իրան շատ հավանում եմ, միայն թող ներե ինձ, որ ես ուխտ եմ դրել՝ արհեստ չգիտցող մարդու չգնալ: Եթե կամենում է, որ ես իր ամուսինը լինիմ, թող նախ և առաջ մի արհեստ սովորի:

2. Ավետիք իսահակյան «Սաադիի վերջին գարունը» ստեղծագործությունը:
Հատված

Նստեց ծաղկած հասմիկի տակ, Սպահանի գորգի վրա, և բռնեց դողդոջ մատներով վարդենու նոր բացված կարմիր-կանաչ կոկոնը և մրմնջաց յուրովի. «Ինչպես մատաղ աղջիկը ժպտում է գգվող սիրականին, այնպես էլ վարդը իր շրթներն է բանում առավոտյան հովիկին»:

3. Դերենիկ Դեմիրճյան «Ավելորդը»:
Հատված

Հենց այդ փոքրիկ սենյակում, անկողինների ծալքի տակ նստած էր մի տարեց կին: Դա Հաճի աղայի անդամալույծ քույրն էր, Սրբունը, որ ամուսնու մահից հետո լվացք անելիս մի անգամ սաստիկ մրսեց, տիֆով հիվանդացավ և անդամալույծ եղավ, էլ չիմացվեց՝ տիֆի՞ց էր, թե արդեն տրամադիր էր: Ականջներն էլ ծանր էին, Հաճի աղան իր անվան չուտեցրեց, որ իր հիվանդ քրոջը ուրիշները պահեն և իր վրա խոսեն, հիվանդին բերեց իր տուն և անկյուն տվեց: Խեղճ կինը ի բնե աշխատասեր և ինքնասեր, ուզելով մի բանով եղբորը վարձահատույց լինել ընտանիքի կարն ու կարկատանը, ինչպես և գուլպան իր վրա առավ, ու թեև նրա համար սաստիկ դժվար էր այդ աշխատանքն էլ, բայց նա անմռունչ ու կամովին անում էր: Գեր էր, ծանր և սաստիկ նեղությամբ նստած տեղից շարժվում էր և գետնաքաշ մի կերպ դուրս գնում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով թեման եկա այն եզրահանգման, որ

- ✓ Տարբեր առարկաներից ստացած գիտելիքների ու տեղեկությունների միջև տրամաբանական կապերի ստեղծումով նպաստում ենք երեխաների դիալեկտիկական մտածողության ձևավորմանը, ինչպես նաև ձևավորվում է մտածող ու խորհող անձնավորություն:
- ✓ տեխնոլոգիան ոչ միայն ուսումնական մեկ առարկա է, այլ մի ամբողջ համակարգ, ինչը հետազոտելու էլ ուսումնասիրելու արդյունքում աշակերտները զինվում են տեխնոլոգիական գիտելիքներով եւ հմտություններով, ուսումնասիրում են մեքենաների կառուցվածքը եւ աշխատանքի սկզբունքը, սովորում կողմնորոշվել բարդ իրավիճակներում, որոնք առաջանում են ժողովրդական տնտեսության շուկայական հարաբերությունների անցման ժամանակաշրջանում:

Սկսած առաջին դասարանից երեխաները ուսումնասիրում են երկրաչափական պատկերներ եւ մարմիններ, կարողանում են կատարել առարկաների երկրաչափական տեսքի վերլուծություն: Զարգացնելով իրենց երեւակայությունը խաղերի միջոցով, նրանք ամուր եւ զգալի հիմք կդնեն բարձր դասարաններում մաթեմատիկա եւ երկրաչափություն առարկաների համար: Օրիգամիի միջոցով կզարգանա աշակերտների ոչ միայն մտավոր կարողությունը, այլ նաեւ կօգնի խոսքի ձևավորմանը, կնպաստի մանր մատորիկայի զարգացմանը եւ այլն: Այս ամենից բացի, աշակերտների մեջ կձևավորվեն նաեւ մարդկային բարձր արժեքներ՝ բարություն, ազնվություն, արժանապատվության եւ պատասխանատվության զգացում, դիմացինին գնահատելու եւ ուրախություն պատճառելու կարողություն:

Հայր իր դեմքը, ազգային ինքնությունը դարեր ի վեր պահպանել է մշակույթի եւ կրոնի շնորհիվ: Հայկական կիրառական արվեստի նմուշները ուսումնասիրելով հասկանում ենք, որ անկախ քաղաքական իրավիճակից, ժամանակաշրջանից, հոգեվիճակից հայերը միշտ արարել են, եւ իրենց կյանքից առավել են դասել արվեստի այդ գլուխգործոցները, որպեսզի այն անցնելով ժամանակի միջով հասնի մեզ եւ մենք էլ փոխանցենք մեր սերունդներին, ու հայր ապրի հավերժ:

Հայկական հեթանոս ծեսերը, սովորությունները եւ ծիսական տիկնիկները ուսումնասիրելով, աշակերտները ավելի ճիշտ են ըմբռնում եկեղեցական տաղավար տոները, իմանալով նրանց արմատները, խորհուրդը, անցյալի եւ ներկայի կապը: [8]

Տեխնոլոգիայի դասաժամերը անհնար է պատկերացնել առանց հայ գրականության իմացության: Հեղինակները տարբեր ստեղծագործություններում հայուհու եւ հայ մարդու կերպարը ավելի վառ ներկայացնելու համար խոսել են հայկական գորգերի, ասեղնագործ իրերի, զարդերի, հագուստի, աշխատասիրության, նրբագույն ճաշակի մասին:

Ուսումնասիրելով տվյալ տարածաշրջանի տարազը, ազգային սովորույթները, գորգագործական արվեստը, աշակերտները ծանոթանում են այդ շրջանի աշխարհագրական եւ քաղաքական դիրքին, իմանում կարելու տվյալներ այդ տարածաշրջանի մասին:

21-րդ դարի մարդը պետք է լինի ստեղծագործ, հնարամիտ, ֆինանսապես անկախ: Իսկ այս ամենի համար աշակերտները դեռ փոքր տարիքից պետք է ստանան տնտեսագիտական կրթություն, պետք է սովորեն ուսումնասիրել շուկան, եւ ստեղծեն այնպիսի բարիք, որը կբավարարի սպառողի պահանջները: Ի վերջո, այս ամենից մենք հանգում ենք մեկ եզրակացության՝ ուսումնասիրելով տեխնոլոգիա ուսումնական առարկան, աշակերտները զինվում են գիտելիքներով, կարողություններով, հմտություններով, գաղափարներով, որոնք ուղեկցելու են իրենց ողջ կյանքի ընթացքում, լինելով բազմակողմանի զարգացած մարդ, հասարակության լիարժեք անդամ:

Առաջարկվում է միջառարկայական կապերը տարրական դասարաններում կիրառել հաճախակի, այս պրոցեսը դարձնելով դասի բաղկացուցիչ մաս: Նոր նյութը հաղորդելիս կապ հաստատելով այլ առարկաների, երևույթների կամ տվյալ պահին իրական որևէ դեպքի հետ մենք կնպաստենք գիտելիքների առավել ամրապնդմանը, հին գիտելիքների վերհիշմանն ու առարկաների և երևույթների միջև կապի հաստատմանը: Առավել մոտ լինելով իրականությանը և բնական իրավիճակներին կնպաստենք տարբեր երևույթների ավելի բազմակողմանի և խորքային ընկալմանը, կզարգացնենք սովորողների գիտելիքները գործնականում կիրառելու կարողություններն ու հմտությունները:

Օգտագործած գրականության ցանկ

1. Ամիրջանյան Յու., Սահակյան Ա. «Մանկավարժություն», «Մանկավարժ», 2005թ
2. Կ. Պապիկյան, Ժ. Ավետիսյան « Հայկական ասեղնագործություն», Երևան 2002թ
3. «Օրիգամի» ուսումնական ձեռնարկ-Հեղինակ՝ Կարինե Պապիկյան
4. Կ. Պապիկյան, «Տեխնոլոգիայի դասավանդման մեթոդիկա պրակտիկումով», հեղ. հրատԵրևան, 2012 թ.,
5. <https://www.armgeo.am/armenian-national-dolls/>
6. Պապիկյան Կ., «Միջառարկայական կապերի կիրառմամբ ինտերգրված դասերի կազմակերպումը դասավանդման գործընթացում» հոդված

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱԶՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ



ՊԱՐՏԱԴԻՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Ինտեգրված ուսուցումը տեխնոլոգիայի դասերին

ԿԱՏԱՐՈՂ՝ Ժանետա Զանազյան

ՂԵԿԱՎԱՐ՝ Կարինե Պապիկյան դոցենտ, մ.գ.թ.

Բովանդակություն

1.ՆԵՐԱԾՈՒԹՈՒՆ-----	2
Գլուխ 1. Ինտեգրման գործընթացի էությունը, բովանդակությունը-----	3
1.1 Ինտեգրումը տարրական դպրոցում-----	7
1.2 Ինտեգրումը տեխնոլոգիա առարկայի դասաժամերին-----	8
Գլուխ 2. Տեխնոլոգիա առարկայից ինտեգրված դասի նմուշ-օրինակ-----	9
Եզրակացություն-----	14
Գրականություն-----	15

Ներածություն

Թեման արդիական է, քանի որ ինտեգրված դասերը նպաստում են աշակերտների շրջանում երևույթների միջև կապերի ըմբռնմանը, օգնում են առարկաներից մեկի գիտելիքները մյուսի գիտելիքներին կիրառելու կարողությանը, միջառարկայական կապերի ամրապնդմանը, աշակերտների ծանրաբեռնվածության նվազեցմանը, նրանց ստացած տեղեկատվության շրջանակի ընդլայնմանը:

Թեմայի նպատակն է.

1. Ուսումնասիրել ինտեգրված ուսուցումն ան գործընթացը տեխնոլոգիա առարկայի շրջանակներում:
2. Բացահայտել ինտեգրված դասերի արդյունավետությունը:

Թեմայի խնդիրներն են.

1. Ուսումնասիրել և վերլուծել ինտեգրմանը վերաբերող մասնագիտական գրականությունը:
2. Ստեղծել ինտեգրված դասի պլաններ:

ԳԼՈՒԽ 1. Ինտեգրման գործընթացի էությունն ու բովանդակությունը

Ինտեգրված ուսուցումը ժամանակակից դպրոցում արդյունավետ ուսուցման ձև է: Այն իր բնույթով զարգացնող է, բովանդակությամբ՝ բազմաբաղադրատարր, որը ներառում է թե՛ զարգացման սահմանափակ հնարավորություններ ունեցող սովորողներին, թե՛ միջառարկայական կապերի կիրառումը, թե՛ բազմահամակազմ դասարաններում իրականացվող գործընթացները: Ինչպես նշում է

Ե. Ա. Եկժանովան <<Ինտեգրված ուսուցումը, հիմնվելով հատուկ և ընդհանուր կրթության սկզբունքների վրա, պետք է ունենա զարգացնող, դաստիարակող բնութագիր, որը ենթադրում է սովորողների բարոյական գաղափարների, վարքի համարժեք ձևերի մշակում՝ բոլոր մասնակիցների ներառմամբ կրթական գործընթացում>> : ժամանակակից ուսուցման հիմքը ինտեգրումն է (լատիներեն integratio-վերականգնում, համալրում), ինչը հնարավորություն է տալիս տարբեր առարկաների փոխկապակցված թեմաների միջոցով նպաստել միջառարկայական կապերի ամրապնդմանը, աշակերտների ծանրաբեռնվածության նվազեցմանը, աշակերտների ստացած տեղեկատվության շրջանակի ընդլայնմանը, սովորելու մոտիվացիայի ամրապնդմանը, կրկնօրինակումների վերացմանը և ուսումնական ժամանակի ազատմանը մեկ այլ երևույթի ուսումնասիրման համար: Յուրաքանչյուր ուսուցչի երազանքն է կրթել աշակերտի, ով գիտի, թե ինչպես ինքնուրույն մտածել, ինքն իրեն հարցեր տալ և գտնել դրանց պատասխանները, իր առջեւ խնդիրներ դնել և դրանց լուծման ուղիներ փնտրել: Ի.Գ. Պեստալոցցին պնդում էր, որ ուսուցման գործընթացը պետք է կառուցված լինի այնպես, որ մի կողմից տարբերի առանձին առարկաներ, իսկ մյուս կողմից՝ մեր մտքում միավորի նմանատիպ և հարակից առարկաները՝ դրանով իսկ մեր մտքերում մեծ պարզություն հաղորդելով, և դրանք լիովին պարզաբանելուց հետո հասնել հստակ հասկացություններին:

Ինտեգրված դասերը կարող են անցկացվել մի քանի մակարդակներով՝ երկուական (միաժամանակյա ուսուցում), կոնցեպտուալ և տեղեկատվական (ուսուցիչները համաձայնում են տեղեկատվության տարբեր թեմաների շուրջ և դասերը վարում առանձին) և հեռավար (ցանցային):

Ինտեգրված դասերի անցկացման փորձը ցույց է տալիս, թե որքան արդյունավետ կարող են լինել այդ դասերից ստացված արդյունքները.

Ջարգացնող սովորեցնել համեմատել, ընդհանրացնել, համեմատել, ընդհանուր առմամբ, վերլուծել, տրամաբանական եզրակացություններ անել:

Ճանաչողական ուսուցանել էվոյուցիայի ժամանակի և տարածության մեջ իրադարձությունների, փաստերի, երևույթների կապը. բոլոր տեսակի եզրակացություններ անել:

Կրթական ձևավորել բարոյական, բարոյապես գիտակցված վերաբերմունք այն ամենի նկատմամբ, ինչը շրջապատում է ուսանողներին՝ պատմաբանների և գրողների, կենսաբանների, աշխարհագրագետների և այլնի կողմից իրադարձությունների և երևույթների ըմբռնումից:

Ժամանակակից դասի արդյունավետությունը կախված է ուսուցիչների արվեստից, որն արտահայտվում է աշակերտների հետ շփվելու և միմյանց միջև ուսումնական նպատակներն ու խնդիրները ընդունելու, առաջադրանքների և վարժությունների ընտրության, մուլտիմեդիա ուսուցման միջոցների օգտագործման ձևով: Իմ կարծիքով, ինտեգրված դասեր անցկացնելիս առաջին պլան է մղվում ոչ թե կրթական գործընթացի ֆորմալ կազմակերպումը, ոչ թե կրթության բոլոր ավանդական բաղադրիչներին խստորեն հետևելը, այլ նպատակային, հետևողական, տեղեկատվական փոխազդեցությունը ուսուցիչների և ուսանողների միջև: Այսպիսով, ինտեգրված դասերի բովանդակության ճիշտ ընտրությունն ու կառուցվածքը հանգեցնում է ուսումնական գործընթացի նոր կառուցվածքի, ուսումնասիրվող առարկաների նկատմամբ հետաքրքրության աճին: Ինտեգրված դասերի ընթացքում երեխաները հեշտությամբ աշխատում են և հետաքրքրությամբ սովորում հսկայական քանակությամբ նյութեր: Կարևոր է նաև, որ ձեռք բերված գիտելիքներն ու հմտությունները ոչ միայն կիրառվեն դպրոցականների կողմից իրենց գործնական գործունեության մեջ ստանդարտ ուսումնական իրավիճակներում, այլև ելք ստեղծեն ստեղծագործական կարողությունների դրսևորման, մտավոր կարողությունների դրսևորման համար: Ուսուցիչները, ովքեր նախատեսում են ինտեգրված դասեր ներառել իրենց ուսումնական գործունեության մեջ, պետք է հաշվի առնեն այն դժվարությունները, որոնք կարող են առաջանալ այս դեպքում: Նախ, ուսուցիչը պետք է նայի այն առարկաների ծրագրերին, որոնք ենթադրաբար պետք է ինտեգրված լինեն, որպեսզի նույնականացնի առարկայական նման թեմաներ: Պարտադիր չէ, որ դրանք նույնական լինեն, գլխավորն այս թեմաների ընդհանուր ուղղությունները բացահայտելն է և ապագա ինտեգրված դասի նպատակը: Միևնույն ժամանակ, չպետք է մոռանալ, որ դասի նպատակը պետք է ուղղված լինի նյութի

ավելի խոր ուսումնասիրությանը և տեսական գիտելիքների գործնական ամրապնդմանը, որն անհրաժեշտ է նյութի ավելի լավ յուրացման համար: Ապա, մենք պետք է նայեք այն առարկաների ծրագրերին, որոնք ենթադրաբար պետք է ինտեգրված լինեն, որպեսզի նույնականացնեք առարկայական նման թեմաներ: Պարտադիր չէ, որ դրանք նույնական լինեն, գլխավորն այս թեմաների ընդհանուր ուղղությունները բացահայտելն է և ապագա ինտեգրված դասի նպատակը: Մինչև նույն ժամանակ, չպետք է մոռանալ, որ դասի նպատակը պետք է ուղղված լինի նյութի ավելի խոր ուսումնասիրությանը և տեսական գիտելիքների գործնական ամրապնդմանը, որն անհրաժեշտ է նյութի ավելի լավ յուրացման համար: Երկրորդ, եթե դասը պատրաստվում է 2 ուսուցչի կողմից, ապա դասի ուրվագիծը կազմելիս պետք է հստակ հատկացնել յուրաքանչյուր ուսուցչի հատկացված ժամանակը և խստորեն պահպանել այս կանոնակարգը: Հատկապես այս կանոնը պետք է պահպանվի, երբ ուսուցիչները ինտեգրված դասեր անցկացնելու առաջին փորձերն են անում՝ չունենալով համատեղ համագործակցության բավարար փորձ: Անփորձ ուսուցիչները շատ հեշտությամբ տարվում են՝ մոռանալով, որ այս տիպի դասեր անցկացնելիս ուսուցչից յուրաքանչյուրին հատկացված ժամանակը կիսով չափ կրճատվում է, և հաճախ ժամանակ չեն ունենում տեղավորվելու մեկ դասի շրջանակներում: Երրորդ, հատուկ ուշադրություն պետք է դարձնել ինտեգրված դասի կազմակերպմանը. ուշադիր դիտարկել անհրաժեշտ սարքավորումների գտնվելու վայրը, որպեսզի չշեղվես այն փնտրելով կամ դասի ընթացքում այն կախելով. մտածել ուսանողների գործնական աշխատանքի կազմակերպման ձևերի մասին և համապատասխանաբար դասավորել աղյուսակները. սեղանների վրա նախապես դնել անհրաժեշտ նյութերը և աշխատանքային նյութերը: Այս ամենն անհրաժեշտ է դասի համար հատկացված ժամանակի առավել ռացիոնալ օգտագործման համար: Չորրորդ՝ չպետք է մոռանալ, որ ինտեգրված դասեր անցկացնելը ուսուցիչներից պահանջում է լրջորեն նախապատրաստվել դասին: Ուսուցիչները պետք է խստորեն պահպանեն դասի կանոնները, ուշադիր դիտարկեն նման դասերի աշխատանքի ձևերն ու մեթոդները: Նման դասերն ավելի շատ նման են թատերական ներկայացման, ուստի պահանջում են, որ ուսուցիչը կարողանա իմպրովիզներ անել: Ինչ վերաբերում է ինտեգրված դասաժամերի քանակին, ապա միանշանակ պատասխան չի կարող լինել. Ամեն ինչ կախված է ուսուցչի՝ նյութը սինթեզելու, միմյանց հետ օրգանապես կապվելու և ինտեգրված դաս անցկացնելու կարողությունից՝ առանց երեխաներին տպավորություններով ծանրաբեռնելու: Քանի

դեռ բավարար ինտեգրված դասագրքեր չեն ստեղծվել, նյութի ընտրությունն ու համակարգումը հեշտ գործ չէ ուսուցչի համար:



Հիմնականում երկու փոխկապակցված առարկաների դասի ընթացքում՝ 45րոպե ունենում ենք աշխատող, ներդաշնակ սովորողներ: Որո՞նք են ինտեգրված դասի առավելությունները, և պե՞տք է այսօր սովորողին դասաժամի այդ ձևը: «Ինտեգրում բառը նկատի ունենք տարբեր առարկաների, ուսումնական նյութերի մեջ մի ամբողջություն՝ փոխադարձ իրար լրացնող՝ և՛ իմաստով, և՛ ձևով: Այն չափազանց գրավիչ ձև է սովորողների համար, սովորողին տալիս է լիարժեք պատկերացում նյութի վերաբերյալ: Ղա երկու նյութի խաչմերուկ է, որին հետևում է վերելքը, ապա՝ գագաթը՝ նպատակային դասը:

Այս երկու դաշնակից սուբյեկտների ներկայացումը տարբեր փուլերում հաջողությամբ է ավարտվում: Ինտեգրացված դասերը հզոր խթան են հանդիսանում սովորողի հոգեկան գործունեությունում: Սովորողները սկսում են վերլուծել, համեմատել, որոնել երկու օբյեկտների ու երևույթների միջև կապը: Այն հոգնածությունը, ծանծրայթը, որը սովորողների մոտ նկատվում է միանման դասից, վերանում է, այս դեպքում դասը առաջացնում է հետաքրքրություն, աշխույժություն: Ինտեգրված դասերը հաճախ ուղեկցվում են բացահայտումներով ու հայտնագործություններով, առաջ է գալիս ստեղծականությունը:

Այսպիսով.

այս տեսակ դասերը ստեղծագործ ուսուցչին հնարավորություն են տալիս հասնել նոր մակարդակի, բացահայտել իր համար տեղեկություններ, մտնել նոր փուլ, իսկ սովորողին՝ զարգացնել ստեղծագործական մտածողությունը, ինքնակրթվելու հնարավորություն ստեղծել: Ընդ որում, ուսումնական նյութերը պետք է լինեն


մատչելի, ոչ ծանրաբեռնված, դասարանում ուսումնական գործընթացը պետք է համապատասխանի սահմանային ծավալին: Սովորողը պետք է ստանա այնքան տեղեկություն, որ չխճճվի նյութերում:

Ինտեգրացված դասը սովորաբար նախապես պլանավորվում է : Դա անհրաժեշտ է և համապատասխանում է ուսումնական ծրագրին, պատրաստականություն է այլընտրանքային դասին:

Ինչպե՞ս պատրաստել միասնական դաս

Նախապատրաստությունը սկսվում է դասի մանրամասն պլանը կազմելով: Փուլ առ փուլ, քայլ առ քայլ ընթանում է դասը: Յուրաքանչյուր փուլ ցույց է տալիս՝ ինչպես ճիշտ օգտագործել ժամանակը: Իմ կարծիքով, պետք է կանխատեսել նաև բոլոր հնարավոր ընդհատումները՝ կապված տեսողական և բաժանվող նյութերի, սարքավորումների և քարտերի մուլտիմեդիայի ուստայնում: Բայց քանի որ աշխատում է երկու դասավանդող, նույնիսկ, եթե ինչ-որ պահի առաջատար դեր խաղացել է նրանցից մեկը, երկրորդը չպետք է նստի ստվերում. նա ևս պետք է ակտիվ լինի՝ վերահսկի սովորողների աշխատանքը, օգնի կամ պատրաստվի հաջորդ փուլին: Դասի վերջում բոլոր սովորողները պետք է ինքնուրույն բացահայտեն այդ միջառարկայական կապը, նպատակը: Մեր նպատակն է սովորողին ուղղորդել, սովորեցնել հետազոտել, ստեղծագործել, որոնել, դասը յուրացնել հետաքրքիր ու ոչ ստիպողական մեթոդներով: Այսպիսով, ինտեգրված դասը դառնում է նաև գրավիչ դերախաղ, սեմինար, քննարկում, ոչ թե գիտելիքների ծավալի խցկում:

Այսօր մանկավարժությունը հակված է մտածելու, որ նմանատիպ դասերը սովորողի՝ մարդկային դրսևորման հիմք կարող են հանդիսանալ: Այն նպատակ ունի նաև ուսուցչին օգնել հարմարվելու վառ, աշխույժ, անհատական հետաքրքրություններով լի սովորողին, մի կողմից էլ՝ շատ է օգնում նախագծերով աշխատող ուսուցիչներին: Ինտեգրված դասի արդյունքում սովորողը, ոչ ստիպողաբար, տանը կատարում է առաջադրանքներ, հետազոտում է, ապա ներկայացնում դպրոցում, որը խրախուսվում է: Այստեղ սովորողին չես պարտադրում կատարել, նա այն անում է ինքնակամ, հաճույքով:




1.1 Ինտեգրումը տարրական դպրոցում

Դպրոցի տարրական դասարաններում միշտ էլ մեթոդական հիմնախնդիր է եղել միջառարկայական կապերի կիրառումը: Այն շատ դեպքերում կրել է մեխանիկական բնույթ: Սակայն այլ են նորագույն մանկավարժական մոտեցումների ու ծրագրերի պահանջները: Տարրական դպրոցում ընթերցանության դասերի ընթացքում պահանջվում է նյութից բխող ինտեգրում նույն դասարաններում ուսումնասիրվող այլ առարկաների միջև՝ գրական ընթերցանություն-հայոց լեզու, գրական ընթերցանություն-երաժշտություն, նկարչություն, մայրենի լեզու-տեխնոլոգիա, մաթեմատիկա և այլն: Ինտեգրված դասերը միավորում են տարբեր առարկաների մասնագետների ուժերը: Օրինակ տարրական դասարանների մայրենիի դասագրքերը կազմված են հենց ինտեգրման սկզբունքով, որի պահանջն է՝ իրականացնել հայոց լեզվի գործնական ուսուցում ընթերցանության նյութերի միջոցով: Ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է ոչ թե ինտեգրացում, այլ ուսումնական առարկաների միջառարկայական կապերի բովանդակային և տրամաբանական մոտեցում: Ինտեգրված դասի ընթացքում աշակերտների որոնողական և համագործակցային աշխատանքային ձևերն ավելի ակտիվ բնույթ են կրում: Ինտեգրված առարկաների և դրանց փաստացի նյութի շուրջ կատարվող աշխատանքները բխում են բնագրի բովանդակությունից, թեմայից, լեզվից:

Ինտեգրացված դասերը հզոր խթան են հանդիսանում սովորողի հոգեկան գործունեության մեջ: Սովորողները սկսում են վերլուծել, համեմատել, որոնել երկու օբյեկտների ու երևույթների միջև կապը: Այն հոգնածությունը, ծանձրույթը, որը սովորողների մոտ նկատվում է միանման դասից, վերանում է, այս դեպքում դասը առաջացնում է հետաքրքրություն և աշխուժություն:


Ինտեգրված ուսուցմամբ դասապրոցեսի իրականացումը բնութագրվում է մի շարք օրինաչափություններով, որոնցից մասնավորապես առանձնացնենք հետևյալները՝ դասապրոցեսի ընթացքը ըստ մանկավարժի հեղինակային մտածողությամբ իրականացված սցենարի

Ինտեգրված դասի փոխկապակցված բաղադրիչներն են՝



1.3 . Ինտեգրուճը տեխնոլոգիա առարկայի դասաժամերին

Տեխնոլոգիա առարկան այն եզակի առարկաներից մեկն է,որի դասավանդման միջոցով ձևավորվում է ստեղծարար,նորարար,նախաձեռնող,ձեռնարկատիրական նախաձեռնողականություն և ազգային նկարագիր ունեցող անձ,որն արվեստին ու արհեստին հաղորդակցվելով ստեղծում է մարդկային կարիքներին համապատասխան ապրանքներ,ծառայություններ և համակարգեր:Այստեղից էլ արդեն պարզ է դառնում,որ այս առարկան սերտորեն կապված է հանրակրթական ուսումնական հաստատություններում դասավանդվող առարկաների եթե ոչ բոլորի ապա մեծ մասի հետ:








Բերենք մի օրինակ,որից պարզ երևում է տեխնոլոգիայի դասաժամին միջառարկայական կապերը և ինտեգրուճը այլ առարկաների հետ:Ենթադրենք տեխնոլոգիայի դասաժամին աշակերտները պետք է պատրաստեն <<խոհանոցային թիակ>>,որը պետք է լինի փայտյա:



Առաջին հերթին կազմվում է տեխնոլոգիական քարտ,որից արդեն պարզ երևում է միջառարկայական կապերը:Սովորողը կառուցում է գրաֆիկական պատկերներ,օգտվելով երկրաչափության դասերից ստացած գիտելիքներից,կարողանում է հայերենի միջոցով շարադրել իր միտքը՝նշելով քարտի պատրաստման հաջորդականությունը:Այդպիսի փոխադարձ կապերը խորացնում և ամրապնդում են սովորողների գրաֆիկական, աշխատանքային, ունակությունները և գիտելիքները:

N	Աշխատանքի կատարման հաջորդականությունը	Գրաֆիկական պատկեր	Փորձիչներ, հարմարանքներ
1	2	3	4
1	Նախապատրաստվածքի բնութագրում (15x45x220 մմ) և բազային մակերևույթի ռանդում		Ղազգան, ռանդա
2	Բազային եզրի ռանդում (90° բազային մակերևույթի նկատմամբ)		Ղազգան, ռանդա, անկյունակ
3	Չափանշել նախապատրաստվածքն ըստ լայնության		Քանոն, մատիտ
4	Երկրորդ եզրի ռանդում		Ղազգան, ռանդա, անկյունակ
5	Չափանշել նախապատրաստվածքն ըստ հաստության		Քանոն, մատիտ, անկյունակ
6	Երկրորդ մակերևույթի ռանդում		Ղազգան, ռանդա, անկյունակ
7	Չափանշել նախապատրաստվածքն ըստ գծաղիքի		Քանոն, մատիտ, անկյունակ, կարկին

8	Նախադասարանականի սղոցում		Պատգամ, սղոց- հենման հարմարանք
9	Թիակի եզրերի ռանդալ		Պատգամ, ռանդալ
10	Զտիանշել անցքի էենտրոնը և շաղափել (Ø8 մմ)		Շաղափ Ø8 մմ
11	Մաքրել ճակատները և կայունը: Կորոցնել անկյունները: Հղկել մակերևույթները		Պատգամ, խորտոց, եղիակաճղակ
12	Թիակի մակերևույթը երեսապատել տարբուսական յուղով		Վլաձյն

Ինտեգրված դասերի կարևորությունը րև հնարավոր միջոցները տեխնոլոգիայի և բնագիտական առարկաների ուսուցման պրոցեսում շատ մեծ է: Օրինակ ինտեգրման միջոցով տեխնոլոգիա-ֆիզիկա առարկաների ինտեգրված դասաժամին աշակերտները ավելի պատկերավոր կհասկանան թե ինչու սղոցով փայտ կտրելիս սղոցն ավելի շուտ է տաքանում, քան փայտը: Կամ չոր և թաց տախտակների մեջ մեխեր խփելիս, որ դեպքում է ավելի մեծ ուժ կիրառվում: Կամ օրինակ պողպատների մասին խոսելիս կստանան այն հարցի պատասխանը թե ինչու չուգունե ամանի մեջ տապակա պատրաստելը ավելի գերադասելի է քան այլումինե ամանի:

Այս ամենը ցույց է տալիս ինտեգրված դասերի կարևորությունը և անհրաժեշտությունը:

Գլուխ 2. Ինտեգրված դասի նմուշ-օրինակներ տեխնոլոգիայից

1. Դասի թեմա-Ապլիկացիա երկրաչափական պատկերներով

Գերիշխող առարկա՝ <<Տեխնոլոգիա>>

Ինտեգրված առարկաներ՝ <<Մաթեմատիկա>>

<<Մայրենի>>

<<Կերպարվեստ>>

<<Երաժշտություն>>

Դասարան՝ երկրորդ

Դասի նպատակը

1. Իմանա՝

- թղթի տեսակները, հատկությունները, նշանակությունը, օգտագործման բնագավառները
- ապլիկացիայի տեսակները, մասնավորապես առարկայական և դեկորատիվ ապլիկացիաների մասին
- երկրաչափական մարմինների մասին նախնական տեղեկություններ
- ծանոթ լինի թղթով և ստվարաթղթով աշխատելու գործիքներին և հարմարանքներին

2. Կարողանա՝

- պատրաստել առարկայական և դեկորատիվ ապլիկացիա
- թղթից և ստվարաթղթից տարբեր երկրաչափական դետալներ կտրահանել և սունձել
- ճիշտ ձևավորել պատրաստվածքը

3. Արժևորի՝

- կրտսեր դպրոցականների ստեղծագործական ունակությունների և

համագործակցային կարողությունների զարգացումը

Դասի խնդիրները

1. Կրթական`

- գրաֆիկական գրագիտության տարրերի ուսուցում
- թղթի և ստվարաթղթի խնայողաբար օգտագործում

2. Զարգացնող`

- ճիշտ կատարել ուսուցչի հրահանգը
- գործնական աշխատանքը խնամքով կատարելու կարողության մշակում
- թղթով աշխատելու կարողությունների ձևավորում
- նյութերից և աշխատանքային գործիքներից ճիշտ օգտվելու կարողությունների ձևավորում
- թղթից տարբեր երկրաչափական պատկերների դետալներ կտրահանելու ,դրանք հավասար մասերի ծալելու կարողության ձևավորում:

3. Դաստիարակչական`

- <<Տեխնոլոգիա>>առարկայի նկատմամբ հետաքրքրության խթանում
- աշխատանքի պլանավորում
- աշխատասիրություն, ուշադրության կենտրոնացում, համբերատարություն, սկսած գործն ավարտին հասցնելու կարողություն
- խնամքով վերաբերմունք աշխատանքի արդյունքի նկատմամբ

Դասի կահավորումը

- աշխատանքային նյութեր` սպիտակ և գունավոր նյութեր
- աշխատանքային գործիքներ` մատիտ, քանոն, մկրատ, սոսինձ
- բազմագույն երկրաչափական ձևանմուշներ
- ապլիկացիայի նմուշօրինակներ
- ծրարներ` երկրաչափական պատկերներով և հանելուկներով

Դասի ընթացքը

Ուսուցիչ. երեխաներ այսօր անսովոր դաս է: Մենք այսօր միասին ճանապարհվելու ենք դեպի <<գիտելիքների մոլորակ>>: Այդ մոլորակի վրա կա մի հրաշք վայր , որ կոչվում է <<Երկրաչափություն>>: Փորձենք պարզել ինչպիսի վայր է այն:

Հիշենք Պլուտոնի խոսքերը <<Մաթեմատիկական թվերի և պատկերների իդեալական աշխարհ է>>: Երկրաչափությունը պատկերների իդեալական աշխարհ է , ուր միասին հաշտ ու խաղաղ բնակվում են բոլոր երկրաչափական պատկերներն իրենց պատկերներով և օրենքներով: Կամ էլ կարելի է հիշել Գ. Գալիլիյի խոսքերը` <<Բնությունը խոսում է մաթեմատիկայի լեզվով, այդ լեզվի տառերն են շրջանագծերը, եռանկյունները և մաթեմատիկական այլ պատկերներ>>:

Ռեսուցիչ. Գուշակենք, թե ինչով ենք ճանապարհորդելու:

Երեխաներ. կթվարկեն փոխադրամիջոցներ, դրանք կնմանացնեն երկրաչափական պատկերների` հրթիռ, գնացք, ավտոմեքենա, նավ և այլն: Փոխադրամիջոցն ընտրում են աշակերտները:

Ռեսուցիչ. Ճիշտ է, այժմ բաժանվեք խմբերի, տեղավորվեք և պատրաստվեք թռիչքի, եթե մենք չձևավորենք հրթիռը , ապա հրթիռը չի թռչի:

Աշակերտներ. հերթով մոտենում են գրատախտակին փակցված մեծ հրթիռին և գունավոր

մատիտներով ներկում այն: Այնուհետև ուսուցիչը ցուցադրում է երկրաչափական պատկերները, աշակերտները անվանում են դրանք:

Ռեսուցիչ. Ապրեք, առաջադրանքը կատարեցիք, բայց մինչ թռչելը պետք է ձեզ զգուշացնեն , որ հրթիռը կթռչի առանց կանգառների և կանգ կառնի միայն <<երկրաչափություն>> վայրում: Պատրաստվեք թռիչքի:

Հնչում է երաժշտություն:

Ռեսուցիչ. վերջապես մենք <<Երկրաչափություն >> վայրում ենք: Թագուհին մեզ ողջունում ու ձեռքով է անում: Եկեք ուրախացնենք նրան ու թվարկենք բոլոր այն երկրաչափական պատկերները, որոնց մենք ծանոթ ենք

Աշակերտներ. թվարկում են իրենց ծանոթ պատկերները, պատմում դրանց մասին , շրջապատող առարկաները փորձում նմանեցնել որևէ երկրաչափական պատկերի, գունավորում և համեմատում են պատկերները:

Ռեսուցիչ. Երեխաներ դուք նկատեցիք^օ , որ թագուհին տխուր է, նա կարծես թե լաց է լինում, եկեք մոտենանք ու հարցնենք ինչ է պատահել: Եկեք մտածենք քինչպես ուրախացնել նրան, եկեք երկրաչափական պատկերներից փոսիկ

կոնստրուկտավորենք ու նվիրենք նրան: Աշակերտներից յուրաքանչյուրի սեղանին դրված է ծրարներ, որոնց մեջ բազմագույն պատկերներ և ապլիկացիաներ են: Ուսուցիչը բացատրում է դրանց պատրաստման տեխնոլոգիան, այնուհետև հանձնարարում է նմուշօրինակում տրված փիսիկից կոնստրուկտավորել սեղանին դրված գունավոր երկրաչափական պատկերներով: Առաջադրանքը կատարելուց հետո ուսուցչի թույլտվությամբ աշակերտները կատարում են ստանձման աշխատանքները: Պտկերը կոնստրուկտավորելուց հետո ստանձում են:

Անհրաժեշտության դեպքում ուսուցիչն օգնում է:

- Աշակերտները ծրարներից հանում են հանելուկները, փորձում գտնել պատասխանները:
- Աշխատանքների խրախուսում և ցուցադրություն, լավագույն աշխատանքները դասարանի ցուցադրումների հատկացված մասում:
- Ամփոփում

Ուսուցիչ. ինչպիսի պատկերների հեր ծանոթացաք, ինչ էք կարծում դուք կկարողանայիք առաջադրանքը միայնակ կատարել, կկարողանայիք հաղթահարել ճանապարհորդության ընթացքում ծագած դժվարությունները, եթե միասին չլինեի՞նք: Ապա հավելում է, որ միգուցե կարողանայինք, բայց դժվարությամբ՝ մենք միասին էինք և դա մեզ շատ օգնեց: Դե ուրեմն եկեք ճանփորդենք գիտելիքների աշխարհում. . .

Հնչում է երաժշտություն:

Գրականության ցանկ

1. lib.armedu.am
2. Տեխնոլոգիա առարկայի ՀՊՁ
3. Պապիկյան Կ., Տեխնոլոգիա առարկայի դասապլաններ, Երևան, ՎՄՎ հրատ.
4. 3. Արշակյան Ս. Ժ -<<Միջառարկայական կապերը տեխնոլոգիայի դասաժամին>>
4. Մ. Աստվածատրյան,Ա. Արնաուդյան,Ս. Վարդումյան,Ի. Օհանովա,Ռ. Պետրոսյան,Լ. Երեմյան-<<Ինտեգրված թեմատիկ միավորներ>>

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ
ՄՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱԶՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ



**ՊԱՐՏԱԴԻՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ
ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ**

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝

**ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ
ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԵՐԻՆ**

ԿԱՏԱՐՈՂ՝ Լիլիթ Դավիթյան

ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԻՆԵ ՊԱՊԻԿՅԱՆ

ՎԱՆԱԶՈՐ 2023

**ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ
ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԵՐԻՆ**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

1. Ստեղծագործական գործունեությունը որպես գործընթաց
2. Ստեղծագործական ունակությունների զարգացում
3. Ստեղծագործական ու կառուցողական առաջադրանքներ տեխնոլոգիայի դասերին

Եզրակացություններ

Գրականություն

Ներածություն

Ներկայումս մանկավարժական գիտության առաջնահերթ խնդիրներից է անհատի և հասարակության միջև որակապես նոր հարաբերությունների ուսումնասիրությունը, երեխաների կրթության, ուսուցման և ստեղծագործական զարգացման առավել օպտիմալ ուղիների որոնումը: Երեխայի զարգացումն ամրապնդվում է հաջողության իրավիճակ ստեղծելու հնարավորություններով և գործունեության տեսակը փոխելու ազատությամբ:

Կրթության և դաստիարակության գործընթացում ստեղծագործ անհատականության զարգացումը ժամանակակից հասարակության սոցիալապես կարևոր խնդիրներից մեկն է:

Ժամանակակից դպրոցների մեծ մասի իրական հնարավորությունները բավարար չեն լուծելու երեխայի ստեղծագործական գործունեության զարգացման խնդիրները: Սակայն դպրոցը, ուսուցիչը, ծնողը համատեղ պետք է աշխատեն բացահայտել երեխայի ստեղծագործական ներուժը, հնարավորություն ստեղծեն զարգացնել այն երեխայի ընտրած գործունեության ոլորտում: Ստեղծագործական աշխատանքի հիմնական չափանիշը ստեղծագործական երևակայության զարգացումն է, որը հնարավոր է իրագործել «Տեխնոլոգիա» առարկայի միջոցով: Ստեղծվում է համապատասխան միջավայր, երեխային տրվում է հնարավորություն, որ նա խնդիրներ լուծելիս ցուցաբերի ստեղծագործական մոտեցում: Ցանկացած ունակություն զարգանում է հնարավորինս հաջող, եթե նշաձողը մշտապես բարձրացվում է:

Հետազոտության նպատակն է տեխնոլոգիա առարկայի միջոցով սովորողների ստեղծագործական ունակությունների զարգացման ուղիների որոնումը:

1. Ստեղծագործական գործունեությունը որպես գործընթաց

Ստեղծագործական գործունեությունն այնպիսի գործընթաց է, որը ծնում է որակապես նոր նյութական ու հոգևոր արժեքներ: Տարբեր հեղինակներ տալիս են ստեղծագործական գործունեության տարբեր սահմանումներ՝ ընդգծելով դրա տարբեր կողմերը: Ստեղծագործական գործունեությունը կարող է ի հայտ գալ գիտական, տեխնիկական, քաղաքական, գեղարվեստական և այլ ոլորտներում: Ստեղծագործել բառն իսկ ցույց է տալիս, որ խոսքը նոր բան ստեղծելու, հորինելու մասին է, մի բան, որը դեռ գոյություն չունի կամ չի կրկնվում: Ստեղծագործական գործունեությունն անկրկնելի է, ինքնօրինակ, եզակի, անհատական: Այս գործընթացը առաջ է գալիս մարդու աշխատանքի արդյունքում, երբ նա ձեռք է բերում գիտելիքներ, հմտություններ, կարողություններ, շրջակա միջավայրի ճանաչողություն, որի հիման վրա էլ ստեղծվում է նոր իրողություն:

Ժամանակակից հասարակությունում մասնագետին ներկայացվող կարևոր պահանջ է ստեղծարարությունը: Այսօր այն բարձր է գնահատվում, և դրա հետ կապված որոշ մասնագիտություններ գնալով ավելի պահանջված են դառնում: Վարսահարդարներ և հեռուստաշոունների ստեղծողներ, միջոցառումների կազմակերպիչներ և լուսանկարիչներ, դիզայներներ և ծաղկավաճառներ, բարմեններ և նույնիսկ մեքենաների ախտորոշիչներ՝ այս բոլոր մասնագիտությունները պահանջում են որոշակի տաղանդ և ստեղծարարություն: Ստեղծագործ լինելու կարողությունը որոշելու համար գիտնականները խորհուրդ են տալիս հիմնվել մարդու բնավորության և գործունեության հետևյալ հատկանիշների վրա.

- հարուստ երևակայություն
- ռիսկի դիմելու ունակություն
- մտքերի ճկունություն
- տարբերվող մտածողություն
- երկիմաստ երևույթների ընկալում
- զարգացած ինտուիցիա
- բարձր գեղագիտական ընկալունակություն:

Երեխայի ստեղծագործական կարողությունները սկսվում են երևակայությունից: Նրա համար երևույթներն ու առարկաները բազում տարբերակներ են սկսում ունենալ: Ստեղծագործական ունակությունները երեխային հնարավորություն են տալիս ինքնաարտահայտման ճիշտ ուղի գտնել: Երեխայի ստեղծագործական կարողություններն ի հայտ են գալիս վաղ, դեռ նախադպրոցական տարիքում: Այս դեպքում երեխայի կարողությունների բացահայտողը լինում է ծնողը, ապա ուսուցիչը, ով տալիս է գիտելիք, կարողություն, հմտություն, սովորեցնում է տիրապետել համապատասխան գործիքների: Փորձի և գիտելիքների պաշարը բարենպաստ հիմք է ստեղծագործական մղումների զարգացման համար:

2. Ստեղծագործական ունակությունների զարգացում

Ստեղծագործական միտքը հնարավորություն է տալիս ընդունել ոչ ստանդարտ որոշումներ: Իսկ ստեղծագործական կարողությունները զարգացնելու համար հարկավոր է ճիշտ ուղիներ ընտրել, այն սովորեցնել հնարավոր չէ, քանի որ այն բնատուր է, բայց կարելի է համապատասխան պայմաններ ստեղծել այն զարգացնելու համար: Երեխայի բազմակողմանի զարգացումը կարող է օգնել նրա ստեղծագործական պոտենցիալի բացահայտմանը: Դրա համար էլ և՛ նախադպրոցական, և՛ կրտսեր դպրոցական և նաև միջին դպրոցական հասակում կրթական ծրագրում ներառվում են նաև երաժշտությունը, տեխնոլոգիան, կերպարվեստը: Այս առարկաները երեխայի մեջ խթանում են բազմակողմանի գեղագիտական և ստեղծագործական զարգացման գործընթացներ, զարգացնում են երևակայությունը, հիշողությունը, հիմք են դնում գեղարվեստական մտածողությանը: Նկարչությունը, ապլիկացիան, կոնստրուկտավորումը, կարը և ասեղնագործությունը թույլ են տալիս երևակայել և շարժվել պարզից դեպի բարդը: Հենց երևակայությունն էլ թույլ է տալիս ստեղծել նորը՝ ստեղծագործել:

Ստեղծագործական գործունեությունը բացահայտում է աշակերտի ինքնուրունությունը, սեփական մտահղացումների իրականացումը, որոնք միտված են նոր բան ստեղծելու: Ստեղծագործական գործունեության շրջանակներում

ձևավորվում են ընդհանուր կարողություններ՝ փնտրելու և գտնելու նոր որոշումներ, լուծումներ, ցանկալի արդյունքին հասնելու ոչ սովորական միջոցներ, սովյալ իրավիճակում նոր մոտեցումների ցուցաբերում: Հարկավոր է ստեղծել համապատասխան պայմաններ, որոնք կխթանեն ինքնակրթությունը, ինքնագարգացումը, ստեղծագործելու կարողությունը: Օրինակ՝ «Տեխնոլոգիա» առարկայի ժամերին, երբ երեխաները սկսում են աշխատել թղթով, նրանց ուշադրությունը գրավում է թղթի գունավորումը, փափկությունը, սահունությունը, նյութի որակը, ինչպես նաև, այն, որ թուղթը հնարավորություն է տալիս իրենց ստանալու ցանկացած ձև: Եվ ոչ միայն թղթով աշխատանքն է տալիս այսպիսի հնարավորություն, այլ նաև կտորով, թելերով աշխատանքը: Որքան բազմազան են նյութերը, այնքան մեծ է երևակայելու հնարավորությունը: Այս գործընթացում խթանիչներ կարող են լինել նաև երաժշտությունը և կերպարվեստը: Կարելի է դասերը հագեցնել երաժշտությամբ: Երեխային պետք է հնարավորություն տալ, որ այն աշխատանքը, որը մատչելի չէ նրան սովյալ նյութերով պատրաստելու՝ փոխարինի այլ միջոցներով: Օրինակ, երբ երեխան գունավոր թղթից դետալներով կոմպոզիցիա է ստանում, բայց կան դետալներ, որոնց հետ աշխատելը նրա համար բարդ է (կտրել, սոսնձել), կարող է մատիտներով նկարել՝ դրանից աշխատանքը չի տուժի: Նման օրինակներ կարելի է բերել նաև կարվածքներ ստանալու դեպքում, երբ ձևավորման ժամանակ աշակերտն ուղղակի նկարում է կտորի վրա, ապլիկացիաներ է անում տարբեր նյութերով, ասեղնագործում է՝ ստանալով համապատասխան ձևավորում:



Ներկայումս ուսուցչի աշխատանքի արդյունավետությունը որոշվում է նրանով, թե որքանով է ուսումնադաստիարակչական գործընթացն ապահովում յուրաքանչյուր աշակերտի ստեղծագործական կարողությունների զարգացումը, ձևավորում աշակերտի ստեղծագործական անհատականությունը, նախապատրաստում նրան ստեղծագործական ճանաչողական և սոցիալ-աշխատանքային գործունեությանը: Ուսման գործընթացում դեռահասների մոտ ստեղծագործական կարողությունները ձևավորում են հատկություններ, որոնք վերջնարդյունքում էապես ազդում են աշակերտի բնավորության վրա: Պրակտիկան հաստատում է, որ սովորողների ներաշխարհը ձևավորելու համար անհրաժեշտ է ընտրել նրանց ստեղծագործական գործունեության մղելու մեթոդներ, որոնք կբացահայտեն խնդիրների հաղթահարման, քննադատական մտածողության ձևավորման հեռանկարը:


Ուսումնական գործընթացի հիմնական մանկավարժական պահանջներից մեկն այն է, որ ոչ մի դեպքում չպետք է ճնշել աշակերտի յուրահասկ լինելը: Հաճախ նկատվում են մանկավարժական իրավիճակներ, երբ աշակերտը ենթադրություն կամ մտադրություն հայտնելով, հնարավորություն չունի դրանք տրամաբանորեն ապացուցելու: Այնուամենայնիվ, նա պետք է խրախուսվի՝ փորձելով կիրառել ներուժ, և ուսուցչի հետ միասին կառուցել տրամաբանական մտքերի շղթա: Աշակերտների ստեղծագործական ներուժը զարգացնելու համար անհրաժեշտ է ձևավորել ինքնավստահություն, հավատ ստեղծագործական խնդիրները լուծելու ունակության նկատմամբ: Անվստահությունը տանում է դեպի ձախողում:


3. Ստեղծագործական ու կառուցողական առաջադրանքներ տեխնոլոգիայի դասերին

Փորձենք տրամաբանամակ ու կառուցողական առաջադրանքներ կատարել՝ օգտագործելով պարզագույն երկրաչափական պատկերներ՝ եռանկյուն, քառակուսի, շրջան. վերջինս պետք է գծել ըստ շաբլոնի, անհրաժեշտության դեպքում կտրել՝ ստանալով սեկտոր: Դա աշակերտներին հնարավորություն կտա սովորել նոր հասկացություններ, համեմատաբար պարզ երկրաչափական պատկերներից ստանալ նորերը: Այլիկացիայի այս տեսակը արդյունավետ վարժանք է՝ տրամաբանական մտածողությունն ու երևակայությունը զարգացնելու համար: Այն մշակվել է գլոխկոտրուկների նմանությամբ, որոնք տարբեր ժողովուրդների մշակույթներում հայտնի են շատ վաղուց: Օգտագործելով այլիկացիայի այս տեսակը՝ կարելի է կրտսեր դպրոցականներին հանձնարարել կառուցողական և տրամաբանական առաջադրանքներ:

Հենց առաջին դասարանից աշակերտները հաջողությամբ երկրաչափական պատկերներից այլիկացիա են կազմում՝ կողմնորոշվելով փոքրացված օրինակներով: Օրինակ, դպրոցականներին կարելի է այս պիսի առաջադրանքներ հանձնարարել.


Առաջադրանք 1. Կտրի՛ր նկարում պատկերված քառակուսին՝ ըստ նշագծերի և հաջորդ նկարի նմանությամբ պատկերներ ստացի՛ր:






Այնուհետև առաջադրանքը կարելի է փոքր-ինչ բարդացնել՝

Առաջադրանք 2. Կտրտիր քառակուսին՝ ըստ նշագծերի, ստացված երկրաչափական պատկերներով նկարի նմանությամբ կենդանիների պատկերի ու ստանձիր:



նկար 6



Առաջադրանք 3. Առաջին դասարանում, օրինակ, առաջարկ-վում է, որ երեխաները պատկերեն թռչուն՝ պոչն այնպիսի 7 գույ-նի փետուրներով, որոնք ըստ չափի և գույնի դասավորված լինեն որոշակի հաջորդականությամբ: Գույների դասավորությունն աշակերտը կարող է ընտրել ծիածանի հերթականությամբ՝ կար-միր, նարնջագույն, դեղին, կանաչ, երկնագույն, կապույտ և մանուշակագույն¹:



Փետուրներն ըստ չափերի դասավորելիս պետք է խստիվ պահպանվի համաչափության սկզբունքը. ամենամեծ փետուրը՝ կենտրոնում, աջ և ձախ կողմերում՝ միջին չափի երկուական (ըն-դամենը 4-ը), իսկ եզրերում՝ մեկական փետուրներ (2): Որպես առաջադրանքի հուշումնողել տրվում են 2 նկարներ:

12-րդ նկարում տրված են. ա) թռչունի փոքրացված պատկերը՝ պոչի վրա 7 փետուր, որոնցից միայն մեկն է գունավոր, բ) գունային շրջան:

Աշակերտին տրվում է փետուրների 3 չափի ձևանմուշ՝ մեծ, միջին և փոքր (նկ. 13ա) և թռչունի պատկերը՝ պոչի վրա միայն կար-միր փետուրով (նկ. 13բ): Աշակերտը փետուրների ձևանմուշները և թռչունի պատկերը փակցնում է աշխատանքային ալբոմ-տետրում:

Գունավոր թղթերից կտրվում են մնացած փետուրները և դասավորվում համապատասխան հերթականությամբ:

Հարկավոր է՝ ըստ գույնի և չափերի, հստակ պատկերացնել փետուրների դասավորությունը: Այդ ամենը կատարվում է հուշում-նողելի միջոցով: Աշակերտը նախ պետք է հաշվի փետուրների ընդհանուր քանակը (7), այնուհետև այն բաժանի 3 մասի՝ ըստ չափերի (1 մեծ, 4 միջին, 2 փոքր): Դրանից հետո գունային շրջանը նրան կհուշի, թե ինչպես փետուրները դասավորել ըստ գույների: /Աշակերտներին կարելի է հուշել ծիածանի գույների հերթականությունը՝ կատուն նստած դռան կողքին երագում է կերի մասին: /



Տվյալ խնդիր-առաջադրանքը սկզբում լուծվում է մտովի, իսկ հետո նաև գործնականորեն: Այս կերպ աշակերտը գտնում է տվյալ առաջադրանքի միակ և ճիշտ պատասխանը:

Հանձնարարվում են նաև տրամաբանական այլ խնդիր առաջադրանքներ:

Տրամաբանական առաջադրանքները շաղկապվում են որոշակի օրինաչափություններով, որոնք աշակերտը պետք է նկատի: Գտնելով դրանք՝ կրտսեր դպրոցականը որոշում է, թե ինչպիսին է որոնելի կառույցը:


Այդ առաջադրանքները կատարելիս աշակերտների մեջ ձևավորվում ու կատարելագործվում են գործնական կարողությունները՝ նշագծում ըստ շաբլոնի կամ ծալումով, րատով աշխատելու, վրձնով սոսնձելու, դետալներ սոսնձելու ունակությունների

ձեռք-բերում, ամրապնդվում են երկրաչափական պատկերների մասին գիտելիքները՝ ըստ չափի, գույնի, տարածական դա սավորության տարբերակելու կարողությունը: Այդ գիտելիքների ու կարողությունների հիմքի վրա զարգանում է աշակերտի տարածական մտածողությունը, քանի որ նա որոշակի մտավոր աշխատանք է կատարում:

Սովորողներին ծանոթացնում ենք նաև «**Չինական գլուխկոտրուկ**» խաղի հետ և հանձնարարում ավելի բարդ առաջադրանքներ:


Առաջադրանք 4. Գունավոր ստվարաթղթի վրա գծանշել 100 մմ կողմով քառակուսի, կտրտել առանձին երկրաչափական պատկերներ (ըստ նկար 8 -ի)

- 1) մեծ ուղղանկյուն եռանկյուն - 2 հատ
- 2) միջին ուղղանկյուն եռանկյուն - 1 հատ
- 3) փոքր ուղղանկյուն եռանկյուն - 2 հատ
- 4) քառակուսի - 1 հատ
- 5) զուգահեռագիծ - 1 հատ



Ստացված երկրաչափական պատկերներից կարելի է ոչ միայն կենդանիների, այլև տարբեր գույների օգտագործմամբ այլ պատկերներ ստանալ: Ինչ խոսք, առաջադրանքն այնքան էլ դյուրին չէ, քանի որ «գլուխկոտրուկ» է. նույնիսկ այդ յոթ պատկերները սկզբնական քառակուսու մեջ տեղադրելու (հավաքելու) համար անհրաժեշտ է լավ մտածել: Կարելի է ներքևում պատկերված պատկերված նկարները ցուցադրել հուշելու համար: Աշակերտը պետք է գտնի օրինաչափությունը, հասկանա, որ յուրաքանչյուր նկարում պետք է օգտագործվեն բոլոր 7 երկրաչափական պատկերները, ուրեմն նա պետք է աշխատի խնամքով, այնպես, որ երկրաչափական պատկերները միմյանց չծածկեն: Նման առաջադրանքը կատարելու համար ոչ միայն խելամտություն, այլև համբերություն է պետք:

«Չինական գլուխկոտրուկի» 7 տարրերից կարելի է ոչ միայն կոնստրուկտավորել տարբեր պատկերներ, այլև նախնական տեղեկություններ ստանալ երկրաչափությունից: Օրինակ, ի՞նչ է քառակուսին: Իհարկե, կրտսեր դպրոցականները դա գիտեն, կարող են անգամ պատկերել, բայց չեն կարող բառերով նկարագրել այն: Իսկ քառանկյունը, չէ՞ որ ամեն քառանկյուն քառակուսի չէ, իսկ գուգահեռագի՞ծը:



Աշակերտների ստեղծագործական ներուժը ձևավորելու համար «Տեխնոլոգիայի» դասաժամերին օգտագործվում են տարբեր գործնական ուսուցման մեթոդներ, որոնք դասակարգվում են ըստ ճանաչողական գործունեության տեսակի.

- վերարտադրողական (բացատրական - պատկերագարդ)
- խնդրի ներկայացում
- մասնակի որոնողական (էվրիստիկ);
- նախագծային
- հետազոտական:

Մեր պրակտիկայում ամենաարդյունավետը ուսուցման մեթոդների համակողմանի կիրառումն է, որպեսզի բարձրացվի տեղեկատվության յուրացումը, ուսումնական գործընթացի արդյունավետությունը: Աշխատանքային կրթության մեջ կարևոր դեր են խաղում գործնական մեթոդները: Դրանց առանձնահատկությունը կայանում է նրանում, որ աշակերտների գործունեության մեջ գերակշռում է ձեռք բերված գիտելիքների օգտագործումը բուն առաջադրանքները լուծելու համար: Այս մեթոդը կատարում է գիտելիքների, հմտությունների խորացման գործառույթ, ինչպես նաև նպաստում է խնդիրների լուծման վերահսկողությանը և տարանջատմանը, ճանաչողական և ստեղծագործական գործունեության խթանմանը: Գործնական մեթոդները ուղղված են աշակերտների կողմից առաջադրանքի բարեխիղճ կատարման խթանմանը, նպաստում են այնպիսի հատկությունների ձևավորմանը, ինչպիսիք են խոհեմությունը, խնայողությունը, գործընթացին ստեղծագործաբար մոտենալը և այլն:

Ստեղծագործական խնդիրների լուծման արդյունավետ միջոցներից մեկը համարվում է «Մտագրոհը»: «Մտագրոհը» ոչ թե մեթոդ է, այլ մտավոր փորձությունների միջոցով խնդիրների լուծումների կոլեկտիվ ինտուիտիվ որոնման տեխնոլոգիա՝ օգտագործելով մտածողության ակտիվացման մեթոդները: Սակայն, սովորաբար «Մտագրոհը» ներառված է ստեղծագործական խնդիրների նոր

լուծումների որոնման էվրիստիկ մեթոդների համակարգում: Այն կիրառվում է խնդրի լուծման նախնական փուլում՝ ինֆորմացիայի սղության դեպքում: Մեթոդի հիմնական նպատակն է՝ հնարավորինս շատ առաջարկներ ստանալ կոլեկտիվ ստեղծագործական աշխատանքի պայմաններում լուծվող խնդրի մասին:

Ստեղծագործական ներուժի ստեղծման նույնքան արդյունավետ մեթոդ է «Նախագծերի մեթոդը»: «Տեխնոլոգիայի» դասաժամերին ստեղծագործական նախագիծը ուսումնական և աշխատանքային խնդիր է լուծում, որի արդյունքում ստեղծվում է ապրանք, որն ունի սուբյեկտիվ և երբեմն օբյեկտիվ նորարարություն: Սոցիալական, գիտատեխնիկական առաջընթացի պահանջներին համապատասխան՝ ստեղծագործական նախագծերը պահանջում են ձեռնարկատիրական գործունեության գիտելիքներ և հմտություններ: Սա փոխում է ոչ միայն ուսուցման բովանդակությունը, այլև մեթոդները, որոնք զարգացնում են աշակերտների անհատականությունը, թույլ են տալիս նրանց հարմարվել սոցիալ-տնտեսական նոր պայմաններին: Այն նպատակաուղղված է զարգացնել երեխայի ակտիվ ինքնուրույն մտածողությունը և սովորեցնել նրան ոչ միայն անգիր անել և վերարտադրել այն գիտելիքները, որոնք նրան տալիս է դպրոցը, այլ նաև կարողանալ դրանք կիրառել գործնականում: Որպես կանոն, կրթական նախագծերը պարունակում են լուծում պահանջող խնդիր, ինչը նշանակում է, որ դրանք ձևակերպում են մեկ կամ մի քանի առաջադրանքներ: Իր հերթին, առաջադրանքները պետք է գրավիչ լինեն իրենց ձևակերպմամբ և խթանեն ստեղծագործական գործունեության մոտիվացիայի բարձրացմանը: Ծրագրի մեթոդոլոգիան առանձնանում է նախագծի վրա աշխատելիս առաջադրանքների կատարման համագործակցային բնույթով: Այն ենթադրում է անհատական և կոլեկտիվ պատասխանատվության բարձր մակարդակ՝ ծրագրի յուրաքանչյուր առաջադրանքի մշակման և կատարման համար:

Նախագծի մեթոդաբանությունը հետազոտական- ճանաչողական գործունեության կազմակերպման ձևերից մեկն է: Նախագծի թեման ընտրելիս

ուսուցիչը պետք է կենտրոնանա աշակերտների հետաքրքրությունների և կարիքների, նրանց հնարավորությունների և աշխատանքի անհատական նշանակության, նախագծի վրա կատարված աշխատանքի արդյունքի գործնական նշանակության վրա: Ավարտված նախագիծը կարող է ներկայացվել տարբեր ձևերով՝ հոդված, ալբոմ, կոլաժ, զեկույց, գիտաժողով, մրցույթ, տոն, ներկայացում: Նախագծի վրա աշխատանքի հիմնական արդյունքը կլինի եղածի ակտուալացումը և նոր գիտելիքների, հմտությունների և կարողությունների ձեռքբերումը, նոր պայմաններում դրանց ստեղծագործական կիրառումը: Նախագծի վրա աշխատանքն իրականացվում է մի քանի փուլով.

- թեմայի կամ նախագծի ընտրություն
- խմբի ձևավորում
- ծրագրի աշխատանքային պլանի մշակում
- ժամկետների որոշում
- առաջադրանքների բաշխում աշակերտների միջև
- առաջադրանքների կատարում
- խմբում յուրաքանչյուր առաջադրանքի արդյունքների քննարկում
- համատեղ արդյունքի գրանցում
- ծրագրի հաշվետվություն
- ծրագրի իրականացման գնահատում:

Օգտագործելով նախագծային մեթոդը՝ երեխաներն ըմբռնում են խնդիրների լուծման ողջ տեխնոլոգիան՝ հարցադրումից մինչև արդյունքը ներկայացնելը:

«Տեխնոլոգիա» առարկայի շրջանակներում նախագծային մեթոդի ներդրումը նպաստում է դեռահասների մոտ գիտական և տեխնիկական գրագիտության հիմունքների ձևավորմանը, աշխատանքի մշակույթին, խնդիրների լուծման ստեղծագործական մոտեցմանը, տարբեր մեթոդների ուսումնասիրմանը: Հնարավորություն է տալիս ստեղծագործական նախագծի ոչ ստանդարտ լուծումների

և մեթոդների ընտրության: Նախագծերի մեթոդի շնորհիվ աշակերտները զգալիորեն մեծացնում են իրենց ստեղծագործական ակտիվությունը ոչ միայն «Տեխնոլոգիայի» դասերին, այլ դասից դուրս, ինչը նպաստում է ֆիզիոլոգիական, հուզական, ինտելեկտուալ, սոցիալական խնդիրների լուծմանը, գիտելիքների, հմտությունների և կարողությունների զարգացմանը:

Երբեմն աշխատանքի ժամանակ հնչած երաժշտությունը հետաքրքիր մտահղացումների համար խթան է դառնում: Ստեղծագործ երեխայի համար խթան կարող է լինել գույնը, լույսը, պատկերը և այլն: Ստեղծագործական գործունեության զարգացման հիմքում ընկած են ստեղծագործական մտածողության ձևավորումն ու խթանումը: Որպես որոշ հոգեբանական հետազոտությունների արդյունք՝ հետաքրքիր կապ է առաջ քաշվել ստեղծագործական մտածողության և տրամադրության միջև: Պարզվում է, երբ մարդն ունի լավ տրամադրություն՝ նրա ստեղծագործական պոտենցիալն ակտիվանում է, ավելի հեշտությամբ է նոր մտքեր և մտահղացումներ ունենում: Իհարկե, կարելի է այս մեթոդը կիրառել, որ խթանենք երեխայի ստեղծագործական ունակությունների ակտիվությունը: Իսկ դասարանում առաջինը, ով կարող է դրական տրամադրություն ապահովել, ուսուցիչն է, որը նույնպես պետք է օժտված լինի ստեղծագործելու ունակությամբ: Տրամադրություն ստեղծելու համար կարելի է կիրառել «*Խաղի մեթոդը*»՝ ստեղծելով նոր իրավիճակներ: Սա նաև կօգնի, որ երեխան հաղթահարի սխալվելու վախը, այսինքն՝ մտածի, որ դա ընդամենը խաղ է և ոչ թե առաջադրանք: Առաջադրանքի նկատմամբ չափից ավելի լրջությունը կարող է առաջացնել որոշ երեխաների ստեղծագործական պրոցեսի արգելակում: Օրինակ, եթե հանձնարարված է գունավոր թղթի դետալներից ապլիկացիա ստանալ, իսկ երեխան դետալները սխալ է կտրել, կարելի է նրան ուղղորդել, որ նա դրանցով պատրաստի այն, ինչ այդ պահին կպատկերացնի, քանի որ այդ «խաղի» մեջ ոչ մի սահմանափակում չկա: Նույն մեթոդը կարելի է կիրառել նաև բարձր դասարաններում կտորով աշխատելու ժամանակ: Օրինակ՝ տրված են գունավոր լաթի կտորներ և հանձնարարվում է դրանցով նորոգել որևէ հագուստ: Այս դեպքում

ակտիվանում են աշակերտի ստեղծագործական մտածողությունը և երևակայությունը, նա սկսում է աշխատանքին ստեղծագործաբար մոտենալ: Մակայն պարզվում է, որ լավ տրամադրությունը խանգարում է տրամաբանական մտածողությանը՝ ի տարբերություն ստեղծագործական, ինտուիտիվ մտածողության: Այն խոչընդոտում է ռիսկերի ճիշտ գնահատումը, սխալներ նկատելը, եթե աշխատանքը լուրջ բնույթ ունի: Մեր՝ վերը նշված օրինակի դեպքում, երբ երեխան իր ստեղծագործական մտածողության արդյունքում ստանում է որոշակի աշխատանք, ապա աշխատանքի թերություններն ու սխալները վերացնելու համար հարկավոր է ակտիվացնել տրամաբանական մտածողությունը, որ խնդրին ավելի լուրջ մոտեցում ցուցաբերվի:

Երեխայի ստեղծագործական մտածողության զարգացման և ստեղծագործական գործունեության խթանման համար կարելի է առաջադրել համապատասխան խնդիրներ, որոնք երեխան կկարողանա լուծել ինքնուրույն: Կարելի է առաջարկվող որևէ թեմայի շուրջ երեխային առաջադրել, որ նա իր աշխատանքը կատարի հետևյալ կերպ.

1. Փոխել առարկաների չափերը՝ շատ մեծից՝ շատ փոքր:

2. Փոխել գործնական աշխատանքի կատարման ժամանակը՝ ներկա, անցյալ, ապագա:

3. Փոխել առաջադրված աշխատանքի տեղը, տարածությունը՝ տիեզերք, օվկիանոսի հատակ, այլ մոլորակ, անապատ, ջունգլի և այլն:

Կարելի է նաև առաջադրանքներ տալ հետևյալ հերթականությամբ.

1. Թղթից կտրել երկրաչափական պատկերներ: Դրանցով ստանալ պատկերներ, որոնք կենդանի կամ թռչուն են հիշեցնում: Նույնը կատարել՝ օգտագործելով այլ նյութեր՝ կտոր, կոնֆետի կամ ամսագրի գունավոր թղթեր:

2. Օգտագործելով տարբեր նյութեր (թուղթ, կտոր, պլաստիքին)՝ ստանալ ապլիկացիա:

3. Ընտրել որևէ հեքիաթ, որը երեխաներին ավելի հոգեհարազատ է, ընթերցել, առաջարկել պատրաստել իրենց դուր եկած տեսարանը, հերոսներին: Աշխատանքի ընթացքում կարելի է օգտագործել նաև մատիտ, ջրաներկ, գուաշ:

Ստեղծագործական ունակությունների և կարողությունների զարգացման համար մեծ նշանակություն ունեն *խմբակները*: Սովորողների ուշադրությունը հրավիրելով տվյալ առարկային՝ խմբակներն օգնում են ընդլայնելու աշխարհայացքը, ստեղծագործական ունակությունները, ինքնուրույն աշխատանքի հմտությունների զարգացումը: Այստեղ ամեն աշակերտ հնարավորություն է ստանում ընտրելու իրեն հոգեհարազատ գործը, բացահայտելու և լուծելու հետաքրքրող խնդիրները: Խմբակներն իրենց մեջ կարող են ընդգրկել տարբեր ոլորտներ՝ գեղարվեստական, գեղագիտական, սպորտային և ժամանցի, բնապահպանական, կենսաբանական, զբոսաշրջության, տեխնիկական դասեր: Այս գործընթացում, ստեղծագործական ունակությունների զարգացմանն ուղղված, մանկավարժական կառավարումը յուրաքանչյուր երեխայի համար իրականացվում է տարբեր կերպ՝ կախված նրա անհատականության հատկանիշի ձևավորման մակարդակից:

Ստեղծագործական կարողությունների զարգացման մակարդակը կախված է դասավանդման բովանդակությունից և մեթոդներից: Օգտագործելով ուսուցման տարբեր մեթոդներ մենք զարգացնում ենք երեխաների մտածողության ճկունությունը, սովորեցնում ենք տրամաբանել, ոչ թե խճճվել, այլ մտածել, ինքնուրույն եզրակացություններ անել, գտնել նոր ինքնատիպ մոտեցումներ, ապացույցներ և այլն:

Գրականություն

1. «Երեխայի ստեղծագործական գործունեության զարգացումը», Կրթությունը և գիտությունը Արցախում-ԼՂՀ ԿԳՆ, գլխ. խմբագիր Ռ. Մարտիրոսյան, N 3-4, 2018, էջ 57-60
2. Պապիկյան Կ., Տեխնոլոգիայի դասավանդման մեթոդիկա, Երևան, ՎՄՎ հրատ, 2019թ.
3. <https://superinf.ru/>
4. <https://infourok.ru/>

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ
ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱԶՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ**



**ՊԱՐՏԱԴԻՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ
ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՅԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ**

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**ԹԵՄԱ՝ <ՄԵՏԱՂԱՄՇԱԿՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ> ԹԵՄԱՅԻ
ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ԴԱՍԵՐԻՆ**

ԿԱՏԱՐՈՂ՝ Լուսինե Վեփիյան

ՂԵԿԱՎԱՐ՝ Կարինե Պապիկյան

ՎԱՆԱԶՈՐ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

**ԳԼՈՒԽ 1. <ՄԵՏԱՂԱՄՇԱԿՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ> թեման 5-6-րդ
դասարաններում**

1.1.Մետաղներ, հատկությունները

1.2. Թերթամետաղ, ստացումը, հատկությունները

1.3 Թերթամետաղի մշակումը

ԳԼՈՒԽ 2. Գործընթացներ և սարքավորումներ

2.1. Չափանշման և փականագործական գործընթացներ

2.2 Թերթամետաղի կտրում

2.3 Մաքրամշակում, ծռում, շաղափում

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից աշխարհում, տեխնիկայում և ամենուր լայնորեն օգտագործվում են բազմաթիվ մետ աղներ: Դժվար է պատկերացնել մեր կյանքն ու կենցաղը առանց մետաղների: Մետաղների հատկությունների և նրանց հետ աշխատելու եղանակների իմացությունը շատ կարևոր է երեխաների համար, նրանց անվտանգ կյանքի և անվտանգ ապրելակերպի համար: Շատ կարևոր են նաև այն բոլոր գործողությունները, որոնք կատարում են մետաղների և թերթամետաղի հետ՝ չափանշում, կտրում, մաքրամշակում, գոդում, շաղափում:

Աշխատանքի նպատակն է մետաղների և դրանց համաձուլվածքների հատկությունների ուսումնասիրությունը, ինչպես նաև մետաղների և թերթամետաղի հետ կատարվող գործողություններին՝ կտրել, ծռել, շաղափել ևն, տիրապետելը:

ԳԼՈՒԽ 1. <ՄԵՏԱՂԱՄՇԱԿՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ> թեմայի դասավանդումը 5-6-րդ դասարաններում

1.1.Մետաղներ, հատկությունները


Մետաղները լայն կիրառություն ունեն մարդու կյանքում: Մարդը մետաղ սկսել է մշակել շատ հին ժամանակներից, նույնիսկ մետաղների անունով անվանվել են ժամանակաշրջաններ, օրինակ՝ «Երկաթի դար», «Բրոնզի դար»: Մետաղներն ամուր են, հոսանքի և ջերմության լավ հաղորդիչներ, ունեն գեղեցիկ գունավորում և փայլ: Բնության մեջ կան շատ մետաղներ, սակայն իր նշանակությամբ առաջին տեղն է գրավում երկաթը, որը կիրառվում է համաձուլվածքների տեսքով: Երկաթի համաձուլվածքների պարտադիր բաղադրիչը ածխածինն է: Մինչև 2 % ածխածնի պարունակությամբ համաձուլվածքը կոչվում է պողպատ: Պողպատն ունի առանձնահատուկ փայլ, ջերմության և էլեկտրականության լավ հաղորդիչ է: Այն օժտված է նաև որոշակի մեխանիկական և տեխնոլոգիական հատկություններով:

Պողպատի մեխանիկական հատկություններն են՝ ամրությունը (արտաքին ազդեցություններից չքայքայվելու հատկություն), կարծրությունը (այլ մարմինների ազդեցությամբ դեֆորմացիային դիմադրելու հատկություն), առաձգականությունը (դեֆորմացվելուց հետո սկզբնական ձևը վերականգնելու ընդունակություն), պլաստիկությունը (դեֆորմացված ձևը պահպանելու հատկություն):

Պողպատի տեխնոլոգիական հատկություններն են՝ կռելիությունը (արտաքին ուժերի ազդեցությամբ նոր ձև ստանալու հատկություն), հոսունությունը (հալված վիճակում նեղ անցքերում լցվելու հատկություն), կտրմամբ մշակելիությունը (կտրող գործիքներով մշակվելու հատկություն), զոդելիությունը (զոդման միջոցով միմյանց միացվելու հատկություն):

Կենցաղում կիրառվող մետաղյա շինվածքների մեծամասնությունը պատրաստվում է ժամանակակից մետաղամշակման գործարաններում՝ հաստոցների և ավտոմատ գծերի օգնությամբ: Սակայն մետաղներից ձեռքի մշակմամբ ևս կարելի է պատրաստել բազմապիսի օգտակար իրեր: Դրա համար պետք է ճանաչել մետաղը և ճիշտ օգտագործել նրա հատկությունները, ունենալ գիտելիքներ, փորձ և ճաշակ: Այսպիսին է ձեռքի մետաղամշակման բնագավառում աշխատող բարձրորակ մասնագետը, ում անվանում են փականագործ:


Մինչև աշխատանքի սկսելը, անհրաժեշտ է կազմակերպել և կահավորել աշխատատեղը, որի հիմնական տարրը դազգահն է: Սա փականագործի աշխատասեղանն է՝ համալրված անհրաժեշտ հարմարանքներով: Արհեստանոցները սովորաբար կահավորում են փականագործական կամ կոմբինացված դազգահներով:



Նկ. 1 Կոմբինացված դազգահ

Նկար 1- ում պատկերված է կոմբինացված դազգահի տարբերակներից մեկը, որը նախատեսված է միաժամանակ և փայտի, և մետաղի մշակման համար: Այն կազմված է երկու հիմնատակից (1), որոնց վրա ամրացվում է կափարիչը (4) (դրա բարձրությունը կարելի է կարգավորել): Կափարիչի վրա ամրացվում է փականագործական մամլակը (3), սեղմակը (7) և պաշտպանիչ ցանցը (5): Դազգահի հետ կարելի է ամրացնել նաև աթոռ (2), իսկ գծագրերի համար՝ հենակալ (6):

Արդեն գիտեք, որ հարմարավետ և նվազագույն ճիգերով աշխատելու համար պետք է կարողանաք ընտրել ձեր հասակին համապատասխան դազգահ (նկ 2):



1 - ընթացքային պտուտակ,
2 - շարժական շուրթ, 3 - անշարժ շուրթ,
4 - հենասալ, 5 - բռնակ:

Նկ. 2

նկ. 3 Փականագործական մամլակ

Սա կարելի է կատարել՝ կարգավորելով դազգահի կափարիչի բարձրությունը:

Փականագործական մամլակը ծառայում է նախապատրաստվածքի ամրացման

համար: Նկ. 3-ում բերված է այդ մամլակի կառուցվածքը: Դրա կարևոր տարրը ընթացքային պտուտակն է (1), որի պտտման միջոցով մամլակի շարժական շուրթը (2) կարելի է մոտեցնել անշարժ շուրթին (3), կամ՝ հեռացնել դրանից: Մամլակն ունի նաև հենասալ (4), որով այն ամրացվում է դազգահին:

Փակնագործական աշխատանքներ կատարելիս պետք է առանձնահատուկ խնամքով վերաբերվել կահավորանքին, խնայել մետաղը և ձեր աշխատանքային ուժերը:


Շատ կարևոր է նաև պահպանել անվտանգության հետևյալ կանոնները.

- նախապատրաստվածքն ամրացնելիս չի կարելի մուրճով հարվածել մամլակի բռնակին,
- դազգահը և մամլակը տաշեղներից մաքրել հատուկ խոզանակով,
- կանոնավոր կերպով (հաճախակի) յուղել ընթացքային պտուտակը:

1.2. Թերթամետաղ, ստացումը, հատկությունները

Մետաղական նախապատրաստվածքները լինում են սալերի, ձողերի, խողովակների և այլ տեսքերով: Թերթամետաղը ստանում են նախապատրաստվածքի գլոցման միջոցով: Գլոցումը կատարվում է գլոցահաստոնի վրա, որի աշխատանքի սկզբունքը պատկերված է նկ. 6. 3-ում: Նախապատրաստվածքը (1) պտտվող հողովակների (3) օգնությամբ մատուցվում է հաստոնի երկու գրտնակներին (2), որոնք պտտվում են հակառակ ուղղություններով:

Առաջացած շփման և ճնշման ուժերի ազդեցության տակ նախապատրաստվածքն անցնում է գրտնակների արանքով, որի հետևանքով այն դեֆորմացվում և ընդունում է պահանջվող թերթամետաղի չափերը:



*1 - նախապատրաստվածք, 2 - գրտնակներ,
3 - հողովակներ:*

Նկ. 4 Թերթամետաղի ստացման սխեման

Մինչև 2 մմ հաստության թերթամետաղները համարվում են բարակ (թիթեղ են անվանում 0,2...0,5 մմ հաստությամբ թերթամետաղը), իսկ 2 մմ-ից ավել հաստության դեպքում՝ հաստ: Թերթավոր պողպատները կարող են լինել ցինկապատ և անագապատ:


Դժվար չէ նկատել, որ ձեզ շրջապատող շատ իրեր (տուփ, անոթ, թեյնիկ, ցնցուղ և այլն) պատրաստված են թերթամետաղներից:

Շատ բարակ թերթամետաղին անվանում են նրբաթիթեղ (ֆոլգա): Այլումինե նրբաթերթը, ինչպես նկատել եք, օգտագործում են կոնֆետների, թեյի և այլ սննդամթերքների

փաթեթավորման համար:

1.3 Թերթամետաղի մշակումը

Թերթամետաղի ուղղումն այն գործողությունն է, որի ժամանակ այն հարթեցվում և հավասարեցվում է: Սա շատ կարևոր է նախապատրաստվածքի հետագա ճշգրիտ չափանշման և շինվածքի որակի ապահովման համար:



Նկ. 5. Թերթամետաղի ուղղումը


Մետաղի բարակ թերթերը ուղղում են հարթ սալերի վրա թակի (փայտամուրձ) օգնությամբ (նկ. 5 ա): Թակի հարվածները սկսում են թերթի եզրից՝ աստիճանաբար մոտենալով ուռուցիկ մասերին: Մինչև 0,2մմ հաստությամբ թիթեղները կարելի է ուղղել փայտյա չորսուի օգնությամբ (նկ. 5 բ), իսկ նրբաթիթեղները սովորաբար ուղղում են բամբակյա տամպոնով:

ԳԼՈՒԽ 2. Գործիքներ և սարքավորումներ

2.1. Չափանշման և փականագործական գործիքներ

Չափանշում:

Հիշենք, որ գծանշումը պատրաստվող դետալի եզրագծերի կառուցումն է նախապատրաստվածքի վրա: Մետաղյա նախապատրաստվածքի չափանշման համար կիրառվում են հետևյալ գործիքները (նկ. 6).



Նկ. 6 Փականագործական գործիքներ

- Փականագործական քանոն (1), որի օգնությամբ չափվում են գծային չափերը և չափանշվում են եզրագծի ուղիղ գծերը:

- Գծիչներ (2), որոնց սուր եզրերով խազվում են անհրաժեշտ գծերը:

- Փականագործական անկյունակ (3), որի օգնությամբ չափանշվում են միմյանց ուղղահայաց և զուգահեռ գծերը:

- Չափանշման կարկին (4), որի օգնությամբ չափանշվում են շրջանագծերը կամ աղեղները:

6 - Կետանշիչ (5), որի միջոցով նշվում են եզրագծի կարևորագույն կետերը, օրինակ՝ շրջանագծերի կենտրոնները:


Չափանշումը կատարվում է ելնելով դետալի գծագրից կամ նախապես պատրաստված ձևանմուշի օգնությամբ: Ըստ գծագրի չափանշումը սկսում են այն հիմնական գծի կառուցումից, որի նկատմամբ տրված են եզրագծի մյուս չափերը:

Մի քանի միատեսակ դետալներ չափանշելիս ձեռնտու է օգտագործել ձևանմուշ:

Արտադրության պայմաններում ձևանմուշները պատրաստում են փականագործագործիքագործները:

2.2 Թերթամետաղի կտրում

Թերթամետաղը կտրում են տարբեր տեսակի մկրատներով: Գործարաններում կիրառվում են մեխանիկական մկրատներ, իսկ արհեստանոցներում՝ ձեռքի փականագործական մկրատներ: Ուղիղ կամ փոքր կորության գծերով կտրելու համար կիրառվում են ուղիղ կտրող եզրերով մկրատները (նկ. 7 ա), իսկ ձևավոր նախապատրաստվածքներ կտրելու համար՝ կոր կտրող եզրերով մկրատները (նկ. 7 բ):



Նկ. 7 Փականագործական մկրատներ.


1-կտրող եզրեր, 2- նախապատրաստվածք

Այսպիսի մկրատներով թերթամետաղի կտրման սկզբունքը պատկերված է նկ. 7գ-ում: Կարելի է նկատել, որ կտրումը կատարվում է մկրատի կտրող եզրերի (1) ճնշման տակ՝ մետաղի (2) դեֆորմացման հետևանքով:

Կտրումը կարելի է իրականացնել անմիջականորեն դազգահի սեղանի վրա ձեռքով

(նկ. 8ա), կամ՝ մկրատի բռնակներից մեկը ամրացնելով մամլակում (նկ. 8բ): Կտրման ժամանակ մկրատի կտրող եզրը պետք է ուղղված լինի չափանշման խազի ուղղությամբ:

Նախապատրաստվածքը պետք է հուսալիորեն բռնել և ձեռքը չվնասելու համար անպայման օգտագործել ձեռնոց



ա) դազգանի վրա, բ) մտնյակում մկրատի ամրացմամբ, գ) հարմարանքի օգնությամբ:

Նկ. 8. Կտրման եղանակները

Արհեստանոցում թերթամետաղի կտրման համար հաճախ օգտագործում են հարմարանքներ: Դրանց տարբերակներից մեկը բերված է նկ. 6. 7ա-ում: Այն պարունակում է տարրեր՝ նախապատրաստվածքի ամրացման համար և ունի այն առավելությունը, որ թերթամետաղը նրանում կարելի է նախապես ամրացնել այնպես, որ կտրման գիծը համընկնի հարմարանքի անշարժ կտրող եզրի հետ: Ուստի այս հարմարանքի կիրառումը մեծացնում է կտրման ճշտությունը:

2.3 Մաքրամշակում


Կտրումից հետո նախապատրաստվածքը մաքրամշակվում է, այսինքն կատարվում է կրկնական ուղղում, սուր եզրերի բթացում և չափերի ստուգում:

Կտրումից հետո առաջացած ծլեպների հեռացումը և սուր եզրերի բթացումը կատարվում է տարբեր տեսակի խարտոցներով: Այս գործողությունը կատարելիս նախապատրաստվածքն ամրացնում են մամլակում այնպես, որպեսզի այն մամլակի շուրթերից դուրս մնա 5...8մմ-ից ոչ ավել: Վերջնական մաքրամշակումն իրականացվում է հղկաթղթերի միջոցով:

Ծռում

Նախապատրաստվածքը ծռելով կարելի է ստանալ տարբեր ձևեր: Ծռման միջոցով են պատրաստվում կենցաղային շատ իրեր, օրինակ՝ դույլ, մետաղյա տուփ, գոգաթիակ, տաշտակ և այլն:

Ոչ մեծ երկարության թերթամետաղի բարակ նախապատրաստվածքը կարելի է ծռել՝ այն ամրացնելով մամլակում այնպես, որպեսզի ծռման գիծը ճշտորեն համընկնի մամլակի շուրթերի վերին եզրերի հետ: Ծռում են թակի օգնությամբ (նկ. 9ա) կամ մուրճի և փայտյա չորսվակի օգնությամբ (նկ. 9բ):




ա) - քակի միջոցով, բ) - չորսուի և մուրճի օգնությամբ:

Նկ. 9. Թերթամետաղի ծռումը մամլակում:

Շաղափում


Անցքերը մետաղներում ստանում են շաղափման (գայլիկոնման) եղանակով: Այն կարելի է իրականացնել ձեռքի շաղափիչների, էլեկտրական գայլիկոնիչների օգնությամբ, կամ շաղափիչ (գայլիկոնման) հաստոցների վրա: Փայտամշակման աշխատանքների ժամանակ դուք ծանոթացաք ձեռքի շաղափիչի կառուցվածքի և կիրառման ձևերի հետ:

Նույն ձևով է կիրառվում նաև էլեկտրական գայլիկոնիչը (նկ. 10), միայն այն տարբերությամբ, որ այստեղ պտտողական շարժումն աշխատանքային մասին (3) է հաղորդվում ոչ թե ձեռքով, այլ էլեկտրաշարժիչի (1) օգնությամբ, որի աշխատանքը կարգավորվում է կառավարման կոճակների (2) օգնությամբ:



*1 - շարժիչ մաս
2 - կառավարման կոճակներ
3 - աշխատանքային մաս*

Նկ. 10. Էլեկտրական գայլիկոնիչ:



Նկ. 11. Գայլիկոնման հաստոց:

Ավելի հաստ մետաղյա նախապատրաստվածքներում անցքերի մշակման համար արհեստանոցներում կիրառվում է գայլիկոնման հաստոցը, որի ընդհանուր տեսքը պատկերված է նկ. 11-ում: Անցքերի որակյալ մշակման համար անհրաժեշտ է օգտագործել լավ սրված շաղափներ, իսկ բարակ թերթամետաղների շաղափման դեպքում պետք է օգտագործել փայտյա տակդիրներ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հովսեփյան և ուրիշներ, Տեխնոլոգիայի դասագրքեր 5-7-րդ դդ.,
2. Սողոմոնյան Կ., Տեխնոլոգիայի դասագրքեր 5-7-րդ դդ.,
3. [https://hy.wikisource.org/wiki/%D4%B7%D5%BB:%D5%80%D5%A1%D5%B5%D5%AF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%8D%D5%B8%D5%BE%D5%A5%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%80%D5%A1%D5%B6%D6%80%D5%A1%D5%A3%D5%AB%D5%BF%D5%A1%D6%80%D5%A1%D5%B6_\(Soviet_Armenian_Encyclopedia\)_7.djvu/476](https://hy.wikisource.org/wiki/%D4%B7%D5%BB:%D5%80%D5%A1%D5%B5%D5%AF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%8D%D5%B8%D5%BE%D5%A5%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%80%D5%A1%D5%B6%D6%80%D5%A1%D5%A3%D5%AB%D5%BF%D5%A1%D6%80%D5%A1%D5%B6_(Soviet_Armenian_Encyclopedia)_7.djvu/476)

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ
ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱԶՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ**



**ՊԱՐՏԱԴԻՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ
ԵՆԹԱԿԱ**

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**ԹԵՄԱ՝ ԿԱԹԵԿՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՏԱԿՆԵՐԸ,
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԵՐԱԿՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ
ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ**

ԿԱՏԱՐՈՂ՝ ԱՐՄԻՆԵ ՄԱԹՈՍՅԱՆ

ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԻՆԵ ՊԱՊԻԿՅԱՆ

ՎԱՆԱԶՈՐ 2023

Բովանդակություն

Ներածություն.....	3
Գլուխ 1. Կաթնամթերքների տեսակները և դրանց նշանակությունը սննդում	
1.1 Կաթով, կաթնամթերքներով կերակրատեսակների պատրաստումը	4
1.2 Կերակրատեսակների պատրաստման առանձնահատկությունները 6-րդ դասարանում.....	11
1.3 Կաթնամթերքի դերն ու նշանակությունը քաղցրավենիքի ոլորտում.....	13
Գլուխ 2. Հետազոտական աշխատանք	
Դասի պլան.....	14
Եզրակացություն.....	15
Գրականություն.....	16

Ներածություն

Թեման արդիական է, քանի որ անհրաժեշտ է դպրոցական տարիքից աշակերտներին սովորեցնել կաթնամթերքների նշանակությունը և կարևորությունը սննդում:

Նպատակը՝ ուսումնասիրել 6-րդ դասարանում կաթնամթերքների պատրաստման տեխնոլոգիան, առանձնահատկությունները, ինչպես նաև առաջարկել ժամանակակից դասապլանի մշակման օրինակ:

Խնդիրներ.

1. Ուսումնասիրել և վերլուծել կաթի և կաթնամթերքի պատրաստման տեխնոլոգիային վերաբերող գրականություն, չափորոշիչներ, ծրագրեր, դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ և այլն:
2. Ստեղծել ԽԻԿ դասի պլանի նմուշ-օրինակ՝ կաթնամթերքների պատրաստման վերաբերյալ
3. Ուսումնասիրել էլեկտրոնային նյութեր՝ թեմայի շրջանակներում:

Գլուխ 1. Կաթնամթերքների տեսակները և դրանց նշանակությունը սննդում

1.1 Կաթնամթերքների տեսակները և դրանցով կերակրատեսակների պատրաստումը

Կաթնամթերք, կաթնաթթվային մթերքներ են թթվասերը, կաթնաշոռը, մածունը, ացիդոֆիլինը, թանը, չորթանը, կեֆիրը, սերուցքը, յուղազրկված կաթը, շիճուկը և այլն:

Կաթ Կաթն իր մեջ պարունակում է մեծ քանակությամբ օգտակար նյութեր, որոնք անհարժեշտ են օրգանիզմի աճի և զարգացման համար: Կաթն իր բաղադրության մեջ ներառում է ավելի քան 100 օգտակար բաղադրիչներ, որոնցից մոտավորապես 20-ը հավասարակշռված և ճարպային ամինոթթույններ, կաթնաշաքար՝ լակտոզա և հանքանյութեր են: Կախված ազգերի ավանդույթներից և պատմականորեն ձևավորված նախասիրություններից սննդի մեջ օգտագործում են այծի, կովի, ուխտի, ավանակի, գոմեշի, ոչխարի, զեբրի, եղնիկի և նույնիսկ խոզի:



Կաթը և կաթնամթերքները օգտագործում են ոչ միայն որպես սննդամթերք, այլ նաև կանխարգելիչ և բուժիչ միջոց:

Ինչո՞վ է վնասակար կաթը.

Եթե կաթն անհատապես տհաճ չէ կամ մարդը դրանից ալերգիա չունի, այն սկզբունքորեն անվնաս է: Սակայն պետք է հիշել, որ եթե կաթը հիվանդ կենդանու է, մի շարք բավական լուրջ վարակիչ հիվանդություններով վարակվելու ռիսկ կա՝

պայմանավորված աղիքային բակտերիաներով, ստրեպտոկոկով, ստաֆիլոկոկով, սալմոնելայով եւ մի շարք այլ բակտերիաներով: Ուստի ցանկալի է եփած կամ պաստերիզացված կաթ խմել, բայց ոչ մի դեպքում՝ ոչ հում: Բացի դրանից՝ պետք է հիշել, որ ամեն ինչ չափի մեջ է գեղեցիկ, եւ կաթը, ինչպես եւ ցանկացած այլ մթերք, չարաշահել պետք չէ:

Կովի կաթ – Համեմատաբար ավելի տարածված է Եվրոպական երկրներում, Ամերիկայում, Ավստրա-լիայում: Կովի կաթի մեջ առկա սպիտակուցները հեշտությամբ մարսվում են, իսկ սննդարարությամբ 1 լիտր կովի կաթը կարելի համեմատել 500 գրամ մսի հետ: Այն պարունակում է նաև մարդու օրգանիզմի համար անհրաժեշտ կալցիումի մեկ օրվա չափաբաժինը: Կովի կաթի նկատմամբ ալերգիկ դրսևորումներ ի հայտ գալու դեպքում բժիշկները խորհուրդ են տալիս օգտագործել այծի կաթ:

Այծի կաթ – Սա ըստ էության տարածված է ամբողջ երկրագնդով մեկ: Այծի կաթից պատրաստում են յոգուրտ, պանիր, կարագ, կեֆիր, պաղպաղակ, ինչպես նաև ավելացնում են շոկոլադի մեջ: Այծերի նկատմամբ ավելի շատ խնամքի անհարժեշտության և ավելի քիչ կաթի կթման պատճառով այս կաթը գործարանային արտադրություններում գրեթե չի օգտագործվում ի տարբերություն կովի կաթի: Կովի կաթի հետ համեմատած այն ուն նաև յուրահատուկ համ և հոտ, որը ստացվում է այծի պտուկների յուղային մասերից: Այծի կաթի գլխավոր առանձնահատկությունն այն է, որ կաթի սերը համաչափ բաշխված է ամբողջ ծավալում:

Գոմեշի կաթ – Գոմեշի կաթն օգտագործվում է ֆերմենտացված կաթնամթերքի արտադրության մեջ, մասնավորապես՝ մացառելա պանրի: Կաթի այս տեսակը գրեթե չի պարունակում կազեին, բայց այն կովի կաթի հետ համեմատ պարունակում է ավելի շատ սպիտակուցներ, ճարպեր, հանքանյութեր և վիտամիններ:

Ոչխարի կաթ – Ոչխարի կաթը պարունակում է վիտամիններ B1, B2 և A, որոնք 2-3 անգամ ավելի շատ են քան կովի կաթի մեջ: Այս կաթից պատրաստում են կեֆիր, կարագ, պանիր, մածուն:

Էներգետիկ արժեքը 100 գրամում (համեմատական աղյուսակ)

	Կովի	Գոմեշի	Այծի	Ոչխարի
Կալորիականություն (կկալ)	62	106	69	108
Ճարպեր (%)	3,8	7,7	4,3	6,7
Սպիտակուցներ (%)	3,3	4,5	3,3	5,8
Ջուր (%)	87,5	82,3	86,6	81,8
Այրվացքային մնացորդ (%)	0,7	0,8	0,8	0,9
Կաթնային շաքար (%)	4,7	4,7	4,9	4,8
Լակտոզա (%)	4,7	5	4,9	4,6
Չոր նյութեր (%)	12,7	17,8	18,4	18,2
Թթվայնություն (°T)	16-18	19-20	16-18	22-25

Կաթը մեր կենցաղում

Էներգետիկ արժեքը 100 գրամում (համեմատական աղյուսակ)

	Կովի	Գումեշի	Այծի	Ոչխարի
Կալորիականություն (կկալ)	62	106	69	108
Ճարպեր (%)	3,8	7,7	4,3	6,7
Սպիտակուցներ (%)	3,3	4,5	3,3	5,8
Ջուր (%)	87,5	82,3	86,6	81,8
Այրվացքային մնացորդ (%)	0,7	0,8	0,8	0,9
Կաթնային շաքար (%)	4,7	4,7	4,9	4,8
Լակտոզա (%)	4,7	5	4,9	4,6
Չոր նյութեր (%)	12,7	17,8	18,4	18,2
Թթվայնություն (°T)	16-18	19-20	16-18	22-25

Կաթը մեր կենցաղում

Էներգետիկ արժեքը 100 գրամում (համեմատական աղյուսակ)

	Կովի	Գումեշի	Այծի	Ոչխարի
Կալորիականություն (կկալ)	62	106	69	108
Ճարպեր (%)	3,8	7,7	4,3	6,7

Սպիտակուցներ (%)	3,3	4,5	3,3	5,8
Ջուր (%)	87,5	82,3	86,6	81,8
Այրվացքային մնացորդ (%)	0,7	0,8	0,8	0,9
Կաթնային շաքար (%)	4,7	4,7	4,9	4,8
Լակտոզա (%)	4,7	5	4,9	4,6
Չոր նյութեր (%)	12,7	17,8	18,4	18,2
Թթվայնություն (°T)	16-18	19-20	16-18	22-25

Կաթը մեր կենցաղում

- *Թարմ կաթ* – Սա հենց նոր կթված կաթն է, որը դեռ չի սառել: Որքան էլ պարադոքսալ հնչի, թարմ կաթը պարունակում է բավականին մեծ քանակությամբ աղիքային բակտերիաներ, դրա համար էլ բժիշկները խորհուրդ են տալիս խմել կաթը կթելուց 2 ժամ հետո, հատկապես մինչև 1 տարեկան երեխաներին: Այդ ընթացքում բակտերիաների մեծ մասը մահանում են:
- *Եփված կաթ* – Այսպիսի կաթը ենթարկված է ջերմամշակման 95 C ջերմաստիճանում 3-4 ժամ, որի ընթացքում կաթը չպիտի հասնի եռման ջերմաստիճանի և եռա:
- *Կաթի փոշի* – Սպիտակ փոշի, որը արտադրվում է կաթի գոլորշիացման միջոցով:

- *Պաստերիզացված կաթ* – Այսպիսի կաթը տաքացվում է մինչև 75 C աստիճան: Նման մշակումը թույլ է տալիս կաթին չփչանալ 2 շաբաթ:
- *Մտերիլիզացված կաթ* – Կաթը ենթարկվում է մինչև 145 C աստիճան ջերմամշակման: Այս դեպքում մահանում են բոլոր միկոբներն ու բակտերիաները, սակայն կաթի օգտակար հատկություններն էլ են պակասում:
- *Խտացրած կաթ* – Այսպիսի կաթը ստացվում է կաթի եռացման՝ գոլորշիացման միջոցով մինչև ստացվի խիտ զանգված: Ընթացքում ավելացվում է նաև շաքար:

Խոհարարության մեջ կաթն օգտագործում են սոուսների, շիլաների, թխվածքների, մարինադների, կոկտեյլների, սուրճով ըմպելիքների և այլ ճաշատեսակների պատրաստման ժամանակ:

Սերուցքը բարձր յուղայնության կաթնամթերք է, որը ստանում են կաթի գտմամբ: Սերուցքով պատրաստում են տարբեր ուտեստներ, առավել հաճախ՝ քաղցր կերակրատեսակներ և ըմպելիքներ: Օգտագործում են նաև որպես բուժական սնունդ: Սերուցքը խնոցիով հարելով կարելի է ստանալ կարագ և թան:

Թթվասեր

Թթվասերը պատրաստում են պաստերացրած և սառեցրած սերուցքը կաթնաթթվային բակտերիաներով թթվեցնելով: Թթվասերով համեմում են որոշ կերակրատեսակներ, օգտագործում են քաղցր կերակրատեսակներ և խմորեղեն պատրաստելիս:

Կաթնաշոռ

Կաթնաշոռը պատրաստում են՝ անարատ կամ պաստերացրած կաթը թթվեցնելով և շիճուկը հեռացնելով: Կաթնաշոռը լինում է յուղալի, կիսայուղալի և յուղազերծված: Կաթնաշոռի սպիտակուցում պարունակվում են օրգանիզմին անհրաժեշտ ամինաթթուներ, որոնց շնորհիվ այն բացառիկ արժեքավոր սննդամթերք է: Այն հարուստ է ոսկրերի աճի, արյունագոյացման, սրտի և նյարդային համակարգի գործունեության համար անհրաժեշտ կալցիումի և ֆոսֆորի աղերով: Օգտագործում են նաև որպես բուժական սնունդ:



Մածուն

Մածունը թթու կաթնամթերք է: Առաջինը պատրաստել են Հայկական լեռնաշխարհում. այն համարվում է զուտ հայկական ուտեստ: Մածունը ստանում են եռացրած և հովացրած (մինչև 40–45օC) կաթը մերելով. հիմնականում որպես մերան օգտագործվում է պատրաստի մածունը, դրա չլինելու դեպքում՝ մակարդախոտը: Թունավորումների դեպքում մածունն օգտագործվում է նաև որպես դեղամիջոց:

Նարինե

«Նարինեն» սննդային հավելում է, որը պատրաստում են կաթը մանրէաբան Լ. Հ. Երզնկյանի առաջարկած մանրէներով թթվեցնելով: Օգտագործվում է սալմոնելոզի, դիսբակտերիոզի, գաստրիտի ժամանակ,

սակայն վերջինիս էֆեկտիվությունն ապացուցված չէ: «Նարինեն» պատենտավորված է, արտադրվում է նաև արտերկրում, օրինակ՝ Ճապոնիայում, Ուկրաինայում և այլուր:

Կարագը ստացվում է սերուցքի կամ խնոցիացված կաթի խմորումից: Այն օգտագործում են որպես բուրբ հացի վրա՝ բուտերբրոդներ, կրեմ, պաղպաղակ և զանազան ուտեստներ պատրաստելիս: Այն հալեցնելով ստանում են հալած յուղ:



Չորաթան կամ չորթանը
թեթև թթվաշ համով
կաթնամթերք է, որը ստանում
են թանգիֆով քամած
մածուինը գնդաձև չորացնելով
և օգտագործում են տարբեր
կերակրատեսակներ

պատրաստելիս:

Չորաթանով ուտեստներ՝



Պանիրը պատրաստում են կովի, ոչխարի, այծի կաթից կամ դրանց խառնուրդներից: Դրա արտադրությունը բաղկացած է կաթի պաստերացման, մակարդման և մի շարք այլ գործողություններից: Պանրի մեջ գտնվող սննդանյութերը գրեթե լիովին յուրացվում են օրգանիզմում: Լինում են պինդ, կիսապինդ, փափուկ, աղաջրային և հալած:

1.2 Կերակրատեսակների պատրաստման առանձնահատկությունները 6-րդ դասարանում



ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

6-8բաժին

400 գ սերուցքային կարագ

1 1/2 բաժակ քերած պանիր 1 պճեղ սխտոր մանր կտրատած

Աղ և սև պղպեղ

կանաչի, մեխակ, սև հաց , սև ձիթապտուղ գազար

ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

խոհանոցային կոմբայնի մեջ կտրատեք պանիրը (մի քիչ պահել զարդարանքի համար) , 1/5 բաժակ քերած պանիրը սխտորը (ըստ ճաշակի) աղը լավ խառնել , սատցված մասսայից սարքել գնդիկներ և թողնել սառնարանում: Սառչելուց հետո գնդիկները թաթախեք քերած պանրի մեջ, շարեք գնդիկներ իրար վրա այնպես , որ ստացվի ձևեմարդ:

Հացը կտրեք շրջանակներով գլխարկը ստանալու համար, հացի կտորները կպցրեք հալաց պանրով:Աչքերը և կորճակները ստանալու համար օգտագործեք ձիթապտուղ, իսկ վզնոցի համար կանաչի և մեխակ օգտագործեք:

2-րդ տարբերակը կարող էք պատրաստել իրար խառնելով սխտորը , հալած պանիրը և սև հացի փշրանքները, մնացածը թողնելով նույնը:
Բարի ախորժակ

Սպաս,թանապուր

Բաղադրիչներ

Ձավար - 200 գ

Մածուն - 500 գ

Ջուր - 1,5 լիտր

Չու - 1 հատ

Այուր - 100 գ

Համեմ - 1փունջ

Կարագ - 100 գ

Աղ

Պատրաստման եղանակը

Ձավարը եփել աղաջրի մեջ, մինչև փափկի:

Էմալապատ կաթսայի մեջ ձուն խառնել այուրի հետ, ավելացնել մածունն ու ջուրը, ավելացնել եփած ձավար: Եփել անընդհատ խառնելով մինչև

եռալը: Ավելացնել աղ, կարագ և թարմ կտրատած համեմ:

Կաթնայի շիլաներ

Կաթնային շիլաներն իրենցից



ներկայացնում են մածուցիկ շիլաներ, որոնցում ձավարեղենի հատիկները պետք է լիովին ուռչած և լավ եփված լինեն: Եփելուց առաջ ձավարեղենը ընտրում են, մաղում են և լվանում:

Կաթնային շիլա բրնձե

Պատրաստման տեխնոլոգիա

Եռացող ջրի մեջ լցնում են նախապատրաստած բրինձը և պարբերաբար խառնելով եփում 20րոպե: Դրանից հետո ավելացնում են տաք կաթը, աղը, շաքարավազը և շարունակում են եփել, մինչև պատրաստ լինելը: Տաք շիլան մատուցում են կարագով:



Կաթնամթերքի դերն ու նշանակությունը քաղցրավենիքի ոլորտում

Սալորաչրով տորթը պատրաստված է նուրբ սերուցքային կրեմով, միջուկի մեջ ավելացված է սալորաչիր, պանիր և ընկույզ: Այս օրիգինալ թխվածքը ունի հիանալի համ:

Բաղադրություն՝ Սալորաչիր, շաքար, հավի ձու, խտացրած կաթ, ցորենի ալյուր բ/տ, ընկույզ, թթվասեր, մարգարին, սերուցքային կարագ, խմելու ջուր, չոր անարատ կաթ, փխրեցուցիչ՝ սոդա սննդային: Սալորաչրով տորթը պատրաստված է նուրբ սերուցքային կրեմով, միջուկի մեջ ավելացված է սալորաչիր, պանիր և ընկույզ: Այս օրիգինալ թխվածքը ունի հիանալի համ:

Թռչնի կաթ

Թռչնի կաթ շատ համեղ Տորթեր է և կարելի է մատուցել Ամանորյա սեղաններին: Ինչպես պատրաստել թռչնի կաթ

Խմորի համար ձուն, շաքարավազով լավ հարել, ավելացնել մեղրը, կաթը, կարագը, քացախը, սոդան: Այս խառնուրդը լցնել էմալապլաստ հարմար ամանի մեջ և գոլորշու վրա եփել այնքան, մինչ շաքարավազը հալվի (10-15 րոպե): Ապա ավելացնել 3,5 բաժակ այլուր: Խմորը բաժանել 3 մասի, գրտնակել և առանձին-առանձին թխել ջեռոցում, մինչ վարդագույն դառնալը: Պատրաստի շերտերը միացնել կրեմով: Վերջին շերտը ծածկել գլազուրով:

Կրեմի համար կաթը, շաքարավազով հարել, ավելացնել այլուր, նորից լավ հարել և դնել մարմանդ կրակին: Անընդհատ խառնել մինչ պատրաստ լինելը: Ապա վերցնել կրակի վրայից և թողնել սառչի: Սառը վիճակում հարիչով լավ հարել, ավելացնել վանիլին և մեկ ճաշի գդալ կոնյակ: Առանձին հարել կարագը մինչ սպիտակելը: Կարագի վրա գդալ-գդալ ավելացնել եփված կրեմը (անընդհատ հարելով):



Հետազոտական աշխատանք

Օրվա դասի պլանի նմուշ-օրինակ

Օրվա դասի պլան

Դասարան՝ 6-րդ

Առարկա՝ տեխնոլոգիա

Թեմա՝ Կաթի օգտակար հատկությունները

Դասի տիպը՝ ամրապնդման

Նպատակը՝

- Ամրակայել կաթի և կաթնամթերքի մասին ունեցած գիտելիքները
- Ջարգացնել և ընդլայնել կաթի օգտակար հատկությունների մասին պատկերացումները:
- Ջարգացնել տրամաբանելու, քննարկելու կարողությունները:

Վերջնարդյունքը՝

- Լինի տեղեկացված, կարողանա բացատրել օգտակար հատկությունները:
- Կարողանա նշել խոհանոցային այն ոլորտները, որտեղ օգտագործվում է կաթը և կաթնամթերքը:
- Կարողանա առանձնացնել կաթնամթերքի տեսակները, դրանց օգտակարությունը:

Առաջնային կոմպետենցիա

- Մշակութային
- Սովորել-սովորելու

Երկրորդային կոմպետենցիա

- սոցիալական
- ինքնուրույնության

Մեթոդներ, հնարներ

Հարց ու պատասխան, զրույց, մտազրոհ

Եզրակացություն

Թեմայի ուսումնասիրության ընթացքում զարգացավ ոչ միայն աշակերտների բանավոր խոսքը, այլ նաև ամրապնդվեց փոխհամագործակցային մթնոլորտը: Սովորողները խմբային աշխատանքի ժամանակ կարողացան գործնականորեն ներկայացնել կաթնամթերքի տեսակները, նշանակությունը սննդում և կերակրատեսակների պատրաստումը: Խոհանոցային սենյակում կարողացան կաթից պատրաստել թխվածքաբլիթներ և տորթեր:



Գրականության ցանկ

1. Ս. Հովսեփյան, Ա. Հարությունյան, Մ. Աղաջանյան, Լ. Վերդյան
2. Ս. Հովսեփյան, Ուսուցչի ձեռնարկ, 5-7-րդ դասարանների համար

3. ՀՀ ԿԳՆ, Բաղադրատոմսերի գիրք, դպրոցական սննդի համար, Երևան 2017
4. <https://168.am/2013/03/31/203513.html>
5. <https://hy.wikipedia.org/wiki/%D4%BF%D5%A1%D5%A9>
6. <https://aqlor.am/%D5%AF%D5%A1%D5%A9-%D5%B4%D5%A9%D5%A5%D6%80%D6%84%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB-%D5%B0%D5%A1%D5%B6%D6%80%D5%A1%D5%A3%D5%AB%D5%BF%D5%A1%D6%80%D5%A1%D5%B6/>

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների
վերապատրաստման դասընթացներ

ՇԱՀԻՆՅԱՆ ԱՆԱՀԻՏ

Թեմա՝ Հայկական գորգեր և կարպետներ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ղեկավար՝ Մանկավարժական գիտությունների
Թեկնածու, դոցենտ Կարինե Պապիկյան

ՎԱՆԱԶՈՐ-2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	3
1. Հայկական գորգեր և կարպետներ	
1.1 Գորգագործության ծագումն ու զարգացումը.....	
1.2 Կարպետագործության ծագումն ու զարգացումը.....	6
1.3 Հայկական գորգերի տեսակները.....	10

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայ կինը հայ ընտանիքի, տան հիմքն է, սյունն է, և պատահական չէ, որ այդ տաճարի հիմքի վրա կառուցվում է հայկականությունը և հայ լինելու կարևորագույն խնդիրը: Այդ 4 սյուններն են՝ հայ ընտանիք, հայ կրթություն և հայ դպրություն, հայ մշակույթ և հայ հավատք, որոնց հիմքում շաղախված է հայ կնոջ կերպարն ու ինքնագոհությունը՝ իր ընտանիքին, իր ազգին և հայրենիքին:

Գորգագործությունն ու կարպետագործությունը հայ ժողովրդի հնագույն ու սիրված արհեստներից է: Այն իր ուրույն տեղն է գրավել մշակույթի համընդհանուր գանձարանում, մշակվել, պահպանվել ու կատարելության է հասել հայուհիների շնորքի ու կարողությունների շնորհիվ: Այդ գեղջկական պարզ գործվածք մատչելի էր սոցիալական բոլոր խավերին:

Կարպետ գործել են և մեծերը, և փոքրերը: Գործել են կիսամութ խրճիթներում և ցուրտ բնակարաններում և հիմնականում ձմռան ամիսներին, քանի որ ամռանը կանայք զբաղվում էին այլ գործերով: Գործելիս իրենց հոգսերն են կիսել ճախարակի, իլիկի հետ և վարժ ձեռքերի արագ շարժումներով ստեղծել նրբահյուս կարպետներ:

Կարպետը, գորգը բրդյա կամ բամբակյա հաստ գործվածք է (խավով կամ առանց խավի), որը փռում են հատակին, թախտին, աստիճաններին ու միջանցքներում, կախում մահճակալներին կից պատին և այլն:

Արևելքի երկրների ժողովուրդների պատմամշակութային ժառանգության մեջ վաղուց ի վեր կարևորված է գորգագործական մշակույթը: Գորգը՝ որպես գունաերանգային, զարդանախշային, խորհրդաբանական ու յուրահատուկ այլ հատկանիշներով օժտված երևույթ, գեղարվեստական մեծ արժեք է կրում: Լինելով տվյալ էթնիկական հանրույթի ինքնուրույն ներկայացնող տարր, այն իր մեջ կրում է տվյալ ժողովրդի աշխարհաճանաչողությունն ու աշխարհընկալումը: Որպես այդպիսին գորգը կարևոր պատմամշակութային սկզբնաղբյուր է այդ հանրույթի նյութական ու ոչ նյութական պատմության ուսումնասիրման համար: Արևելյան գորգերը՝ մասնավորապես առաջավորասիականները, առևտրականների կողմից ավանդաբար տարբերակվել են գորգի առևտրով հայտնի քաղաքների, տարածաշրջանների ու դրանցում բնակվող ժողովուրդների անվանումներով:

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԳԵՐ ԵՎ ԿԱՐՊԵՏՆԵՐ

ԳՈՐԳԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Հայկական լեռնաշխարհը գորգագործության հնագույն կենտրոններից է: Հայկական գորգ կամ կարպետը տարբեր ժամանակներում և տարածաշրջաններում ունեցել է տարբեր անվանումներ: Հայ գրականության մեջ կարպետ բառը հանդիպում է 5-րդ դարից՝ Աստվածաշնչի թարգմանության մեջ: Դարերի ընթացքում «կարպետ» բառը գրականության մեջ նաև գորգի հոմանիշ է եղել: Ուշագրավ է նաև գորգի մեկ այլ անվանումը՝ խալի կամ գալի, որը ծագում է Կալիկալա՝ Կարին քաղաքի արաբերեն անվանումից, քաղաք, որը հայտնի է եղել իր հարուստ գորգարվեստով: Միջնադարյան հայ գրականության մեջ հանդիպում է գորգի ևս մեկ հոմանիշ՝ բազմական, «բազմել» բառից:

Հայկական գորգերը ներդաշնակ գունավորումներ են ունեցել շնորհիվ կարմիրի, սպիտակի, կապույտի, կանաչի, դեղինի և դրանց տարատեսակների: Դեղին գույնը ստացել են դեղնածաղկից, կարմիր գույնը՝ որդան կարմիրից, ինչպես նաև տորունի արմատներից, կանաչ գույնը՝ ընկույզի կեղևներից, որից կարելի էր ստանալ նաև շագանակագույնի երանգները: Նռան կեղևից ստացել են սև գույնը, կապույտ գույն ստանալու համար օգտագործել են տարբեր բույսերից ստացված ներկերն իրար խառնելու տեխնոլոգիան, բայց հիմնականում Հնդկաստանից ներկրվում էր ինդիգո հայտնի ներկանյութը: Միջնադարում հայկական գորգերի հռչակը մեծապես պայմանավորված էր որդան կարմիրից ստացված երանգներով, և դրա շնորհիվ արաբական խալիֆաթի դարաշրջանում հայկական գորգերն անվանում էին նաև «կարմիր գորգեր»:

Հայկական գորգերի առանձնահատկություններից էր նաև, որպես հումք օգտագործվող «բալբաս» տեսակի ոչխարի բուրդը, ինչպես նաև լայն տարածում ունեցող անգորյան այծի բուրդը: Այն շրջաններում, որտեղ զարգացած էր բամբակի և մետաքսաթելի մշակումը, լայնորեն կիրառվում էր նաև բամբակ և մետաքսաթել:

Հայկական գորգերի գլխավոր առանձնահատկությունը դրանց զարդանախշերն են, քանի որ դրանցից և ոչ մեկը հենց այնպես հյուսված չէ, ամեն զարդանախշ ունի իր

նշանակությունը և իմաստը: Հայկական գորգերը իրենց մեջ կրում են մեծ քանակությամբ ծիսական, պատկերային և գաղափարական զարդանախշեր: Հայկական գորգերում օգտագործված զարդանախշերը լայնորեն կիրառվել են նաև քանդակագործության, մանրանկարչության, ճարտարապետության, արծաթագործության մեջ:

Հայկական գորգերի թերևս ամենատարածված տեսակը վիշապագորգն է: Հայկական լեռնաշխարհի տարածված խորհրդանիշներից են վիշապները և միշտ չէ, որ վիշապները խորհրդանշել են չարը և չարիքը: Վիշապը խորհրդանշում էր լույ տարերքը, որը կարող էր լինել և՛ չարը, և՛ բարին: Այդ է պատճառը, որ հայկական գորգերի մի ամբողջ ենթատեսակ կրում է հենց վիշապագորգ անունը: Վիշապապատկերները միանգամայն բարի ուժերի մարմնացումն են և պաշտպանող և օժանդակող նշանակություն ունեին: Վիշապագորգերի գեղազարդման ավանդույթների ակունքները հայոց գորգարվեստում ու առհասարակ մշակութային համակարգում հայտնի են մ.թ.ա III-II հազարամյակներից:

Վիշապագորգերը սովորաբար ունենում են վիշապների, Կենաց ծառի, փյունիկի պատկերներ, նաեւ եռանկյունաձեւ, ատամնավոր շեղանկյունով և հավերժության նշանով զարդանախշեր: Վիշապագորգերը սովորաբար ներկվել են որդան կարմիրով: Վիշապագորգերը հայերի համար ուրույն նշանակություն ունեն: Այն հաղթության խորհրդանիշ է: Հայոց ռազմի ու զորության Աստծուն՝ Վահագնին վիշապաքաղ են ասում, այսինքն՝ վիշապին՝ չարին, քաղող, սանձող, հնազանդեցնող: Հայերը հավատում էին, որ եթե տանը վիշապագորգ ունեն, ուրեմն պաշտպանված են չար ուժից, քանզի վիշապին արդեն հնազանդեցրել են, ենթարկեցրել:

ԿԱՐՊԵՏԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Կարպետագործությունը հայ ժողովրդի հնագույն ու սիրված արհեստներից է: Այն իր ուրույն տեղն է գրավել մշակույթի համընդհանուր գանձարանում, մշակվել, պահպանվել ու կատարելության է հասել հայուհիների շնորքի ու կարողությունների շնորհիվ: Այդ գեղջկական պարզ գործվածքը մատչելի էր սոցիալական բոլոր խավերին:

Կարպետ գործել են ն՛ մեծերը, ն՛ փոքրերը: Գործել են կիսամութ խրճիթներում և ցուրտ բնակարաններում: Գործելիս իրենց հոգսերն են կիսել ճախարակի, իլիկի հետ և վարժ ձեռքերի արագ շարժումներով ստեղծել նրբահյուս կարպետներ: Գյուղերում աղջիկները դեռ վաղ հասակից նստել են տորքի առջև, յուրաքանչյուրն իր օժիտի համար գործել է կարպետահյուս խուրջիններ և աղաքսակներ, անկողնապարկ ու տաշտի մեզար, գթալաման և վարագույր: Օժիտը կազմող հյուսվածքները խոսում էին հարսի շնորքի ու կարողությունների մասին: Կարպետը մեծ տեղ է գրավել հայ ժողովրդի կենցաղում: Այն զարդարել է բնակարաններն ու եկեղեցիները, ցրտից պաշտպանել է մարդկանց և գործածվել որպես հանդերձանք: Կարպետները ծառայել են տարբեր նպատակների և ունեցել են տարբեր անուններ: Մեզարներն օգտագործում էին հաց թխելիս, ջեջիմը ծառայում էր որպես փռոց: Խուրջինը եղել է տարբեր չափերի: Ամենամեծն իշախուրջինն է, որի մի աչքում տեղավորվում էին խնոցին, մյուսում՝ կաթսան կամ այլ իրեր:

Անկողնապարկն օգտագործվել է հագուստ, անկողին, գորգ, կարպետ փոխադրելու համար: աղաքսակներում պահել ու սար են տեղափոխել երկանքով աղացած աղը:

Նման ձևով աղը պահպանել են խոնավությունից: Գդալ-ամանները խոհանոցի անհրաժեշտ մասն են կազմել, որի աչքերում կարելի էր տեղավորել 50-100 գդալ:

Դարերի ընթացքում պահպանված ամաններն արտահայտում են հայ ժողովրդի ճաշակը, նրա գեղարվեստական ու ստեղծագործական ինքնատիպությունը: Զարդանկարային ու գունային լուծումները պահպանվել են դարերի ընդացքում: Հիմնական զարդանկարները կրկնվում են ամեն տեղ՝ Վասպուրականից Լոռի, սակայն

ամեն դարաշրջանում իրեն հատուկ տարբերակներով: Չարդանկարային նորանոր կառուցվածքներով:

Կարպետի և գորգի զարդանկարներն իրենց բովանդակությամբ առանչվում են հայկական կիրառական արվեստի այլ ճյուղերի հետ: Հին կարպետներ չեն պահպանվել, բայց նրանց բազմաթիվ զարդանկարները կարելի է նկատել քարե հուշարձանների, խաչքարերի վրա: Նրանք հաճախ, փոխանցվելով քարից, կենդանանում են, ճկուն ձև ու փայլ ստանում և նոր տեսքով զարդարում կարպետներն ու գորգերը: Քարի գեղարվեստական մշակման և կարպետի նմանություններն ավելի ցայտուն են արտահայտվում խաչքարերի ու կարպետի եզրանախշերի, նրանց բազմաթիվ տարատեսակների մեջ: Դժվար է ասել, թե ով է ում վրա ազդել, կարպետագործը քարագործ վարպետի՞, թե՞ հակառակը:

Կարպետի զարդանկարները նմանություններ ունեն նաև փայտի փորագիր նախշերի հետ: Նույն զարդանախշերը կիրառական արվեստի տարբեր բնագավառներում հանդես են գալիս իրենց բնորոշ տարբերակներով, հարմարեցվում տվյալ իրի գործնական նպատակներից թելադրված կառուցվածքներին, կապված են կոնկրետ իրի գեղարվեստական կերպարի գեղագիտական սկզբունքներին, նյութի և տեխնիկական հնարավորություններին:

Հայկական կարպետի զարդանախշերը երկրաչափական, կենդանական և բուսական են: Կարպետագործության տեխնիկային ավելի բնորոշ է երկրաչափական զարդանախշը: Ամենապարզ ու տարածված զարդանախշը եռանկյունն է:

Կարպետագործության զարդանախշերը պարզ գծերից մինչև բարդ ելուստավոր գրաֆիկական կերպարներն են ընդգրկում՝ եռանկյունիներ, քառակուսիներ, բարդ հորինվածքներ ունեցող վարդակներ:

Կարպետների դաշտի ազատ տարածքներում գործում են ընտանի թրջյունների, կենդանիների, ու մարդկանց պատկերները: Բացի խաչահիմք զարդանախշերից գորգագործության մեջ և տարազային հագուստում, բազմաթիվ են հայերեն մեծատառ «Տ» հիշեցնող զարդանախշը: Վարդան Թեմուրճյանը, ով ուսումնասիրում էր հայկական գորգերը, այս զարդանախշը դասում է վիշապ հիշեցնող սիմվոլների դասին, որը

առաջացել է վիշապի ոճավորված սիմվոլի հապավումների «ուղղումների հետևանքով»:
Վիշապի պաշտամունքը սերտ աղերսներ ունի ջրի պաշտամունքի հետ: Այլ
ուսումնասիրողներ պատկերը կապում են օձի պաշտամունքի հետ: Մակայն ըստ
Հարություն Քյուրտյանի, ով բազմաթիվ հոդվածներ ունի նվիրված վիշապագորգերին,
կարծում է, որ սխալ է վիշապին և օձին նույնեցնել, քանի որ վիշապի պաշտամունքը
տարբերվում է օձի պաշտամունքից: Չնայած այս երկու հակասական գաղափարներին,
այս պատկերի բազմաթիվ ոճավորումների մենք հանդիպում ենք հայկական
արվեստում, որը կրում է նույն գաղափարը՝ բեղմավորության, առատության սիմվոլներ:

Գոյություն ունեն բազմաթիվ **վիշապակարպետներ**, որոնք շատ ավելի հայտնի
են **օձակարպետ** անվամբ: Դրանք գործվում են թեք-օղաճիտ-փաթաթովի տեղնիկայով:
Հայկական խորհրդանիշներից են S և E ձևերը: S- ավելի խորհրդանշանը հայկական տեր
բառի առաջին տառն է նաև, որը նշանակում է Աստված Ամենակարող: E- ձևը
Էություն՝ Ամենակարող բառի հին հայերեն կարճ ձևն է, այն միաժամանակ հայերեն
Յիսուս բառի առաջին տառն է, դա նշանակում է Հիսուս: Այս նշանները ունեն
չարխափան նշանակություն, քանի որ մեկնությունն ու նշանակությունը սերտորեն
կապված են հայկական այբուբենի իմացության հետ , քանի որ դրանք գորգերից բացի,
երևակվում են հայկական կերպարվեստի բոլոր դրսևորումներում ,ապա կարելի է ելնել
այն բանից որ, միայն հայերն են օգտագործել այս խորհրդանիշները:

- **Կարպետների տեսակները**

Կարպետները և կարպետագործ իրերը գործվում են տարբեր տեխնիկայով: Ըստ
այդ հատկանիշի՝ նրանք պայմանականորեն բաժանվում են յոթ խմբի՝

- Մեզար
- Ջեջիմ
- Երկու երեսանի կարպետ
- Շուլալ կարպետ
- Ուղիղ օղաճիտ
- Փաթաթովի կարպետ

- **Թեք օղաճիտ փաթաթովի կարպետ**
- **Շոպավոր կարպետ**

Իր գոյության հազարամյակների ընթացքում մարդկությունը թելեր ու գործիքներ է հյուսել թե՛ կենդանական՝ բուրդ, մետաքս, և թե՛ բուսական՝ բամբակ, վուշ ծագում ունեցող հունմքից: Հայկական լեռնաշխարհում կաին կարպետագործության զարգացման համար անհրաժեշտ բոլոր նպաստավոր պայմանները՝ բուրդը, բամբակը, վուշը, մետաքսը, դրանք մշակելու և օգտագործելու կուլտուրան:

Կարպետագործության համար օգտագործվել է ոչխարի, ուղտի բուրդ, բամբակ, մետաքս: Հայերը շատ վաղուց ծանոթ են եղել բամբակի մշակմանը: Ոստայնանկության մեջ էժանագին բամբակը փոխարինել է բրդին, վուշին, մետաքսին: Կարպետների մեջ նախշերը բամբակյա թելով են գործում այն դեպքում, երբ ցանկանում են սպիտակ նախշերը երկար ժամանակ վառ պահել: Բուրդը ժամանակի ընթացքում մի փոքր դեղնում է՝ ընդունելով փղոսկրի գույն: Բամբակը չի փոխում իր գույնը, երանգը, այդ պատճառով էլ օժիտի կարպետագործ իրերի մեջ մասամբ օգտագործվել է բամբակյա թել: Վերջին ժամանակներում կարպետի նաև գորգի հենքը հինում են բամբակյա թելով: Հին կարպետները, որոնց և՛ հենքը, և՛ զարդանախշերը բրդյա թելերով են արված, ավելի փափուկ ու ճկուն են, քան բամբակահենք կարպետները: Կարպետագործության մեջ օգտագործվում է երկու տեսակի թել՝ հենքի թել և գործող (երկտակ, երեքտակ) թել: Երկուսն էլ լավ ոլորված են: Միայն կարպետի մի տեսակում, որը շուլալ է կոչվում, նախշերը գորգի նման գործում են փափուկ թելով, մեկտակ (հին գորգերի խավի թելը երկտակ է):

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԳԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Դեռևս մինչև վերջ բացահայտված չէ հայկական գորգերի տիպաբանությունը: Բազմաթիվ են մեր գորգերի տեսակները: Ահա նրանցից մի քանիսը.

Բուսածաղկային

Այս խմբում ներառել են այն գորգերը, որոնց մեջ առկա են բուսածաղկային բնույթի նախշերը՝ ծառանախշերն ու ծաղկանախշերն ու դրանցով կազմված հորինվածքները: Կարող է լինի իրական կամ երկրաչափականացված տեսքի: Լինում են նաև կենաց ծառի նախշապատկերներ:



Խաչազարդով կամ խաչաձև հորինվածքով

Խմբի բնորոշիչ զարդը խաչն է, որը հայոց գորգարվեստում ունի առանձնակի տեղ ու ներկայանում է բազմաբնույթ տարբերակների տեսքով: Կան նաև կեռիսաչի կամ սվաստիկայի պատկերներ: Մրանց առհասարակ հատուկ է բարդ կառուցվածքն ու բաղադրամասերի բազմազանությունը:





Բազմանիստ խոշոր հորինվածքով

Հայոց գորգերի գեղագարդման համակարգում հատկապես մեծ տեղ ունեն երկրաչափական՝ բազմանիստ, քառակուսի, ուղղանկյուն ձևերի հորինվածքները: Սրանք աչքի են ընկնում առանձին տարրերի բազմազանությամբ, ինչպես նաև ոճավորված կենդանապատկերների ու երկրաչափականացված բուսածաղկային նախշերի ներկայությամբ:



Շեղանկյունազարդով

Հայոց բնորոշ գորգերի գեղագարդման արվեստում առանձնակի տեղ է գրավում այս հորինվածքը: Շեղանկյունազարդը ներկայացված է տարաբնույթ նախշերի, պատկերների ու զարդերի համադրությամբ:

Վիշապապատկերով

Այս խմբում ընդգրկվածների գեղագարդման համակարգում առանցքայինը առասպելական վիշապի ոճավորված ու երկրաչափականացված պատկերն է: Այն աչքի է ընկնում պատկերագրման ձևի ու մատուցման բազմազանությամբ, որով էլ պայմանավորված է նաև տիպերի ու դրանց տարբերակների բազմազանությունը: Վիշապագորգերի գեղագարդման ավանդույթների ակունքները հայոց գորգարվեստում ու առհասարակ մշակութային համակարգում հայտնի են մթա III-II հազարամյակներից:



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ձևավորվելով որոշակի էթնիկական միջավայրում, որոշակի պահանջների բավարարման անհրաժեշտությամբ՝ գորգը հազարամյակների ընթացքում տվյալ էթնիկական միավորի հետ միասին ենթարկվել է բազմազան տեղաշարժերի և փոխազդեցությունների, ստացել գործնական նոր ոլորտներ: Գորգը չի ծառայել, որպես կենցաղային պարզ առարկա, այլ ի սկզբանե ունեցել է ծիսապաշտանմունքային նշանակություն, ու նաև դրանով է պայմանավորված գորգի կարևորությունը հայոց մշակութային ժառանգության համակարգում:

Գորգը դարեր շարունակ եղել է ազգային կերպն ու նկարագիրը ներկայացնող մշակութային մի երևույթ, պատմամշակութային բացառիկ արժեք: Կան գորգեր, որոնց նախշերի ետևում մի ամբողջ կյանքի պատմություն և իմաստ է թաքնված: Զարդանախշերի մեջ թաքնված է հիշողություն և շատ հաճախ մարդկանց փոխարեն նախշերն են պատմում: Գորգերին վերագրվել է նաև բուժիչ հատկություն, ոչ միայն այն պատճառով, որ դրանք գործվել են բնական բրդից, իսկ թելերը ներկվել են բնական ներկերով, այլ կարծել են, որ նրանց նախշագարդերի հետևում յուրահատուկ խորհուրդ կա թաքնված: Տան ամենամեծ կամ հիվանդ անդամը միշտ լինում էր տան այն անկյունում, որտեղ գորգ կար կախված: Տարբերվում էին նաև պատից կախվող և հատակին փռվող գորգերը: Հատուկ զարդանախշեր ունեցող գորգերը կախվում էին պատից, իսկ նրանց վրա կախում մահացած հարազատների նկարները, երաժշտական գործիքներ և այլ նվիրական իրեր: Հատակին փռվող գորգերը, թեև ունեին յուրահատուկ զարդանախշեր, բայց դրանք չունեին հատուկ նշանակություն կամ նախնիներին վերաբերվող խորհրդանշաններ:

Հայկական գորգն այսօր էլ իր ուրույն տեղն է գրավում հայկական մշակույթում: Չնայած, որ անընդհատ տեղի են ունենում տեխնոլոգիական նորամուծություններ, սակայն հայկական գորգը շարունակում է մնալ որպես կենցաղի և մշակութային ժառանգության անբաժան մասնիկ: Չնայած գիտատեխնիկական առաջընթացի հայկական գորգերը չեն կորցնում իրենց արժեքը: Հայկական գորգագործության

ավանդույթներն այսօր էլ պահպանվում և շարունակվում են՝ աշխարհին ներկայացնելով հայկական գորգերի յուրօրինակ մշակույթը:

2000 թ-ից Հայաստանում գործող և մեկդարյա պատմություն ունեցող «Մեգերյան Կարպետ» ընկերությունը զբաղվում է հայկական գորգերի արտադրությամբ, անտիկ գորգերի վերականգնմամբ և պահպանմամբ, ինչպես նաև դրանց ցուցադրությամբ: Հավատարիմ մնալով յուրօրինակ գորգերի ստեղծման մեթոդներին՝ «Մեգերյան Կարպետ» ընկերությունը, օգտագործում է երկրի բուրդը, տարածշրջանի ներկերը և գործելու ավանդական տեխնիկաները:

Հայկական ձեռագործ գորգերի ավանդույթները պահպանվել են նաև Արցախում: «Ղարաբաղ Կարպետ» ընկերությունը հիմնվել է 2013թ. : Ընկերությունը մեծամասամբ արտադրում է հայկական ավանդական, մասնավորապես՝ տիպիկ արցախյան գորգեր: Ընկերությունը արտադրում է նաև էկոգորգեր, որոնք պատրաստվում են բնական չներկված բրդյա թելերից՝ պահպանելով գորգագործության ավանդական եղանակները: Էկոգորգերը կարող են հանդիսանալ Արցախի նոր այցեքարտ:

Բացի վերոնշյալ արտադրամասերից հայկական ձեռագործ գորգերի բացառիկ նմուշներ կարելի է տեսնել Հայաստանի պատմության թանգարանում, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանում, Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական ստեղծագործության կենտրոնում, Ձիթողյանների տուն թանգարանում, Հայկական գորգի ազգային կենտրոնում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գորգերի և կարպետների հավաքածուի կատալոգ/Երևան 2018 Աշխունջ Պողոսյան
2. Հայկական գորգեր, Երևան 1986 կաղմող՝ Վ. Գ. Ազատյան
3. <https://mariamaghababyan.wordpress.com/2018/04/03/%D5%AF%D5%A1%D6%80%D5%BA%D5%A5%D5%BF%D5%A1%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6/>
4. https://www.armgeo.am/armenian_carpet/
5. <https://haykazmargaryan.wordpress.com/2016/12/26/%D5%B0%D5%A1%D5%B5%D5%AF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%A3%D5%B8%D6%80%D5%A3%D5%A1%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6-%D5%BA%D5%A1%D5%BF%D5%B4%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8/>

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱԶՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ



ՊԱՐՏԱԴԻՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԳԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

ԿԱՏԱՐՈՂ՝ Նունե Ոսկանյան

ՂԵԿԱՎԱՐ՝ Կարինե Պապիկյան

ՎԱՆԱԶՈՐ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

Գլուխ 1. ԽՈՐԱՆԱՎՈՐ ԳՈՐԳԵՐ

1.1 Մեկ ընդհանուր զարդաշրջանակում ամփոփված հորինվածքներով գորգեր

1.2 1.2 Գունաշերտերով գորգեր

Գլուխ 2. ՎԻՇԱՊԱԳՈՐԳԵՐ

Օգտագործված գրականության ցանկ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հայկական լեռնաշխարհը գորգագործության հնագույն կենտրոններից է: Հայկական գորգը տարբեր ժամանակներում և տարածաշրջաններում ունեցել է տարբեր անվանումներ: Հայ գրականության մեջ կարպետ բառը հանդիպում է 5-րդ դարից՝ Աստվածաշնչի թարգմանության մեջ: Դարերի ընթացքում «կարպետ» բառը գրականության մեջ նաև գորգի հոմանիշ է եղել: Ուշագրավ է նաև գորգի մեկ այլ անվանումը՝ խալի կամ գալի, որը ծագում է Կալիկալա՝ Կարին քաղաքի արաբերեն անվանումից, քաղաք, որը հայտնի է եղել իր հարուստ գորգարվեստով: Միջնադարյան հայ գրականության մեջ հանդիպում է գորգի ևս մեկ հոմանիշ՝ բազմական, «բազմել» բառից:

Ձևավորվելով որոշակի էթնիկական միջավայրում, որոշակի պահանջների բավարարման անհրաժեշտությամբ՝ գորգը հազարամյակների ընթացքում տվյալ էթնիկական միավորի հետ միասին ենթարկվել է բազմազան տեղաշարժերի և փոխազդեցությունների, ստացել գործնական նոր ոլորտներ: Գորգը չի ծառայել, որպես կենցաղային պարզ առարկա, այլ ի սկզբանե ունեցել է ծիսապաշտանմունքային նշանակություն, ու նաև դրանով է պայմանավորված գորգի կարևորությունը հայոց մշակութային ժառանգության համակարգում:

Գորգը դարեր շարունակ եղել է ազգային կերպն ու նկարագիրը ներկայացնող մշակութային մի երևույթ, պատմամշակութային բացառիկ արժեք: Կան գորգեր, որոնց նախշերի ետևում մի ամբողջ կյանքի պատմություն և իմաստ է թաքնված: Զարդանախշերի մեջ թաքնված է հիշողություն և շատ հաճախ մարդկանց փոխարեն նախշերն են պատմում: Գորգերին վերագրվել է նաև բուժիչ հատկություն, ոչ միայն այն պատճառով, որ դրանք գործվել են բնական բրդից, իսկ թելերը ներկվել են բնական ներկերով, այլ կարծել են, որ նրանց նախշազարդերի հետևում յուրահատուկ խորհուրդ կա թաքնված: Տան ամենամեծ կամ հիվանդ անդամը միշտ լինում էր տան այն անկյունում, որտեղ գորգ կար կախված:

Տարբերվում էին նաև պատից կախվող և հատակին փռվող գորգերը: Հատուկ զարդանախշեր ունեցող գորգերը կախվում էին պատից, իսկ նրանց վրա կախում մահացած հարագատների նկարները, երաժշտական գործիքներ և այլ նվիրական իրեր: Հատակին փռվող գորգերը, թեև ունեին յուրահատուկ զարդանախշեր, բայց դրանք չունեին հատուկ նշանակություն կամ նախնիներին վերաբերվող խորհրդանշաններ:

Հայկական գորգն այսօր էլ իր ուրույն տեղն է գրավում հայկական մշակույթում: Չնայած, որ անընդհատ տեղի են ունենում տեխնոլոգիական նորամուծություններ, սակայն հայկական գորգը շարունակում է մնալ որպես կենցաղի և մշակութային ժառանգության անբաժան մասնիկ: Չնայած գիտատեխնիկական առաջընթացի հայկական գորգերը չեն կորցնում իրենց արժեքը: Հայկական գորգագործության ավանդույթներն այսօր էլ պահպանվում և շարունակվում են՝ աշխարհին ներկայացնելով հայկական գորգերի յուրօրինակ մշակույթը:



Հայկական գորգ / Կարպետ / Լուսանկարը՝ Մեզերյան Կարպետի արխիվից



Հայկական գորգ / Կարպետ / Լուսանկարը՝ Մեգերյան Կարպետի արխիվից

2000 թ-ից Հայաստանում գործող և մեկդարյա պատմություն ունեցող «Մեգերյան Կարպետ» ընկերությունը զբաղվում է հայկական գորգերի արտադրությամբ, անտիկ գորգերի վերականգնմամբ և պահպանմամբ, ինչպես նաև դրանց ցուցադրությամբ: Հավատարիմ մնալով յուրօրինակ գորգերի ստեղծման մեթոդներին՝ «Մեգերյան Կարպետ» ընկերությունը, օգտագործում է երկրի բուրդը, տարածշրջանի ներկերը և գործելու ավանդական տեխնիկաները:

Հայկական ձեռագործ գորգերի ավանդույթները պահպանվել են նաև Արցախում: «Ղարաբաղ Կարպետ» ընկերությունը հիմնվել է 2013թ. : Ընկերությունը մեծամասամբ

արտադրում է հայկական ավանդական, մասնավորապես՝ տիպիկ արցախյան գորգեր: Ընկերությունը արտադրում է նաև էկոգորգեր, որոնք պատրաստվում են բնական չներկված բրդյա թելերից՝ պահպանելով գորգագործության ավանդական եղանակները: Էկոգորգերը կարող են հանդիսասանալ Արցախի նոր այցեքարտ:



Հայկական գորգ / Գարպետ / Լուսանկարը՝ Մեգերյան Գարպետի արխիվից

Բացի վերոնշյալ արտադրամասերից հայկական ձեռագործ գորգերի բացառիկ նմուշներ կարելի է տեսնել Հայաստանի պատմության թանգարանում, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանում, Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական ստեղծագործության կենտրոնում, Ջիթոդյանների տուն թանգարանում, Հայկական գորգի ազգային կենտրոնում:

ԳԼՈՒԽ 1. ԽՈՐԱՆԱՎՈՐ ԳՈՐԳԵՐ

Հայոց գորգերի մեջ առանձնահատուկ տեղ են գրավում խորանաձև կամ գմբեթաձև կտրվածքով ու սյունազարդ հորինվածքով բնորոշվող գորգերը: Սրանք հայոց գորգարվեստում առանձնակի են հնագույն ավանդույթներով: Այս խումբը գլխավորում է նշանավոր «Եռախորան» գորգը: Հիմնական հորինվածքները՝ ըստ այդմ՝ նաև խորանները, լինում են մեկ և ավելին: Խմբի գորգերը մեծավ մասամբ առնչվում են եկեղեցու, ինչպես նաև կրոնական արարողակարգի ու ծիսակարգի հետ: Դրանով պայմանավորված էլ, դրանց գեղագարդման համակարգում կարևորված են եկեղեցական առարկաների՝ ջահի կամ կանթեղի պատկերները, ինչպես նաև բուսածաղկային նախշերն ու հորինվածքները, մասնավորապես՝ «կենաց ծառ»-ը:

«Գանձասար» - Բնորոշվում է գորգադաշտի մեկ կամ երկու ծայրում եղած «կենաց» ծառ զարդանախշի մեկական շարքով: Զարդանախշը լինում է երկայնաձիգ, հավասարաչափ ճյուղերով և ավարտվում է կոկոնով: Դաշտի կենտրոնական մասը սովորաբար գեղագարդվում է երկու և ավելին սյունաձև հորինվածքներով: Դասական նմուշներից է 1731 թվականին, Աղվանից Ներսես կաթողիկոսի պատվերով Արցախի Ջրաբերդ գավառի սուրբ Չարեքի անապատում գործված, այժմ Երուսաղեմի սուրբ Հակոբ եկեղեցում պահվող հայաստան արձանագրությամբ գորգը: Այս հանգամանքը հաշվի առնելով էլ, «Գանձասար» բառը առաջարկվում է որպես այդ տիպի գորգերի անվանում: Լայնորեն տարածված է նաև Բարձր Հայքի ու Փոքր Ասիայի գորգագործական կետրոններում: Հայտնի է «Լադիկ» և այլ անվանումներով:

«Սյունազարդ» - Բնորոշվում է դաշտի երկայնքով ձգված սյուներով, որոնց միջոցով գորգադաշտը բաժանվում է խորանների: Խորանները լինում են մեկ և ավելին: Սյուները լինում են խոյակով և հիմքով: Խորանազագագաթների և դաշտի վերին ծայրի միջև ընկած մակերեսը գեղագարդվում է զարդանախշերով ու հորինվածքներով, ինչպես նաև կենդանապատկերներով: Բնորոշ օրինակ է ուսումնասիրողների կողմից(Վ, Թեմուրճյան, Մ. Ղազարյան) «Եռախորան» անվանակոչված նշանավոր գորգը: Այն մինչև մեր ժամանակները պահպանված հնագույն գորգերից մեկն է, և ունի հայաստան արձանագրություն՝ ըստ որի

գործվել է 1202 թվականին, պատմական Հայաստանի Գարդման գավառի գորգագործության ավանդական կենտրոններից մեկում՝ Բանանց գյուղում: Գործել են Արցախի, Ուտիքի և Արևմտյան Հայաստանի գորգագործական մի շարք տարածաշրջաններում:

«Աղոթագորգ» - Դաշտի վերին մասը լինում է գմբեթաձև կամ կոնաձև: Որոշ տարբերակներ բնորոշվում են այդ նույն մասում նմանատիպ ուրվագծի գունաժապավենով: Վերջինս լինում է նաև դաշտի երկու ծայրերում: Սովորաբար, գունաժապավեննի երկու կողմերում պատկերվում է մեկական ձեռքի դաստակ: Դաշտի ազատ մնացած տարածքը կարող է լինի գեղազարդված ինչպես մանր նախշերով, այնպես էլ խոշոր հորինվածքներով: Օգտագործում են հիմնականում մուսուլմանները՝ աղոթքի ժամանակ ծնրադրելու համար: Բնորոշ է գորգագործական բոլոր կենտրոններին: Հայտնի են միջնադարյան Հայաստանում գործված աղոթքի գորգերը, որոնք լայն պահանջարկ էին վայելում Արաբական խալիֆայի ժամանակաշրջանում:

1.1 Մեկ ընդհանուր զարդաշրջանակում ամփոփված հորինվածքներով գորգեր

Հայոց բնորոշ գորգերի թվում զգալի մաս են կազմում մեկ ընդհանուր շրջանակում ամփոփված հորինվածքներով գեղազարդվածները: Շրջանակը կարող է ներառի ողջ գորգադաշտը՝ սկսած ներքին եզրագոտուց անմիջապես հետո, կամ ողջ գորգադաշտը՝ առանց անկյունների: Առավել տիպական է գորգադաշտի կենտրոնական հատվածը ընդրկող շրջանակը: Այս դեպքում գորգադաշտի եզրամասերը մնում են դրանից դուրս ու գեղազարդվում են գորգի գեղազարդման համակարգում երկրորդական կամ լրացուցիչ դեր խաղացող այլ զարդանախշերով, հորինվածքներով կամ պատկերներով: Զարդաշրջանակում ամփոփված հորինվածքները լինում են միատեսակ ու բազմատեսակ՝ շեղանկյունազարդ, բուսածաղկային, բազմանիստ և այլն: Բոլոր դեպքերում էլ դրանց գեղազարդման

համակարգում բնորոշիչը ընդհանուր զարդաշրջանակ ունենալն է, որով էլ նպատակահարմար է գտնված դրանց այս խմբում առանձնացնելը:

«Վահան» - Բնորոշվում է երկայնաձիգ ու խաչաձև մի շրջանակով, որը նմանվում է վահանի: Դրա կենտրոնում լինում է ուղղանկյունաձև զարդ, որի երկու կողմերին՝ հորինվածքի երկայնքով լինում է մեկական ելուստ ու դրանից սկզբնավորված ոճավորված կենաց ծառ: Ինքը շրջանակը լայն գունաժապավենով է, ու սովորաբար գեղազարդվում է զարդերով ու ոճավորված պատկերներով: Դասական են համարվում վահանի արտաքին ելուստներին «կենաց ծառ» գծայնացված ու սլացիկ զարդանախշերով գեղազարդվածները: Բնորոշ է հիմնականում Գարդմանին, Արցախին, Սյունիքին, Տավուշին, Բասենին, Բագրևանդին, Վանանդին, Ջավախքին: Մեկ հորինվածքով տարբերակը առավելապես բնորոշ է Արևելյան Հայաստանի գորգագործական կենտրոններին: Առաջարկված անվանումը կապված է հորինվածքային ամբողջությունը ամփոփող գունաժապավեն-շրջանակի ձևի հետ:

«Երկայնաձիգ ուղղանկյունաձև շրջանակով» - Բնորոշվում է ողջ դաշտն ընդգրկող երկայնաձիգ, ուղղանկյունաձև շրջանակով: Դրա նեղ կողերին լինում է զմբեթաձև ելուստ: Երկայնակի կողերը ուղղաձիգ են: Այս տիպին ենք դասում նաև միայն մեկ կողմում ելուստ ունեցող գորգերը: Շրջանակում լինում են բուսածաղկային հորինվածքներ, զարդեր: Դրանցից յուրաքանչյուրը իր հերթին լինում է վանդակում կամ առանց դրան: Ընդհանուր առմամբ, ունի համահայաստանյան տարածում: Առավել բնորոշ է Վանանդի, Ջավախքի, Բագրևանդի ու Բասենի գորգագործական կենտրոններին՝ մասնավորապես Կաղզվանին: Այս հանգամանքով էլ պայմանավորված է առաջարկված տերմինի կիրարկման գաղափարը:

«Տաշիր» – Իբրև զարդաշրջանակ, այս տիպի գորգերում ներկայանում է ներքին գոտին: Դաշտը սովորաբար լինում է առանց հորինվածքների: Որոշ գորգագործական կենտրոններում էլ այն գեղազարդվում է միայն մեկ կամ մի քանի «կենաց ծառ» նախշով, ինչպես նաև աստղաձև զարդով կամ վարդակով: Դաշտի հիմնագույնը սովորաբար մատուցվում է մասնակի երանգափոխումներով, որով էլ ստեղծվում է գունային որոշակի էֆեկտ: Հիմնականում բնորոշ են Տաշիրի, Տավուշի, Գարդմանի, Ջրաբերդի գորգագործական կենտրոններին: Դաշտային ազգագրական ուսումնասիրություններն ու Հայաստանի թանգարաններում պահվող նմուշներին վերաբերող նյութերը հնարավորություն են տալիս եզրակացնելու, որ այս տիպի դասական՝ առանց որևէ զարդի, նախշի կամ պատկերի

գորգադաշտով նմուշները հիմնականում վերաբերում են Արցախի Ջրաբերդ գավառի Աբովյան իշխանների աթոռանիստ հինավուրց Թալիշ գյուղին ու դրա մերձակա գորգագործական կենտրոններին: Ուսումնասիրողների մեծ մասը, միանգամայն հիմնավորված, այդ անվանումով էլ տարբերակում է խնդրո առարկա գորգերը:

«Ոսկանապատ» - Բնորոշվում է ամբողջ գորգադաշտը մի խոշոր շրջանակով: Վերջինս լինում է երկարավուն և ունենում է գմբեթաձև գազաթներ: Երկարավուն կողերում՝ հավասար հեռավորությամբ ունենում է ներս ուղղված՝ դիմահայաց, հավասարաչափ կտրվածքներ: Առաջացած ուղղանկյուն վանդակներում սովորաբար պատկերվում են «Տավուշ» կամ «Մեմլինգ» տիպի գորգերին բնորոշ հիմնական հորինվածքներ: Շրջանակը սովորաբար գեղազարդվում է «կենաց Ծառ» նախշի պարզ տարատեսակներով կամ «օձագալար» պատկերներով: Տարածված է Սյունիքի, Արցախի, Ուտիքի գորգագործական կենտրոններում: Հատկապես բնորոշ է Գարդման ու Ջրաբերդ գավառների գորգագործական կենտրոններին և մասնավորապես գորգագործության հարուստ ավանդույթներով Ոսկանապատ գյուղին, որի անունով էլ առաջարկվում է անվանակոչել այս տիպը:

«Վայոց ձոր» - Բնորոշվում է, կենտրոնական դաշտը ընդգծող բազմանիստ շրջանակով: Դրա երկարավուն կողերը աստամնավոր են, խոշոր ու հավասարաչափ, իսկ մյուսները՝ սղոցատիպ աստամնաշարով: Այդ շրջանակով պարփակված ուղղանկյուն մակերեսը գեղազարդվում է այլ գորգատիպերի բնորոշ երկրաչափական խոշոր հորինվածքներով և վարդակներով: Տարածված է Սյունիքի, Արցախի, Գուգարքի մասնավորապես՝ Տավուշի, Գարդմանի, Վայքի ինչպես նաև Երնջակի, Գողթան գավառի ու Վասպուրականի արևելյան գորգագործական կենտրոններում: Հատկապես բնորոշ է Նախիջևան-Վայք տարածաշրջանին՝ Խաչիկ, Շոռոթ, Նորաշեն, Աստապատ, Ազնաբերդ գյուղերին: Մեր տվյալներով, Վայոց ձորին է վերաբերում 1767թվականին գործված այս տիպի մի գորգ, որը այժմ պահվում է Հայաստանի պատմության պետական թանգարանում: Այս հանգամանքը հաշվի առնելով էլ տիպի համար առաջարկվում է «Վայոց ձոր» անունը:

«Իջևան» - Բնորոշվում են գորգադաշտի անկյունների ընդգծվածությամբ ու մեծավ մասամբ դրանք դեղին հիմնագույնի լինելով: Դաշտի կենտրոնական հատվածում լինում են մեկմեկում ամփոփված խոշոր բազմանիստներ, որոնց մակերեսի գեղազարդման համակարգի հիմնական տարր «Գլաձոր» հորինվածքն է: Լինում են նաև բուսածաղկային հորինվածքներով

ու զարդերով գեղազարդվածներ: Տարածված է հատկապես Տավուշի և Լոռվա գորգագործական կենտրոններում: Սկսել են գործել 1901-1905 թթ., Իջևանում: Համարվում է ստեղծի նշանավոր գորգագործուհի Նունուֆար Էղիյանի ստեղծագործությունը: Հայտնի է նաև «Դեղնաքյունջ» ու «Քարվանսարա» անուններով, ըստ որում վերջինս Իջևանի նախկին անվանումներից է:

1.2 Գունաշերտերով գորգեր

Այս խմբում ներառել ենք հավասարաչափ, բազմագույն գունաշերտերով գորգեր: Գունաշերտերը ծածկում են ողջ գորգադաշտն ու լինում են շեղակի, ուղղաձիգ, կամ հասկածն դասավորվածությամբ: Դրանք հիմնականում գեղազարդվում են բուսածաղկային նախշերով ու երկրաչափական զարդերով: Լայնորեն հայտնի ու տարածված է ուղղաձիգ գունաշերտերում գալարանախշի պատկերման ավանդույթը: Այդ դեպքում դրանք մեծավ մասամբ լրացվում են նշանախշով, ինչպես նաև: կենդանակերպ ոճավորումներով: Խմբին պատկանող գորգերը իրենց բոլոր տիպերով ու տարբերակներով հանդերձ ունեն համահայաստանյան տարածում:

«Շեղակի» - Բնորոշվում է ամբողջ գորգադաշտը ծածկող շեղակի, հավասարաչափ գունաշերտերով, որոնք գեղազարդվում են նախշերով, զարդանախշերով ու կենդանապատկերներով: Ունի համահայաստանյան տարածում, բայց առավել բնորոշ է Բարձր Հայքի ու Տայքի հյուսիս- արևելյան գավառների, Վանանդի ու Ջավախքի գորգագործական կենտրոններին: Դաշտային ազգագրական հետազոտություններից պարզվել է, որ այս տիպի գորգերը առավելապես բնորոշ են Ջավախքին, որի պատճառով էլ կիրարկման է ներկայացված «Ջավախք» տեղանունը:

«Ուղաձիգ» - Բնորոշվում է ամբողջ գորգադաշտը ծածկող ուղղաձիգ, հավասարաչափ գունաշերտերով: Սովորաբար դրանք գեղազարդվում են գալարավուն գծանախշով և այն լրացնող նշանախշերով ու ոճավորված կենդանապատկերներով: Ունի համահայաստանյան տարածում: Մեր կողմից կատարված հետազոտություններն ու թանգարաններում եղած նմուշներին վերաբերող տվյալները վկայում են, որ պատմական Հայաստանի հարավ-արևմտյան գորգագործական կենտրոններում, մասնավորապես Խարբերդի գավառում և

մերձակայքում տարածված էին այս տիպի մեզ հայտնի բոլոր տարբերակները: Դրանից ելնելով է, որ կիրարկման է առաջադրվում «Խարբերո» տեղանունը:

«Հասկաձև» - Բնորոշվում է ամբողջ գորգադաշտը ընդգրկող հասկաձև՝ շեղակի գունաշերտերի երկու հավասար շարքով: Գունաշերտերը սովորաբար գեղազարդվում են նախշերով, զարդանախշերով, կենդանապատկերներով: Ունի համահայաստանյան տարածում: Առավելապես բնորոշ է Վանանդի ու Շիրակի, մասամբ նաև Սևանի ավազանի գորգագործական կենտրոններին:

Գլուխ 2. ՎԻՇԱՊԱԳՈՐԳԵՐ

Այս խմբում ընդգրկվածների գեղազարդման համակարգում առանցքայինը առասպելական վիշապի ոճավորված ու երկրաչափականացված պատկերն է: Այն աչքի է ընկնում պատկերագրման ձևի ու մատուցման բազմազանությամբ, որով էլ պայմանավորված է նաև տիպերի ու դրանց տարբերակների բազմազանությունը: Վիշապագորգերի գեղազարդման ավանդույթների ակունքները հայոց գորգարվեստում ու առհասարակ մշակութային համակարգում հայտնի են մթա III-II հազ: Ուսումնասիրողների մի մասի կարծիքով էլ այդ ավանդույթը Հայաստան ներմուծվել է սելջուկ-թուրքմենական արշավանքների ու տարածաշրջանում դրանց հաստատվելու շնորհիվ: Վիշապագորգերի մեզ հայտնի բոլոր տարբերակները հայտնի են պատմական Հայաստանի գորգագործաության ավանդական կենտրոններում՝ Սյունիքում ու Արցախում, որն հիմք է տալիս դրանց

համարելու խնդրո առարկա գորգերի նախատիպերի ստեղծման հավանական բնօրրաններից մեկը:

«Գուհար» - Բնորոշվում է մի կետից սկզբնավորող վիշապի երկու ոճավորումից կազմված հորինվածքով: Այն քնարաձև տեսքի է՝ վիշապի ոճավորումները պատկերվում են ուղղաձիգ, ասիմետրիկ դիրքով, ունենում են հստակորեն ընդգծված իրան, գլուխ ու նաև եղջյուրներ: Լինում է մեկ և ավելին, պատկերվում են մեկ կամ մի քանի շարքերով: Բնորոշ է Արցախին, Սյունիքին, Ուտիքին, ինչպես նաև Վասպուրականի և Անդրկովկասի հյուսիս -արևելյան ու Պարսկաստանի հյուսիս-արևմտյան գորգագործական կենտրոններին: Այս տիպի դասական ու մինչև մեր ժամանակները պահպանված վաղագույն նմուշը 1680 թ. գործված, հայատառ արձանագրությամբ, /Ես Գուհարս մեղօք լի, ես նորհաս ձեռամբ զսա գործեսցի, օվ կարդա մեկ բերան օղորմի թող ասի, թվին ՌՃ/, նշանավոր «Գուհար» գորգն է, որը այդպես է անվանակոչված գործողի՝ գորգագործուհի Գուհարի պատվին: Հաշվի առնելով այս ամենն, իբրև այս տիպի գորգերի տարբերակիչ, նպատակահարմար ենք գտնում կիրարկել «Գուհար» անունը:

«Միսական» - Գեղագարդման առանցքը կազմում է երկգլուխ վիշապի երկու ոճավորված պատկերներից կազմված հորինվածքը: Վիշապապատկերները լինում են աղեղնաձև, ողնաշարի ու գլուխների հստակ ընդգծվածությամբ ու պատկերվում են ասիմետրիկ դիրքով, որի արդյունքում դրանց միջնամասում ձևավորվում է բազմանիստ շրջանակ: Սովորաբար այդ շրջանակում ներկայացվում է կեռիկազարդ հորինվածք: Բնորոշ է մեծավ մասամբ Զանգեզուրի, Միսականի, Արցախի մի շարք գավառների գորգագործական կենտրոններին: Այս տիպի գորգեր մասամբ գործել են նաև Ղարադաղում ու Վասպուրականի հյուսիս - արևելյան գորգագործական կենտրոններում: Գորգերի գեղագարդման այս համակարգը տարածված է նաև Տրանսիլվանիայում: Իր բոլոր տարատեսակներով հայտնի է Միսականում, որով էլ պատճառաբանված է առաջակված տերմինի կիրարկումը:

«Գարդման» - Գեղագարդման առանցքը կազմում է վիշապի երկու ոճավորումից կազմված հորինվածքը: Վիշապի ոճավորումները լինում են աղեղնաձև, պատկերվում են դեմ-դիմաց՝

կոր ծայրերը մեկ-մեկու ուղղված դիրքով: Դրանք իրարից բացազատվում են տարաբնույթ պատկերներով գեղազարդված մակերեսով՝ երիզված աստամնազարդ եզրերով, երկայնաձիգ ձևավոր շրջանակով: Այս տիպի 17-18-րդ դդ. վերաբերող նմուշների վրա այդ մակերեսը գեղազարդված է կենաց ծառի սլացիկ, նոճիանման հորինվածքով: Պատկանում է վիշապագորգերի «Գուհար» ենթախմբին: Հիմնականում տարածված է Գարդմանում:

«Մասյացուտն» - Բնորոշվում է քառակուսի կամ շեղանկյուն զարդի չորս գագազաթներից սկզբնավորած մեկական կենաց ծառ նախշով, որոնցից յուրաքանչյուրի երկու կողմում պատկերվում է վիշապի երկու՝ դիմահայաց ոճավորում: Ունենում է շեղանկյունաձև ուրվագիծ ու յուրաքանչյուր գագաթից սկզբնավորող վիշապի երկու ոճավորված պատկեր: Լինում է մեկ և ավելին՝ շրջանակում կամ առանց դրան: Այս տիպի գորգերի գեղազարդման համակարգի բաղադրատարրերից են շրջանակի գագաթներին պատկերվող վիշապի երկրաչափականացված տարբերակի երկուական պատկերներ: Հայոց գորգարվեստը ուսումնասիրողները հիմնականում օգտագործում են «Միքայել» տերմինը, որը շրջանառության մեջ է դրվել 1920 -ական թվականներին, հայագետ, արվեստաբան Արմենակ Սակցյանի կողմից և կապված է նմանատիպ մի գորգի վրա եղած նվիրատվական հայատառ արձանագրությունում հիշատակված ոմն Միքայելի անվան հետ: Կիրարկվում են նաև «Ղարաբաղ», «Կասմ Ուշակ» տերմինները: Բնորոշ է Արցախի, Ուտիքի, Սյունիքի, Վասպուրականի հյուսիս-արևելյան գավառների ինչպես նաև Բագրևանդի ու Կոզովիտի գորգագործական կենտրոններին, որոնք հիմնականում տեղաբախշված են Մասիս սարի շուրջ բոլորը: Ավելացնենք, որ հայոց հնագույն առասպելաշարում հենց այդ տարածքներն էլ հիշատակվում են որպես վիշապագունների բնակավայրեր: Վերոհիշյալները հաշվի առնելով էլ կիրարկման է ներկայացվում ժամանակակից Խոյ - Մակու մասամբ նաև Բայազետ տարածքը ներառող Պատմական Հայաստանի Մասյացուտն գավառի անունը:

«Փյունիկ» - Գեղազարդման առանցքը կազմում է ոճավորված գույգ վիշապապատկերով և «կենաց» ծառ նախշով, կամ դրա տարբերակով կազմված բարդ հորինվածքը: Լինում է մեկ և ավելին: Վիշապի ոճավորման այս տարբերակը առավել հնամենի է: Այն աղետվում է Բեռլինի Իսլամական արվեստի թանգարանում պահվող 13-14-րդ դդ. թվագրվող վիշապի և

առասպելական փյունիկի պայքարը ներկայացնող գորգին պատկերված վիշապի ոճավորումին: Համեմատաբար քիչ տարածված տիպ է: Հիմնականում բնորոշ է Արցախին, Սյունիքին, ինչպես նաև Անդրկովկասի հյուսիս-արևելյան գորգագործական կենտրոններին: Հայտնի է «Ղուբա» և «Բիջով» անուններով: Այս վերջինս կապված է Շամախի քաղաքի մերձակայքում գտնվող Բիջով՝ նախկինում հայաբնակ գյուղի անվան հետ: Առաջարկված տերմինի կիրարկումը հիմնավորում ենք գորգի գեղագարդման համակարգի հիմնական հորինվածքի արտահայտած կյանքի ու բնության հավերժության գաղափարով՝ որի խորհրդանշաններից մեկն էլ առասպելական փյունիկն է: Հաշվի է առնված նաև այս տիպի գորգերի վերը հիշատակված վաղ տարբերակի գեղագարդման համակարգում փյունիկի ներկայությունը:

«Ջրաբերդ» - Բնորոշվում է ծաղկած խաչ հիշեցնող նախշով, որը ամբողջովին երիզված է կեռիկաձև պատկերներով ու դրանցից սկզբնավորած երկար և ուղիղ, կոկոններով ավարտվող ցողուններով: Վերջիններս նմանվում են նաև արևի ճառագայթների: Այս տիպի գորգերի մի տարբերակ է պատկանում է վիշապագորգերի խմբին: Դրա գեղագարդման համակարգում խաչաձև ու ճառագայթագարդ հորինվածքը լրացվում է վարից ու վերից այն երիզող «Գուհար» տիպին բնորոշ մեկական վիշապապատկերով: Այդ ամբողջությունը լինում է մեկ կամ մի քանիսը, մեկ կամ երկու շարքով: Հայտնի են XVII-XVIII դդ. թվագրվող նմուշներ: Բնորոշ է Արցախի, Սյունիքի, Ուտիքի, Գուգարքի, Վասպուրականի արևելյան, Ղարադաղի ու Շաքի- Դերբենտի տարածաշրջանների, ինչպես նաև Փոքր Ասիայի արևմտյան մասերի գորգագործական կենտրոններին: Հայտնի է «Չարաբերդ», «Չալաբերդ», «Չելեբի», «Ղազախ», «Ղարաբաղ», «Արծվագորգ» և այլ անվանումներով: Հաշվի առնելով առաջին երկու տեղանունների Արցախի պատմական «Ջրաբերդ» գավառի ու համանուն ամրոցի անվանման տարբերակ լինելու փաստը, և այն, որ այդ տարածաշրջանին բնորոշ են տիպի բոլոր տարբերակները, հիմնավորված ենք համարում առաջարկված տերմինի կիրարկումը:

«Խնձորեսկ» - Բնորոշվում է քառակուսի զարդի մեջ ամփոփված արևի ու հավերժության որևէ խորհրդանշանից և այն բոլորող վիշապի ութ ոճավորումներից կազմված հորինվածքով: Հորինվածքի բաղկացուցիչ մաս են նաև զարդի անկյուններից սկզբնավորված նախշերը:

Զարդի ուղղաձիգ առանցքի ուղղությամբ լինում է մեկական «Կենաց ծառ»: Ներկայացվում է բազմանիստ վանդակում կամ առանց դրան, պատկերվում մեկ կամ երկու շարքով: Կան նաև մեկ հորինվածքով գեղազարդվածներ: «Խնձորեսկ» տերմինը միջազգայնացված և ընդունված է ուսումնասիրողների գերակշիռ մասի կողմից: Հաշվի առնելով այդ հանգամանքը, և Խնձորեսկ գյուղը գորգագործության, և մասնավորապես, գորգերի այս տիպի ավանդական կենտրոն լինելու փաստը, միանգամայն հիմնավորված ու նպատակահարմար ենք համարում տերմինի հետագա կիրարկումը: Հիմնականում բնորոշ է Արցախի, Սյունիքի, Գուգարքի գորգագործական կենտրոններին:

«Գետաշեն» - Բնորոշվում է երկայնաձիգ, զիգզակ երկու գունաժապավենով կազմված շեղանկյունաձև կամ բազմանիստ շրջանակներում պատկերված գծայնացված ու ոճավորված ութ վիշապապատկերով ու դրանց հետ մի ամբողջություն կազմող բուսածաղկային նախշերով: Կենտրոնում լինում է զարդ, որի շուրջ բլրոն էլ, զույգ առ զույգ՝ մեկմեկու դիմահայաց պատկերվում են վիշապի ոճավորումները: Որոշ կենտրոններում, մասնավորապես Գետաշենում ու մերձակա գորգագործական կենտրոններում գորգադաշտի անկյուններում պատկերվում է մեկական թամբած ձի: Հատուկ է Արցախի, Սյունիքի, Գուգարքի, Վասպուրականի հյուսիս-արևելյան գավառների գորգագործական կենտրոններին: Հատկապես հանրահայտ են գորգագործության ճանաչված կենտրոն Արցախի Ջրաբերդ գավառի Գետաշեն գյուղում գործված նմուշները, որն էլ թույլ է տալիս մեզ տիպը անվանակոչել հայկական այդ գյուղի անունով:

«Վայք» - Գեղազարդման հիմնական տարրը բազմանիստ շրջանակի շուրջ ամփոփված վիշապի պարզունակ՝ «Տ»-աձև ութ ոճավորումներ են: Դրանք իրարից տարանջատված են շրջանակից սկզբնավորող հավասարաչափ, զարդանախշված, գունաժապավեններով: Շրջանակի կենտրոնում սովորաբար լինում է «Կուսապատ» տիպի գորգերին բնորոշ վարդակ: Լինում է մեկ և ավելին: Վիշապի ոճավորումները այս տիպի գորգերի գեղազարդման համակարգում հնամենի են ու հարում են պատկերագրման ժայռապատկերային ոճին: սերտորեն աղեսվում է «Խնձորեսկ» տիպին: Բնորոշ է Սյունիքի, Արցախի ինչպես նաև Վասպուրականի հյուսիսային գորգագործական կենտրոններին: Առավել տարածված է

Վայքում, որտեղ այն հայտնի է մի շարք տարբերակներով: Դրանցով էլ պայմանավորված է «Վայք» տերմինի կիրարկման առաջարկը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ազատյան, Հայկական գորգեր:
2. Պապիկյան Կ., Հայկական կարպետներ և գորգեր, Երևան, 2008 թ.,

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ
ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱԶՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ**



**ՊԱՐՏԱԴԻՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ
ԵՆԹԱԿԱ**

**ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ**

ԹԵՄԱ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՐՎԵՍՏԸ

ԿԱՏԱՐՈՂ՝ ՌԻՄԱ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԻՆԵ ՊԱՊԻԿՅԱՆ

ՎԱՆԱԶՈՐ 2023

Ներածություն

Հայ ձեռագրային զարդանկարչությունը երևան է եկել գրի ու գրականության ստեղծման գուգահեռ՝ աստիճանաբար ձևավորելով անվանաթերթերի վրա, խորաններում, լուսանցքներում, տերունական և սյուժետային մանրանկարների մանրամասներում, զարդաշրջանակների վրա և զարգանալով դարձել հայ զարդարվեստի ինքնատիպ բնագավառներից մեկը: Մանրանկարչությունը մեր պատմությունն է, մեր անցած ճանապարհը:

Աշխատանքի նպատակն է սովորողներին ծանոթացնել մեր մանրանկարչությանը, մեր մանրանկարիչների թողած ժառանգությանը:

Հայ զարդանկարչության նկատմամբ եղած հետաքրքրությունն ունի ավելի քան 100 տարվա պատմություն: Դեռևս 1840-1850-ական թվականներին Մ.Բրոսսեն հրատարակել է Էջմիածնի պատկերազարդ գրքչագրերի մի ցուցակ և հետաքրքրություն շարժել հայկական ձեռագրերի գեղարվեստական ձևավորման նկատմամբ: 1870-1880-ական թվականներին ձեռագրերի զարդարանքի մասին գրել են հանագետ Ա. Ս. Ուվաովը, Վ. Վ. Ստասովը և ուրիշներ: Բարձր գնահատելով հայկական զարդարվեստի ինքնատիպությունը, Վ. Ստասովը իր «Սլավոնական և արևելյան զարդարվեստը» մեծածավալ ու շքեղ ալբոմում զետեղել է հայ զարդանկարչության ավելի քան 100 նմուշ պարունակող 8 առանձին գունավոր տախտակ: Դրանք Մխիթարյանների գրադարանում, Փարիզի, Բեռլինի, Պետերբուրգի, Մոսկվայի թանգարաններում և առանձին անձանց հավաքածուներում պահպանված շուրջ 12 հայերեն պատկերազարդ ձեռագրերից առնված զարդանկարներ են: Նա գրում է «Ձեռագրերի գլխազարդերում և լուսանցքների զարդանկարներում հայ նկարիչները ինչպես ձևերի, այնպես էլ գույների գծով հանդես են գալիս իբրև անսպառ երևակայությամբ, անսահման հնարավորությամբ և նուրբ ճաշակով օժտված ստեղծագործողները»:

Հետագայում հայ և օտարազգի մի շարք արվեստագետներ, այդ թվում Գ. Հովսեփյանը, Յ. Ստրեժիգովսկին, Ֆ. Մակլերը, Ա. Սվիրինը և այլք, անդրադարձել են հայկական ձեռագրերի ու ճարտարապետական հուշարձանների ձևավորման խնդիրներին,

դրանց զարդարվեստը դիտելով որպես համաշխարհային զարդարվեստի ճյուղ:

ԳԼՈՒԽ 1. Հայկական մանրանկարչություն

Հայ զարդարվեստի հիմնական մոտիվների ծագման ու գաղափարական բովանդակության բացահայտման հարցերով զբաղվել է Ա. Մնացականյանը: Հարուստ նյութի մանրագնին ուսումնասիրությամբ նա հաստատում է, որ հայ զարդանկարչության բոլոր հիմնական մոտիվների հիմքում ընկած են նյութական կոնկրետ սկզբնապատճառները՝ բնության և հասարակական ուժերը: Նրանք սկզբնապես ունեցել են կոնկրետ իմաստ և գործնական նշանակություն, սակայն ժամանակի ընթացքում աստիճանաբար մշակվելով, հեռացել են իրենց նյութական հիմքից և նախնական տեսքից, ստեղծելով նոր ու բազամազան զարդաձևեր:

Հայ զարդանկարչության մեծաքանակ նմուշներ, մասնակի մեկնաբանություններով, տեղ են գտել Լ. Ա. Դորոնովոյի «Հին հայկական նկարչության համառոտ պատմության» աշխատության մեջ, նրա կազմած «Հին հայկական մանրանկարչության» մեծածավալ ալբոմում, նրա վերահրատարակություններում, 1966թ. Վենետիկում հրատարակված «Հայկական մանրանկարչություն» ալբոմի առաջաբանում, Ս. Տետ-Ներսեսյանի աշխատություններում, ինչպես նաև հայ մանրանկարչության տարբեր դպրոցներին վերաբերող առանձին աշխատությունների մեջ ու հոդվածներում:

Ներկա ալբոմն առաջին փորձն է՝ առանձին հատորով ներկայացնելու հայ զարդանկարչության ընտիր նմուշները, քաղված Մաշտոցի անվան Մատենադարանում պահող միջնադարյան ձեռագրերից: Սույն աշխատանքը սկսվել է դեռևս 1946 թվականին: Այն ծրագրել, ղեկավարել ու մի խումբ նկարիչ-մասնագետների ուժերով իրականացվել հայ մանրանկարչության բնագավառի մեծ երախտավոր, արվեստի վաստակաոր գործիչ Լիդիա Ալեքսանդրովնա Դուրոնովն 1885-1963:

Ինչպես հայտնի է, հայկական զարդարվեստի հիմնական մոտիվների ծագումն ու ձևավորումը կապված են հեռավոր ժամանակներ հետ: Այստեղ էլ իշխում են կենդանական, երկրաչափական, բուսական ինչպես նաև օժանդակ մոտիվները

(երկնային մարմիններ, ճարտարապետական կառույցներ և այլն), որոնք կազմում են նաև մյուս ժողովուրդների, հատկապես հին արևելյան ժողովուրդների զարդարվետային մշակութային տարերքը: Քրիստոնեություն, որը սկզբում պայքարում էր հեթանոսական ժամանակների ըմբռումների և նրանց հետ առնչվող մշակութային ժառանգության դեմ, հետագայում աստիճանաբար, թե՛ ուրիշ երկրներում և թե՛ Հայաստանում, տեղի տվեց և սկսեց օգտվել նաև հին զարդարվեստից: Դրա շնորհիվ եկեղեցական կառույցները, սրբազան անոթները, վարագույրները, հոգևատրականների զգեստները, գավազանները և այլ առարկաներ, ինչպես նաև ձեռագրերը, հատկապես Ավետարանը, Աստվածաշունչը, ճաշոցը, Մաշտոցը, ճառընտիրը, Պատարագամատույցը սկսեցին զարդարվել հնագույն զարդաձևերով և նրանց վերամշակված նորանոր տարատեսակներով:

Այստեղ մեծ դեր հատկացվեց գույներին, նրանց նրբերանգներին, իսկ աշխատանքն իրագործվեց գրչով և վրձնով, ուստի զարդաձևերն առավել բազմազան ու գրավիչ տեսք ստացան՝ ձևավորելով հայկական զարդարվեստի մի նոր բնագավառ, որը և կոչում ենք ձեռագրային զարդանկարչություն:


Միջնադարյան Հայաստանի կերպարվեստի մեջ մանրանկարչությունն առաջնակարգ տեղ է գրավում: Չնայած դարերի գնթացքում տարբեր նվաճողների ավերիչ արշավանքների ժամանակ վիթխարի քանակությամբ հայկական մշակութային ու գեղարվեստական արժեքներ են ոչնչացվել, բավական մեծ թիվ են կազմում մեզ հասած այն ձեռագրերը, որոնք իրենց էջերում ունեն մանրանկարներ և լուսանցազարդեր:

Շուրջ քսանհինգ հազար հին հայկական ձեռագրեր են պահպանվել ամբողջ աշխարհում: Նրան զգալի մասը կենտրոնացած է Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվա հին ձեռագրերի ինստիտուտ Մատենադարանում: Մատենադարանի ձեռագրական հավաքածուն, Ղազար Փարպեցու վկայությամբ, սկզբնավորվել է V դարում, Էջմիածնի կաթողիկոսարանին կից:

Այժմ Մատենադարանի հայկական ձեռագրերի թիվն անցնում է 10 հազարից: Ձեռագրերի շուրջ մեկ երրորդ նկարազարդ է, ընդ որում մանրանկարներով հարուստ են հատկապես պաշտամունքային բովանդակություն ունեցող ձեռագրերը

(ավետարաններ և այլն):





Բնականաբար, մեզ հասած ձեռագրերի մեջ հայկական մանրանկարչության արագացման բոլոր շրջանները հավասարապես չեն արտացոլված:

Հայկական մանրանկարչության վաղ շրջանը կոչվում է դարերի խորքում: Մեզ չեն հասել հայոց գրերի գյուտից (405 թ.) անմիջապես հետո ստեղծված նկարազարդ ձեռագրերը: Գրավոր աղբյուրներից հայտնի է, որ Հայաստանում VII դարում գոյություն է ունեցել մանրանկարչական, այսպես կոչված, «Կամսարականների» դպրոցը, սակայն, դժբախտաբար, այդ դպրոցից ևս ոչ մի հուշարձան չի պահպանվել:

Հայկական մանրանկարչության ամենահին նմուշը թվագրվում է մոտառապես VI դարից (Լ. Դուրնովը), մինչդեռ ստույգ թվական ունեցող ամենահին ձեռագիրը՝ Լազարյան ավետարանը, գրված է 887 թվականին: VI-IX դարերից մանրանկարներով ձեռագրեր քիչ են պահպանվել, ապա համեմատաբար ուշ շրջաններում ստեղծված մանրանկարչական հուշարձանները բազմաթիվ են:

Մատենադարանի հայկական ձեռագրերի հավաքածուն ամենամեծն է ոչ միայն քանակով, այլև շատ նշանակալից է գեղարվեստական տեսակետից մեծարժեք մի շարք ձեռագրերի առկայությամբ: Հռչակավոր Էջմիածնի ավետարանից (989 թ.) բացի, Մատենադարանում պահվում են 1038 թվականի ավետարանը, XI դարի կեսերի Մողնու ավետարանը, 1211 թվականի Հաղպատի ավետարանը, 1232 թվականի Թարգմանչած ավետարանը և XIII դարի երկրորդ կեսի կիլիկյան մի շարք ձեռագրեր, որոնց թվում և՛ ձեռագրական մանրանկարչության այնպեսի մի զուլխագործոց, ինչպիսին է Հեթում Բ թագաորի 1286 թ. «Ճաշոցը» և շատ ուրիշ ձեռագրեր:

Մատենադարանի ձեռագրերի առավել ուշագրավ մանրանկարներից մի փունջ հրապարակվել է «Հին հայկական մանրանկարչություն» ալբոմում (տպագրված Հայպետհրատի կողմից 1952 թվականին): Այդ ալբոմը թեև չի տալիս դարերի ընթացքում հայ նկարչի ձեռքով ստեղծած միջնադարյան գրքային գեղանկարչության և մանրանկարչության սպառիչ պատկերը, այնուամենայնիվ, առաջինը լինելով, հնարավորություն է ընձեռում մասնագետների բավարար պատկերացում կազմելու հայ մանրանկարչության զարգացման տարբեր շրջանների մասին:

Մատենադարանի նկարազարդ ձեռագրերը իրենց վրա են հրավիրել գիտնականների ուշադրությունը դեռևս անցյալ դարի վերջերից. 1882 թ. հնագետ Ա. Ս. Ուվարովի իր « Էջմիածնի մատենադարանը » տվել է 35 նկարազարդ ձեռագրերի, որոնց թվում հետագայում մեծ համբավ ձեռք բերած 989 թվականի

այսպես կոչված Էջմիածնի ավետարանի նկարագրությունը: Այս ձեռագրի սկզբում և վերջում գտնվող մանրանկարները մի շարք գիտնականների կողմից հատուկ ուսումնասիրության ենթարկվեցին: 1920 թ. Այդ ձեռագիրը միագույն տպագրությամբ Փարիզում հրատարակվեց հայագետ Ֆ. Մակլերի ջանքերով: Նշանակալից են, հատկապես, հայկական միջնադարյան մշակույթի անխոնջ հետազոտող Գարեգին Հովսեփյանի ուսումնասիրությունները: <<Բյուզանդական գեղանկարչության պատմություն>> (1947 թ.) իր հայտնի աշխատության մեջ հայկական, գերագանցապես կիլիկյան, ձեռագրերին որոշակի ուշադրություն է նվիրել նաև Վ. Ն. Լազարևը:

Բայց որքան էլ կարևոր լինեն Մատենադարանի ձեռագրերի այդ ուսումնասիրությունները և հրատարակությունները, նրանք ըստ մեծ մասի վերաբերում են մեկ որոշակի կամ, լավագույն դեպքում, մի խումբ ձեռագրերի:

1939 թ. Հրատարակվեց Ա. Ն. Սվիրինի <<Հին Հայաստանի մանրանկարչությունը>> գիրքը, որտեղ, Մատենադարանի նյութերի հիման վրա, առաջին անգամ, տրված է հայ մանրանկարչության պատմության ընդհանուր մի ակնարկ: Այնտեղ ձեռագրական հուշարձանները քննված են ժամանակագրական կարգով, խմբավորված՝ ըստ առանձին դպրոցների:

Առավել լայն ընդգրկում ունի Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի արտասահմանյան անդամ (Ֆրանսիա), պրոֆ. Ս. Տեր-Ներսիսյանի ուսումնասիրությունը, որն ընդգրկում է Հայաստանի ոչ միայն մանրանկարչությունը, այլև ճարտարապետությունը, քանդակագործությունը և մոնումենտալ գեղանկարչությունը:

Միջնադարյան հայկական արվեստի և, մասնաորապես, գրքային գեղանկարչության ուսումնասիրության գործում նոր, զգալի ավանդ հանդիսացան Լ. Ա. Դուռնովոյի աշխատանքները: Լինելով հին ռուսական գեղանկարչության խոշոր գիտակ, Լ. Ա. Դուռնովոն 1937 թ. եկավ Հայաստան և նվիրվեց հայկական միջնադարյան արվեստի ուսումնասիրությունը: Նրա բազմամյա և բազմակողմանի ուսումնասիրությունների արդյունքը հանդիսացան մի շարք աշխատանքներ ու հրատարակությունները, որոնց մեջ առանձին տեղ է գրավում <<Հին հայկական մանրանկարչությունը>> վերը հիշատակված ալբոմը: Ալբոմը պարունակում է Մաշտոցյան Մատենադարանի

առավել նշանավոր նկարագարող ձեռագրերից քաղված 60 նկարներ, ըստ որում և նյութերի ընտրությունը, և ներածականն ու բացատրությունները պատկանում են Լ. Ա. Դուռնովոյին: Մեծ է այդ ալբոմի նշանակությունը, որի հրատարակությամբ հնարավորություն ստեղծվեց գույների կատարյալ վերարտադրությամբ պատկերացում տալ հայ ժողովրդի գեղանկարչական գանձերի մասին: Ալբոմի ներածականում Դուռնովոն կարողացել է տալ հայկական գրքային գեղանկարչական արվեստի զարգացման հստակ պատկերը: Հեղինակը, ծանոթացնելով Մատենադարանում հավաքված մանրանկարների առավել աչքի ընկնող օրինակների հետ, նշում է այն առանձնահատուկը, որով բնորոշում է հայ արվեստի ազգային նկարագիրը: Ինչպես այս, այնպես էլ Լ. Դուռնովոյի մյուս աշխատանքներում հայկական մանրանկարչությունը բաժանվում է ոչ միայն ըստն առանձին տեղական դպրոցների, որոնց գոյությունը պայմանավորված էր երկրի ֆիզոգեոգրաֆիկական մասնատվածությամբ, այլև ոճով տարբեր խոշոր խմբերի, որոնք տևաբար գոյություն են ունեցել մի քանի հարյուրամյակ և որոնց ծագման պատճառները սոցիալական բնույթ ունեն: Այդ խմբերից մեկը Դուռնովոն պայմանականորեն անվանում էն «ակադեմիական», իսկ մյուսը՝ «ժողովրդական»:

Եթե առաջին խմբի նկարագարող ձեռագրերը հանդիսացել են ֆեոդալական վերնախավի գեղագիտական ճաշակի արտահայտությունը, ապա երկրորդ խումբը կապված է եղել ժողովրդի ստորին խավերի հետ և արտացոլել է ֆեոդալական հասարակության դեմոկրատական շրջաններին հատուկ արվեստի բնույթը:

Ունենալով հետազոտողի սուր աչք և խուզարկու ոգի, Լ. Դուռնովոն յուրաքանչյուր մանրանկարի, յուրաքանչյուր լուսանցագրի մեջ նկատում է առավել կարևորը և ուշագրավը, դրանց առժեքը բացահայտում սեղմ ու պատկերավոր լեզվով:

«Հին հայկական մանրանկարչություն» ալբոմը սպառեց չափազանց արագ: Ուշագրավ է, որ «Cercle d'Art» հրատարակչությունը 1960 թ. Փարիզում Լ. Ա. Դուռնովոյի աշխատասիրությամբ ֆրանսերեն լեզվով լույս ընծայեց հայկական մանրանկարչության մի նոր ալբոմ, արի նյութերը դարձյալ քաղված էին Մաշտոցյան Մատենադարանի ձեռագրերից: 1961 թվականին այդ նույն այդ նույն ալբոմը անգլերեն լեզվով հրատարակվեց ԱՄՆ – ում՝ Հարվարդի կամալսարանի հրատարակչության կողմից:

<<Հայկական մանրանկարչություն>> ալբոմի ներկա հրատարակության անհրաժեշտությունը վաղուց էր զգացվում, և Լ. Ա. Դուռնովոյի կենդանության օրոք (նա վախճանվեց 1963 թ.) Հայպետհրատը նախատեսել էր իրագործել այն ավելի լայն ընդգրկումով: Հրապարակվող ալբոմում ոչ միայն նկարների ընդհանուր թիվն է ավելի, այլ առաջին հրատարակության մի շարք մանրանկարներ փոխարինված են նորերով: Այսպես, առաջին հրատարակության 60 նկարների փոխարեն սույն ալբոմն ունի 75 նկար, ընդ որում վերահրատարակվում է միայն 35 նկար, մինչդեռ 40-ը տպագրվում է առաջին անգամ: Ալբոմում, մանրանկարից բացի, զետեղված են նաև երկու կազմերի լուսանկարները: Նրանցից մեկը նշանավոր Էջմիածնի ավետարանի փողոսկրյա կազմն է, որը համարվում է VI դարի ստեղծագործության և որի երկու փեղկերը կազմված են փորագրված փողոսկրյա տախտակներից: Նվազ հայտնի է կիլիկյան մի ավետարանի 1255 թվականին դրվագրված արծաթյա (ոսկեզօծ) կազմը:

Թեև ավելի ուշ շրջաններից հայկական արծաթագործության այլ նմուշները քիչ չեն, բայց վաղ միջնադարից նրանք շատ սահմանափակ թվով են հասել մեզ: Գրավոր աղբյուրներից բազմաթիվ վկայությունների հետ մեկտեղ 1255 թվականի այս կազմը վկայում է միջնադարյան Հայաստանում մանր արվեստների զարգացման բարձր աստիճանը:

Սույն հրատարակությունը կցված են <<Հայկական մանրանկարչության>> ֆրանսիական հրատարակության համար Լ. Ա. Դուռնովոյի գրած ներածականը և նկարների մեծ մասի բացատրագրերը:

ԳԼՈՒԽ 2. Ասեղնագործություն

Ասեղնագործության ծագումը շատ հին է: Սկզբում օգտագործվել են բույսի փշերից կամ ձկան, ապա փայտից, փղոսկրից, այնուհետև մետաղից պատրաստված ասեղներ: Պատմական վաղ շրջաններից սկսել են գործածակել ոսկյա թելը, ապա բրոնզ ավելի ուշ Վուշի և բամբակի թելը: Ասեղնագործության մեջ բրոնզ թելը օգտագործվել է Չինաստանում մ.թ. 1200 տարի առաջ: Մետաքսաթելը օգտագործում էին Պարսկաստանում և Եգիպտոսում մ.թ.ա: Հին աշխարհում ասեղնագործությամբ զբաղվել են ասորեստանցիները, հրեաները, հույները, էտրուսկները և հռոմեացիները, իսկառավել հայտնի կենտրոնը, ըստ պատմաբանների, եղել է Բաբելոնը: Ասեղնագործության ամենահին նմուշների մասին գաղափար են տալիս ասորաբաբելական արձանների, եգիպտական քանդակների, որմնանկարների, հունական սափորանկարների վրա պատկերված հագուստների զարդարանքները, հնագիտական պեղումներով հայտնաբերված ասեղնագործ պատառիկները: Բյուզանդիայում ասեղնագործությամբ զարդարում էին քաղաքացիական և եկեղեցական զգեստները, նույնիսկ ձիու սարքերը: Պահպանված ամենավաղ սյուժետային ասեղնագործություններից են սկյութական բնորոշ կենդանազարդերով շամբաձածկոցները: Հին հայկական ասեղնագործության զարգացման բարձր աստիճանի մասին վկայում են մատենագրական տվյալները՝ (Ագաթանգեղոս, Մովսես Խորենացի և ուրիշներ): Միջին դարերից պահպանվել են ասեղնագործ պատառիկները եկեղեցական ասեղնահորձ զարդարանքները: Ասեղնագործությունը տարածված է եղել հայկական բոլոր շրջաններում կենտրոնանալով Վան-Վասպուրականի, Շիրակ-Կարինի, Սյունիք-Արցախի, Արարատյան երկրի, Կիլիկիայի և հայ մշակույթի երկու խոշոր կենտրոնների Թիֆլիսի ու Կոստանդնուպոլիս ինչպես և գաղթավայրերի դպրոց-օջախներում: Պահպանելով ազգային միասնական ոճը՝ ամեն մի դպրոց զարգացրել է ասեղնագործության իր ձևերն ու տեսակները: Հայտնի էին նաև առանձին քաղաքների անունները կրող ասեղնագործություններ՝ Վանի, Մարաշի Այնթապի, Կարինի, Տարսոնի ևն: Տարածված զարդակարերից են՝ շարակարը շուլալակար, շյուղակար ցողունակար, հարթակար լիցք ուռուցիկ համբելով կոթ-ասեղ, գծային, շղթայակարը, խաչկարը,

խաչմերուկ կարը, կողքակարը, օղակակարը թելքաշները: Մարաշի կարերից մեկը՝ հյուսված կարը, գաղտանկար է, հազվադեպ է և մնացել մանրանկարիչների սեփականությունը:

Չարդանախշն ավարտված պատկեր է որը ունի կենտրոն և զարդանախշը զարդի կրկնությունն է մեծ – փոքր, երկար կարճ, լայն նեղ, բարձր ցածր:

Չարդանախշերը լինում են ըստ տեսակի միագույն երկգույն բազմագույն ըստ գույնի ըստ տեսակների լինում են թռչնային կենդանակ, և մարդկային և այլն:

Ասեղնագործությունը ժողովրդի հանճարի, արարող ձեռքի վկայությունն է: Այստեղ, ավելի քան մշակույթի որևէ այլ բնագավառում, հստակորեն դրսևորվում է տվյալ ժողովրդի գեղարվեստական ճաշակը, երևակայությունը, մարդուն շրջապատող արտաքին աշխարհի գեղեցկության գեղագիտական ընկալման կարողությունը:

Ասեղնագործությունը դեկորատիվ – կիրառական արվեստի հնագույն, բայց և կենսունակ բնագավառներից մեկն է: Այն միաժամանակ արվեստի ամենամասսայական ձևերից է՝ իր ստեղծմամբ, դերով և նշանակությամբ:

Հայկական ասեղնագործ արվեստը մեծ տեղ է գրավում ոչ միայն ազգային գեղարվեստական մշակույթի մեջ, այլև կարևոր ներդրում է համաշխարհային դեկորատիվ – կիրառական արվեստի գանձարանում:

Ինչպես հայ ժողովուրդն է ճակատագրի բերումով դեգերել երկրեերկիր, այնպես էլ նրա սիրած արվեստի հիասքանչ պատառիկները հայուհիների հետ անցել են գաղթի դաժան ճանապարհներով, տարածվել ու զարգացել են այն ժողովուրդների մեջ, ովքեր ապաստան են տվել:

Հայուհու համար ասեղնագործությունը գեղեցիկի չափանիշ է, սեփական հմտությամբ ու վարպետությամբ մշակույթի արտահայտություն:

Հայ ժողովրդի ասեղնագործ արվեստն անցել է երկարատեվ պատմական ուղի, ենթարկվել ժամանակի դատին, հաստատվել որպես ժողովրդի հոգեբանության, ինտելեկտի ու ճաշակի զարգացումն իր մեջ կրող գեղարվեստական գործունեության ոլորտ, և իր երանգն է հաղորդել ազգային գեղարվեստական մտածելակերպին: Գեղարվեստական մտածելակերպի ձևաորման վրա մեծապես ազդում են այն բնաշխարհն ու կենցաղը, որում ապրում է ժողովուրդը: Բնաշխարհի հետ կապը տեսանելի է հայկական ասեղնագործ արվեստում:

Հայկական ասեղնագործությունը ինքնատիպ է. Այն տարբերվում է զարդանախշերով, զարդակարերով, կատարման տեխնիկայով, գույներով և ոճով:

Հին հայկական ասեղնագործության զարգացման բարձր աստիճանի մասին են վկայում մատենագիական տվյալները: Դեռևս V դարից պահպանվել են նկարագրությունները, վկայություններ ասեղնագործ շքեղ հանդերձանքի, եկեղեցական զարդարանքների մասին:

VII դարը համարվում է հայկական արվեստի վերածննդի դար: Անանիա Շիրակացին, Մովսես Կաղանկատվացին հիացմունքով են խոսում ոսկեթելով ու մետաքսաթելերով կատարված ասեղնագործությունների մասին: Ցավոք, այդ բանվածքները ժամանակի փորձությունների չեն դիմացել, և այսօր մեզ հասել են միայն գրավոր վկայությունները:

Հարուստ են տվյալները նաև Հովհաննես Դրասխանակերտցու, Թովմա Արծրունու, Ստեփանոս Տարոնցու, Ուռհայեցու աշխատություններում: Միջնադարի բանաստեղծները նույնպես գովերգել են շքեղ զարդարանքները, ոսկեթելով ասեղնագործված հագուստները: Ասեղնագործ հագուստ – զարդարանքներ մասին շատ կարևոր տվյալներ կան նաև Ներսես Շնորհալու մոտ (XII դար): Միջին դարերից պահպանվել են ասեղնագործ պատառիկներ՝ ձեռագրերի կազմաստառներ, ծածկոցների մնացորդներ, եկեղեցական ասեղնագործ զարդարանքներ:

Կապեր ունենալով Ասորեստանի, Բաբելոնի, Եգիպտոսի, Իրանի, Հնդկաստանի, Բյուզանդիայի մշակույթի հետ հայ ժողովուրդը համապատասխան փելիսագղեցություններով զարգացել է իր մշակույթը:

Կիրառական արվեստները հարևան ժողովուրդների ու նվաճողների կողմից ևս մշտապես բարձր են գնահատել: X դարում արաբ աշխարհագիր Իբն Հաուրալը իր <<Գիրք ճանապարհների և երկրների>> աշխատության մեջ գրում է. <<Դաբիլում պարբասում են մեծ քանակությամբ մետաքսե շորեր: Դրանց մասին պետք է ասել, որ Ռումի հողում էլ կան. Բայց սրանք՝ Դվինում պատրաստվածները, ավելի արժեքավոր են: Իսկ ինչ վերաբերվում է առհասարակ հայկական գործվածքներին, դրանք գլխաշորեր են, ծածկոցներ, գորգեր և բաչձեր: Դրանց նմանը չկա մի ծայրից մյուսը՝ բոլոր ուղղություններով:

Հայկական ասեղնագործ արվեստը հետաքրքիր է նաև այն ընդհանրություններով, որ ունի հայկական դաջագարդության, մանրանկարչության հետ:

Հայկական ասեղնագործությունը հիմնականում զարգացել է երեք ճյուղերով՝

ա. Ժողովրդական՝ կապված գեղջկական տարազի և կենցաղի հետ,

բ. Քաղաքային՝ առևտրա – արհեստավաճառական

գ. Եկեղեցական

Իհարկե, այս տարբեր ճյուղերի մեջ անանց անջրպետների չեն եղել:

Բոլոր ճյուղերի ասեղնագործ զարդարանքները կատարվել են հայուհիների ձեռքերով, և դա իր ազդեցությունն է ունեցել միասնական ազգային ոճի ստեղծման և պահպանման գործում:

Եկեղեցական զարդարանքները կարելի է բաժանել երեք մեծ խմբի,

1. Բանվածքները՝ կապված ձեռագրի, գրքի նկատմամբ: Դրանք ձեռագրերի կազմերին փակցված ասեղնագործված կտորներն են՝ կազմաստառները, ձեռագրերի պատյան – շապիկները, թաշկինակները, փուշիները և այլն:

2. Երկրորդ խումբն են կազմում մեծ և փոքր վարագույրները, սեղանի սկիհի սփռոցները, ծածկոցները, սրբիչները, խաչ բռնելու թաշկինակնորը, ասեղնագործ նկարները և այլն:

3. Ծիսական հանդերձանքը՝ շապիկ, շուրջառ, օձիք – վակասներ, խույր, թագ, բազպան, ուրար, փորուրար, գոտի և այլն:

Պահպանված ամենահին ասեղնագործ պատառիկները աշխարհիկ – քաղաքային բնույթի են, որոնք հայտնաբերել է Ն. Մառի հնագիտական արշավախումբը Անի քաղաքում կատարած պեղումներից (XIX դ. վերջ – XX դ. Սկիզբ): Այդ փոքրիկ նմուշներով (XII – XIII դդ.) սկսվում է հայկական ասեղնագործ արվեստի փաստական պատմությունը: Ըստ Հ. Օրբելու՝ Անիի հազվագյուտ նմուշների մեջ աչքի են ընկնում Հոննց Տիգրանի փոքրիկ ազգականուհու քարափոր դամբարանից գտնված մետաքսյա ասեղնագործ հագուստը, գլխի տակի, երեսի ծածկոցները և այլ պատառիկներ (տես <<Շիրակ-Կարինի ասեղնագործությունը>> բաժնում):

Մեծ թվի են կազմում հետագա դարերի նմուշները, որոնք հնարավորություն են տալիս ըստ ամենայնի ուսումնասիրել արվեստի այդ նուրբ ու հարուստ բնագավառը:

Միջնադարյան ասեղնագործ արվեստի բազմաթիվ նմուշներ են պահպանվել հայկական տաճարներում ու եկեղեցիներում: Ամենահին զարդարանքները XV դարից են, խոշորագույն մասը՝ XVII և հետագա դարերից: Ասեղնագործության կատարյալ նմուշներ են XVII – XVIII դդ. եկեղեցական վարագույրները Էջմիածնի Մայր տաճարիավագ խորանի վարագույրը, 1705 – 1717 թթ., նկարիչ Գրիգոր Մարզվանեցի, ասեղնագործ սրբապատկերները, սկիհների, գրակալների ծածկոցները և այլն:

Այդ աշխատանքներում ասեղնագործությունը հասցված է այնպիսի վարպետության, որն իր տեխնիկայով նմանվում է գեղանկարչական պատկերմանը (որը հատուկ է գորբելենին):

Հայաստանի պետական պատկերասրահում են պահվում Ուրհայի հայ կանանց ասեղնագործության երկու ալբոմ՝ 230 նմուշներ և գունավոր էսքիզներ: Առաջին համաշխարհային պատերազմից առաջ Ուրհայի գերմանական գորգու գործարանի պաշտոնյա Բրունո Էքարը, ծանոթանալով տեղի հայ կանանց ինքնատիպ և սքանչելի ասեղնագործություններին, որպես գործարար մարդ, դրանց գունավոր պատճենները նկարել է տալիս գործարանի երկու հայ նկարիչների՝ նպատակ ունենալով դրանք տանել Բեռլին ցուցադրել իբրև արևելյան ձեռարվեստի հետաքրքիր գործեր: Սակայն վրա է հասնում 1915 թ. Արհավիրքը, և սկսվում է հայորի շուրջ քառասունորյա հերոսական ինքնապաշտպանությունը:

Աղետից հետո Բ. Էքարը ամուսնանում է շնորհալի մի հայուհու՝ Սաթենիկի հետ: Իսկ 1918 թ. Աշնանը, երբ վերջանում է պատերազմը, Բ. Էքարը ուզում է վերադառնալ Գերմանիա, սակայն կինը ոչ միայն մերժում է, այլև թույլ չի տալիս վերոհիշյալ երկու ալբոմները տանել Գերմանիա: Սաթենիկը ամուսնանում է հայ երիտասարդի հետ:

1948 թ. Ամուսինները ներգաղթում են Սովետական Հայաստանի և բնակվում Երևանում: Հետագայում Սթենիկ Բեգիկյանը նշված ալբոմները հանձնում է պատկերասրահին:

Ուրհա քաղաքը պատմության մեջ ծանոթ է նաև Եղեսիա անունով: Այն մեր թվարկությունից առաջ հիմնադրել են հայերը, որը երբևէ եղել է Մեծ Հայքում կազմում:

- Գեղագիտական ցիկլի առարկաների, հատկապես տեխնոլոգիայի դասավանդման արդյունավետ ուղիներ որոնել, որը կապահովի յուրաքանչյուր աշակերտի անձի զարգացման արդյունավետությունը
- Խորությամբ ուսումնասիրել տեխնոլոգիայի կատարելագործմանը նպաստող առանձին ճանաչողական գործընթացների ձևավորման խնդիրը, հենվելով ոչ թե աշակերտների մեխանիկական հիշողության վրա, այլ պատկերացումների, որոնք սովորողների շրջապատող իրականության սեփական փորձի վրա ստեղծված կերպարների վերարտադրության արդյունք են

- Պրակտիկ-առարկայական գործունեությունը անձի զարգացման արդյունավետ միջոց է, հատկապես կրտսեր դպրոցական տարիքում: Այն հնարավորություն է երեխային նախապատրաստել հետագա աշխատանքին՝ տարբեր կյուլթերի հետ աշխատելու ձևերին, դաստիարակելու յուրօրինակ «կյուլթի զգացողություն», քանի որ առանց դրա անհնար է ազատ, գեղարվեստական-ստեղծագործական գործունեություն
- Տեխնոլոգիայի դասերը հաճախ սահմանափակվում են միայն ուսուցման զննական և խոսքային մեթոդներով: Մինչդեռ իրականում այդ դասերը հսկայական ներուժ ունեն զարգացնելու երեխայի անձի ճանաչողական և զգայա-հուզական կողմերը, որոնք ուսուցիչները ոչ միշտ են լիարժեք օգտագործում
- Երախայի կողմից իրականացվող յուրաքանչյուր կատարողական առարկայական գործունեություն աշխատանքային հմտությունների և կարողությունների ձևավորման հետ միասին, զարգացնում է նաև աշակերտների տվյալ բնագավառի մտածողական գործողությունները:

2. Ինտեգրված դասի նմուշ-օրինակ

Թեմա: Հարթ երկրաչափական մոդելներ:
Ապլիկացիա երկրաչափական պատկերներով:

Գերիշխող առարկա՝ Տեխնոլոգիա
Ինտեգրված առարկաներ՝ Մաթեմատիկա
Մայրենի
Կերպարվեստ
Երաժշտություն

Խնդիրները

- Աշխատանքի կատարման պլանավորում և կազմակերպում
- Նյութերից և աշխատանքային գործիքներից ճիշտ օգտվելու հմտություն և կարողության զարգացում
- Ուսուցչի հրահանգի ճիշտ կատարում
- Գրաֆիկական գրագիտության տարրերի ուսուցում
- Գործնական աշխատանքի խնամքով կատարման վերաբերմունքի դաստիարակում
- Երկրաչափական պատկերների մասին նախնական գիտելիքների ամրապնդում
- Թղթի տեխնոլոգիական մշակման գործնական կարողությունների ձևավորում
- Առարկայի նկատմամբ հետաքրքրության խթանում
- Սովորողների ստեղծագործական ունակությունների և համագործակցային որակների զարգացում:

Կահավորում

- Աշխատանքային կյուրեր և գործիքներ
- Մատիտ. քանոն. մկրատ. սոսինձ
- Սպիտակ և գունավոր թղթեր
- Բազմագույն երկրաչափական ձևանմուշներ
- Ապլիկացիայի նմուշ-օրինակներ
- Աշխատանքային տետր
- Ծրարներ՝ երկրաչափական պատկերներով ու հանելուկներով:

Դասի նկարագիր

Ուսուցիչ –

1) Երեխաներ, այսօր անսովոր դաս է: Մենք այսօր միասին ճանապարհվելու ենք դեպի Գիտելիքների մոլորակ, այդ մոլորակի վրա կա մի հրաշք վայր, որ կոչվում է Երկրաչափություն: Փորձենք պարզել, թե ինչպիսի վայր է այն:

Չիշենք Պլուտոնի խոսքերը «Մաթեմատիկան թվերի և պատկերների իդեալական աշխարհ է»: Երկրաչափությունը պատկերների իդեալական աշխարհ է, ու միասին հաշտ ու խաղաղ բնակվում են բոլոր երկրաչափական պատկերներն իրենց կանոններով ու օրենքներով: Կամ էլ կարելի է հիշել Գ Գալիլեյի խոսքերը «Բնությունը խոսում է մաթեմատիկայի լեզվով, այդ լեզվի տառերն են՝ շրջանագծերը, եռանկյունները և մաթեմատիկական այլ պատկերներ»:

2) Գուշակենք, թե ինչո՞վ ենք ճանապարհորդելու:

Երեխաները կթվարկեն փոխադրամիջոցներ, դրանք կնմանեցնեն երկրաչափական պատկերների՝ հրթիռ, գնացք, ավտոմեքենա, սավ և այլն (Երեխաները նույնիսկ կարող են առաջարկել երևակայական փոխադրամիջոց՝ ամենագնաց...): Փոխադրամիջոցն ընտրում են աշակերտները:

3) Ճիշտ է: Այժմ բաժանվենք խմբերի: Տեղավորվենք և պատրաստվենք թռիչքի: Այս հրաշք-հրթիռը չի թռչի, եթե մենք չձևավորենք հրթիռը և չթվարկենք բոլոր այն երկրաչափական պատկերները, որոնցից կազմված է այն:

Աշակերտները հերթով մոտենում են գրատախտակին փակցված մեծ հրթիռին և գունավոր մատիտներով ձևավորում այն: Այնուհետև ուսուցիչը ցուցադրում է երկրաչափական պատկերները, աշակերտները անվանում են այն:

4) Ապրեք, առաջադրանքը կատարեցինք: Բայց մինչ թռչելը, պետք է ձեզ զգուշացնեմ, որ հրթիռը կթռչի առանց կանգառների և կանգ կառնի միայն <<երկրաչափություն>> վայրում: Պատրաստվեք թռիչքի:

(Չնչում է երաժշտություն)

5) Վերջապես մենք Թագուհի երկրաչափության քաղաքում ենք:

Թագուհին մեզ ողջունում ու ձեռքով է անում: Եկեք ուրախացնենք նրան ու թվարկենք բոլոր այն երկրաչափական պատկերները, որոնց մենք ծանոթ ենք:

Երեխաները հերթով թվարկում են իրենց ծանոթ երկրաչափական պատկերները, պատմում են դրանց մասին, շրջապատող առարկաները փորձում

նմանեցնել որևէ երկրաչափական պատկերի, գրատախտակի մոտ աշակերտներից մեկը ցույց է տալիս դրանք, աշակերտներն անվանում ու գո՛ւնավորում են երկրաչափական պատկերները, ինչ-որ մեկը քառակուսին կարմիր գույն է պատկերացնում, մյուսը սև, երրորդը՝ նարնջագույն և այլն: Այնուհետև փորձում են համեմատել այդ պատկերները քառակուսին ուղղանկյունից տարբերվում է նրանով, որ..., իսկ ուղղանկյունը եռանկյունուց...

6) Երեխաներ, դուք նկատեցի՞ք, որ թագուհին տխուր է, նա կարծես թե լաց է լինում, եկեք մոտենանք ու հարցնենք՝ Ձերդ Մեծություն, ի՞նչ է պատահել...

(կորել է թագուհու փիսիկը)

7) Ի՞նչ անել, երեխաներ, եկեք մտածենք, թե ինչպես կարելի է օգնել Թագուհուն... Գտա, եկեք երկրաչափական պատկերներից փիսիկ կոնստրուկտավորենք ու նվիրենք նրան...

Աշակերտներից յուրաքանչյուրի սեղանին դրված են ծրարներ, որոնց մեջ բազմագույն երկրաչափական պատկերներ են և ապլիկացիաներ, ուսուցիչը ցուցադրում է ապլիկացիայի նուշ-օրինակները և բացատրում է դրանց կատարման տեխնոլոգիան: Այնուհետև հանձնարարում է նմուշ-օրինակներում տրված փիսիկներից որևէ մեկը կոնստրուկտավորել սեղանին դրված գո՛ւնավոր երկրաչափական պատկերներով: Առաջադրանքը կատարելուց հետո ուսուցչի թույլատվությամբ աշակերտները կատարում են սոսնձման աշխատանքները: Պատկերը կոնստրուկտավորելուց հետո սոսնձում են: Անհրաժեշտության դեպքում ուսուցչին օգնում է:

8) Աշակերտները ծրարներից հանում են հանելուկները և փորձել գտնել պատասխանները:

9) Աշխատանքների ցուցադրություն և խրախուսում, լավագույն աշխատանքները փակցնում են դասարանի ցուցադրվող մասում: Ցուցադրումից հետո ուսուցչի կողմից բոլոր երեխաները խրախուսվում են:

10) Ամփոփում

- Ինչպիսի՞ երկրաչափական պատկերների հետ ծանոթացաք,
- Ի՞նչ եք կարծում, դուք կկարողանալի՞ք առաջադրանքը միայնակ կատարել, կկարողանալի՞ք հաղթահարել ճանապարհորդության ընթացքում ծագած դժվարությունները, եթե միասին չլինեք:

Միգուցե կարողանալիք, բայց դժվարությամբ, մենք միասին էինք և դա մեզ շատ օգնեց:

Դե, ուրեմն եկեք շարունակենք ճանապարհորդել միասին Գիտելիքների աշխարհում...

(Յնչում է երաժշտությունը)

Եզրակացություն

Բնության մեջ չկան առանձին առարկաներ, երևույթներ և գործընթացներ. դրանք որոշակի համակարգերի մաս են կազմում: Հետևաբար, ցանկացած ամբողջական երևույթի առանձին ասպեկտների ճանաչումն առանց դրա մյուս կողմերի ճանաչման չի կարող ամբողջական պատկերացում տալ երևույթի բոլոր դրսևորումների մասին: Իսկ երևույթի կամ գործընթացի ամբողջական իմացությունը ենթադրում է համապատասխան գիտելիքների ինտեգրում: Այստեղից կարելի է եզրակացնել, որ գիտելիքի համադրումը գիտելիքի հիմնական ուղին է:

Երեխայի աշխարհը ամբողջական է, և դպրոցում այդ ամբողջականությունը չպետք է մասնատվի, բաժանվի:

Հանրակրթական ուսումնական հաստատություններում ավանդական պարապմունքները հաճախ խանգարում են դպրոցականներին աշխարհը տեսնել ամբողջական, ընկալել դրանում առկա ներքին ու արտաքին բազմապիսի կապերը, փոխհարաբերություններն ու փոխազդեցությունները:

Ինտեգրված ուսուցման հիմնական նպատակը շրջապատող աշխարհի մասին ամբողջական պատկերացման ձևավորումն է, ինչը կապված է դպրոցականների մտավոր ակտիվության բարձրացման հետ: Այդ պատճառով էլ դպրոցականների մոտ պետք է ձևավորել ճանաչողական մտածողության այնպիսի որակներ, ինչպիսին կարող են նպաստել աշխարհն ամբողջության մեջ տեսնելու, ընկալելու, նոր իրողությունները գնահատելու, դրանք ինքնուրույնաբար համադրելու և վերլուծելու կարողությունների արմատավորմանը:

Ինտեգրված ուսուցումը բազմակողմանի գիտելիքներ են ապահովում, հետաքրքիր ու բովանդակակալից են դարձնում ուսումնական գործընթացը: Ինտեգրված ուսուցման կազմակերպումը ուսուցչից պահանջում է լուրջ

պատրաստվածություն: Անհրաժեշտ է ընտրել հատուկ թեմա. ոչ բոլոր թեմաները կարելի է անցկացվել այս ձևով, քանի որ կան թեմաներ, որոնք հնարավոր չէ կազմակերպել ինտեգրված ձևով. պետք է լինի առանձին, հստակ թեմա:

Ինտեգրված ուսուցման ժամանակ անհրաժեշտ է ստեղծել ազատ միջավայր, որպեսզի ապահովվի դպրոցականների ազատ գործունեությունը (ստեղծագործելու, մտածելու...):

Կրտսեր դպրոցում և միջին դպրոցի ցածր դասարաններում իբրև ուսուցման նպատակ դիտարկվում է ուսուցման բովանդակությունն ու մեթոդները ինտեգրելու ճանապարհով ձևավորել և զարգացնել երեխայի անձի առանձին հոգեկան որակներ:

Գրականություն

1. Աբրահամյան Ա. Վ., Ֆարսյան Ժ. Ս., Միջառարկայական կապերի մի քանի ընդհանուր հարցեր, գիտ հոդվածաշար III, Երևան, Չանգակ -97, 2003, էջ 5-9
2. Պապիկյան Կ., Տեխնոլոգիա առարկայի դասապլաններ
3. Коротков В.И. Межпредметные связи в учебно-воспитательном процессе средней и общеобразовательной школе. М., 1977.,-18с
4. Кукушин В С, Болдырева-Вараксина А В, Педагогикаа начального образования, Изд Центр МарТ, 2005г,437с
5. Самарин Ю.А., Очерки психологии ума, Москва, Педагогика, 1968г., 298 стр.

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ
ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱԶՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ**



**ՊԱՐՏԱԴԻՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ
ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՅԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ**

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**ԹԵՄԱ՝ ԱԿՏԻՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ԴԱՍԵՐԻՆ**

ԿԱՏԱՐՈՂ՝ ԶԵՄՄԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԻՆԵ ՊԱՊԻԿՅԱՆ

ՎԱՆԱԶՈՐ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱՃՈՒԹՅՈՒՆ.....3

**ԳԼՈՒԽ 1. ՈՒՍՈՒՄԱՆ ԳՈՐԾՆՔԱՅԻ ԱԿՏԻՎԱԳՈՒՄՆ ԻՔՐԼ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՄՆԱԽՆՆԻՐ**

1.1. Ակտիվ ուսուցման եղթյունը.....5

1.2. Ուսուցման մեթոդների ծագումն ու դասակարգումը.....9

**ԳԼՈՒԽ 2. ՈՒՍՈՒՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄՆ ԱԿՏԻՎ ՈՒՍՈՒՄԱՆ
ԳՈՐԾՆՔԱՅՈՒՄ ԽԵԽՆՈՂՈՎՈՒՄԻ ԴԱՍԵՐԻՆ**

2.1. Խաղն իբրեւ ուսուցման ակտիվացման միջոց.....12

2.2. Ուսուցման մեթոդների կիրառման արդյունավետության պայմանները
տեխնոլոգիայի դասերին.....19

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....23

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....24

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այսօր կենսական է դարձել կրթության համակարգի նորացման խնդիրը: Փոխվել է դարը, հազարամյակը, ձևավորվել է աշխարհի նոր պատկեր, հասարակական հարաբերությունների նոր ձևաչափ՝ նոր պահանջներով: Փոխվել է 21-րդ դարի դպրոցը, փոխվել է սովորողը, և նույնիսկ մեկ տասնամյակ առաջ նրան պարտադրված այս կամ այն ուսուցման եղանակը ու արդյունավետ մեթոդն այսօր չի կարող իրեն արդարացնել: Արդի մանկավարժության հիմնախնդիրներից մեկը ուսուցման-ուսումնառության ակտիվացման և արդյունավետության բարձրացման եղանակների որոնումն է: Ողջ մանկավարժական հանրությունը ձեռնամուխ է եղել այդ խնդրի լուծմանը: Ձևավորվել է ակտիվ ուսուցման մոտեցումը, որը փորձում է ի մի բերել ժամանակակից մանկավարժագիտության նվաճումները, գիտական որոնումների արդյունքում ստեղծված մոտեցումները: Ակտիվ ուսուցման ժամանակ սովորողն ինքն է կառավարում իր ուսումնառության ընթացքը և պատասխանատվություն է ստանձնում իր ուսումնառության համար, նոր գաղափարներ յուրացնելու, ուսումնական խնդիրներ լուծելու համար մտավոր աշխատանք է կատարում, կարողանում է ինքնուրույն յուրացնել ուսումնական նյութը և կիրառել ձեռք բերած գիտելիքները: Այս դեպքում ուսուցիչը միայն ուսումնական հնարավորություններ, ուսումնառական միջավայր է ստեղծում, իսկ աշակերտները դառնում են ակտիվ սովորող և երկխոսության մեջ են մտնում ինչպես մյուս աշակերտների, այնպես էլ ուսուցչի հետ:

Աշխատանքի նպատակը տեխնոլոգիայի դասերին ակտիվ ուսուցման մեթոդների ուսումնասիրությունն ու դրանց կիրառման առանձնահատկությունների բացահայտումն է:

Աշխատանքի խնդիրները

- Ուսումնասիրել թեմային վերաբերող մասնագիտական գրականությունը, նորմատիվային փաստաթղթերը:
- Դասակարգել ուսուցման մեթոդները:
- Բացահայտել ակտիվ ուսուցման մեթոդների կիրառման արդյունավետությունը:

- Հիմնավորել տեխնոլոգիայի դասերին խաղերի կիրառման նպատակահարմարությունն իբրև ուսուցման գործընթացի ակտիվացման միջոց:

ԳԼՈՒԽ 1. ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱԿՏԻՎԱՑՈՒՄՆ ԻԲՐԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

1.1. Ակտիվ ուսուցման Էությունը

Ուսուցումը կամ ուսումնական գործունեությունը հասարակական, պատմական, սոցիալ-մշակութային փորձի նպատակասլաց, հաջորդական փոխանցումն է, որի ընթացքում սովորողները ձեռք են բերում գիտելիքներ, ձևավորվում են կարողություն-հմտություններ, արժեքներ, դիրքորոշում, և, որ ամենակարևորն է, ձևավորվում է անձը:

Բաբանսկին նշել է, որ «ուսուցումը ուսուցիչների եւ աշակերտների նպատակաուղղված, հաջորդաբար փոփոխվող փոխազդեցությունն է, որի ընթացքում լուծվում են աշակերտների կրթության և ընդհանուր զարգացման խնդիրները»:¹

Ուսուցման արդյունավետությունը կախված է ուսուցչից: Ուսուցիչը պետք է կարողանա աշակերտների մեջ ձեւավորել այնպիսի պայմաններ, որոնք նրանց կտանեն դեպի ուսումնական գործունեություն:

Ակտիվ ուսուցումը ենթադրում է ուսումնական գործընթացի այնպիսի կազմակերպում և կառավարում, որը ուղղված է սովորողների կիրառական և ճանաչողական գործունեության լիարժեք ակտիվացմանը: Ակտիվ ուսուցումը կարող է հանգեցնել ուսուցման մեթոդների և ձևերի բարելավմանը, ինչպես նաեւ ուսուցման գործընթացի կազմակերպմանն ու կրթության համակարգի կատարելագործմանը: Դրական վերջնարդյունքների հասնելու համար անհրաժեշտ է ուսուցման գործընթացի բոլոր կողմերի ակտիվ մասնակցությունը: Ակտիվ ուսուցումը ենթադրում է այնպիսի մեթոդների համակարգի կիրառում, որը ոչ թե նախատեսում է ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքի մատուցում, մտապահում և վերարտադրում, այլև ուսուցման ակտիվ ճանաչողական և պրակտիկ գործունեության ընթացքում գիտելիքների և հմտությունների ինքնուրույն ձեռքբերում: Ուսուցման գործընթացը ակտիվացնելու համար կիրառվում են նաև ավանդական մեթոդներ՝ օգտագործելով տարբեր հնարներ՝ պրոբլեմային

¹ Տե՛ս Բաբանսկի Յու. Կ., Մանկավարժություն, Երևան, Լույս հրատարակչություն, 1986, Էջ 159:

իրավիճակի ստեղծում, հարցադրում: Ակտիվ ուսուցման գաղափարը արտահայտվել է մանկավարժության զարգացման ու ձևավորման ողջ ընթացքում: Ակտիվ ուսուցման հիմնախնդրի ուսումնասիրությամբ զբաղվել են Յան Ամոս Կոմենսկին, Յոհան Յայնրիխ Պեստալոցցին, Ժան Ժակ Ռուսոն, Ադոլֆ Դիստերվերզը, Կոնստանտին Ուշինսկին, Ջոն Դյուին և ուրիշներ:

Մանկավարժության պատմությունը կարելի է համարել աշակերտի դերի մասին երկու հակադիր հայացքների պայքար: Առաջին տեսակետի համախոհները նշում էին, որ սովորողները պետք է պասիվ վիճակում լինեն: Նրանք աշակերտներին համարում էին որպես մանկավարժական ազդեցության առարկա, իսկ ակտիվություն պետք է ցուցաբերեր միայն ուսուցիչը:

Երկրորդ տեսակետի կողմնակիցները նշում էին, որ աշակերտները պետք է լինեն ուսումնական գործընթացի լիիրավ մասնակից և կարելի էին նրանց ակտիվությունը:

«Երբ աշակերտները պատասխանատվություն են ստանձնում իրենց ուսումնառության համար, նրանք ավելի լավ են սովորում: Սովորելը նրանց համար դառնում է ինքնադրսևորման միջոց: Սա արդեն խթան է, որ նրանք լավ սովորեն»:²

Սովորաբար աշակերտները դասի ընթացքում պասիվ լսողի դերում են եղել, որը հանգեցրել է գիտելիքների սահմանափակ յուրացման: Սակայն կարելի է կազմակերպել այնպիսի ուսուցում, որ աշակերտները ներգրավվեն ուսուցման գործընթացին: Այս պարագայում աշակերտները կդառնան ուսուցման գործընթացի ակտիվ մասնակիցներ, ոչ միայն կատարողներ:

Ակտիվ ուսումնառությանը բնորոշ է՝

- աշակերտ - ուսուցիչ համագործակցությունը
- աշակերտ - աշակերտ համագործակցությունը
- ակտիվ հաղորդակցությունը
- ակադեմիական առաջադիմությունը
- աշակերտների մտածողության, ինքնուրույնության զարգացումը:

Ուսումնական գործընթացում շատ կարևոր է աշակերտների կրթական և ճանաչողական գործունեության ակտիվացումը: Ակտիվ ուսուցումը իրենից

² ՏԵՍ Նագարյան Յ., Ակտիվ ուսուցում, Նախաշավիղ, N1, Երևան, 2016, էջ 15:

ներկայացնում է այնպիսի մեթոդների կիրառում, որը նախատեսում է ուսուցման ակտիվ ճանաչողական և պրակտիկ գործունեության ընթացքում գիտելիքների, ինքնուրույն ձեռքբերում, կարողություն-հմտությունների և արժեքների ձևավորում: Ակտիվ ուսուցումը այն գործընթացն է, որի ժամանակ աշակերտի գործունեությունը դառնում է հետազոտական, որոնողական, ստեղծագործական, որն արդեն արդյունավետ գործունեություն է:

Ակտիվ ուսուցման մեջ աշակերտը ներգրավված է որպես ակտիվ մասնակից, իսկ ուսուցիչը՝ որպես խորհրդատու, այս դեպքում սուբյեկտ-սուբյեկտային հարաբերություններ են: Ուսուցման այս տեսակը իր մեջ ներառում է ոչ միայն գիտելիքների ձեռքբերում, այլև հմտությունների, արժեքների ձևավորում: Ակտիվ ուսուցումը ունի աշակերտակենտրոն բնույթ: Յուրաքանչյուր աշակերտի ակտիվ մասնակցությունը դասին ակտիվ ուսուցման անհրաժեշտ պայմանն է:

Ակտիվ ուսուցումը կրթական գործընթացի կարևոր մոտեցում է, որը իրենից ներկայացնում է աշակերտների առավելագույն ներգրավվածությունը դասին:

Ուսուցման ակտիվ մեթոդների կիրառման դեպքում ուսուցիչ պահանջվում է դասարանում ստեղծել հետաքրքիր մթնոլորտ, որպեսզի աշակերտները հետաքրքրություն և ակտիվություն ցուցաբերեն ուսումնասիրվող նյութի նկատմամբ: Ուսուցիչները պետք է նախապես այնպես պլանավորեն դասը, որպեսզի աշակերտներից յուրաքանչյուրը հնարավորություն ունենա ակտիվ մասնակցել ուսուցման գործընթացին:

Ակտիվ ուսուցմանը բնորոշ են հետևյալ առանձնահատկությունները՝

- մտածողության ակտիվացում, երբ աշակերտները կամային ակտիվություն են ցուցաբերում:
- ուսուցման գործընթացում աշակերտներին ներգրավելու համար անհրաժեշտ է բավական երկար ժամանակ, քանի որ աշակերտների գործունեությունը պետք է լինի երկարաժամկետ և կայուն, այսինքն ամբողջ դասի ընթացքում:
- ինքնուրույն ստեղծագործելու կարողության զարգացում:
- մշտական փոխհամագործակցություն աշակերտների և ուսուցիչների միջև:

Ակտիվ ուսուցման ժամանակ աշակերտներից պահանջվում է լիարժեք մասնակցությունն դասին: Ուսուցման այս տեսակի մեջ աշակերտներն են ստանձնում առաջատար դերը: Աշակերտները պետք է կարողանան կատարել իրենց աշխատանքների վերլուծություն, գիտելիքների եւ տվյալների գնահատում: Ուսուցիչը պետք է միայն աշակերտներին ուղղորդի այն ժամանակ, երբ հանդիպել են որոշ դժվարությունների: Այն մեծ ջանք է պահանջում աշակերտներից:

Ակտիվ ուսուցումը խրախուսելու համար կան շատ ռազմավարություններ.

1. կարելի է աշակերտներին դնել ուսուցիչների դերում, որպեսզի իրենց ձեռք բերած գիտելիքները կարողանան փոխանցել իրենց ընկերներին:
2. հանձնարարել աշակերտներին քննարկել իրենց գաղափարները, որպեսզի կարողանան ավելի արդյունավետ կիրառել:
3. աշակերտներին հանձնարարել այնպիսի առաջադրանքներ, որոնց լուծումը գտնելու համար կհիմնվեն դասի ընթացքում ձեռք բերված գիտելիքների և հմտությունների վրա, կկիրառեն այդ գիտելիքները:

Արդյունավետ ուսուցման անհրաժեշտ պայման է մոտիվացիան: Դա այն բոլոր դրոշմ և խթանիչ ուժերն են, որոնք աշակերտին ուղղորդում են դեպի ուսուցման նպատակ:

«Սովորողները գործնականում կարող են սովորել ամեն ինչ, եթե ունեն ցանկություն և կամքի ուժ: Եթե ուսումնասիրության առարկան նրանց համար հետաքրքիր չէ, իրենք համարում են այն երկրորդական, ոչ կարեւոր հասարակության համար, անհրաժեշտ է ակտիվացնել նրանց հետաքրքրությունը, ուսուցման գործընթացը կազմակերպել այնպես, որ այդ գիտելիքը նրա համար դառնա արդիական»:³

Ակտիվ ուսուցում ծավալելու ընթացքում աշակերտների մոտ ձևավորվում է անհրաժեշտ գիտելիքներ ձեռք բերելու կարողություններ: Ակտիվ ուսուցմանը բնորոշ են՝ ինքնուրույնությունն ու ստեղծագործականությունը, քննադատական մտածողությունը, հաղորդակցությունն ու համագործակցությունը:

³ Տե՛ս Սամվելյան Կ., Նախագծային մեթոդը սովորողների ակտիվ մասնակցություն ապահովող ուսուցման մեթոդ, Մանկավարժություն, Գիտամեթոդական ամսագիր, N3, 2013, էջ 56:

1.2 Ուսուցման մեթոդների ծագումն ու դասակարգումը

Մեթոդ բառը ունի հունական ծագում և նշանակում է ինչ-որ տեղ տանող ճանապարհ կամ ուղի: Այն կիրառվում է գիտության և արտադրության տարբեր ոլորտներում:

Մեթոդը հասկացվում է որպես ուսուցիչ-աշակերտ համագործակցության եղանակ՝ ուղղված ուսումնասիրության արդյունքներին: Այն կրթական գործունեության նպատակների և վերջնարդյունքների միջև կապող օղակ է: Մեթոդները պետք է այնպես դասակարգել, որ դրանք կիրառելի լինեն ցանկացած դասընթացի դասավանդման ժամանակ:

Ուսուցիչը պետք է ինքնուրույն իրականացնի մեթոդների նպատակաուղղված ընտրությունը: Նպատակադրված արդյունքներին հասնելու համար անհրաժեշտ է մեթոդների ճիշտ ընտրություն և ճիշտ կիրառում:

Մեթոդներին չտիրապետելով դժվար է իրականացնել արդյունավետ գործունեություն: Որքան հարուստ է ուսուցիչների մեթոդական պահոցը, այնքան արդյունավետ են նրանք դասավանդում: Նոր և շատ մեթոդներ իմանալը թեև անհրաժեշտ, սակայն բավարար պայման չի արդյունավետ դասավանդման համար: Կարևոր է նաև մեթոդները հմտորեն համադրելու և ճիշտ տեղում կիրառելու կարողություն:

Մեթոդների կիրառումը ուսուցչին օգնում է հասնելու ուսուցման նպատակին, չափորոշչային պահանջներին, բովանդակությանը, սովորողների համակողմանի ու ներդաշնակ զարգացմանը: Մանկավարժության մեջ մեթոդ տերմինը պարզաբանվում է մի կողմից ուսուցչի գործունեության եղանակ, մյուս կողմից՝ աշակերտի գործունեության եղանակ: Մեթոդը ուսուցչի համար դասավանդման եղանակ է, իսկ աշակերտների համար գիտելիքները, կարողությունները և հմտությունները յուրացնելու եղանակ: Ուսուցման մեթոդը դասավանդողի և ուսումնասիրողի կարգավորված փոխկապակցված գործունեության եղանակ է, գործունեության ճանապարհ՝ ուսուցման գործընթացում դրված նպատակների իրականացմանը, խնդիրների լուծմանը: Մեջբերված բոլոր սահմանումները վկայում են, որ «մեթոդը ինդրահարույց, բարդ և բազմակողմանի հասկացություն է: Այդուհանդերձ գրեթե բոլոր սահմանումներն ունեն որոշակի սահմանային

ընդհանրություն. մեթոդն ուսուցչի և աշակերտի համագործակցության ձեւ է՝ միտված ուսումնական նպատակների իրականացմանը»:⁴

Ամիրջանյանը նշում է, որ «ուսուցման գործընթացում մեթոդից զատ կիրառվում է նաև հնարը: Այն ուսուցման մեթոդի բաղկացուցիչ մասն է հանդիսանում: Բոլոր մեթոդներում կարելի է գտնել տարբեր հնարներ: Ուսուցման գործընթացում մեթոդին կարող է փոխարինել հնարը, իսկ հնարին՝ մեթոդը»:⁵

Ս.Սարուխանյանը նշում է, որ «մեթոդը և հնարը նույնը չեն, ուղղակի ունեն որոշակի հարաբերակցություն: Եթե մեթոդը դեպի ուսումնական նպատակ տանող ճանապարհն է, ապա մեթոդական հնարները, վարժությունները ճանապարհի ընթացքի խնդիրները լուծելու, հանդիպող դժվարությունները հաղթահարելու միջոցներ են: Հնարը սովորոբար անկախ կիրառություն ունի, սակայն երբեմն մեխանիկորեն նույնացվում է մեթոդին կամ էլ համարվում է նրա բաղադրիչ տարրը»:⁶

Մեթոդներն ու հնարները իրենց կարևոր տեղն ունեն ուսուցման գործընթացում:

Մեթոդների ճիշտ ընտրությունը բխում է ուսումնասիրվող նյութի բովանդակությունից, տրամաբանությունից, սովորողների տարիքային և անհատական առանձնահատկություններից: Ուսուցման մեթոդների և հնարների հիմնական խնդիրն է լուծել սովորողների կրթության, դաստիարակության և զարգացման խնդիրները:

Մեթոդները օգնում են իրագործել ուսուցման նպատակը, բովանդակությունը, խնդիրները, սովորողների համակողմանի և ներդաշնակ զարգացումը: Ուսուցման մեթոդներն ու հնարները գործիքներ են, որոնց կիրառելու որոշումը կայացնում է ուսուցիչը: Մեթոդների կիրառման ժամանակ առավել ցայտուն է երեւում ուսուցիչների փորձառությունն ու հմտությունը:

Ուսումնական նպատակին հասնելու ճանապարհները շատ են, ուսուցիչը պետք է դրանցից ընտրի լավագույնը՝ լավագույն արդյունքի հասնելու համար:

⁴ ՏԵՆ Ս. Սարուխանյան եւ ուրիշներ, Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, Վանաձոր, 2008թ., էջ 6:

⁵ ՏԵՆ Ամիրջանյան ՅՈՒ., Մանկավարժություն, «Մանկավարժ», 2005, էջ 158:

⁶ ՏԵՆ Ս. Սարուխանյան եւ ուրիշներ, Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, Վանաձոր, 2008թ., էջ 7:

Ուսուցիչը ազատ է մեթոդների ընտրության հարցում: Սակայն ընտրությունը չի կարող ինքնանպատակ, կամայական լինել: Շատ կարևոր է մեթոդի ճիշտ և նպատակահարմար ընտրությունը՝ պետք է հաշվի առնել սովորողների գիտելիքների մակարդակը, տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները:

Մեթոդը պետք է համապատասխանի դասի նպատակին: Եթե չկա համապատասխանություն, ապա հնարավոր չէ արդյունքի հասնել:

Ուսուցման նոր մեթոդները աշակերտների և ուսուցչի ակտիվ փոխներգործությունն ապահովող ուղիներն են:

Ուսումնադաստիարակչական գործընթացը իրագործել հնարավոր չէ միայն մեկ մեթոդի կիրառմամբ՝ որքան էլ այն արդյունավետ լինի: Խորհուրդ է տրվում մեթոդները կապակցել միմյանց հետ:

ԳԼՈՒԽ 2. ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄՆ ԱԿՏԻՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

2.1. Խաղն իբրև ուսուցման ակտիվացման միջոց

Խաղը մարդկային գործունեության ամենակարևոր և հետաքրքիր ձևերից մեկն է: Այն ծագում է մանկության շրջանում և ուղեկցում մարդուն ողջ կյանքի ընթացքում: Խաղը հաղորդակցման, ուսուցման և կյանքի փորձի ձեռքբերման միջոց է:

Յուրաքանչյուր լավ խաղի մեջ ներդրված են մտավոր եվ ֆիզիկական ջանքեր: Խաղալով աշակերտը ճանաչողական հմտություններ է ձեռք բերում, խաղի շնորհիվ կյանքը հետաքրքիր է դառնում: Խաղը միաժամանակ նրա մեջ ամրապնդում է կոլեկտիվ գործունեության բարձր զգացում, խաղի ժամանակ ընդգծված ձևով արտահայտվում է ամեն ինչ համատեղ անելու ձգտում:

Ուսուցման ընթացքում խաղի կիրառումը զարգացնում է երեխաների ուշադրությունը, օգնում է ուսուցչին ակտիվացնել անհամարձակ երեխային, որովհետև խաղալիս երեխան իրեն ազատ է զգում: Խաղի ուսուցողական խնդիրը նրանից գաղտնի է մնում, և երեխային թվում է, թե ինքն ուղղակի խաղում է՝ կատարելով որևէ դեր: Խիստ կարևոր են խաղի ուսուցողական և կրթադաստիարակչական նշանակությունն ու արժեքը: Այն նպատակային ու ստեղծագործաբար կիրառելու դեպքում կարելի է շատ բարձր ուսումնական արդյունքների հասնել: Խաղը մարդուն ուղեկից է եղել նրա պատմական զարգացման բոլոր փուլերում:

Տեխնոլոգիայի դասերին եթե ուսուցիչը կիրառում է խաղեր, մասնավորապես դիդակտիկ խաղեր, սովորողներն ավելի լավ են յուրացնում ուսումնական նյութը: Խաղի ժամանակ աշակերտների մոտ հաղթելու դրդապատճառները պայմաններ են ստեղծում նրանց ազար դրսևորվելու համար: Այս ձևով է երեւում աշակերտների բնավորության գծերը, նրանց հետաքրքրություններն ու առանձնահատկությունները, խառնվածքը: Խաղերը շատ բազմազան են ու տարաբնույթ, որոնք տարբեր արգելքներ են ստեղծում հաղթանակին մոտենալու ընթացքում: Այս արգելքների հաղթահարման ժամանակ նրանք դրսևորում են ինքնատիպ վարք՝ հնարամտություն, ճարակություն, ուժ, գիտելիքներ և այլն: Խաղային

գործունեության տեսակների ընտրության և դրանց կազմակերպմանը մասնակցելու ճանապարհով խթանվում է աշակերտների ակտիվ վարքը:

Խաղի բովանդակությունը ծառայում է ուսումնական խնդրի լուծմանը: Այն աշակերտներից պահանջում է ուշադրություն, փոխզիջում, հնարամտություն, արագ կողմնորոշվելու կարողություն, սեր դեպի դասավանդվող առարկան: Խաղը հանդիսանում է ուսուցման մեթոդ, անձի զարգացման միջոց և ուսուցման ձև: Խաղերի ընտրության ժամանակ ուսուցիչը պետք է հաշվի առնի աշակերտների տարիքային առանձնահատկությունները: Դրանց կիրառումը չպետք է ինքնանպատակ լինի:

Խաղի կիրառման ժամանակ հստակ դրսեւորվում են աշակերտների մտածողության, երեւակայության առանձնահատկությունները, աշակերտների ակտիվության մակարդակը, հուզականությունը, աշակերտները ձեռք են բերում կամայական վարքի փորձ: Խաղի ընթացքում աշակերտները կարողանում են հետեւելով կանոններին կառավարել իրենց:

Խաղային գործունեության առանձնահատկություններն են՝

1. Խաղային գործունեության ընթացքում բավարարվում են սովորողների հիմնական պահանջմունքները՝ ակտիվության եվ ինքնուրույնության, հաղորդակցման եվ մեծահասակների կյանքին անմիջականորեն հաղորդակից լինելու, արտաքին աշխարհը ճանաչելու եվ այն արտացոլելու: Ինչպես նշում է Կ.Դ. Ուշինսկին, «երեխան խաղի ընթացքում փորձարկում է իր ապագա կյանքը, եվ փորձում սեփական ուժերը»:⁷
2. Խաղային գործունեության ընթացքում բնականոն ճանապարհով զարգանում են երեխայի հոգեկան գործընթացները, ձեւավորվում են նորագոյացություններ, որոնք նախապատրաստում եվ ապահովում են երեխայի հոգեկանի զարգացման հաջորդ փուլը:
3. Խաղային գործունեությունը նպաստում է գործունեության նոր ձեւերի՝ աշխատանքի եվ ուսումնական գործունեության առանձնացմանը: Երեխայի խաղն իր զարգացման ընթացքում ձեռք է բերում աշխատանքային եվ ուսումնական գործունեությանը բնորոշ կառուցվածքային տարրեր՝ նպատակ,

⁷ ՏԵՍ Ուշինսկի Կ. Դ., Մանկավարժական ընտիր երկեր, Երեւան, 1959թ. Էջ 45:

պլանավորում, արդյունք, որոնք, ձեռավորվելով խաղային գործունեության ընթացքում, տեղափոխվում են գործունեության այլ ձեւեր:

4. Խաղային գործունեությունը բնական գործունեությունն է, ուր չկա ճնշում եվ հարկադրանք, առկա է երեխաների համար բնական միջավայր: Խաղի ընթացքում երեխաներն ազատ են եվ ինքնուրույն, ունեն հավասար իրավունքներ եվ ինքնադրսեւորման լայն հնարավորություններ: Խաղն ապահովում է հուզականությամբ հագեցած հաճելի մթնոլորտ եվ համագործակցելու լավագույն պայմաններ:
5. Խաղը ստեղծագործական գործունեությունն է, քանի որ այն նպաստում է յուրաքանչյուր խաղացող երեխայի անհատական առանձնահատկությունների բացահայտմանը եվ ստեղծագործական ընդունակությունների զարգացմանը: Խաղի ընթացքում են լավագույնս դրսեւորվում, հետեւաբար եվ ախտորոշվում երեխայի ժառանգական նախադրյալները, հակումներն ու հետաքրքրությունները: Խաղի ընթացքում երեխան փորձում է ինքնահաստատվել եվ բնականաբար ջանում է առավելագույնս դրսևորել իր բոլոր հակումներն ու կարողությունները: Խաղը նաեւ երեխայի ընդունակությունների եվ կարողությունների ախտորոշման արդյունավետ միջոց է:
6. Խաղը աշխարհաճանաչման եվ աշխարհի արտացոլման եղանակ է, իմացական գործունեություն: Խաղային գործունեության ընթացքում ձեռք բերած գիտելիքները կրկնակի արժեքավոր են՝ դրանք եվ տեղեկատվական են, եվ գործնական բնույթի: Գիտելիքի՝ խաղում անմիջապես կիրառվելու կամ փորձարկելու հնարավորությունը, նպաստում է դրա յուրացմանը եվ ամրապնդմանը: Խաղի ընթացքում ձեռք բերած գիտելիքները չափազանց կայուն են:

Խաղերին բնորոշ է ստեղծագործական-որոնողական- երեւակայական բնույթը: Խաղը ցանկացած ուսումնական նյութի յուրացման գործընթաց դարձնում է գրավիչ, հետաքրքրաշարժ, թեթևացնում են գիտելիքների եվ կարողությունների ձեռքբերման գործընթացը: Առանց խաղի կիրառմամբ սովորեցնելը շատ դժվար է: Ոչ բոլոր խաղերն ունեն կրթադաստիարակչական նշանակություն: Այն խաղերն են

արդյունավետ, որոնք աշակերտներին տալիս են ճանաչողական գործունեություն ծավալելու հնարավորություն:

Մանկավարժագիտությանը հայտնի են խաղերի դասակարգման տարբեր եղանակներ եվ մոտեցումներ: Մանկավարժները առանձնացրել են՝ մտավոր խաղեր, զգայական խաղեր, շարժախաղեր եվ այլն:

Խորհրդային մանկավարժության ներկայացուցիչները դասակարգում են խաղի խմբերն ըստ բնույթի, բաժանելով երկու խմբի՝ ստեղծագործական բնույթով եվ ներքին «թաքնված» կանոններով:

Կանոնով խաղերի բովանդակությունը նախապես մշակվում է եվ սահմանափակվում մեծահասակների կողմից հստակ կանոններով: Բնույթով դրանք ուսուցանող եվ զարգացնող են:

Ստեղծագործական խաղերի բովանդակությունը կառուցվում է խաղացող երեխաների կողմից, այն ստեղծագործական բնույթի է: Ստեղծագործական խաղերում արտացոլվում են երեխաների տպավորություններն ու պատկերացումներն արտաքին աշխարհի հանդեպ, ինքնուրույնության եվ ակտիվության մղումները, դրսևորվում են «ազատության աստիճանները», ցանկությունները, նախասիրություններն ու հետաքրքրությունները:

Խաղերի երկրորդ խումբն են կազմում կանոնով խաղերը, որոնք հատուկ կազմակերպվում են մեծահասակների կողմից երեխաներին ուսուցանելու, դաստիարակելու եվ զարգացնելու նպատակով: Այս խմբին են պատկանում դիդակտիկ խաղերը, շարժախաղերը եվ տարբեր բնույթի զարգացնող խաղերը: Կանոնով խաղերը մշակվել են ժողովրդական խաղերի հիման վրա, դրանք ունեն հստակ մանկավարժական ուղղվածություն:

Կանոնով խաղերի բովանդակությունը նախապես մշակվում եվ պատրաստի ձևով ներկայացվում է երեխաներին: Խաղի բովանդակությունը միտումնավոր սահմանափակվում է կանոններով, որոնք կարգավորում եվ նպատակաուղղում են երեխաների խաղային գործողությունները: Կանոնով խաղերը ուսուցանում եվ դաստիարակում, կրթում են եվ զարգացնում, նպաստում են ինքնազնահատմանը եվ փոխզնահատմանը: Վերջին տարիներին խաղերի դասակարգման հետաքրքիր տարբերակ է առաջարկել ռուս մանկավարժ Ս.Լ. Նովոսյուլովան, որի հիմքում ընկած

Է խաղային գործունեության նախաձեռնությունը: Հեղինակն առանձնացնում է խաղերի երեք խումբ.

- խաղեր, որոնց նախաձեռնողը երեխաներն են, դրանք ինքնուրույն եվ ստեղծագործական բնույթի խաղեր են: Օրինակ, սյուժետադերային խաղերը, խաղ - թատերացումները, խաղ - փորձարկումները,
- խաղեր, որոնց նախաձեռնողը մեծահասակներն են, դրանք ունեն ընդգծված մանկավարժական ուղղվածություն: Օրինակ, ուսուցանող եվ ինտելեկտուալ խաղերը, շարժախաղերը, խաղ - զվարճանքները,
- ժողովրդական խաղեր, որոնք ավանդաբար փոխանցվում են սերնդեսերունդ: Տարբերում են խաղերի հետեւյալ տեսակները.
 - ռեժիսորական խաղեր,
 - սյուժետադերային խաղեր,
 - խաղ - թատերացումներ,
 - շինանյութով խաղեր,
 - կանոնով խաղեր,
 - շարժախաղեր,
 - դիդակտիկ խաղեր:

Այս դասակարգմանը կարելի է ավելացնել նաեւ իրենց բնույթով նոր՝ համակարգչային խաղերը:

Դիդակտիկ խաղերն աշակերտների ուսուցման և դաստիարակության արժեքավոր միջոցներ են: Դիդակտիկ խաղերը մեծ դեր ունեն աշակերտների մտավոր գործունեության ակտիվացման ոլորտում: Որպեսզի խաղերը նպաստեն աշակերտների մտավոր գործունեության ակտիվացմանը, անհրաժեշտ է ընտրել՝

1. դասի նպատակին համապատասխան խաղեր,
2. խաղի բովանդակության համապատասխանեցում աշակերտների ճանաչողական հետաքրքրություններին,
3. խաղի մեջ կիրառել այնպիսի դժվարություններ, որոնք հաղթահարելի կլինեն և աշակերտները դրանք կհաղթահարեն ուշադրության, հիշողության լարմամբ, եվ մտքի ակտիվացմամբ:

«Խաղն, ըստ Էության, մարդու՝ կենցաղային, ուսումնական եվ ստեղծագործական գործունեության ներկայացումն է երեխայի լեզվի, ձեռքերի, մտքի, հոգու տեսանկյունից: Այն այդ ոլորտների մի յուրատեսակ մոդելավորում է»:⁸

Խաղի միջոցով ուսուցիչը կարող է լուծել ուսումնական տարբեր խնդիրներ՝ հատկապես տեխնոլոգիա առարկայի տիրույթում: Ուսուցիչը ոչ թե դասը պետք է բաժանի աշխատանքի եվ խաղի, այլ պետք է խաղը տարալուծի ուսուցման գործընթացում այնպես, որ ուսումնական նպատակները իրականանան խաղի միջոցով: Խաղերի կիրառմամբ աշակերտների մոտ զարգանում է ուշադրությունը, ուսուցչին օգնում է անհամարձակ երեխային դարձնել աշխույժ ու համարձակ, քանի որ խաղի ընթացքում երեխաները իրենց լիարժեք ազատ են զգում:

Խաղի ուսուցողական խնդիրը պետք է հասանելի լինի միայն ուսուցչի համար, աշակերտները պետք է իմանան, որ ուղղակի խաղում են՝ կատարելով ինչ-որ դեր:

Աշակերտները խաղի ժամանակ միշտ փորձում են ստանձնել իրենց դուր եկած դերը, ուստի ուսուցչից պահանջվում է հաշվի առնել աշակերտների ցանկությունները, հետաքրքրությունները, կարիքները: Այս մեթոդի կիրառման ժամանակ դուրս է գալիս երեխաների մեջ կուտակված լարվածությունը: Խաղի միջոցով կարող ենք նաեւ գնահատել աշակերտներին:

Ուսուցման արդյունավետության համար անհրաժեշտ է կիրառել դիդակտիկ խաղեր: Սրանք ամենարդյունավետն են: Դիդակտիկ խաղերը նպաստում են աշակերտների ազատ զարգացմանը: Խաղերի միջոցով աշակերտները դասարանում ստեղծում են ուրախ եւ անկաշկանդ մթնոլորտ: Նրանց մոտ ձևավորվում է ընկերների հետ համագործակցելու եւ սեփական գործունեությունը կազմակերպելու ունակություն: Ակտիվանում է աշակերտների մտածողությունը, խոսքը, ուշադրությունը եւ երեւակայությունը: Դիդակտիկ խաղերի նպատակն է՝ աշակերտներին խաղալով սոսվորեցնել համեմատել, դասակարգել, վերլուծել, ընդհանրացնել, կատարել մտավոր գործողություններ: Խաղերը ակտիվացնում են ճանաչողական գործընթացները, ծանոթացնում են կյանքի իրավիճակներին,

⁸ ՏԵՍ Գյուլամիրյան Ջ., Խաղալով սովորենք, Երևան, 2009, էջ 19:

սովորեցնում են աշակերտներին գործել ըստ կանոնների, զարգացնում են աշակերտների հետաքրքրասիրությունն ու ուշադրությունը: Կարելու է ոչ թե ընտրված խաղի տեսակը, այլ նրա հնար ավորությունների առավելագույն օգտագործումը:

Դիդակտիկ խաղերին բնորոշ է ուսուցողական խնդիրների առկայությունը, դաստիարակչական եւ զարգացնող նշանակությունը, խաղի ընթացքի արդյունավետությունը, խաղի կանոնները, արդյունքների մանրամասն վերլուծությունը եւ արդարացի գնահատումն ու ամփոփումը: Դիդակտիկ խաղը՝ խաղ է միայն աշակերտների համար, իսկ ուսուցչի համար այն ուսուցման միջոց եվ եղանակ է: Դասի ժամանակ յուրաքանչյուր խաղային գործունեություն իրականացնելուց առաջ, ուսուցիչը պետք է հստակ որոշի թե ի՞նչ պետք է ուսուցանվի եվ ի՞նչ նպատակով: Ինչ նպատակով էլ խաղը ընտրված լինի, ուսուցիչն է այն գլխավոր դերը, առանց որի խաղը կարող է ոչ միայն ժամանց դառնալ, այլև ստանա հակադարձ ազդեցություն:

«Գործնական եւ դերային խաղերի կիրառման ժամանակ նյութի փոխարեն օգտագործվում է ռեալ իրավիճակների բեմադրում, որտեղ դերերը ստանձնում են աշակերտները: Խաղերի այս, տեսակներն ունեն հետեւյալ գործառույթները՝

1. ուսուցանող. սովորողների կարողությունների ձեւավորում, ստեղծագործական ունակությունների զարգացում, նոր իրավիճակները հասկանալու, վերլուծելու եւ ձեւակերպելու կարողություն,
2. զարգացնող. խոսքի, տրամաբանական մտածողության, միջավայրին եվ պայմաններին հարմարվելու ունակությունների զարգացում,
3. մոտիվացիոն. սովորողների ուսումնական գործունեության դրդապատճառների արթնացում, ինքնուրույն որոշումների ընդունման խթանում,
4. դաստիարակող. պատասխանատվության, հաղորդակցության, պրակտիկ գործունեության հակվածության ձեւավորում»:⁹

Գործնական խաղի մասնակիցներին առաջարկվում է իրական իրավիճակների վրա հիմնված խաղային սյուժե, որի ընթացքում աշակերտների առջեւ դրվում է ընդհանուր նպատակ՝ լուծել առաջարկված խնդիրը: Յուրաքանչյուր աշակերտ

⁹ ՏԵՍ Պետրոսյան Յ., Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ, Երեւան, 2012, էջ 172:

պետք է իրականացնի անհատական դերային նպատակ եւ այն համաձայնեցնի խմբի մասնակիցների հետ:

Դերային խաղը հիմնվում է իրավիճակում առկա խնդրի լուծման ժամանակ սովորողների ակտիվ փոխազդեցության վրա: Այստեղ անհատական նպատակները չեն համաձայնեցվում, այլ սովորողների նպատակները դերային խաղերի կիրառման ժամանակ միայն հաղթելն է: Որպեսզի խաղի կիրառումը ուսումնական գործընթացը դարձնի առավել արդյունավետ լավ կլինի, օրինակ՝ յուրաքանչյուր սովորողի ապահովել անհատական աշխատատեղով:

2.2 Ուսուցման մեթոդների կիրառման արդյունավետության պայմանները տեխնոլոգիայի դասերին

Արդի մանկավարժության գերխնդիրն է՝ ակտիվացնել ուսուցման գործընթացը և գտնել արդյունավետության բարձրացման եղանակներ: Տեխնոլոգիայի ուսուցչից պահանջվում է, ելնելով աշխատանքի նպատակներից, ուսուցման մեթոդներն ընտրել կոնկրետ թեմային համապատասխան: Ուսուցման արդյունավետությունը կախված է մեթոդների ճիշտ ընտրությունից: Մեթոդների ընտրությունն էլ նրա ստեղծագործականությունը, ապահովում ուսումնական նյութի յուրացումը, աշխատանքի արդյունավետությունը: Նա պետք է որոշի, թե տվյալ թեման յուրացնելու, առաջադրված վերջնարդյունքներին հասնելու համար ինչպիսի մեթոդներ են անհրաժեշտ: Ուսուցման մեթոդների պահանջը դրանց հասանելիությունն է: Ուսուցման մեթոդներն այն ուղիներն են, որոնք ապահովում են ուսումնական նյութի յուրացումը:

Մեթոդները կարող են հեշտ եվ դժվար լինել աշակերտների համար: Ցանկացած մեթոդի կիրառում պետք է վերջում տա պլանավորած կամ ակնկալվող արդյունքը: Մեթոդը դառնում է մանկավարժական, երբ որոշվում է ուսուցման դաստիարակչական, ուսումնական եւ զարգացման գործառնությունների իրականացման բաղադրիչների տեղը: Տարբեր ուսուցիչների համար նույն մեթոդը կարող է

կիրառվել տարբեր ձեւով: Ուսուցման մեթոդները միշտ ունենում են կոնկրետ նպատակ, հանգեցնում է նյութի յուրացման եւ տանում է դեպի պլանավորած արդյունքը:

«Ուսուցիչները պետք է հիմնվեն երեք գլխավոր հիմնահարցերի վրա:

Դրանք են՝

1. ուսուցման նպատակը - ինչու՞ սովորել կամ ինչու՞ սովորեցնել,
2. բովանդակությունը - ի՞նչ սովորել կամ ի՞նչ սովորեցնել
3. ռազմավարությունը - ինչպե՞ս սովորել կամ սովորեցնել:

Այս երրորդ հիմնահարցը իր մեջ ներառում է ուսուցման ձեւերն ու մեթոդները»:¹⁰

Ինչպես բազմիցս նշել ենք ակտիվ ուսուցումը ուսուցչի եւ աշակերտների միջեւ փոխհարաբերությունն է, որի ընթացքում աշակերտները պասիվ լսողի դերում չեն, այլ դառնում են դասի ակտիվ մասնակիցներ:

Ակտիվ ուսուցման կենտրոնում աշակերտն է: Նա պետք է մասնակցի գիտելիքի ձեռքբերմանը, գործի, աշխատի եվ պատասխանատվություն ունենա դրա ամրակայման համար: Շատ ենք հանդիպել, երբ աշակերտները դասի ողջ ընթացքում լուռ նստած են: Այս տարիքում են աշակերտների մոտ ձեւավորվում անպատասխանատվությունը եվ ծուլությունը: Իհարկե այս պարագայում դասը աշակերտների համար դառնում է ձանձրալի եվ ոչ գրավիչ: Երբեմն աշակերտները միմյանցից կարող են ավելի շատ գիտելիք ստանալ եւ ավելի շատ բան սովորել, քան ուսուցչից:

Ակտիվ ուսուցման նպատակն է տարբեր տեսանկյուններից ապահովել կրթական խնդիրների լուծումը: Դրանք են՝

- աշակերտների ակտիվ ներգրավումը ուսումնական գործընթացի մեջ,
- սովորողների ճանաչողական ակտիվություն,
- ինքնագործունեության խթանում,
- ստեղծագործական մտքի զարգացում,

¹⁰ Տէն Դալլաքյան Գ., Ակտիվ ուսուցման արդյունավետությունը տարրական դասարաններում, Նախաշավիղ, N2, Երեւան, 2015, էջ 3:

- ճանաչողական գործընթացների զարգացում (խոսք, հիշողություն, մտածողություն)
- ինքնուրույն աշխատանքի համար հմտությունների զարգացում:¹¹

Ուսուցման գործընթացի միօրինակությունը հոգնեցնող է աշակերտների համար: Այն հաղթահարելի է բազմազան հնարների, մեթոդների եվ խաղերի օգնությամբ: Ակտիվ ուսուցումն իրականացվում է այնպիսի մեթոդների միջոցով, որոնք ակտիվացնում են սովորողներին: Ակտիվ մեթոդների եվ հնարների կիրառումը դառնում է առաջնային գիտելիքի ձեռքբերման միջոց՝ ուսումնական գործընթացի ակտիվացման արդյունքում: Այն ուղղված է մտածողության զարգացմանը, կարողությունների եվ հմտությունների ձեւավորմանը:

Ուսումնադաստիարակչական գործընթացում շատ կարեւոր նշանակություն ունի ուսուցչի ստեղծագործական կարողությունները եվ վարպետությունը: Դրա արդյունավետությունը կախված է նրա գիտելիքներից, անձնական որակներից, մանկավարժական կարողություններից ու հմտություններից:

Երբ ուսուցիչը պատրաստվում է դասին, նա պետք է ուշադիր վերլուծի ծրագիրը, համեմատի ցանկալին ու հնարավորը, այնուհետեւ որոշի վաղվա դասի կոնկրետ պայմաններն ու ընթացքը:

Ակտիվ ուսուցման իրականացման նպատակով պայմանավորված, ուսուցիչը պետք է հաշվի առնի՝

- աշակերտների իմացական գործընթացների կազմակերպումը,
- համագործակցային կարողությունների զարգացումը,
- հետաքրքրությունների բացահայտումը,
- հաղորդակցական ունակությունների ձեւավորումը
- անհատական առանձնահատկությունների բացահայտումը,
- վերլուծական կարողությունների ձեւավորումը
- տրամաբանական մտածողության զարգացումը

¹¹ ՏԵՍ Դավաթյան Գ., Ակտիվ ուսուցման արդյունավետությունը տարրական դասարաններում, Նախաշավիղ, N2, Երեւան, 2015, էջ 3:

Ակտիվ ուսուցման մեթոդների արդյունավետ կիրառման ընդհանուր բանաձև, որպես այդպիսին գոյություն չունի: Ուսուցչից պահանջվում է իրականացվող աշխատանքի նպատակներից ելնելով, մեթոդական զինանոցից ընտրել եւ կիրառել համապատասխան մեթոդը: Ակտիվ ուսուցման մեթոդներն ունեն երկու գործառույթ՝

- նպաստում են գիտելիքների խորացմանն ու ամրապնդմանը:
- խթանում են նոր գիտելիքների արդյունավետ ընկալումը:

Այս երկու գործառույթի կիրառումը նպաստում է աշակերտների ինքնուրույն եվ ազատ մտածելուն, վերլուծելու, որոնելու, սեփական կարծիք արտահայտելու եվ հիմնավորելու, նոր գիտելիքներ ձեռք բերելու զարգացմանը եվ ճանաչողական գործընթացում ինքնուրույն կողմնորոշմանը: Ուսուցման մեթոդների կիրառումը համարվում է արդյունավետ, եթե՝

- արդյունքում ձեռք բերված գիտելիքները հիմնավոր են,
- ձեռք բերված գիտելիքները սովորողները կարողանում են կիրառել ցանկացած իրավիճակում,
- սովորողներն ունեն համակարգված եվ կառուցվածքային գիտելիքներ, որոնք կարողանում են ապացուցել եվ հիմնավորել:

Տեխնոլոգիայի դասերին նպատակահարմար է կիրառել բազմաթիվ ու բազմապիսի մեթոդներ. Դա կախված է ուսուցանվող նյութից: Օրինակ, կարպետներ և գորգեր թեմայի դասավանդման ընթացքում նպատակահարմար է կիրառել Վենի դիագրամ մեթոդը, որի արդյունքում սովորողները հստակ կզանազանեն կարպետը գորգից, իսկ միայն գորգերի բաժինն ուսուցանելիս նպատակահարմար է կշռադատման փուլում կիրառել խորանարդում մեթոդը: Նախընտրելի է կիրառել գուև, շրջայց պատկերասրահում, մտազրոհ, ՓԳՀ, խճանկար, համառոտ շարադրանք, ակադեմիական հակակարծություն, կենսագրական բանաստեղծություն և այլ մեթոդներ: Քննարկում մեթոդն իր տարատեսակներով՝ սկրատեսյան քննարկում, բանավեճ, դեբատ, ուսուցման գործընթացն ակտիվացնող մեթոդներից է, որը հաջողվում է տեխնոլոգիայի տիրույթում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Ակտիվ ուսուցումը բարձրացնում է ուսուցման արդյունավետությունը, նպաստում է սովորողների ակտիվության բարձրացմանը, ուսուցման գործընթացը հետաքրքրիչ եւ ակտիվ դարձնելուն, կրտսեր դպրոցականների ինքնուրույնության խթանմանը:
2. Կրթության նպատակներին հասնելու եւ արդյունավետ ուսուցում կազմակերպելու համար անհրաժեշտ է իրականացնել ակտիվ ուսուցում, իսկ ուսուցման ակտիվության բարձրացման համար անհրաժեշտ է մեթոդների ճիշտ ընտրություն:
3. Ակտիվ ուսուցումը ուսուցման առանցքն է: Ակտիվ ուսուցման մեթոդները աշակերտների կրթական եւ ճանաչողական գործունեությունը խթանելու միջոցներ են:
4. Խաղը ակտիվ ուսուցման արդյունավետ կազմակերպման ձև է: Այն ակտիվացնում է նույնիսկ պասիվ, լռակյաց աշակերտներին: Դրանց կիրառման ընթացքում զարգանում է սովորողների երեւակայությունը, զգացմունքային ոլորտը, մտավոր կարողությունները եւ այլն:: Այն աշակերտներից պահանջում է ուշադրություն, փոխզիջում, հնարամտություն, արագ կողմնորոշվելու հնարամտություն, սեր դեպի դասավանդվող առարկան: Խաղի ժամանակ երեխաները հաճույքով են հաղթահարում ծագած դժվարությունները: Երբ սովորելու գործընթացում զուգակցվում են խաղն ու ուսումը, երեխան սովորում է առանց ջանք գործադրելու, աննկատ, հետաքրքրությամբ: Խաղի ընտրությունը չպետք է ինքնանպատակ լինի, այն պետք է ճշգրտորեն տանի դեպի նպատակը, դեպի վերջնարդյունքները: Խաղի բովանդակությունը ծառայում է ուսումնական խնդիրների լուծմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ամիրջանյան Յու. Ա., Մանկավարժություն, 2005, 446 էջ:
2. Բաբանսկի Յու. Կ., Մանկավարժություն, Երեւան, Լույս հրատարակչություն, 1986, 340 էջ:
3. Գյուլամիրյան Ջ., Խաղալով սովորենք, Երեւան, 2009, 77 էջ :
4. Գյուլամիրյան Ջ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Երեւան, Չանգակ հրատարակչություն, 2015, 312 էջ :
5. Դալլաքյան Գ., Ակտիվ ուսուցման արդյունավետությունը տարրական դասարաններում, Նախաշավիղ, N2, Երեւան, 2015, էջ 3-9 :
6. Չոհրաբյան Ա. եւ ուրիշներ, Ուսուցման կոնստրուկտիվիստական մեթոդաբանություն, Երեւան, Անտարես հրատարակչություն, 2002, 334 էջ:
7. Թերզյան Գ. եւ ուրիշներ, Խոսք եւ հաղորդակցություն, Երեւան, Չանգակ հրատարակչություն, 2013, 46 էջ:
8. Նազարյան Զ., Ակտիվ ուսուցում, Նախաշավիղ, N1, Երեւան, 2016, էջ 15-19:
9. Պետրոսյան Զ., Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ, Երեւան, 2012, 560 էջ:
10. Սամվելյան Կ., Նախագծային մեթոդը՝ սովորողների ակտիվ մասնակցություն ապահովող ուսուցման մեթոդ, Մանկավարժություն, N3, Երեւան, 2013, էջ 56-64:
11. Սարուխանյան Ս. եւ ուրիշներ, Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, Վանաձոր, 2008թ., 101 էջ:

Էլեկտրոնային աղբյուրներ

1. Հանրակրթական պետական չափորոշիչ՝
2. <https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788>, 29.03.2023
3. <https://hy.warbletoncouncil.org/aprendizaje-activo-9594>, 29.03.2023
4. <https://www.youtube.com/watch?v=wezThjim9As> , 27. 03. 2023
5. <https://www.youtube.com/watch?v=t0kMZbncP7c&t=533s>, 27. 03. 2023